491·542-5
И-79

N° 14.

2004

261/5

491.542-5 339-ՄՀ 3977.
Ա-79

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԿԱԿԱՆ

*Համառօտ կարգեալ վերստին 'ի բարբառ գրոց ըստ զգուշաւոր քննութեան և կանոնաց ընդարձակ Քերականութեան Տ՟ն Հօր Գաբրիէլի Աւետիքեան Աթոռակալ Վարդապետի։*

*'Ի պէտս ցանկացողաց գրաւոր ներվարժութեան։*

40324



ФУНДАМЕНТАЛЬНАЯ БИБЛИОТЕКА ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ
261.

'Ի ՎԵՆԵՏԻԿ
'Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1823. ՌՄՀԲ

12093

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Որոց իրաւացի օգուտ ընկերացն փափաքելի է, և 'ի նոյնս աննախանձ պարապումն, ոչ ծանր ինչ իցէ՝ զիջանել երբեք 'ի հաճոյս խնդրողին զնուազ գիտանն, եթէ և ընդ նոյն շաւիղ կայցէ յաջողելոյ օգտիցն ոչ փոքր ակնկալութ։

Առաւելագունին 'ի մարդկային յիմանալի բարիս գիտնական Մակացութե Ճանապարհ գոլով և դուռն Քերթողականն արուեստ, փոյթ կալաք ընդ ժամանակս ժամանակս տալ հայասեռ ուսանողաց զօրինաւոր նպաստս հայկական Քերականութեան, որպէս և ամօք յառաջ վերստին 'ի բազմախոյզ քննութէ հայրենի Մատենագրաց առաջի մատուցաք ջանասէր համբակաց զընդարձակ Քերականութին, և զհետ այնր յամին 1819. զնորայն համառօտութի բովանդակեալ աշխարհիկ բարբառով հոգացաք տալ 'ի դիւրահաս վարժումն մանկանց դպրոցաց. ակն ունելով ընդ կարծոյ և ընտելական շաւիղ մտադիւրագոյն ևս ընթացուցանել զնոսա 'ի չափաւոր մարզս բնիկ լեզուի, զի և առ կատարեալն հմտութիւն վերելս առնիցեն ախորժաբար պարապ-

մամբ. ուր 'ի Յառաջաբանի անդ հատուցաք և զիրաւացատ փաստս՝ որոց վասն ընտրեցաք յարմարել զայն աշխարհօրէն հայեցի լեզուաւ, ըստ հասարակաց սովորութե եւրոպացւոց՝ աշխարհիկ բանիւ աւանդել 'ի դպրոցս զլատինական լեզուի ուսմունս։

Այլ քանզի ոչ սակաւուց մերազնեայ ուսումնասիրաց ցանկալի տեսանեմք՝ ունել 'ի ձեռին զբացատրութի 'ի գրոց լեզու, յանձն առաք և զայդ աշխատութի, փոխադրելով զնոյն համառօտուի յաշխարհօրէն բացատրութեց անտի 'ի գրաւորն, այլև սակաւ ուրեք որոշողաբար յարդարելով զբանն և զկարգուածս ուսանելեացն, սրբեալ 'ի բաց և զվրիպանս ինչ տպագրութեն առաջնոյ։

Ունի այսուհետև իւրաքանչիւր բանախնդիր՝ ըստ անցնիւր ախորժակաց 'ի վար արկանել կամ զայժմու աշխատասիրեալս, և կամ զառաջինն. զի և յերկաքանչիւրոց աստի զուգաբար պսակեսցի մերս երկասիրութի 'ի բերել արդիւնս շահեկանս. որով իշխանականն նոցա մասն դաստիարակեսցի 'ի ճանաչել ուղիղ, 'ի խօսել ուղիղ, 'ի գրել ուղիղ. որոց և կատարած իցէ՝ որպէս ըղձանամք, գործել ուղիղ 'ի մարդկայինսն և յա՟ծայինս։

# ՑՈՒՑԱԿ

Գրոց և Գլխոց Քերականութեանս ։

Զ՞ինչ է Քերականութիւն, և մասունք նորա . . . 1.

## ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ.

### Յաղագս Ութ մասանց բանին ։

Գլ. Ա. Յաղագս Անուան ։ 4.
Յօդ. Ա. Վարք հոլովմանց ։ 8.
Յօդ. Բ. Կազմն հոլովմանց ։ 18.
Յօդ. Գ. Յաղագս Ածական անուանց ։ 24.
Թուական անուանք. 25 ։ Ստացականք. 29 ։ Հանրականք. 31 ։ Հարցականք. 32 ։ Վեր-բերականք. 33 ։
Գլ. Բ. Յաղագս Դերանուան ։ 34 ։
Անձնական դերանուանք. 35 ։ Ցուցականք. 37 ։ Ստացականք. 38 ։ Յարաբերական. 40 ։ Յաւելուած. Համառօտ գիտելիք ՚ի վերայ Անուան և Դերանուան ։ 44.
Գլ. Գ. Յաղագս Բայի ։ 72.
Չորք լծորդութիւնք կարգաւ ։ 76.
Յօդ. Ա. Խոնարհումն Անձնական բայից ։ 78.
Յօդ. Բ. ՚Ի վերայ առաջին լծորդութեան ։ 82.
Յօդ. Գ. ՚Ի վերայ երկրորդ լծորդութեան ։ 98.
Յօդ. Դ. ՚Ի վերայ երրորդ լծորդութեան ։ 106.
Յօդ. Ե. ՚Ի վերայ Դիմազուրկ բայի ։ 109.
Յօդ. Զ. Հանրական ծանօթութիւնք ՚ի վերայ բայից ։ 111.
՚Ի վերայ Աներևոյթ եղանակի. 114 ։
՚Ի վերայ Ընդունելութեան. 115 ։
Գլ. Դ. Յաղագս Նախադրութեան ։ 119 ։
Գլ. Ե. Յաղագս Մակբայի ։ 126.
Գլ. Զ. Յաղագս Շաղկապի ։ 134.
Գլ. Է. Յաղագս Միջարկութեան ։ 138.

## ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ.


| | | | |
|---|---|---|---|
| | | Յաղագս բաղդատութեան մասանց բանի ։ | 141. |
| Գլ. | Ա. | Ի վերայ բաղդատութեան Անուան ։ | 143. |
| յօդ. | Ա. | Անուան բացայայտիչ եւ բացայայտեալ։ | 144. |
| յօդ. | Բ. | Անուան յատկացուցիչ։ | 148. |
| յօդ. | Գ. | Անուան խնդիր ։ | 153. |
| յօդ. | Դ. | Գոյական խնդիր ածականի ։ | 157. |
| յօդ. | Ե. | Ածական համաձայն գոյականի ։ | 161. |
| յօդ. | Զ. | Յաղագս համաձայնութեան միջական անուանց ։ | 170. |
| | | Համաձայնութեան Թուականաց ։ | 170. |
| | | Հանրականաց ։ | 173. |
| | | Մերբերականաց ։ | 175. |
| | | Հարցականաց ։ | 176. |
| | | Մասնականաց ։ | 177. |
| Գլ. | Բ. | Ի վերայ բաղդատութեան Դերանուան ։ | 180. |
| յօդ. | Ա. | Անձնական դերանուանց ։ | 181. |
| յօդ. | Բ. | Ցուցական դերանուանց ։ | 184. |
| յօդ. | Գ. | Ստացական դերանուանց ։ | 187. |
| յօդ. | Դ. | Յարաբերական դերանուան ։ | 190. |
| յօդ. | Ե. | Դիմորոշ յօդք ։ | 197. |
| Գլ. | Գ. | Ի վերայ բաղդատութեան Բայի ։ | 201. |
| յօդ. | Ա. | Տէր բայի ։ | 201. |
| յօդ. | Բ. | Խնդիր բայի ։ | 211. |
| յօդ. | Գ. | Ի վերայ Աներեւոյթ բայի ։ | 218. |
| յօդ. | Դ. | Ի վերայ Անձնական բայի ։ | 221. |
| Գլ. | Դ. | Ի վերայ բաղդատութեան Նախադրութեան ։ | 225. |
| Գլ. | Ե. | Ի վերայ բաղդատութեան Մակբայի ։ | 228. |
| Գլ. | Զ. | Ի վերայ բաղդատութեան Շաղկապի ։ | 232. |
| Գլ. | Է. | Ի վերայ Շարադրութեան ։ | 235. |
| Գլ. | Ը. | Ի վերայ Մերձանութեան ։ | 240. |
| | | Յաղագս Առոգանութեան ։ | 240. |
| | | Յաղագս Տրոհութեան ։ | 243. |



Սէ՛ր դու գրոց՝ և մի՛ խաղուց աշակերտ․
մեղուի նըման՝ հաւուն՝ ի թուխս՝ ըղձակերտ։

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՄԱՌՕՏ·

### Զի՞նչ է Քերականութիւն·

ԲԱՐԲԱՌՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՒ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆ առ մօտաւորս կատարի կենդանի ձայնիւ, իսկ առ հեռաւորս լինի գրով. ուստի յերկու եղանակս բաժանի լեզուն մարդկային, 'ի ձայնաւոր, և 'ի գրաւոր։ Յանցանել ժամանակաց՝ երկոքին ևս առ սակաւ սակաւ փոփոխին, և կամ 'ի ներքս մտանելով թիւր և օտար խօսից՝ խանգարին, և դժուարին է, մանաւանդ և անհնարին՝ միալ նոցա անարատ։ Վասն որոյ հարկ եղև հնարել զկանոն ինչ, որով ուղիղն պահեսցի և առաւել ևս վայելչասցի. զոր և փիլիսոփայքն աշխատասիրեալ աւանդեցին. և այն է՝ Քերականութիւնն։

Ըստ սահմանի այս, Արհեստ ուղիղ խօսելոյ գրելոյ՝ ըստ կանոնաց իւրաքանչիւր լեզուի։ այսինքն. է այնպիսի արհեստ, որ ուսուցանէ ուղղապէս 'ի կիր առնուլ զմարդկային խօսս, եթէ ձայնիւ, և եթէ գրով։ Իսկ ուղիղ խօսելն իմացեալ լինի ըստ կանոնաց իւրաքանչիւր լեզուի. որովհետև իւրաքանչիւր նոքա ունին այլևայլ սովորութիւնս. և որ 'ի միումն ուղիղ է, յայլում լեզուի լինի թիւր և անկարգ. ուստի պիտոյ է զի իւրաքանչիւր պահեսցէ զիւր յատուկն առ 'ի լինել ուղիղ։

Եւ քանզի խօսքն մարդկային ձևանայ 'ի չորից իրաց, զայնցանէ ուսուցանէ և քերականութիւնն,

և ասին մասունք նորա․ որք են Գիր, Վանկ, Բառ, Բան։

Գիրն է Գիծ ինչ նշանակիչ ձայնի․ իբր․ ձևաւոր և կարգեալ գծուած ինչ, որ հնարեալ է առ ՚ի նշանակել զձայն։ Իսկ տառ է մարդկային ձայնն՝ որ ընդ գրոյն կապեալ է․ իբր․ ա․ բ․ գ․ հայեցեալ ՚ի ձևն միայն, գիր ասի․ և յորժամ հանես զձայնն, ասի տառ։

Յորժամ մի, կամ բազում գիր կապեալ, միով հնչով ելանէ ՚ի բերանոյ, ասի Վանկ։ Ուստի վանկն է մի յօդաւոր հնչումն․ իբր միով հնչմամբ կապեալ կամ յօդաւորեալ ձայն մարդոյ․ իբր․ ա, աղ, աղբ։ Իսկ կապել զգիրս՝ ասի հեգ, հեգել։

Յորժամ վանկն ոչ նշանակէ զինչ, մնայ լոկ վանկ․ իբր բէ, կը, մա․ որք ՚ի մեր լեզու ոչ նշանակեն ինչ․ իսկ յորժամ նշանակէ զինչ, լինի բառ։ Ուստի բառն է Ձայն կարգեալ ՚ի նշանակել ինչ․ իբր անմասնի մարդկային ձայն՝ որ կարգեալ է ՚ի նշանակել զայլ իր․ իբր ա կա մայ, առեալ զատաբար՝ երեք վանկ են, և աստ ոչ նշանակեն․ բայց միանգամայն՝ լինի մի բառ, և նշանակէ աշխարհօրէն՝ չուզելով, նաչարի։

Եթէ նշանական բառք այնպէս դասաւորեսցին, զի յայտնեսցեն զմիտս մարդոյն, յայնժամ լինի Բան։ Ուստի բանն է Կարգաւոր բառից՝ յայտնիչ մտածութեան․ իբր․ բառքն այնպէս շարեալք իցեն, զի զխորհուրդն ՚ի միտս եղեալ յայտնեսցեն։ Վասն այսորիկ բազում բառք խառնիխուռն եդեալք՝ ոչ յայտնելով զմիտս, բան ոչ ասին․ որպէս, մի սպիտակ զի առնել մազ կարես կամ ոչ սեաւ։ Սակայն կարգաւ շարեալք, կազմեն այս բան․ Զի ոչ կարես մազ մի սպիտակ առնել կամ սեաւ․ որ զիմացումն մտաց յայտնելով ասել կամի աշխարհօրէն․ զի դու չես կարող գլխուդ մէկ մազը ճերմակ ընել, կամ սև ընել։

Յառաջելոցս յայտնի եղև, թէ ՚ի բանն երկու ինչ գտանի։ Մի՝ բառքն, իբրև նիւթք․ և երկրորդն՝ կարգաւ դասաւորութիւն կամ շարք բառիցն։

Բառքն գոլով բազմապիսի, հին քերթողքն վասն դիւրութեան ուսանողաց բաժանեցին յութն, որք ասին մասունք բանի։ Եւ են սոքա, Անուն, Դերանուն,

Բայ, Ընդունելութիւն, Նախադրութիւն, Մակբայ, Շաղկապ, Միջարկութիւն: Իսկ կարգաւորեալ դասաւորութի այսոցիկ՝ ասի Բաղդասութիւն. որ ՚ի միասին կամ կից դասել զբառս:

Իսկ աստ ՚ի վերայ երկուց այսոցիկ խօսի Քերականութիւն. ուստի և մեք յերկուս գիրս բաժանելով զայս համառօտ Քերականութի, յառաջնումն գնեմք որ ինչ հարկաւոր գիտելիք կան ՚ի վերայ ութ մասանց բանին: Յերկրորդումն ծանուցանեմք զբաղդասութի նոցա, որ և ասի Համաձայնութիւն ութ մասանց:

Ի կարճառօտ Քերականութեանս ոչ է հարկ խօսել յատկապէս ՚ի վերայ երկուցն, որ Գրոյ և Ձայնի. վասն զի մանկունքն արդէն ուսեալ են զգլխաւոր գիտելիսն այսոցիկ ՚ի մէջ Այբբենարանին: Այս բաւական է յիշել միայն, թէ այբուբենն ձևացուցեալ ՚ի ձեռն Մեսրոպայ՝ ՚ի սկզբանն էր երեսուն և վեց. յետոյ յաւելան օ, և ֆ, որով եղև երեսուն և ութ: Ի սոցանէ ոմանք ասին Ձայնաւոր, զի միայնակ առանց այլ գրոյ հանեն զձայն իւրեանց. և են այսոքիկ ութ. ա, ե, է, ը, ի, ո, ւ, օ: Իսկ մնացեալ երեսուն գիրք՝ ասին Բաղաձայն. զի առանց այլ գրոյ ոչ հանեն զձայն:

Փոյթ արասցէ վարժապետն՝ զայսոսիկ տեղեկութիւնս բարւոք իմացուցանել աշակերտին. վասն զի բազում դիւրութի լինի ուսանողին, և փութով սկսանի հասկանալ զուսեալս իւր:

Գիր ՚ի տես աչաց. Վանկ ճարակ շրթանց.
Բառ յայտնիչ իրաց. Բան յազուրդ մտաց.
Ի Քերականէն՝ այս քեզ ըստացուած:
Թէ ճարտար գըծես, վայելուչ հեգես,
Բառըս քեզ գանձես, և բանս յօրինես,
Այսու ըննաւից՝ զօրեալ բանեղ ես:

# ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

## Յաղագս ութ մասանց բանին ։

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### Յաղագս Անուան ։

'Ի կարգի ութ մասանց բանին՝ առաջին է Անունն. և իմանի, ձայն բանի՝ որ նշանակէ զիրն այս ինչ, կամ այսպիսի ինչ ։ Օր. բառքս՝ մարդ, հաց, ջուր, արև, են անուանք, և նշանակեն զինչ իր լինելն. և այսպիսիք ասին գոյական անուն ։ Իսկ բառքս՝ բարի, սուրբ, քաղցր, պայծառ, նշանակեն որպիսի լինել իրին. և ասին ա-ծական անուն. վասն զի ածեալ դնին մերձ գոյական անուանն առ 'ի նշանակել զնորա որպէսն. օր. մարդ բարի, հաց սուրբ, քաղցր ջուր, պայծառ արև ։

'Ի վերայ իւրաքանչիւր անուան մտածի այլևայլ եղանակ ըստ նշանակութեան նորա, և ըստ կազմու-թեանն. և այս կոչի Պարագայ. որք են վեց. սեռ, թիւ, տեսակ, ձև, հոլով, հոլովումն ։

2. Սեռ, որ ազգ. յորժամ անուանն նշանակէ զա-րու կամ զէգ ։ Առաջինն ասի արական. օր. հայր, եղբայր, Թագաւոր, վարդապետ ։ Իսկ երկրորդն իգական ասի. օր. մայր, քոյր, դշխոյ, Մարիամ ։

3. Ձև, նշանակէ ձևացումն. յորժամ անուանն կամ ինքնին ձևացեալ է, և կամ կցեալ ընդ այ-լում ։ Եւ երեք է ձևն. յորժամ անուանն ինքնին է միայնակ, ասի պարզ անուն. օր. մարդ ։ Յառաջոյ ու-նելով զգիր մի կամ զանուան մասնիկ ինչ, ասի բա-ղադրեալ. օր. անմարդ, տմարդի ։ Իսկ ընդ այլում նշանա-կան բառի կապեալ, ասի բարդ. օր. մարդասէր ։

4. Տեսակ, իմացեալ լինի եղանակ ինչ կազմութեան անուանն. և երկու է. Նախադաս, յորժամ անուանն կայ իւր յատուկ եղանակաւն. օր. մարդ, լոյս ։ Եւ ա-ծանցական, յորժամ անուանն ունելով 'ի վերջ իւր

զանազան գիր մի, կամ մասնիկ մի, փոխել զնշանակութիւն. որպէս մարդկային, լուսաւոր ։

5. Թիւ. որ է համրանք. և իմանի թէ անուանն զքանի նշանակէ. եթէ զմի նշանակէ, ասի եզական. որ ձայնիւն զմի նշանակէ, կամ միում եւս ասի. որպէս մարդ, որ միոյ մարդոյ եւս ասի ։ Եթէ զբազումս նշանակէ ձայնիւն, ասի յոգնական. որպէս մարդք ։

6. Հոլով. պտոյտ կամ թաւալումն. և իմանի յորժամ նոյն անուանն այլևայլ կերպիւ դառնայ, ընդունելով 'ի սկիզբն կամ 'ի վերջն զգիր մի. որպէս մարդ ասի հոլովիլ դնելով, մարդոյ, մարդով, 'ի մարդ, զմարդ ։ Այսպիսի հոլով 'ի մերում լեզուի յատկապէս վեց է. որ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական ։

7. Հոլովումն. իմանի զանազան կերպ փոփոխութեան անուանց 'ի վերջ իւրեանց. որպէս յորժամ մի անունն վերջանայ ի, է, իւ, ից, իւք. և այլ անուն վերջանայ ոյ, ով, ոյ, ովք ։ Այսպիսի տարբեր վերջաւորութիւն անուանց՝ ոմանց լինի միակերպ, և ասի պարզ հոլովումն. և այլ անուանց մի հոլովն տարբեր լինի, և միւս հոլովքն լինին ըստ պարզ հոլովման. և այս ասի խառն հոլովումն ։

Պարզ հոլովումն համառօտ բովանդակի 'ի վեց, և խառն՝ 'ի չորս. և ընդ ամենն հոլովումն հայկական անուանց լինի՝ տասն ։ Եւ զամենայնն դնեմք յառաջիկայ շարածիդ ըստ վերջաւորութեանն՝ որով փոփոխին ըստ թուոյն, ըստ հոլովոյն, և ըստ հոլովման ։

## Տախտակ Հոլովմանց ։

| Կարգ. | Եզական. | | | Յոգնական. | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Սեռ. | Գործ. | Բաց. | Սեռ. | Գործ. | Բաց. |
| 1 | ի, | իւ, | է. | ից, | իւք, | ից ։ |
| 2 | ի, | աւ, | է. | աց, | աւք, | աց. |
| 3 | ոյ, | ով, | ոյ. | ոց, | ովք, | ոց ։ |
| 4 | ան, | ամբ, | նէ. | անց, | ամբք, | անց ։ |
| 5 | ու, | ու, | ուէ. | ուց, | ուք, | ուց ։ |
| 6 | եր, | երբ, | է. | երց, | երբք, | երց ։ |
| կմ | եղ, | եղբ, | | եղց, | եղբք, | եղց. |

Սեռ. Գործ. Բաց.

Խոնարհ. 1. ոյ. ոլ, եա, ոյ. եայ, եաք, ոլ։
2. ին. ամբ. անէ. անց, ամբք ։
3. ու. ու, ամբ. անց, ամբք ։
4. այ, եայ. աւ, եաւ. այ, եայ. . . . .

Ահա կարճառօտ բանիւ ծանուցաք զպարագայս Անուան, և զայլ ևս գիտելիս յետոյ ծանուցանեմք (Թիւ 59 եւ։) Այսմանօր գիցուք կարգաւ զօրինակս տասն հոլովմանց ։

---

# ՅՕԴՈՒԱԾ Բ.

## Կարգ Հոլովմունք ։

### 8. Առաջին կարգ հոլովման, ԱՐՔԱՅ.

| | Եզական. | | Յոգնական. | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | Արքայ. | Թագաւոր. | Արքայք. | Թագաւորներ. |
| Սեռ. | արքայի. | Թագաւորին. | արքայից. | Թագաւորներուն. |
| Տրա. | արքայի, յարքայ, ցարքայ. | Թագաւորին. | արքայից, յարքայս. | Թագաւորներուն. |
| Հայց. | զարքայ. | Թագաւորը. | զարքայս. | Թագաւորները. |
| Բաց. | յարքայէ. | Թագաւորէն. | յարքայից. | Թագաւորներէն. |
| Գործ. | արքայիւ. | Թագաւորով։ | արքայիւք։ | Թագաւորներով։ |

9. ԳԻՏԵԼԻՔ Ա. Նշխի օրինակաւս՝ զի յարելով 'ի վերջ եզական ուղղականին զգիրն ի, է, իւ, եղև սեռական, բացառական, գործիական ։ Իսկ յայսոսիկ գիրս յաւելեալ ք, ս, ց, եղեն յոգնական. ուստի յորոյ անուան վերջին յաւելուն այս յետինքս, են նշան յոգնականի ։

10. ԳԻՏԵԼԻՔ Բ. Այն գիր որ գնի յառաջոյ հոլովոյն, ասի Նախդիր ։ 'Ի հայցականին գնի զ. իսկ տրականն որ 'ի վերջն միայն փոփոխի, ասի ՅԵՐՋԱՀՈԼՈՎ տրական. և ուր յառաջոյ գնի գիր ինչ, ասի ՆԱԽԴԻՐ տրական ։ Յորժամ անունն սկսանի ձայնաւորաւ, նախդիրն ոչ գնի ի միայնակ, այլ յ, կամ 'ի յ ։ Իսկ ուր բաղաձայնիւ սկսանի անունն, ոչ գնի յ, այլ 'ի ։ Այսպէս իմանալ պարտ է 'ի վերայ բացառա-

կանոն եւ ։ Իսկ ա, յ, դնի առ ամենայն անուն թէ բաղաձայնիւ սկսանիցի, եւ թէ ձայնաւորաւ. որ յարքայ, յարքայ, ա արքայ, 'ի յարքայէ, 'ի թագաւոր, յթագաւոր, ա թագաւոր, եւ։ Նոյնպէս խնդիր 'ի վերայ ամենայն անուանց, եւ դերանուանց ։

11. Գետեւեալ Գ. Յետին գրոց Քերականութե 'ի վերայ վեց հոլովիցն յաւելլին այլ եւ չորս, փոփոխելով եւ կամ յաւելլով զնախդիր մի ։ 'Ի բացառականն փոխանակ ընախդրին դնելով դ, ասացին դադմախան. 'ի գործիականն յաւելեալ ղ, ասացին ղուբառախան. 'ի վերջահոլով տրականն եղեալ յ, կամ է, ասացին Ներքոյախան. առ ուղղականն դնելով ով, ասացին կոչախան ։ Սակայն այսոքիկ ոչ են յատկապէս նոր հոլովք, այլ փոփոխմամբն յաւելուն զնշանակուի նախադրութե, զոր ծանուցաք յիւրում տեղւոջ. (Թիւ 118. 124. 126.) բայց վասն գիտելոյ դիցուք յառաջիկայդ ։

| | | |
|---|---|---|
| Պատմ. | զարքայէ. | Բադշահըրըն Վըրա կիմ համար. |
| Պարառ. | զարքայիւ. | Բադշահըրըն էթրաֆը. |
| Ներքոյ. | յարքայի. | Բադշահըրըն իչը. |
| Կոչակ. | ով արքայ. | Էյ Բադշահըմ ։ |

12. Նուանք այսր հոլովման՝ ոմանք առանց փոփոխելոյ անուան 'ի վերջն զգեն մի ձայնաւոր. ոմանց մջին ձայնաւորն փոխադրի 'ի վերջն. ոմանք 'ի բաց թողուն զձայնաւոր մի, կամ փոխեն զայն յայլ ձայնաւոր. եւ ոմանք միայն 'ի յոգնականն 'ի գործածին ։ 'Ի ներքոյ եղեալ օրինակօքն ցուցանի այսմենայն ։

| | | |
|---|---|---|
| Ազատ. | ազատի. | Յար, Սարալ ։ |
| աղեստ. | հեստի. | Չէնահաթ ։ |
| բանտ. | բանտի. | Զընտան, Հափիս ։ |
| գահ. | գահի. | Թէծ աթոռ, Թախթ. Բարձր տեղ ։ |
| գան. | գանի. | Ծեծ, Թեօթէք ։ |
| զրահ. | զրահի. | Զըրհ, Օխնէպէնդ ։ |
| իժ. | իժի. | Էնկէրէք Եըլան ։ |
| մալտ. | մալտի. | Ձէնդ. Եւ՝ Սարբ աղա ։ |
| բիծ | բծի. | Լէքէ ։ |

| | | |
|---|---|---|
| *երկին.* | *երկնի.* | երկինք, կէօյ ։ |
| *սիրտ.* | *սրտի.* | սիրտ, եուրէք ։ |
| *ատեան.* | *ատենի.* | դիվան ։ |
| *լեարդ,* | *լերդի.* | ճիէրէ սեւտայ ։ |
| *խուլ,* | *խլի.* | խուլ, սաղըր ։ |
| *հրեայ,* | *հրէի.* | չըֆութ ։ |
| *գմբէթ,* | *գմբեթի.* | գուպպէ ։ |
| *լիղձ,* | *ըղձի.* | ֆաֆաք, տըլը ։ |
| *կոյս,* | *կուսի.* | կըզ, պիքեր ։ *եւ՝* կուզ, Թաքաֆ ։ |
| *հէն,* | *հինի.* | ղուրսան, չէթէճի ։ |
| *առօրեայ,* | *առօրէի.* | պէյ օրլան, անջաւոր ։ |
| *փախստեայ,* | *փախստէի.* | ֆախըօղ, ֆաքրան ։ |
| *գնացք,* | *գնացից.* | երթալը, ֆաըլթմաք, կէտիշ ։ |
| *խնջոյք,* | *խնջոյից.* | ջեմլիս, շէնլիք ։ |

---

## 13. Երկրորդ պարզ հոլովումն, ԿԱՐԳ.

| | Եզական. | | Յոգնական. | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | *կարգ.* | կարգ. | *կարգք.* | կարգեր. |
| Սեռ. | *կարգի.* | կարգինը. | *կարգաց.* | կարգերունը. |
| Տր. | *կարգի,* | կարգին. | *կարգաց,* | կարգերուն. |
| | *'ի կարգ.* | | *'ի կարգս.* | |
| Հայց. | *զկարգ.* | կարգը. | *զկարգս.* | կարգերը. |
| Բաց. | *'ի կարգէ.* | կարգէն. | *'ի կարգաց.* | կարգերէն. |
| Գործ. | *կարգաւ.* | կարգով. | *կարգաւք.* | կարգերով։ |
| | | | *կամ գօք ։* | |

### 14. Անուանք ըստ այսմ հոլովման ։

| | | |
|---|---|---|
| *Ագարակ.* | *կի, կաւ, կաց.* | Արտ. չիֆթլիք ։ |
| *արու.* | *րուի, ուաւ.* | որջ, էրքէք ։ |
| *գաւառ.* | *ռի, ռաւ.* | նահիեայ, այալէթ ։ |
| *գերան.* | *նի, նաւ.* | տիրէկ ։ |
| *զինուոր.* | *րի, րաւ.* | ճէնկճի ։ |
| *խտրոց.* | *ցի, ցաւ.* | պէօլմէ, այրը ։ |
| *կշռորդ.* | *դի, դաւ.* | կէչէաք, խանթար, թէրազ ։ |
| *շինող կամ օղ.* | *ղի, ղաւ.* | շինօղ, եափըճը ։ |

*Այսպէս առանց փոփոխելոյ հոլովին այլ եւ անուանք վերջացեալք* ակ, ան, կան, րան, որ, որդ ոյ, ոց, ող ։

Անդրանիկ · անդրանկի · կաւ · Անջինէհը · իլք էվլատ ։
բժիշկ · բժշկի · կաւ · հէքիմ ։
գրիչ · գրչի · չաւ · գրօղ ։ եւ՝ խալէմ ։
դպիր · դպրի · րաւ · քեաթիպ · եւ՝ տիրացու ։
պարիսպ · պարսպի · պաւ · պատ · հիսար ։

Այսպէս փոփոխին անուանք վերջացեալք իկ, իծ ։

Ահեակ · ահեկի · կաւ · Ձախ դի · սօլ թարաֆ ։
աղմուկ · աղմկի · կաւ · իրարանցում · կէւկէլէ ։
դէտ · դիտի · տաւ · կէօզճի ։
դեւ · դիւի · ւաւ · սատանայ · ճին ։
հովիւ · հովուի · ուաւ · չօպան ։
վարագոյր · գուրի · րաւ · ֆէրտէ ։
Արտասուք · սուաց · ուաւք · Արցունք · կէօզ եաշը ։
արհաւիրք · աւրաց · րաւք · Վախնալու բաներ ։
լանջք · լանջաց · ջաւք · կուրծք · կէօքս ։
միտք · մտաց · մտաւք · Միտք · ֆիքիր ։

Օրինակօքս իմանի այլ և այլ եղանակ փոփոխման անուանց այսր հոլովման ։ Իսկ անուանք որոց յոքնակամն վերջանայ եայք, այք, կարեն՝ի սեռականն և՝ի գործիականն լինել ՝ի երկուց եւ հոլովմանց · որ ·

Ահեկեայք · կեայց, կամ կեաց · կեօք · Ձախ դիւաները ։
այծեայք · ծեայց, կամ ծէից · ծէիւք · այծու մաշէ հալ գուտակ ։
ապագայք · գայից, կամ գայց · գայիւք · գալիքները, ըլլալիք ։
երեքօրեայք · օրէից · օրէիւք · իրեք օրվան ։
հազարամեայք · մէից կամ մեայց · հազար տարվան ։
հայկազնեայք · նեայց կամ նեաց · հայեր · հայոց ազգէ եղածները ։

---

## 15. Երրորդ պարզ հոլովում, ՄԱՐԴ ·

| | Եզական · | | Յոգնական · | |
|---|---|---|---|---|
| Ուղ · | Մարդ · | Մարդ · | Մարդք · | մարդիք · |
| Սեռ · | մարդոյ · | մարդուն · | մարդոց · | մարդկանց · |
| Տրա · | մարդոյ, մարդում՝ի մարդ · | մարդու · | մարդոց, ՝ի մարդս · | մարդկանց · |
| Հայց · | զմարդ · | մարդը · | զմարդս · | մարդիկները · |
| Բաց · | ՝ի մարդոյ · | մարդէն · | ՝ի մարդոց · | մարդկանցմէ · |
| Գործ · | մարդով · | մարդով · | մարդովք ։ | մարդկանցմով ։ |

Նայ սորա և այլ յոգնական մասնկաւս էք․ որ հո-լովի, մարդիկ, մարդկան, 'ի մարդկանէ, կամք, կամ կաւ։ Բայց ոչ լինի, մարդիկք, մարդկանց, զմարդիկս :

16. Գնիցուք աստանօր զանուանս այսր հոլովման ըստ այլ և այլ փոփոխութեան նոցա :

| | | |
|---|---|---|
| Աճիւն, | աճիւնոյ․ | Տաւ մուխէր : |
| ամպ, | ամպոյ․ | ամբ, պուլութ : |
| անօթ, | անօթոյ․ | աման, գապ : |
| բոյ, | բոյոյ․ | բոյ, ուզէք : |
| երազ, | երազոյ․ | էրազ, րուեա : |
| թեւ, | թեւոյ․ | թեւ, գօլ, գանատ : |
| որթ, | որթոյ․ | ասմա : |
| քաղցու, | քաղցւոյ․ | նոր գէնէ, շէրա : |

Նոյնպէս առանց փոփոխելոյ հոլովին անուանք վերջացեալք 'ի ած, ուած․ որ̄․ Արարած, շինուած եւ̄ ։ Իսկ Ա̄Ծ անունն՝ առեալ 'ի վերայ Ճշմարտին Ա̄ստուծոյ, հոլովի՝ աստուծոյ․ բայց 'ի վերայ կռոց դնի՝ աստուածոյ :

| | | |
|---|---|---|
| Անկողին, | անկողնոյ․ | Տէօշէկ : |
| անասուն, | անասնոյ․ | հայվան, տավար : |
| բլուր, | բլրոյ․ | ճաքալ, թեփէ : |
| թուղ, | թղոյ․ | թասղ, քեաղըտ : |
| կնիք, | կնքոյ․ | մէօհիւր, թամղա : |
| սուրբ, | սրբոյ․ | ազիզ, մուգատտէս, թեմիզ : |
| վերնային, | նայնոյ․ | վէրի, երքնուի, բարջը : |
| տարածեալ, | ծելոյ․ | տարտըլմըշ, երքնըջած : |

Նոյնպէս ձայնաւորն թողեալ լինի յայլ անուանս որք վերջանան ին, ային, ուն, եալ։ Իսկ հուր, ջուր, 'ի սեռականն լինին՝ հրոյ, ջրոյ․ 'ի գործիականն՝ հրով կամ հուրբ, ջրով կմ̄ ջուրբ․ յոգնակի սեռա-կանն՝ ջրոց կամ ջուրց։ Բայց հուր, ոչ վարի 'ի յոգնականն :

| | | |
|---|---|---|
| Անիւ, | անուոյ․ | Թէքէրլէկ : |
| ձէթ, | ձիթոյ․ | զէյթեաղը : |
| յոյս, | յուսոյ․ | ումուտ : |
| սէր, | սիրոյ․ | մուհապպէթ : |
| Անուրջք, | անրջոց․ | Երազէ դէօնէ, խէյալ : |
| պահք, | պահոց․ | պաք, փէրհիզ : |
| տիք, | տիոց․ | սէնէ, թարիխ, եաշ : |

17. Դիտողութիւն Ա. Յատուկ տրականն այսր հոլովման՝ ըստ կանոնի նախնեացն վերջանայ ում, մանաւանդ անուանցն որք վերջանան ին, եալ, ի. որ. վերնում, մարդկայնում, ատացելում, այսպիսում, պղծում, սրբում եւն։ Իսկ անուանք որք են ընդ այլովք հոլովմամբք, սակաւ ուրեք վերջանան ում, եւ պարտ է զգուշանալ։

18. Դիտողութիւն Բ. Անուանք որք են ընդ այսու հոլովմամբ, 'ի սեռականն եւ 'ի բացառականն լինին երբեմն ըստ առաջին կամ երկրորդ հոլովման. որ. Թուղթ, թղթոյ կամ թղթի, 'ի թղթէ։ Գիշեր, րոյ կամ րի, րաց։ Թեւ, թեւոյ, թեւի, 'ի թեւէ։ Ողկոյզ, կուզոյ, կուզի, կուզաց։ Մարմին, մարմնոյ կամ մնի։ Աստուած, ծոյ կամ ծի, եւն. (տես եւ թիւ 131։)

19. Դիտողութիւն Գ. Բազում անգամ յոքնակի գործիականն երկու եղանակաւ եւս գրի, որ ով, աւ, ձայն նոցա նման գոլով. որ. բերանովք, եւ նաւք. ցաւովք եւ ցաւաւք. ազգաւք եւ ազգովք եւն։

---

20. Չորրորդ պարզ հոլովումն, ՀԻՄՆ։

| | Եզակի. | | Յոգնակի։ | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | Հիմն. | Թէմէլ. | Հիմունք. | Թէմէլլէր. |
| Սեռ. | հիման. | Թէմէլինը. | հիմանց. | Թէմէլլէրինը. |
| Տր. | հիման, 'ի հիմն. | Թէմէլէ. | հիմանց, 'ի հիմունս. | Թէմէլլէրէ. |
| Հայց. | զհիմն. | Թէմէլի. | զհիմունս. | Թէմէլլէրի. |
| Բաց. | 'ի հիմանէ. | Թէմէլտէն. | 'ի հիմանց. | Թէմէլլէրտէն. |
| Գործ. | հիմամբ. | Թէմէլիլէ. | հիմամբք։ | Թէմէլլէրիլէ։ |

Տեսանես յօրինակիս՝ զի սեռական շինօղ այբն մտանէ 'ի մէջ երկուց բաղաձայնից, եւ միշտ սոյնպէս լինի՝ յորժամ յետին բաղաձայնն է ն։

Ակն, ական. կանք, կունք. Այն. եւ՝ Ջրէ աչ. եւ՝ Ճէվահիր։
աղեղն, աղեղան. ղունք. Աղեղ, Եայ։
ատամն, ատաման. մունք. Ատամ, Տիշ։
գագաթն, թան. թունք. Գագաթ, Գըրախ, Թէփէ։
դեղին, դեղման. մունք. Բօւրդ, Եաբաղը։

| | | |
|---|---|---|
| Երիկամն . | ման . մունք . | պէօպրէկ : |
| Թիկն . | թիկան . կունք . | կանատ , օմուզ , արգա : |
| Հիւսն . | հիւսան . սունք . | տիւլկէր , մարանգօզ : |
| Ձիգն . | ձգունք , ձգանց . | ճէհտ , ճէհիթ , ղայրէթ : |
| Որոմն . | ման . մունք . | օրօմ , տէլիճէ : |
| Ջերմն , | ման . մունք . | թէնտ , ըսըթմա : |
| Սերմն , | ման . մանք . | հուպուպ , թօխում : |
| Անուն , | անուան , ուանք . | անուն , ատ , իսմ : |

Սորա յոգնական՝ անուանք , զանուանս , սակաւ ուրեք գտանի :

| | | |
|---|---|---|
| Այծեամն . | այծեման . մունք . | Վայրի այծ : |
| Եղէգն . | եղեգան . գունք . | գամըշ : |
| Ոլոռն . | ոլեռան , ռունք . | ոլոռ , նոր հատին . ֆասուլիա : |
| Պտուղն . | պտուտան . տունք . | [illegible] : |
| Պաշտօն . | պաշտաման . մունք . | [illegible] , [illegible] : |

Հոլով այսորիկ , պաշտօնի , 'ի պաշտօնէ , ոչ գոյ . սակաւ ուրեք գոյ , 'ի պաշտօնս , զպաշտօնս :

| | | |
|---|---|---|
| Ասեղն . | ասղան . ղունք . | Ասեղ , իգնէ : |
| Բուռն . | բռան . բռունք . | [illegible] , [illegible] . [illegible] , [illegible] : |
| Շուրթն . | շրթան . թունք . | [illegible] , [illegible] : |
| Սկիզբն . | սկզբան . բունք . | էվվէլ . պաշ . իպթիտա : |
| Տուն . | տան . տունք . | խանէ . էվ : |
| Դուռն . | դրան , դրունք . | դուռ . գափու : |

կամ դուրք . դրաց . 'ի դուրս :

21 . Այսպէս հոլովին անուանք վերջացեալք ումն , ին , թին , ուստ , իստ , իկ , եւն : Բայց շատից յոգնակի ուղղականն ոչ լինի ունք , այլ 'ի վր եզականին դնի ք միայն . այլ եւ հոլովք ինչ սոցա լինին ըստ այլոց հոլովմանց . որ .

| | | |
|---|---|---|
| Պաշտումն . պաշտման . մունք . | | Իպատէթ : |
| Խոստումն . | խոստման . մունք . | խօսք տալը : |
| Անկիւն . | կեան . կեամբ . | անկիւն . քէօշէ . |
| յանկեանէ կամ յանկիւնէ . | | պուճագ : |
| անկիւնք . կեանց . | | |

| | |
|---|---|
| արիւն , արեան · արեամբ · | արեան · ղան · |
| յարենէ · արիւնք · եանց · | |
| կորիւն · կորեան · եամբ · | գազանի ձագ · էնիկ : |
| 'ի կորիւնէ · իւնք · եանց · | |
| սիւն · սեան · սեամբ · 'ի սեա_ | սիւն · տիրեկ : |
| նէ · սիւնք · սեանց · | |
| ստին · ստեան , ստեամբ · | ծիծ · մէմէ : |
| 'ի ստենէ · ստինք · ստեանց · | |
| զօրութիւն · թեան · թենէ · | ուժ · գուվվէթ : |
| թեամբ · թիւնք · թեանց · | |
| կորուստ · կորստեան · տենէ · | կորուսնիլը , կորած բան : |
| տեամբ · կորուստք · | |
| փախուստ · խստեան · տենէ · | փախչիլը · գաչմա : |
| տեամբ · փախուստք · կամ | |
| խստի · տիւ · | |
| հանգիստ · գստեան · տենէ · | հանգչիլը · ըռահաթլըք : |
| տեամբ · կամ գստի , տիւ · | |
| աղջիկ · աղջկան · կանէ · | աղջիկ տղայ , գըզ : |
| կամբ · կունք · կանց · | |
| կամ կաց · կօք · | |
| ծաղիկ · ծաղկան · կունք · | ծաղիկ · չիչէք : |
| կանց · կամ կի · 'ի ծաղկէ · | |
| կաւ · ղիկք · կաց : | |
| փոքրիկ · փոքրկան · կունք , | պզտիկ · քիւչիւճէք : |
| կանց · | |
| տեսիլ · տեսլեան · լենէ · | երեւնալք · տեսք · |
| լեամբ · տեսիլք · լեանց · | երազ : |
| ծնունդ · ծննդեան · դեամբ · | ծնանիլը · տօղուշ · |
| դենէ · ծնունդք · ծննդոց , | ծնածը · տօղմա · այ : |
| դովք · | |
| խորհուրդ , հրդեան · դենէ · | ծածուկ բան · սըրր · |
| դեամբ · խորհուրդք · կամ | մուշաւէրէ : |
| հրդոյ , դով , դի , դիւ · | |
| ժողովուրդ · վրդեան · դենէ · | ժողովուրդ · հալխ · |
| դեամբ · վուրդք · կամ վրդի · | ճէմահէթ : |
| դէ · դիւ · վրդոց · դովք · | |
| մանուկ · մանկան · կունք · | տղայ , մանչ , օղլան : |
| կանց · | |
| վաղիւ · վաղուեան · 'ի վաւ | վաղը , եարըն : |

Ղուենոյ. կամ վաղուի. 'ի վաղուէ.

տիւ. տուընջեան. ջենոյ. ցորեկ. ցերեկուան։

ջեամբ. տուք, 'ի տուէ.

'ի տուընջենի.

22. Գիտելի. Անուանք եղանակաց տարւոյ՝ գարուն, աշուն, ամառն, ձմեռն, սակաւ անգամ հոլովին, գարնան, աշնան եւն. այլ փոխանակ նոցա հոլովին ածանցականքն, գարնայնի կամ գարնանի, աշնայնի, կամ աշնանի, ամառայնի կամ ամառանի, ձմեռայնի կամ ձմեռանի. եւ հոլովին ըստ երրորդ հոլովման (15) գարնայնոյ, աշնայնոյ եւն։

Նմանապէս անուանք վերջացեալք 'ի իւն, որք կոչին՝ բայանուն, հոլովին միայն նախդրիւ. (132) ոպ, լալիւն, գոչիւն, հնչիւն, շնչիւն, հոլովին, 'ի լալիւն, զլալիւն, եւն. եւ ոչ լինի՝ լալեան, գոչեան։ Իսկ եթէ պիտոյ լիցի հոլովել, 'ի գործ ածին նոյնանշան անուանքն վերջացեալք ումն, ման, ոպ. լալումն, լալման, գոչումն, գոչման, շնչմունք, շնչմանց եւն։

---

## 23. Հինգերորդ կարգ հոլովման, ԳԱՆՁ.

| | Եզական. | | Յոգնական. | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | Գանձ. | Խազնա. | Գանձք. | Խազնաներ. |
| Սեռ. | գանձու. | խազնայինը. | գանձուց. | խազնաներունը. |
| Տր. | գանձու, 'ի գանձ. | խազնային. | գանձուց, 'ի գանձս. | խազնաներուն. |
| Հայց. | զգանձ. | խազնան. | զգանձս. | խազնաները. |
| Բաց. | 'ի գանձէ. | խազնայէն. | 'ի գանձուց. | խազնաներէն. |
| Գործ. | գանձու. | խազնայով. | գանձուք։ | խազնաներով։ |

24. Անուանք այսր հոլովման երբեմն եւս վերջանան ըստ այլ հոլովման՝ վասն նման հնչման ձայնաւորի նոցա. ուստի գանձ կարէ եւս հոլովիլ, գանձի, ձիւ կամ ձով, ձից, ձիւք, 'ի գանձուէ։

Ագռաւ, ռաւու, ոյ. Ագռաւ, ղարղա։
այգ, այգու, ոյ, ուէ. արեւծագ, սապահ։
առիւծ, ծու, ծոյ. առիւծ, ասլան։

ասր. ասու, յասուէ. բուրդ, եափաղը :
  կամ րոյ, րով.
արև. արևու. արև. կիւնէշ :
գրաստ. տու. տով. բեռ տանօղ ձի, ջորի ևն :
դաս. դասու, սի, սիւ. դաս. պէօլիւք :
զարդ, և արդ. դու, դուէ. զարդ. սաղմիլըը. տէտէլին :
  դի. դից. դիւք.
զգեստ. տու. տուէ. հագուստ. հալաւ. էսպապ :
  տու, տով.
զօր. զօրու. ուէ. զօրք. ասկէր :
  զօրաց. րաւք.
ժամ. ժամու. մաւ. ատէն, սահաթ :
խրատ. խրատու. տուէ. խրատ. էօկիւտ. թէրպիյէ :
համար. րու, րոյ. րուէ. համրանք. հէսապ :
Նաւ. նաւու. ւի, նաւ, կէմի. գայըգ :
  ուց. աց.
որթ. որթու. թուց. հորթ. տանա :
սակաւ. ւու, ուց. քիչ. ազ :
սոլ. լու. լոյ, լի. սոլ, կէրանէրի պաշմաղլըը :
  լու. լով. անօթութիւն. գըթլըգ, աճլըգ :
Աղուէս. աղուեսու, Աղուէս. թիլքի :
  կամ ուեսու. սոյ.
զէն. զինու. նով. զէնք. սիլահ թագըմը :
ինձ, ընձու. ձուց. գափլան :
ցուլ. ցլու, ցլոյ. պուղա :
Բարք. բարուց. Թապիէթ :
պարտք. պարտուց. պարտք. պօրճ :
բոլք. բոլոց, լոց, լաց. օճախ խալքը, և՛ նոպէն :

25. Ներքոյ այսր հոլովման են անուանք՝ որոց եզակի սեռականն վերջանայ ու, և յոգնակի ուղղականն՝ ունք. և հոլովք ինչ ևս տարբեր լինին. որ՞

Թանձր. թանձրու կամ ձու. ձրունք. Թանձր. խալըն :
  կամ ձունք. ձունց. ձրուք.
ծաղր, ծաղու. ծաղք, ղուց. ղուք. ծիծաղ, ծիծա-
  ղէլը, մասխարա :
ծանր. ծանու. նունք. նունց, նուք. ծանր, աղըր :
մանր. մանու. նունք. նունց. նուք. մանր, ուֆագ :

բարձր . բարձու . ձու կամ ձամբ . Եասդըգ , Եօգօէգ :
ձունք . ձանց . ձամբք :
մեղր . մեղու . ( մեղթ՝ մեղեր . Մէլ . պալ :
ղերք . մեղրիւք . )
քաղցր . ցու . ցունք . ցունց . ցուք . անուշ . թաթլը :
փոքր . փոքու . քուէ . քու . քումբ . պզտիկ . քիւչիւգ :
քունք . քունց . քումբք :
յոքունք . յոքունց . քումբք . շատոնք . չօգլար :
անօսր . անօսրունք . րունս . նօսրը . եարայ . հաքիֆ .
(նախդրիւ . ) ինձէ :

---

## 26. Վեցերորդ պարզ հոլովումն. ԱՂԲԻՒՐ.

| | Եզական . | Յոգնական . |
|---|---|---|
| Ուղ. | Աղբիւր . | Աղբիւրք . աղբերք . |
| Սեռ. | աղբեր . | աղբերց . աղբերաց . |
| Տր. | աղբեր . յաղբիւր . | աղբերց . բաց . յաղբերս , բիւրս . |
| Հայց. | զաղբիւր . | զաղբերս . բիւրս . |
| Բաց. | յաղբերէ . յաղբիւրէ . | յաղբերց . բաց . |
| Գործ. | աղբերբ . աղբերաւ : | աղբերբք . բաւք : |

27. Ըստ այս հոլովման վերաբերեալ անուանք՝ որոց վերջին գիրն լինի ր , ունելով և զայլ բաղաձայն մի . օր.
Անդր . անդեր , կամ դերի . դերէ . րաց , րաւք : Գոռա , շալլա . եւ՝ չանաք :
եզր . եզեր . յեզերէ . եզերբ . րաւ . րաց . րաւք : ծայր . քէնար . ուճ :
կայսր . կայսեր . սերէ . րաւ . րաց . րաւք : չայսր , չասար . հիւնքեար :
համր . համեր . մերէ . մերց . մերբք . Ճաւանչ . տիլսիզ :
ոսկր . ոսկեր . կերէ . կերաւ . րաց . ոսկոր . քէմիք :
ուստր . ուստեր . տերէ . րաւ . րաց . Ճանչ շառակ . օղլան :
տագր . տագեր . գերէ . գերբ . գերց . տագր . գայն :
տարր . տարեր . 'ի տարրէ . րերբ . րերց . կամ րաւ . րաց . րաւք : տարերք . էծամեար . եւ՝ եանի ծը օմիզեր :
Ալիւր . ալեր . լերէ . րաւ . րաց : Ունը . ուն :
դուստր . դստեր . տերէ . տերբ , կամ տերաւ . րաց : աղջիկ շառակ . գըզ :
եղջիւր . եղջեր . ջերէ . ջերբ . ջերաւ . րաց . ջերբք .

ջերաւք · հօտօղ · դոտխօղ · եւ՝ թէկէ դոտխօղէ ։
լեառ · լեռեր · առերէ · առերք · բառ · բաց · նչխաէ չաէ է , 104 երէմ եկ ։

28. Այսպէս հոլովին նաև անուանք վերջացեալք 'ի ղ, համդերձ այլով բաղաձայնիւ · որ ·
Անգղ · անգեղ · գեղց կամ գեղաց · Ագռաւ Թռչուն ։
աստղ · աստեղ · տեղը · տեղաց , կամ՝ տեղց · տեղք կամ ղաւք · աստղ · Ելեմեն ։
արկղ · արկեղ · կեղը · ղաց · ղաւք · սնտուկ · սնդուկ ։
եղղ · եղեղ · եղեղը · եղղ · եղր ։
կոծղ · կոծեղ · ծեղը · կամ ծեղաւ · ղաց · կոծ · կոճղ ։
սինղ · սկեղ · սկեղը կամ ղաւ · ըրօ երէմ չաէ էմ բոտոն ։
սկուտեղ · ( սեռ · ) սկտեղ · տեղը · դէփսի , դաղար · կամ սկուտեղի , ղաւ , ղաց ։

Այսպէս հոլովի և անուանս Քոյր ։
Ուղղ · Քոյր · քեռ · 'ի քոյր · 'ի քեռէ · քերբ ։
( քոյր , 'ի քրոջէ , աշխարհաբար է ։ )
Յոգն · Քորք · քերց · 'ի քորս · 'ի քերց · քերբք ։

Կատարեցան վեց պարզ հոլովմունքն · գնեմք այսուհետև զխառն հոլովմունս ։ Այլ զի պարզքն բարուք յուշի տպաւորեսցին , նոյատեսցէ ոտանաւորս ։

Օ խառն 'ի բարձր՝ անցեալ յաթոռ՝ ըզգօն Արքայ ,
զմատեան նորէն՝ իւր Թլկնապահ ունի առ գահ ։
Իշխէ ծարտան , բայց օրինաց՝ է ընդ լծով ·
ընեն անխախտ՝ պահել ազգաց՝ յերկիր ընդ ծով ։
Որ 'ի գանձէ՝ գատարկման՝ ձեռնըն առատ ·
այլ Աւետարան՝ բարեաց գընայ՝ իբր հեղեղատ ։

1010
40324

# ՅՕԴՈՒԱԾ Բ.

## Խառն Հոլովմունք ։

Ասացաք 'ի վերոյ (7) թէ չորք են խառն հոլովմունք, և պատշաճին այնպիսի անուանց՝ որոց եզականն կամ յոգնականն ունի զմի տարբեր հոլով, իսկ 'ի մնացեալ հոլովսն լինին ըստ միում պարզ հոլովման ։

### 29. Առաջին խառն հոլովումն։

Անուն ինչ երկավանկ կամ եռավանկ՝ որ վերջանայ ի, 'ի տրականն և 'ի բացառականն ունի զյատուկ վերջ մի. իսկ սեռականն և գործիականն լինի ւոյ, ւով, ոյ, կամ եաւ, եայ. զր.

| | Եզական. | | Յոգնական. | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | Տեղի. | Տեղ. | Տեղիք. | Տեղվանք. |
| Սեռ. | տեղւոյ. | տեղինը. | տեղեաց. | տեղերունը. |
| Տրա. | տեղւոյ, կամ տեղւոջ, 'ի տեղի. | տեղին. | տեղեաց, 'ի տեղիս. | տեղերուն. |
| Հայց. | զտեղի. | տեղը. | զտեղիս. | տեղերը. |
| Բաց. | 'ի տեղւոյ, ւոջէ. | տեղէն. | 'ի տեղեաց. | տեղերէն. |
| Գործ. | տեղեաւ. | տեղով. | տեղեաւք ։ | տեղերով։ |

Այգի. այգւոյ. գեաւ. ւով. — Բաղչէ, պաղ. եւ սամա ։

ապականի. նւոյ. նեաւ. նւով. — դերջան. ինկլիկ ։
ասուի. ասւոյ. ւեաւ. ւով. — բուրդ կամ բրդէ ։
արծուի. ծւոյ. ւեաւ. ւով. — արծիւ. փառաւոլ ։
բարի. բարւոյ. րեաւ. րւով. — բարի. աղէկ. էյի ։
գերի. գերւոյ. րեաւ. րւով. — գերի. եասիր ։
ծղխնի. ծղխնւոյ. նեաւ. նւով. — դրան ադէղէ ։
կարասի. րասւոյ. րասեաւ, սւով. — տան դաւիթ. ինձէղէնէն ։
կողի. կողւոյ. ղեաւ. ղւով. — կարգ. դերիէ եանըլ ։
հոգի. հոգւոյ. գւով: գւոց, գեաց. — հոգի. ճան. րուհ ։
հոլանի. նւոյ. նեաւ. նւով. — չուր. ջերիկէ. ախթեր ։
մնոտի. տւոյ. տեաւ. տւով. — ունայն, անշահ ։

| | |
|---|---|
| տարի · տարւոյ · րեաւ · | ՏԱՐԻ · ՍԷՆԷ : |
| Ալիք · ալեաց · լեաւք · | ՏԱԼՂԱ · եւ՝ ՁԵՐՄԱԿ ՄՕՐՈՒՔ, ԳԼԽՈՅ ՄԱԶ : |
| երախտիք · տեաց · տեաւք · | ԲԱՐԻՔ · ԷՅԼԻՔ : |
| ընթրիք · թրեաց · րեաւք · | ԻՐԻԿՎԱՆ ՀԱՑ · ԱԳՇԱՄ ԵԷՄԷԿԻ : |
| կարիք · կարեաց · րեաւք · | ԲՆԱԿԱՆ ՀԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆ, ԱԽՓ եւն : |
| տանիք · տանեաց · նեաւք · | ԵՐԴԻՔ · ԴԱՄ : |

30 · Գիտելիք ա · Եզակի սեռականն և գործիականն այսոցիկ անուանց բազում անգամ գրին առանց ի-ին · որ · ՓԵՂՈՅ, ԱՅԳՈՅ, ԲԱՐՈՅ, ԲԱՐՈՎ, ԱՂԱՒՆՈՎ, եւն : Այլև յոգնակի գործիականն գրի այլեայլ կերպիւ · որ · ՄԱՆԿՏԵԱՒՔ, ՄԱՆԿՏՈՎՔ, ՄԱՆԿՏԻՒՔ · ԿԱՐԾԵՕՔ, ԿԱՐԾԻՒՔ եւն :

31 · Գիտելիք բ · Այս հոլովման յատուկ է՝ զի եզակի սեռականն, և մանաւանդ տրականն վերջանայ 'ի ՈՋ, և բացառականն ՈՋԷ · վասն որոյ զգուշալի է 'ի գործ ածել յայլ հոլովմունս : Այսու պատճառաւ սոցա ներգոյական ասացեալ հոլովն լինի, 'ի տեղւոջ, 'ի բարւոջ, 'ի յոգւոջ, 'ի տարւոջ, յեկեղեցւոջ, 'ի թզենւոջ եւն :

---

## 32. Երկրորդ խառն հոլովումն :

Անուանք որք վերջանան յերկու բաղաձայնս, և յետինն իցէ Ն, սեռականացուցիչ Ի ձայնաւորն դնի 'ի մէջ երկուցն, և լինի ԻՆ · և յոգնակի ուղղականն ԻՆՔ կամ ԱՆՔ · իսկ մնացեալ հոլովք ըստ չորրորդ պարզ հոլովման (20), կամ այլազգ ևս : որ ·

| | Եզական · | | Յոգնական · | |
|---|---|---|---|---|
| Ուղ · | Բեռն · | ԲԵՌ · | Բեռինք · | ԲԵՌՆԵՐ · |
| Սեռ · | բեռին · | ԲԵՌԱՆԸ · | բեռանց · | ԲԵՌՆԵՐՈՒՆԸ · |
| Տր · | բեռին, 'ի բեռն · | ԲԵՌԱՆ · | բեռանց, 'ի բեռինս · | ԲԵՌՆԵՐՈՒՆ · |
| Հայց · | զբեռն · | ԲԵՌԸ · | զբեռինս · | ԲԵՌՆԵՐԸ · |
| Բաց · | 'ի բեռանէ · | ԲԵՌՆԷՆ · | 'ի բեռանց · | ԲԵՌՆԵՐԷՆ · |
| Գործ · | բեռամբ · | ԲԵՌՆՈՎ · | բեռամբք · | ԲԵՌՆԵՐՈՎ : |

Այգն . այգին . յայգնէ . այգամբ . այգինք . այգանց : Այգ . ոյ . Գեղեցիկ :

անձն . ձին . ձնէ . ձամբ . ձինք : Անձ . Հոգի . Կենդանի :

ափն . ափին . յափնէ . փամբ . փունք : Ձեռք կամ ծովու եզերք . Կըյը :

գառն . գառին . ռանէ . ռամբ . ռինք : Գառ . Գառնուկ .

դաշն . դաշին . 'ի դաշնէ . շամբ . շինք : Ղավըլ . Ղարար :

եզն . եզին . յեզանէ . զամբ . զինք : Եզ . Սըղըր . Էօքիւզ :

եղն . եղին . յեղանէ . ղամբ . ղինք : Եղնիկ . Դիշի կէյիք :

թոռն . թոռին . ռանէ . ռամբ . ռունք : Թոռ . Թօռուն :

լեառն . լերին . 'ի լեռնէ . րամբ . րինք : Լեռ . Դաղ :

խաշն . խաշին . շանէ . շամբ . շինք : Այծոյ կամ ոչխարի սուրիւ :

կաթն . կաթին . թանէ . թամբ . թինք : Կաթ . Սիւտ :

հարսն . հարսին . 'ի հարսնէ . սամբ . սունք : Հարս . Կէլին :

ձեռն . ձեռին . ռանէ . ռամբ . ռինք : Ձեռք . Էլ : կամ ձեռք . ձեռաց . ձեռօք :

մասն . մասին . 'ի մասնէ . սամբ . սունք : Մաս , Հիսսէ նը . Փայ , Փարչա :

մատն . մատին . 'ի մատանէ . տամբ . տունք : Մատ . Պարմագ :

ոտն . ոտին . յոտանէ . ոտամբ . ոտք . ոտից . ոտիւք : Ոտք . Այագ :

դառն . դառին . 'ի դառնէ . դառինք . դառնից : Դառն , Աճը , Աճի :

---

## 33 . Երրորդ խառն հոլովման :

Դոն անուանք ինչ , որոց սեռականն , տրականն , կամ յոգնակի ուղղականն ունին դյատուկ վերջ . իսկ մնացեալ հոլովք լինին ըստ պարզ հոլովմանց :

Այսպիսի են Կին . Գեղ . Տէր . Այր կամ Օր . Աղջ- Հայր . Մայր :

Եզա . Կին . կնոջ . 'ի կնէ , ցկին . զկին . 'ի կնօջէ . կանամբ կամ կնաւ :

Յոգն . Կանայք . կանանց , առ կանայս . զկանայս . 'ի կանանց . կանամբք :

Այսպէս հոլովին և իւր բարդեալ անուանքն ։
Բռնակին. նակնոջ. նակամայք ։ չարչըշած ձեւէ ։
Միակին. միակնոջ ։ ձէ ձեւէ ասնեզօղ, ձէ հեղ չար-
չըշած ։
Տիկին. տիկնոջ. տիկնաւ կամ տիկնամբ. տիկնայք. տիկնաց. տիկնամբք ։ համանուն ։
Տանտիկին. տանտիկնոջ. կնայք եւն ։ զան համանունք ։

Եզա. Գիւղ կամ գեօղ. գեղջ. 'ի գիւղ. զգիւղ. 'ի գեղջէ. գիւղիւ ։
Յոգն. Գիւղք. գիւղից, գիւղիւք, կամ գիւղօք ։
Այս գրի նաև գեղ. և հոլովի, գեղի, ղիւ, ղից, ղիւք ։

Եզա. Տէր. տեառն. առ տէր, զտէր. 'ի տեառնէ. տերամբ ։
Յոգն. Տեարք. տեարց կամ տերանց. զտեարս. տերամբք ։

Եզա. Ուր (կամ օր.) աւուր. յաւուրէ. աւուրբ ։
Յոգն. Աւուրք. աւուրց, յաւուրս. աւուրբք ։
Ուղղականն եզակ՝ ուր, վասն իմացուցանե-
լոյ զուղիղն. սակայն 'ի բանս պարտ է վարել
ըստ այժմու սովորութեան, ո͞պ օր, զօր, յօրէ ։

Եզա. Այր. առն, յայր կամ առ այր. յառնէ. ա-
րամբ ։ Նշէ ձայն. էր ։
Յոգն. Արք. արանց. յարս, առ արս. յարանց. ա-
րամբք ։

Եզա. Հայր. հաւր (հօր.) առ հայր. 'ի հաւրէ.
հարբ ։
Յոգն. Հարք. հարց կամ հարանց, առ հարս. հարբք ։

Եզա. Մայր. մաւր (մօր.) առ մայր. 'ի մաւրէ. մարբ ։
Յոգն. Մարք. մարց. առ մարս. 'ի մարց. մարբք ։

Եզա. Եղբայր. բաւր (եղբօր.) բաւրէ. բարբ ։
Յոգն. Եղբարք. բարց. բարս. բարբք ։

Վասն պահելոյ զկարգն եզակ՝ հաւր, մաւր, եղբաւր. բայց ըստ սովորութեան գրելի է՝ հօր, մօր, եղբօր ։
Վերոյգրեալ անուանց բարդքն ես նմանապէս

Հոլովմն . ըմ . Ի Քաղաքագիւղ . գեղջ . Գասաբա : Կոչնատէր . տեառն . կոչ ընող : Նախահայր . հօր . առջի հայր . մեծ հայր : Տիրամայր . մօր . աղային մայրը : Ի Քեռայր . առն . ընկերէ : Տեառնեղբայր . եղբօր . Տէրոջը կամ Քրին եղբայրը :

---

## 34. Չորրորդ խառն հոլովումն :

Գոյ մասնաւոր հոլովումն ինչ յատուկ անուանց, որք եզակի միայն հոլովին, և սեռական նոցա և բացառականն վերջանայ այ, եայ . իսկ գործիականն՝ աւ, եաւ, ըստ պարզ հոլովմանն (13) : Տեսանես 'ի յաջորդ օրինակդ :

| | |
|---|---|
| Ուղ. Տիգրան . | Ուղ. Հեղինէ . |
| տիգրանայ . | հեղինեայ . |
| տիգրանայ, | հեղինեայ, |
| առ տիգրան . | առ հեղինէ . |
| զտիգրան . | զհեղինէ . |
| 'ի տիգրանայ . | 'ի հեղինեայ . |
| տիգրանաւ : | հեղինեաւ : |

35 . Ըստ այսոցիկ օրինակաց գան յատուկ անուանք՝ որոց սեռականն վերջանայ միայն 'ի այ կամ եայ . և ոմանք ըստ երկուցն ևս վերջանան : որ .

| | |
|---|---|
| Անակ . անակայ . | Լուսաւորչայ հայրը : |
| Անդրոնիկոս . նիկեայ . | Հրէից իշխան մը : |
| Աթանագինէս . նեայ . | Մէ եպիսկոպոս մը : |
| Արկադէոս . դեայ . | Կայսր Թէոդոսին՝ մեծ Թէոդոսին որդին : |
| Անտիոք . քայ . | Անտաքիա քաղաք : |
| Աշոց կամ Աշոցք . ցայ . ցաց . | Արարատայ գաւառ մը : |
| Աբեսսա . աբեսսայ և սեայ . | Գաւառի զօրավար մը : |
| Բէլ . բելայ . | Բաբելոնի առջի թագաւորը . ևս՝ կուռք : |
| Եդեմ . եդեմայ . | Դրախտին երկիրը : |
| Մաժակ . ժակայ . | Գայսէրի : |
| Գալիլիա . լիլեայ . | Հրէաստանի գաւառ մը : |

| | |
|---|---|
| Գորդի կամ Գորդիոս. դեայ. | Զօրավար Սելեւկոս թագաւորին: |
| Գէորգ. գէորգայ, գեայ. | Սբ Գէորգ զօրավարը: |
| Անահիտ. անահտայ. | Արտեմիս աստուածը: |
| Գաղիկ. գաղկայ. | Հայոց իշխան կամ թագաւոր: |
| Գուրգէն. գենայ կամ գինայ. | Հայ իշխան մը: |
| Գայոս. գայայ. | Գայոս կայսրը: |
| Եկեղեաց. եկեղեցայ. | Հայաստանու գաւառ: |
| Զեբեդէոս. զեբեդեայ. | Յովհաննու աւետարանչին հայրը: |
| Օգոստոս. տեայ. | Կայսր հռոմայեցւոց: |
| Կիպրոս, կիպրեայ. | Գեղեցիկ կղզի կամ գաւառ: |

36. Գիտելիք ա: Յատուկ անուանց բազումք բաց 'ի մասնաւոր հոլովմանէ իւրեանց, հոլովին նաեւ ըստ պարզ հոլովմանց. որպ.

Առաջին հոլով. Ագաթանգեղոս, ղոսի. սիւ... Արտաշէս. շէսի. շիսի. սիւ... Բենիամին. մենի. մինի. նիւ... Մովսէս. սէսի. սեսի. սիսի. սիւ... Սարգիս, սարգսի. սիւ:

Երկրորդ հոլով. Պարսիկ. պարսկի. կաւ. կաց... Վիրք. վրաց. վրօք... Աղձնիք. աղձնեաց.... Յոյն. յունի. նաւ. նաց:

Երրորդ հոլով. Անի. անւոյ... Խաչատուր. տրոյ.... Կարին. կարնոյ... Հեթում. հեթմոյ... Սանատրուկ. տրկոյ:

Չորրորդ հոլով. Աստղիկ. աստղկան... Գողթն. գողթան... Յուսիկ. յուսկան:

Հինգերորդ հոլով. Արտաշ. շու... Բահաղ. ղու... Աբդիաս. դիու... Յոհան. հաննու:

Գտան եւ այլ բազում յատուկ անուանք, որք երկու եւ երեք եղանակաւ հոլովին. որպ. Աբրահամ. մու. մաւ... Արարատ. տայ, տոյ, տու... Անանիա. նիայ. նիայի... Արիստակէս. կեայ. կէսի, կիսի.... Դամասկոս. կոսի. կեայ... Երեզով. վայ. վի... Եփեսոս, սոսի. սեայ... Ղուկաս. կասու. կայ... Յակոբ. կոբայ. բու... Մարիամ. մարիամու. րիամայ. րեմայ... Վրթանէս. թանի.

սի . Թամայ . . . Սողոմոնէս . զՍնեայ . զՍնի . . .
Գրիգոր . գորի . գորոյ ։

47 . ԳԻՏԵԼԻՔ Բ . Յատուկ անուն մարդոյ , կամ տեղւոյ՝ ինքնին ոչ պահանջէ զյոգնական . որովհետև հնարեալ է առ 'ի նշանակել զմի եզական ինչ ։ Սակայն երբեմն պիտոյ լինի ածել 'ի վերայ բազմաց . և յայնժամ առնեմք յոգնական՝ երկու եղանակաւ . ռմկ . մի՝ յարելով զմասնիկն եանք . որպ . Գրիգորեանք , ռմկ . գրիգորներ ։ Ներսէսեանք , ներսէսներ . Յովհաննէսեանք , ռմկ . յովհաննէսներ ։ Երկրորդ , նման հասարակ անուանց յարելով , ք . որպ . Սիմոնք , սիմոնից . Յուդայք , յուդայից . Գրիգորիոսք . Գրիգորից , եւ ։

## ՅՕԴՈՒԱԾ Գ .

### 38 . Յաղագս Միջական անուանց ։

Գտանին յամենայն լեզուս բառք ինչ հոլովելիք իբրև անուն , բայց ոչ նշանակելով որոշեալ իրս ինչ , ոչ են անուն յատկապէս . և ոչ ցուցանելով զդէմս կամ զկարգ իրաց , ոչ են դերանուն . վասն այսորիկ կոչին Միջական անուն , իբրև թէ միջին են 'ի մէջ անուան և դերանուան ։ Այսպիսի անուանք որոշին 'ի հինգ տեսակս ։

ա . Թուական . որ զթիւ իրաց , կամ զքանի լինելն ցուցանէ ։

բ . Մասնական . որ զնշանակութիւն անուանն ցուցանէ զատ զատ , կամ միոյ միոյ ։

գ . Հաւաքական . որ զբոլորն միանգամայն նշանակէ ։

դ . Հարցական . որ հարցանելոյ եղանակաւ առաջի դնէ թէ զինչ է իրն , կամ որքան , կամ որպիսի ։

ե . Վերբերական . որ յայտ առնէ զինչ 'ի վերայ որպիսութեան կամ որքանութեան իրաց ։

Ըստ այսմ կարգի բացատրեսցուք այժմ որ ինչ գիտելի է 'ի վերայ իւրաքանչիւրոցն ։

### 39. Թուական անուանք ։

Թուական անուանքն բաժանին 'ի հինգ. յզ Բազարձակ, Դասական, Զատական, Մակբայիկ, Կրկնական ։

Բազարձակ Թուականն է՝ որ ուղղակի զբուն թիւն նշանակէ. և են Մի, Երկու, Երեք, եւն, մինչև հազար, բիւր եւն ։ Որոց կարգն և հոլովումն՝ այս է ։

Մի. միոյ, միոջ, միում, 'ի միոյ կամ 'ի միոջէ, միով. (ըստ Գ հոլովմ. 15 ։) Ուր ուրեք գրի մին, նու գիրն ոչ է բնական, բայց 'ի յաճախ սովորութե իբրև բնական եղեալ է. ուստի առնու և զայլ դիմորոշ տառ, գրելով մինն, մինդ, մինս ։ Նմին նաև մէն, մէն մի, որք նախդրիւ միայն 'ի գործ ածին ։ Գոյ ևս եզ, եզոյ, յեզոջէ. յորմէ ածանցեալ է՝ եզական ։

Երկու. երկուց, կուս, կուք. (ըստ Ե հոլովմ. 23) եզական ոչ ունի, և յոքնակին երկուք, վարի թէ ուղղական, և թէ գործիական ։

Երեք. երից, երիս, երիւք. (ըստ Ա հոլովմ. 8.) Գոյ ևս երս, երք, որ վարի նախդրիւ ։

Չորք. չորից, չորս, չորիւք ։ Ուղղականն սակաւ ուրեք լինի չորս ։ Գոյ նաև քառ, քառից, քառիւք ։

Հինգ. հնգի. գիւ. հինգք, հնգից, հնգիւք. կամ հնգաւ, գաց, գաւք ։

Վեց. վեցի, ցիւ, վեցք, ցից, ցիւք ։

Եւթն. եւթան, թամբ. թանք, թանց կամ թեանց, կամ թնից, թամբք ։ Ուղիղ գրուածն է եւթն կամ էւթն. յետոյ մուծեալ է գրել եաւթն. յորմէ սովորեցաւ եօթն ։

Ութ. ութի, ութիւ, ութք, ութից, ութիւք ։ Ուր ուրեք գրի ութն, նու գիրն ոչ է իւր բնական. ուստի ոչ է հոլովելի՝ ութնի, ութնից ։

Ինն. ըննի. ըննիւ, իննունք, ըննից, ըննիւք. կամ իննանց, իննունց, իննամբք ։

Տասն. տասին, տասամբ. տասունք, տասանց, տասամբք ։ Միայնակ 'ի սեռականն ոչ լինի տասան. այլ յորժամ յարի 'ի փոքր թիւ, յզ մետասան, երկո-

տասան, չորեքտասան, հնգետասան, վեշտասան: Նոյն սոքա հոլովին ըստ ա հոլովմ. մետասանի. նիւ. նից. եւ այլն:

Մնացեալ թիւք մինչեւ 'ի քսան, կային ընդ միմեանս յօդիւս ու, կամ ա. որպէս եւթնեւտասն, ութնեւտասն, իննեւտասն. որք հոլովին, եւթնեւտասին, եւթնեւտասինք եւ այլն. կամ երկուքն ես հոլովին, եւթանց եւ տասանց եւ այլն: Իսկ կապեալքն ա յօդիւ, եւթնատասն, ութնատասն, իննատասն. որոց վերջինն միայն հոլովի, եւթնուտասին, եւթնուտասամբ եւ այլն:

Քսան, քսանի. նիւ. նից: Երեսուն. երեսնի: Քառասուն. քառասնի: Յիսուն, յիսնի, կամ յիսունի. նիւ. նից: Վաթսուն, վաթսնի: Եւթանասուն, եւթանասնի: Ութսուն, ութսնի. Իննսուն, իննսնի: Ն. յոքնակի հոլովին ըստ ա հոլովմ:

Յորժամ միաւոր թիւ գտանի ընդ սոսա, յետադաս դնի, որպէս քսան եւ մի, քսան եւ վեց, երեսուն եւ երկու, քառասուն եւ չորք եւ այլն: 'Ի հոլովելն՝ բաւական է զվերջինն միայն հոլովել, որպէս քսան եւ միոյ, ութսուն եւ չորից, եւ այլն: Բայց կարեն երկուքն ես հոլովել այսպէս. երեսնից եւ վեցից եւ այլն:

Հարիւր. հարիւրոյ, րով, րոց. կամ րի, րից: փոքր թիւն յառաջոյ դնի, որպէս երկուհարիւր, կամ երկերիւր. երեք հարիւր, չորեք հարիւր, եւ այլն: 'Ի հոլովելն մարթ է կամ զվերջինն, եւ կամ զերկոսեան ես հոլովել, որպէս զվերինսն:

Հազար. զարի, րաւ, րաց. կամ րիւ, րից: Յայսոսիկ ես փոքր թիւն յառաջոյ դնի, երկու կամ երեք հազար. չորեք կամ չորք հազար եւ այլն: Երկուքն ես հոլովին սովորաբար, երկուց հազարաց եւ այլն. թէպէտ կարէ յետինն միայն հոլովիլ:

Ասացաք, թէ փոքր թիւն յառաջոյ դնի սոցա սովորաբար. բայց մարթ է յետոյ ես դնել, եւ յայնժամ երկուքն ես հարկաւ հոլովելի են, որպէս հարիւրոց վեցից, հազարաց հնգից, եւ այլն:

Բիւր կամ բեւր, բիւրու, բուց. բուք. կամ րոյ, րոց. կամ րի, րիւ:

## 40. Դասական Թուականք:

Թուական անունն՝ որ զկարգ կամ զդասաւորութիւն թուեալ իրացն ցուցանէ, կամ զքանորդ լինելն միոյն, ասի Դասական: Եւ ձեւանայ այս՝ յարելով 'ի բացարձակ թուականն զմասնիկդ որդ, կամ րորդ. իբր. երկրորդ. երրորդ. չորրորդ. հինգերորդ. վեցերորդ եւն. տասներորդ. մետասաներորդ. քսաներորդ. երեսներորդ. քառասներորդ: Հարիւրերորդ կամ հարիւրորդ. երկերիւրերորդ. հազարերորդ եւն:

Հոլովումն սոցա լինի սովորաբար ըստ Ե հոլովմ. (13) իբր. երկրորդի, դաւ, դաց. դաւք. Իսկ երբեմն, դիւ, դից:

Յառաջին բացարձակէն՝ որ է Ա, ոչ լինի դասական՝ Աերորդ. այլ կամ Ա ասեմք, կամ առաջին, առաջներորդ կամ առաջնորդ: Նաեւ եւս նախկին կամ նախնի. և հոլովին ըստ Դ հոլովմ, առաջնոյ, նախկնոյ կամ նախնոյ, նում. յառաջնոյ կամ յառաջնմէ. նով եւն:

Յորժամ մեծ և փոքր դասական գտանին 'ի միասին, առանց փոփոխելոյ վարին, և հոլովին երկոքին եւս. իբր. տասներորդ առաջներորդ, քսաներորդի վեցերորդի, յեւթանասներորդէ երկրորդէ:

---

## 41. Զատական Թուականք:

Թուական անունն՝ որ զթիւն կամ զթուեալ իրն ցուցանէ իբրև զատեալ կամ իբրև ամփոփեալ, կոչի զատական. և ձեւանայ 'ի բացարձակէն ակ կամ եակ մասնկաւ. այսպէս:

Միեակ. երկեակ կամ երկակ. երրեակ. չորեակ կամ քառեակ. հնգեակ. տասնեակ. յիսնեակ. եւթանասնեակ. հարիւրեակ. հազարեակ:

Ամենեքին սոքա հոլովին ըստ Ե հոլովմ. իբր. միակի. միակաւ. կաց. չորեկի, հնգեկի, տասնեկաւ. եւն:
Իսկ ըստ նշանակութեն՝ բազում անգամ վարին իբրև բացարձակ թուական. իբր. հնգեակ ամօք, նշանակէ

հինգ ամօք։ Հարիւրեակ մի, որպէս հարիւր մի։ Երկեակ տասնեկի, որպէս երկու տասին։

---

## 42. ՀԱՒԱՔԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՔ։

Ի բացարձակ թուականն յարելով մասնիկն ՔԵԱՆ կամ ՔԻՆ, ցուցանէ զթուեալ իրն իբրև միանգամայն առնուլ. օր.

ԵՐԿՈՔԵԱՆ կամ ԵՐԿՈՔԻՆ, նշանակէ՝ երկուքն ևս, երկուքն ալ։ Նոյնպէս ԵՐԵՔԵԱՆ կամ ՔԻՆ, իրեքն ալ։ ՉՈՐԵՔԵԱՆ, ՔԻՆ. ԵՕԹՆԵՔԵԱՆ, ՔԻՆ. ՏԱՍՆԵՔԵԱՆ, ՔԻՆ. ԵՐԿՈՏԱՍՆԵՔԵԱՆ, ՔԻՆ։

Հոլովումն սոցա լինի (ըստ 25) երկոցուն, ցունց, զերկոսեան կամ սին, յերկոցունց, երկոքումբ կամ քումբք։

Առ այս վերաբերի բառն ԵՐԿԱՔԱՆՉԻՒՐ, որպէս երկուքն ալ. և հոլովի ըստ Է հոլովմ, երկաքանչիւրոյ, րում, իւրմէ, րով, րոց. բայց սորա յոքնականն վարի առաւել։

---

## 43. ԿՐԿՆԱԿԱՆ ԹՈՒԱԿԱՆՔ։

Ի բացարձակ թուական անուանն յարելով մասնիկն ՊԱՏԻԿ կամ ԿԻՆ, լինի ԿՐԿՆԱԿԱՆ. վասն զի իբրև կրկին ցուցանէ զթուեալ իրն, կամ զնոյն բացարձակ թիւն կրկնէ։ օր.

ԵՐԿՊԱՏԻԿ կամ ԿՐԿԻՆ. այսինքն՝ երկու խաթ։ ԵՐԵՔՊԱՏԻԿ, ԵՌԱՊԱՏԻԿ, կամ ԵՐԵՔԿԻՆ. իրեք խաթ։ ՉՈՐԵՔՊԱՏԻԿ, ՔԱՌԱՊԱՏԻԿ, կամ ՉՈՐԵՔԿԻՆ. չորս խաթ։ ՀՆԳԱՊԱՏԻԿ, հինգ խաթ։ ԵՕԹՆԱՊԱՏԻԿ, օխտը խաթ։ ՏԱՍՆԱՊԱՏԻԿ, տասը խաթ։ ՀԱՐԻՒՐԱՊԱՏԻԿ, հարիւր խաթ. ՀԱԶԱՐԱՊԱՏԻԿ, հազար խաթ։

Ձևացեալքն ՊԱՏԻԿ մասնկաւ հոլովին ըստ Բ հոլովմ, որպէս երկպատիկ, կաւ, կաց, կաւք։ Իսկ ԿԻՆ մասնկաւ ձևացեալն նախդրիւ հոլովի, բայց միայն ԿՐԿԻՆ հոլովի, կրկնում, կրկնով։

## 44. Մասնական անուանք։

Են բառք ինչ՝ որք յարեալք յանուանս, ցուցանեն զմասն ինչ իրին, կամ զիրն զատանեն յայլմէ. և այսպիսիք կոչին Մասնական անուն։ Այսպիսի են ոմն, ոք, մի, իմն, ինչ, իք, միւս, այլ, միմեանց, իրերաց, իւրաքանչիւր, ամենեքեան։ Զհոլովումն սոցա և զկիրառութիւն դիցուք կարգաւ։

Ոմն, Ոք. նշանակեն՝ մէկ մը. պիր, պազի. իբր. Այր ոմն. մէկ մարդ մը։ Թագաւոր ոք, մէկ թագաւոր մը։ Հոլովին.

| Եզակ. | | | Յոգն. | |
|---|---|---|---|---|
| Ոմն. | Ոք. | պիրի. | Ոմանք. | պիրիլէրի. |
| ուրումն. | ուրուք. | պիրինին. | ոմանց. | պիրիլէրինին. |
| ումեմն. | ումեք. | պիրինէ. | ոմանց. | պիրիլէրինէ. |
| զոմն. | զոք. | պիրի. | զոմանս. | պիրիլէրի. |
| յումեմնէ. | յումեքէ. | պիրինտէն. | յոմանց. | պիրիլէրինտէն. |
| ոմամբ։ | ոմամբ։ | պիրիլէ։ | ոմամբք։ | պիրիլէրիլէ։ |

Տեսանի՝ զի ոմն չունի զատ յոգնական. այլ 'ի բանս երբեմն եդակի գնի փոխանակ յոգնականի. որպէս ասի. * Թէ ոք պիտանիք իցեն ձեր. ‖ փոխանակ դնելոյ՝ թէ ոմանք։ Այնպէս ասի, բազմաց ումեք. որ ասելի էր, բազմաց ոմանց։ ( Ա. Մակաբ. ԺԴ. 40։ Բ Մակ. Թ. 25։ )

Մի, վարի նաև իբրև մասնական, զոր աշխարհաբար ասեմք՝ մը. և հոլովի որպէս թուական միոյ։ (39)

Իմն, ինչ, մը. իք մը, բան մը. իբր. զարմանալի իմն. զարմանալու մը։ Մեծ ինչ. մենծ մը։ Իմն յեզականն միայն հոլովի, իրիք, իմիք, զիմն, յիմեքէ, իւիք։ Իսկ վասն յոգնականին 'ի գործ ածի ոմանք [illegible]։

Ինչ, իբրև մասնական անուն՝ և ոչ նախդրիւ հոլովի, այլ վարի զկնի այլ անուան. իբր. շքան ինչ. և ոչ լինի ասել, ինչ բան։ Իսկ իբրև հարցական, վարի նախդրիւ, իբր. յինչ, զինչ, առ ինչ. ( տես 48. 334. ) Միայնակ 'ի գործ ածեալ, իբրև անուն հաւաքական՝ նշանակէ բան մը, շէյ. ունի յոգնական, և նախդրիւ հոլովի, ինչք, զինչս. իբր. Ներկուս ինչս

խնդրեմ, զի երկու բան կըխնդրեմ։ Դարձեալ, իբրև հասարակ անուն՝ նշանակէ իր, ստացուածք, ապրանք. մալ. և հոլովի ըստ Ա հոլովման, ընչի, յըն-չէ, ընչիւ, ինչք, ընչից, ընչիւք։

ԻՆՉ, մասնիկն 'ի գործ ածի յաշխարհաբարն, եր-բեմն նաև 'ի գիրս. զր. ԻՆՉ մարդ, ԻՆՉ կենդանի, զի ոմն մարդ. և սորա յատուկ հոլովքն երևին, ԻՐԻՔ, ԻՄԻՔ, ԻՒԻՔ։

ՄԷԿ, կամ ՄԻ, ձևացեալ է յերկուցս՝ Մ, ԷԿ. աշխարհաբար ևս ասեմք՝ մէկալը, օ պիրի։ Յոգնա-կանն սակաւ ուրեք վարի, և յեզականն հոլովի ըստ Է հոլովման. միոյ, միում, 'ի միոյ կամ 'ի միու-մէ, միով։

ԱՅԼ, ուրիշ, պաշկա. ղայրը։ Հոլովի եզական և յոգնական ըստ Է հոլովման. այլոյ, այլում, յայլոյ կմ յայլմէ, այլով. այլք, այլոց, զայլս, յայլոց, այ-լովք։

ՄԻՄԵԱՆՑ. } Ձևացեալ է կրկնելով ՄԻ ՄԻ։
ԻՐԵՐԱՑ. } Կրկնելով ԻՐ ԻՐ։

Երկոքին ևս նշանակեն՝ մէկ մէկու, իրարու. պի-րի պիրինէ։ Ուղղական և եզական ոչ ունին. առա-ջինն հոլովի (ըստ 20) առ միմեանս, 'ի միմեանց, միմեամբք։ Երկրորդն հոլովի (ըստ 13) յիրեարս, յիրերաց, իրերաւք կամ օք։

ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ. } Ձևացեալ կրկնելով ԻՒՐ դերա-նուան։
ԱՆՑՆԻՒՐ. } Իսկ սա ձևանայ'ի ԻՒՐԷՆ։

Երկոքին ևս նշանակեն՝ ամէն մէկը, հէր պիր։ Առաջինն հոլովի (ըստ 15) իւրաքանչիւրոյ, ըում. չիւրմէ. չիւրով. չիւրք. չիւրոց. (երբեմն՝ չիւրց.) իսկ երկրորդն առաւել նախդրիւ վարի, յանցնիւր, զանցնիւր։ Յոգնակի սակաւ ուրեք, անցնիւրք, անց-ներց։

45. ԳՈՒՄԵԼԻՔ։ Մասնական անուանք բաղում ան-դամ վարին 'ի միասին. զի ԱՅԼ ՈՔ, ԱՅԼ ՈՄՆ, ԱՅԼ ԻՄՆ, ԱՅԼ ԻՆՉ, ՄԻՒՍ ՈՄՆ, ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՈՔ կամ ԻՆՉ։ 'Ի հոլովելն երկոքին ևս հոլովին սովորաբար, սակաւ ուրեք յե-տինն միայն. զր. այլոյ ուրուք կամ իրիք, յայլմէ ու-մեքէ, կամ յայլ ումեքէ, այլով իւիք կամ այլ իւիք.

այլովք սմամբք եւն ։ Բայց իւրաքանչիւր ոչ, յետինն հոլովի առաւել. իւրաքանչիւր ուրուք, իւրաքանչիւր երեք եւն ։

---

## 46. Հաւաքական անուանք ։

Հաւաքական ասի բառ ինչ՝ որ զամենայն կամ զբոլորն միանգամայն ցուցանէ ։ Այս է կրկին, ստորադասական, որ զամենայնն հաստատելով նշանակէ. եւ ժողովական, որ զամենայնն 'ի բաց տանի ։

Ստորադասական են, Ամէն, ամենայն, ամենեքեան, համայն, բոլոր, համակ, համօրէն, ընաւ, ողջոյն ։

Ամէն, ամենք. հեր ։ Հոլովի (ըստ 8) ամենի, ամենում, ընդ ամենն, յամենէ, ամենիւ, ամենից, ամենիւք ։

Ամենայն, ամէն, հեփ, հեփիսի ։ Ելանէ 'ի բառէն այն, յարելով զմասնիկն այն. եւ հոլովի ըստ ա̅ հոլովմ. ամենայնի, նում, յամենայնէ, ամենայնիւ, ամենայնք, ամենայնց կամ ամենայնից, ամենայնիւք ։

Ամենեքեան, կամ քէն ։ Կազմի քեան մասնկաւ 'ի բառէն այն, եւ հոլովի որպէս երկոքեան. (42) ամենեցուն, ցունց. քումբ կամ քումբք ։

Համայն. այսինքն բոլորն միանգամայն ։ Կազմի այն մասնկաւ 'ի համ բառէն, որ նշանակէ կից ։ Հոլովի ըստ ա̅ հոլովմ. նի, նիւ, նից, նիւք ։

Բոլոր. հոլովի, բոլորի, իւ, ից, իւք. մերթ եւ՝ բոլորով. յորմէ կազմի՝ բոլորովին. որ է մակբայ. եւս բոլորեքեան կամ քէն. որ հոլովի որպէս ամենեքեան ։

Համակ, համօրէն ։ Երկոքին եւս կազմեալք 'ի համ բառէն, նշանակեն՝ բոլոր ։ Առաւել նախադրիւ վարին, 'ի համակ, զհամօրէն եւն. եւ եթէ պիտոյ լինի, հոլովին, համակի, կաց. համօրինի, նաց ։

Ընաւ. է գործիական բուն բառին, եւ նշանակէ բոլոր. յեզական նախադրիւ, 'ի յոգնական լինի, ընաւք, ընաւից, ընաւիւք ։

Ողջոյն. առեալ 'ի բառէն ողջ մասնկաւն այն, նշանակէ՝ բոլոր ։ Առնի յեզական միայն նախադրիւ, յողջոյն, զողջոյն. այսինքն զողջոյն օրն ; այսինքն բոլոր օրը ։

47. Դերանունք. Մասնական անուանքն ոք, իմն, ինչ բազում անգամ յարին զկնի հանրականին ամենայն, և լինին ստորասական հանրական. այսպէս, ամենայն ոք, կամ ինչ. և սովորաբար մասնականն միայն հոլովի. ա՟մ ուրուք կամ իրիք. ա՟մ ումեք կամ իմիք: Բայց ոչ լինի, ա՟մ ոմամբ, ա՟մ ոմանց. մերթ լինի, յամենայնէ իմեքէ:

Որ ոք, ով որ. Որ ինչ. ինչ որ: Սոքա ևս են հանրական ստորասական, և երկոքեան ևս հոլովին. որոյ ուրուք, կամ իմիք. որում ումեք, յորմէ ումեքէ. որով իւիք ևն:

Բացասական հանրական է, ոչ ոք, հիչ մեկը: ոչ ինչ, ոչ Գ ինչ. հիչ բան մը: Ի հոլովելն՝ եղակի միայն հոլովի մասնականն. որպէս ոչ ուրուք, ոչ ումեք, ոչ իրիք, ոչ իմիք, ոչ իւիք, ոչ միով իւիք: Ի նախդրիւ հոլովման՝ նախդիրն ոչ դնի առ ոչն, այլ ՚ի վերայ մասնականին, ոչ զոք, ոչ յումեքէ, ոչ ՚ի մի ինչ ևն:

---

48. Հարցական անուանք:

Ո՞վ. Ո՞. ո՞վ. քի՞մ: Ո՞ր. ո՞րը. հա՞նկը: Ի՞նչ. նէ՞: Քանի՞. քա՞չ:

Սոցա հոլովքն:

Ո՞վ. ո՞. ո՞յր. ո՞ւմ. առ ո՞վ կամ յո՞. զո՞վ, զո՞. յումմէ՞:

Ո՞յք. ո՞յց, առ ո՞յս. զո՞յս. յո՞յց: Գործիականն որպէս ստորև:

Ո՞ր. որո՞յ. որո՞ւմ. առ ո՞ր. զո՞ր. յորմէ՞. որո՞վ:

Ո՞րք. որո՞ց. առ ո՞րս. զո՞րս. յորո՞ց. որո՞վք: (ըստ Գ՟ հոլովմ.)

Յարին ընդ մասնական անուանց. Ո՞վ ոք, ո՞ ոք, ո՞ր ոք, ո՞ր իմն, և ՚ի միասին հոլովին. ո՞յր ուրուք, ո՞ւմ ումեք, զո՞ ոք, ո՞յք ոմանք. զո՞յս ոմանս. յո՞յց կամ յորո՞ց ոմանց. որո՞ւմ իմիք, որո՞վ իւիք. ևն:

Ի՞նչ. ՚ի գիրս նախդրիւ միայն վարի, յի՞նչ, առ ի՞նչ, ըզի՞նչ. իսկ յաշխարհաբարն սեռական սորա է, ինչի՞ն կամ ինչո՞ւն: Հայցականն ըզի՞նչ վարի ևս իբրև

ուղղական. զի՞նչ շահ է. զի՞նչ է այդ ։ Կրկնելով ևս առի, զի՞նչ ինչ, ուր յետինն նշանակէ իբրև մասնական ։

Գտանին հոլովք ինչ՝ որոց յատուկ ուղղականն չէ յայտ. ուստի մարթ է համարիլ ինչ հարցականիս. որ սեռ. էր. տրակ. ի՞ն կամ հէն. բաց. առի՞ճ. պատմ. զի՞. իբրև թէ զինչ՞. գործ. ի՞ւ ։ Նոյ սոքա նշանակեն, ինչո՞ւն, ի՞նչ բանի, ինչէ՞ն, ինչո՞վ, ինչո՞ւ համար ։

Քանի՞. քանո՞յ, կամ նւոյ. 'ի քանո՞յ. քանո՞վ ։

Քանի՞ք. քանեա՞ց. 'ի քանի՞ս. քանեա՞ւք կամ եօք ։

Վարի այս թէ միայնակ, և թէ ընդ այլ բառի. որ. քանո՞յ գնեցեր ։ քանեա՞ց կանանց ։

Հարցական եղանակաւ վարին նաև այսոքիկ. Ո՞րպիսի, ի՞նչպիսի. որ ի՞նչ կերպ. նէ՞ թարզ ։ Ո՞րքան, ո՞րչափ, ի՞նչըտար. նէ՞գըտար ։ Զհոլովումն սոցա տես 'ի վայր ։ (49)

---

49. Մերձերական անուանք ։

Մերձերական անուն ձևանայ՝ յորժամ բառքս պէս, քան, չափ, կապին 'ի ցուցական կամ յայլ դերանուանս ։ որ.

Այսպիսի, սոյնպիսի. աս կերպ. պու թարզ. պէօյլէ ։

Այդպիսի, դոյնպիսի. ատ կերպ. շու թարզ. շէօյլէ ։

Այնպիսի, նոյնպիսի. ան կերպ. օլ թարզ. էօյլէ ։

Սոցա հոլովքն ըստ (29). Այսպիսւոյ. պիսում. պիսեաւ ։ այսպիսիք. պիսեաց. պիսեաւք կամ եօք ։

Այսքան, սոյնքան. Այսչափ, սոյնչափ ։ ասխըտար. պուգըտար ։

Այդքան, դոյնքան. Այդչափ, դոյնչափ ։ ատխըտար. շուգըտար ։

Այնքան, նոյնքան. Այնչափ, նոյնչափ ։ անխըտար. օլգըտար ։

'Ի սոցանէ քանով ձևացեալն հոլովի (տե՛ս Գ. հոլովմ. 15) այսքանոյ, նով կամ նեաւ. այնքանիք կամ քանք, քանեաց. քանեաւք ։ (տե՛ս 29)

Իսկ ընդ չափն կապեալն սովորաբար նախդրիւ վարի. դ. յայսչափ, զայսչափ, մինչեւ այսչափից։ Այսպէս իմա և զեղեալսն 'ի վերոյ, որքան, որչափ։

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ։

## Յաղագս Դերանուան։

50. Երկրորդ մասն բանին կոչի՝ Դերանուն, դ. բառ ինչ որ փոխանակ անուան դնի. ուստի նման անուան ունի Թիւ, Հոլով, Հոլովումն։

Ունի և զայլ ինչ յատուկ. դ. Դէմս, որով ցուցանէ զանձն, կամ զկարգ իրաց, և երեք են. առաջին, երկրորդ, երրորդ։

Առաջին դէմ է խօսօղն, երբ փոխանակ ասելոյ զիւր անունն՝ ասէ, Ես։ Երկրորդ դէմ է նա՝ առ որ խօսի, և փոխանակ տալոյ զանունն նորա՝ ասէ, Դու։ Երրորդ դէմ է նա՝ զորմէ խօսի, և փոխանակ տալոյ զանունն նորա՝ ասէ, Նա, Ինքն, Իւր։

Նմանապէս զկարգ իրաց ցուցանէ դերանունն, յորժամ անձն կամ իրն մօտ կայ երկուց խօսօղաց, և ասէ, սա, այս, սոյն։ Յորժամ իրն առաւել մօտ է լսողին, ասէ, դա, այդ, դոյն։ Իսկ յորժամ իրն միօրինակ հեռի է 'ի խօսողէն և 'ի լսողէն, ասէ, նա, այն, նոյն։

51. Դերանունն 'ի չորս բաժանի. դ. էական, ցուցական. որք են վերոյեդեալքն. ստացական, որ ձևանայ 'ի վերոյգրելոցն. և յարաբերական, և է այս՝ որ։

Արմատ ամենայն յատուկ դերանուանց են երեք տառքն ս, դ, ն, և զօրութիւն սոցա ցուցանէ դերանունն զդէմ և զկարգ իրաց. սէն զառաջին դէմն և զկարգն յայտնէ. դան՝ զերկրորդն, նան՝ զերրորդն. վասն այսորիկ զերեսին տառսդ կոչեմք Տեղորոշ յօդ։

Այս յօդք յարելով 'ի վերջս այլոց բառից, ցուցանեն զդէմ և զկարգ նոցա, և բազում ուրեք տան զազդումն ինչ և զվայելչութիւն. որպէս և աշխարհաբար ես 'ի գործ ածեմք, ասելով, գլուխս, գլուխդ.

տուն, տունդ. եւն ։ Նոյն 'ի գրաբառն յորժամ ասի, Արքայս, երրեակ եղանակաւ ցուցանէ զմերձաւորն. որպ. սա որ Թագաւոր է, կամ այս Թագաւոր, կամ Թագաւոր իմ ։ Արքայդ, դու որ Թագաւոր ես, կամ այդ Թագաւոր, կամ Թագաւոր քո ։ Արքայն, նա որ Թագաւոր է, կամ այն Թագաւոր, կմ Թագաւոր նորա ։

Այսպէս յարելով 'ի վերջս դերանուանց, բայից, մակբայից եւն, տան նոցա ազդուածն ինչ եւ գեղեցկութի. որպ. Զո՛ր եսս առնեմ. կմ զոր եսն արարի ։ զոր դուդ ասես։ զոր ասեմն, կմ ասեսդ ։ Բաց այսմ մնայ իմանալ բազում ուրեք յօրինակմն՝ եւ յընթացս Քերականութե. զորմէ բացայայտ եւս խօսիմք ստորեւ ։ (372)

Աստանօր կարգաւ դիցուք զհոլովմունս բուն դերանուանց ։

---

## 52. Նախական Դերանուանք ։

### Առաջին Դէմ ։

| | Եզակի. | | | Յոգն. | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ուղ. | Ես. | Ես. | Պէն. | Մեք. | Մենք. | Պիզ. |
| Սեռ. | իմ. | իմն. | պէնիմ. | մեր. | մերը. | պիզիմ. |
| Տր. | ինձ, ցիս, առ իս. | ինծի. | պանա. | մեզ, ցմեզ, առ մեզ. | մեզի. | պիզէ. |
| Հայց. | զիս. | իս. | պէնի. | զմեզ. | մեզ. | պիզի. |
| Բաց. | յինէն. | ինծմէ. | պէնտէն. | 'ի մէնջ. | մեզմէ. | պիզտէն. |
| Գործ. | ինեւ. | ինծմով. | պէնիլէ. | մեւք ։ | մեզմով. | պիզիլէ ։ |

### Երկրորդ Դէմ ։

| | Եզակի. | | | Յոգն. | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ուղ. | Դու. | Դուն. | Սէն. | Դուք. | Դուք. | Սիզ. |
| Սեռ. | քո. | քու. | սէնին. | ձեր. | ձերը. | սիզին. |
| Տր. | քեզ, ցքեզ, առ քեզ. | քեզի. | սանա. | ձեզ, առ ձեզ. | ձեզի. | սիզէ. |
| Հայց. | զքեզ. | քեզ. | սէնի. | զձեզ. | ձեզ. | սիզի. |
| Բաց. | 'ի քէն. | քեզմէ. | սէնտէն. | 'ի ձէնջ. | ձեզմէ. | սիզտէն. |
| Գործ. | քեւ. | քեզմով. | սէնիլէ. | ձեւք ։ | ձեզմով. | սիզիլէ ։ |

Դիտողութիւն. Յոգնակի գործիական երկուց դերանուանցս ուղիղ գրելի է մեւք, ձեւք. 'ի յետին դարս սովորեցան գրել մեաւք, ձեաւք, և յաճախանէ եւս մեօք, ձեօք:

## ԵՐՐՈՐԴ ԴԷՄ.

| | Եզակ. | | Յոգն. | |
|---|---|---|---|---|
| Ուղղ. | ինքն. | ԻՆՔԸ. | ինքեանք. | ԻՐԵՆՔ. |
| Սեռ. | ինքեան. | ԻՐԵՆԸ. | ինքեանց. | ԻՐԵՆՑԸ. |
| Տր. | ինքեան, առ ինքն. | ԻՐԵՆ. | ինքեանց, առ ինքեանս. | ԻՐԵՆՑ. |
| Հայց. | զինքն. | ԶԻՆՔԸ. | զինքեանս. | ԶԻՐԵՆՔ. |
| Բաց. | յինքենէ. | ԻՐՄԷՆ. | յինքեանց. | ԻՐԵՆՑՄԷ. |
| Գործ. | ինքեամբ. | ԻՐՄՈՎ: | ինքեամբք: | ԻՐԵՆՑՄՈՎ: |

Դիտողութիւն. Դերանունս ինքն, յորժամ միայն է, ցուցանէ զերրորդ դէմն. բայց կից ընդ այլ դերանունս՝ յարմարի ամենայն դիմի և կարգի, և 'ի միասին հոլովի. որպէս ես ինքն, իմ ինքեան, մեր ինքեանց, 'ի մեզ ինքեանս: Դու ինքն, դուք ինքեանք. և այլն: Նա ինքն, նորա ինքեան: Նոքա ինքեանք և այլն:

## ԱՅԼ ԵՐՐՈՐԴ ԴԷՄ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ուղղ. | (ՉՈՒՆԻ) | | ....... | |
| Սեռ. | իւր, իւրեան. | ԻՐԵՆԸ. | իւրեանց. | ԻՐԵՆՑԸ. |
| Տր. | իւր, իւրեան, առ իւր. | ԻՐԵՆ. | իւրեանց. | ԻՐԵՆՑ. |
| Հայց. | (ՉՈՒՆԻ) | | ....... | |
| Բաց. | յիւրմէ. | ԻՐՄԷՆ. | յիւրեանց. | ԻՐԵՆՑՄԷ. |
| Գործ. | իւրև, իւրեամբ, իւրեաւ. | ԻՐՄՈՎ. | իւրեամբք. | ԻՐԵՆՑՄՈՎ: |

Դիտողութիւն. Դերանունս իւր, իբրև եական՝ ոչ ունի ուղղական և հայցական, թէ՛ եզակի, և թէ յոգնակի: Բայց է նաև ստացական դերանուն, և լինի ուղղական հոլովելի. տես 54: 'Ի տեղիս ինչ գտանի ԻՒՐԵԱՆՔ, ԶԻՒՐԵԱՆՍ. բայց առաւել աշխարհիկ եղանակ է: Նոյն որպէս տեսանես, ԻՒՐ, և ԻՆՔՆ հոլովին ըստ Է հոլովման: (20)

## 53. Ցուցական Դերանուանք :

Երկու տեսակ է ցուցական դերանուան, որպէս 'ի վերոյ յիշեցաք. (50) Սա, Դա, Նա, ցուցանեն զանձն կամ զիրս ինչ. իբր այս մարդ, կամ այս բան. այդ մարդ կամ բան. այն մարդ եւն. ուստի միայնակ 'ի գործ ածին : Իսկ Այս, Այդ, Այն, ցուցանեն միայն՝ աս, ատ, ան. ուստի ընդ այլում անուան վարին, այս կեանք, այդ այր, այն երկիր : Նմանապէս Սոյն, Դոյն, Նոյն, ունին զնոյն նշանակութիւն առաւել սաստիկ. իբր, ա՛մբլ աս, ա՛մբլ ատ. ա՛մբլ ան :

Հոլովումն սորա :

| | Եզակ. | | Յոգն. | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | Սա. | Ասիկա. | Սոքա. | Ասոնք. |
| Սեռ. | սորա. | ասորը. | սոցա. | ասոնցը. |
| Տր. | սմա, առ սա. | ասոր. | սոցա, առ սոսա. | ասոնց. |
| Հայց. | զսա. | ասիկա. | զսոսա. | ասոնք. |
| Բաց. | 'ի սմանէ. | ասկէց. | 'ի սոցանէ. | ասոնցմէ. |
| Գործ. | սովաւ. | ասով. | սոքաւք կամ օք : | ասոնցմով : |

Նոյնպէս հոլովին այլքն. Դա, դորա. Դոքա, դոցա : Նա, նորա. Նոքա, նոցա. եւն : Յոգնական սոցա տակաւ ուրեք լինի, Սայք, սայց. Դայք, դայց. Նայք, նայց :

| | Եզակ. | | Յոգն. | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | Այս. | Աս. | Այսք, այսոքիկ. | Ասոնք. |
| Սեռ. | այսր, այսորիկ. | ասորը. | այսց, այսոցիկ. | ասոնցը. |
| Տր. | այսմ, այսմիկ, առ այս. | ասոր. | այսց, այսոցիկ, առ այսոսիկ. | ասոնց. |
| Հայց. | զայս. | զաս. | զայսոսիկ. | զասոնք. |
| Բաց. | յայսմանէ. | ասկէց. | յայսց, յայսցանէ. | ասոնցմէ. |
| Գործ. | այսու, այսուիկ. | ասով : | այսոքիւք, այսոքիմբք : | ասոնցմով : |

Նոյնպէս հոլովին՝ Այդ, այդր կամ այդորիկ. այդք եւն : Յոգնակի նախդրիւ հոլովք այնին՝ կարեն լինել յայնս, զայնս. իսկ այլոցն ոչ լինի, յայդս, զայդս. եւ եթէ ուրեք տեսանիցի՝ յայսս, զայսս, ո՛չ է յոգնական այսին, այլ եզական, եւ յետին սէն դիմորոշ

յօդ է. կամ է յոգնականն այս անուան, որ նշանակէ՝ դև, սատանայ, որոյ նախդրիւ յոգնականն լինի յայսս, զայսս :

ԳԻՏԵԼԻ. Նշանակի գործիական սոցա 'ի լաւ գրչաց գիրս գտանի գրեալ, այսիւ, այդիւ, այնիւ, և երբեմն այսուիւ, այդուիւ, այնուիւ. և պատճառ այլ և այլ գրութեան է մերձաւորութիւն հնչման կամ ձայնին : Յոգնականն ևս երբեմն գրի, այդոց, այնոց. այսոցիկ, այդոցիկ, այնոցիկ: Բացառականն ևս յայսցանեաց, յայդցանեաց, յայնցանեաց :

| Եզակ. | | Յոգն. |
|---|---|---|
| Ուղ. | Սոյն. | Սոյնք, սոքին. |
| Սեռ. | սորին, սորուն. | սոցին, սոցուն, սոցունց. |
| Տր. | սմին, առ սոյն. | սոցին, առ սոսին, առ սոյնս. |
| Հայց. | զսոյն. | զսոյնս, զսոսին. |
| Բաց. | ( չունի ) | 'ի սոցունց. |
| Գործ. | սովին, սովիմբ : | սոքիմբք, սովիմբք, սոքումբք : |

Նոյնպէս հոլովին, Դոյն, դորին. դոյնք, դոքին, դոցին ևն : Նոյն, նորին. նոյնք, նոքին, նոցին ևն :

Սոցա եզակի բացառական՝ եթէ պիտոյ լիցի, 'ի սոյն, 'ի սմին. որպ. 'ի սոյն օրէ. առ օրմանէս. 'ի սմին տեղւոջէ. առ տեղէս : Զգուշանալի է չհոլովել, սոյնոյ, սոյնով, սոյնոց ևն :

---

## 54. Ստացական Դերանուանք :

Ստացական ասի դերանունն, որ նշանակէ զստացեալն երից դիմաց, այսինքն՝ զոր ունի առաջին դէմն, կամ երկրորդն, կամ երրորդն. ուստի ձևանայ 'ի սեռականէ էական և ցուցական դերանուանց. և լինելով նոր ուղղական, առնու զնոր հոլովումն :

Տեսաք վերագոյն, զի սեռականն էական դերանուանց լինի, իմ, մեր, քո, ձեր, իւր, իւրեանց : Նոյնպէս ցուցականաց սեռականն լինի, սորա, սոցա, դորա, դոցա, նորա, նոցա : Ահա սոքա լինին զատ ուղղական, և հոլովին ըստ Դ հոլովման. և վասն օրինակի հոլովեսցուք զմին :

| | Եզակ. | | Յոգն. | |
|---|---|---|---|---|
| Ուղ. | Իմ . | Իմին . | Իմք . | Իմիններ . |
| Սեռ. | իմոյ . | Իմինին . | իմոց . | Իմիններուն . |
| Տր. | իմում , առ իմ . | Իմինին . | իմոց , առ իմս . | Իմիններուն . |
| Հայց. | զիմ . | Իմինը . | զիմս . | Իմինները . |
| Բաց. | յիմմէ , յիմոյ . | Իմինէն . | յիմոց . | Իմիններէն . |
| Գործ. | իմով . | Իմինով . | իմովք : | Իմիններով : |

Նոյնպէս հոլովին և այլքն :

Մեր . մերը , մերինը . մերոյ , մերում , զմեր , 'ի մերմէ . մերով : Մերք , մերոց , զմերս , 'ի մերոց մերովք :
Քո . քուկինը . քոյ , քում , զքո , 'ի քումմէ , քով : Քոյք , քոց , զքոյս , 'ի քոց , քովք :
Ձեր . ձերը , ձերինը . ձերոյ , ձերում , զձեր , 'ի ձերմէ , ձերով : Ձերք , ձերոց , զձերս , 'ի ձերոց , ձերովք :
Իւր . իրենը . իւրոյ , իւրում , զիւր , յիւրմէ , իւրով : Իւրք , իւրոց , զիւրս , յիւրոց , իւրովք :
Սորա . ասորը . սորայոյ , սորայում , զսորայն , 'ի սորայոյն . սորայով : Սորայք , սորայց , սորայոց , զսորայսն , 'ի սորայոց , սորայովք :
Սոցա , ասոնցը . սոցայոյ , սոցայում , զսոցայն , 'ի սոցայոյն , սոցայով : Սոցայք , սոցայոց , զսոցայսն , 'ի սոցայոց , սոցայովք :
Դորա . ատորը . դորայոյ , րայում . րայով : Դորայք , րայց կամ րայոց , րայս , րայովք :
Դոցա . ատոնցը . դոցայոյ , ցայում , ցայով : Դոցայք , ցայց կամ ցայոց , ցայովք :
Նորա . անորը . Նորայոյ , րայում . րայով : Նորայք , րայց կամ րայոց , րայովք :
Նոցա . անոնցը . Նոցայոյ , ցայում . ցայով : Նոցայք , ցայց կամ ցայոց , ցայովք :

Ուր սոցա ուղղականն կամ հայցականն ունի 'ի ծայրն նու , ոչ է բնական , այլ դիմորոշ յօդ է . որպէս և այլ հոլովքն վերին դիմորոշ յօդիւք , զի սորայս , դորայդ , նորայովն , 'ի նորայոցն , ևլն :

55 . Դիտելի . Դոքա և այլքս ստացականք , որք կազմին 'ի բուն վերադրեալ ստացականաց մասընկամբս են . որ յարի կամ 'ի նոցա ուղղականն , և

կամ 'ի սեռականն ։ 'Ի յուղղականէն լինի, Իմայն, Մերայն, Ձերայն, Իւրայն ։ Նշանակութիւն սոցա նոյն է ընդ բուն ստացականին, և հոլովին նոյնպէս, իբր իմայոյ կամ իմայնոյ, իմայով, իմայինք, իմայոց, իմայովք ևն ։ 'Ի լաւ գրուածս առաւել առանց Նուն գրի, Իմայոյ, Մերայոյ, քան թէ Իմայնոյ, Մերայնոյ ։

Իսկ 'ի սեռականէն լինի, իմոյին, քոյին, մերոյին, ձերոյին, իւրոյին, իւրեանցային ։ 'Ի սոցանէ Քոյին ունի յատուկ հոլովս. քոյոյ, քոյում, 'ի քոյոյ, քոյով. քոյինք, քոյոց, զքոյինս, 'ի քոյոց, քոյովք ։ Նմանապէս Իւրեանցային, լինի՝ իւրեանցայոյ, իւրեանցայոց ։ Իսկ այլքն հոլովին նախադրիւ, իբր յիմոյին, զիմոյին, իմոյինք, զիմոյինս ևն ։

---

## 56. Յարաբերական Դերանուն ։

Յարաբերական դերանուն կոչի փոքրիկ բառս որ, և նորա կրճատեալն՝ ո. վասն զի 'ի մէջ բանին յառաջ բերէ զանուն ինչ և կամ զայլ բառ՝ անցեալ, կամ յետադայ. և փոխանակ նորա եդեալ ասի դերանուն, բայց առանց ցուցանելոյ զդէմ. ուստի երից դիմաց ևս ծառայէ ։

Հոլովումն լինի որպէս հարցական որն, ( 48 ) իբր. որոյ, ոյր, որում, ում, զոր, զո, յորմէ կամ յորոյ, յումմէ, որով։ Որք, ոյք, որոց, ոյց, զորս, զոյս, յորոց, յոյց, որովք ։

Զգործածութիւն սորա և զզօրութիւն լաւ ևս իմանաս օրինակաւ ։

* Ես եմ որ խօսիմ. ‖ աստ որն յառաջ բերէ ըզդերանունն Ես, և դնի փոխանակ նորա ։

* Դու ես որ գալոցն ես. ‖ աստ յառաջ բերէ զդերանունն Դու ։

* Զյովսէփ զայրն Մարիամու, յորմէ ծնաւ Յս՟. ‖ աստ յորմէն յառաջ բերէ զանունն Մարիամ, և փոխանակ նորա դնի ։

* Որ 'ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ բանն. ‖ աստ որն յառաջ բերէ զյետադայ անունն՝ բանն ։

## Վարժութիւն ․

57․ Յետ ուսանելոյ աշակերտին զանսակս և զհոլովմունս անուանց և դերանուանց, պիտոյ է վարժել զնա յերկու կերպս, որպէս զի զսերտեալսն լաւ ևս իմանայցէ, ՚ի միտ պահիցէ, և ՚ի կիր առնուցու ։

Նախ, տալ նմա զգրաբառ բանս, զոր դարձուցանիցէ յաշխարհաբառն, և ընտրեսցէ մի առ մի՝ թէ զինչ անուն կամ դերանուն է, որ հոլով է, և որ հոլովումն, կամ որ թիւ է ։

Երկրորդ, առաջի դնել համառօտ խօսս ինչ աշխարհաբառ, որպէս զի աշակերտն դարձուսցէ զայնս ՚ի գրաբառ ։

Երկին վարժութեանցս դիցուք աստ զօրինակս ինչ, և վարժապետն ըստ այնմ առաջնորդեսցէ աշակերտին՝ թէ՛ բերանով, և թէ մանաւանդ գրով ։

Օքրաճաան մէնել և ընտրել ։

(1) * Յաւուրս հերովդի արքային ։ ‖ Հերովդէս թագաւորին օրերը ։

(2) * Յերկրէ քումմէ, յազգէ քումմէ ։ ‖ Քու երկրէտ, քու ազգէտ ։

(3) * Ինձ որ տուեալ եմ ամենայն որոց ։ ‖ Ինծի որ ամէն սուրբերուն ( յր հաւատացեալներուն ) էն ցածն եմ ։

(4) * ՚Ի տաճարէ սրբոյ իւրմէ ։ ‖ Իրեն սուրբ տաճարէն ։

(1) Յաւուրս, յոքնակի նախդրիւ տրական կամ ներգոյական օրին. հէրօվտի, յատուկ անուն սեռական. արքայի, հասարակ անուն եզակի սեռական, երկուքն ալ ըստ ա հոլովման ։

(2) Յերկրէ. յազգէ, երկուքն ալ հասարակ անուն՝ եզակի բացառական, երկրորդ հոլովման. նոցա ուղղականն՝ երկիր, ազգ ։ Նմանապէս քումմէ՝ եզակի բացառական բ. ստացական դերանուան ։

(3) Ինձ, եզակի տրական եսին. որ ուղղական յարաբերական՝ զինչ յառաջ բերէ ։ տուեալ, ածական անուն ուղղական, եմ դիմորոշ յօդ. ամենայն, հանրական անուն եզակի ուղղական, բայց մտօք սեռականի. որոց, յոքնակի սեռական որոյրին, երրորդ հոլովման ։

(4) ՚Ի տաճարէ, եզակի բացառական, ուղղականն՝ տաճար ,

(1) * Զօրութբ եւ փառօք բազմօք : || Ուժով ու շատ փառքով :

(2) * Յո՞ ոք 'ի ձէնջ հայր : || Ձեզմէ ո՞ր հօրը :

(3) * 'Ի խաւարէ 'ի լոյս , 'ի մահուանէ 'ի կեանս || Խաւարէն՝ դէպ լուսը , մահէն՝ դէպ կեանքը :

(4) * 'Ի նմանէ , եւ նովաւ , եւ 'ի նոյն ամենայն : || Ամէն բանը անկէց , ու անով , ու անոր , ( կամ իրեն : )

---

## 58. Զաշխարհաբառն դարձուցանել 'ի գրաբառ :

| Աշխարհաբառ . | Գրաբառ . |
|---|---|
| Թագաւորէն վախէն : | Յերկիւղէ արքային : |
| Աղէկ կարգով : | Բարւոք կարգաւ : |
| Մարդը երկու բանէ , հոգէն , մարմնէն : | Մարդն յերկուց իրաց , 'ի հոգւոյ , 'ի մարմնոյ : |
| Ած ստեղծօղ , մարդը ստեղծուած : | Ած՝ արարիչ , մարդն արարած : |

երկրորդ հոլովման : արքայ , եզակի բացառական առանց նախդրի . ուղղականն արքայ , երրորդ հոլովման : Խորէն , ստացական Խորին եզակի բացառական :

(1) Զօրութբ , եզակի գործիական , ուղղականն՝ զօրութիւն , չորրորդ հոլովման : Փառօք , յոքնակի գործիական անեզական անուանս փառք : Բազմօք , յոքնակի գործիական ածական անուանս բազում , երկուքն եւս երկրորդ հոլովման :

(2) Յո՞ ոք , եզակի նախդրիւ տրական հարցականին ո՞ ոք : 'Ի ձէնջ , յոքնակի բացառական երկրորդ դիմի դերանուանս դու , դուք : հայր , եզակի նախդրիւ հասարակ անուանն հայր , հօր . որ առնլի էր , յո՞ ոք հայր 'ի ձէնջ :

(3) 'Ի խաւարէ , եզակի բացառական , ուղղականն խաւար , երկրորդ հոլովման . 'Ի լոյս , եզակի նախդրիւ տրական , ուղղականն լոյս , լուսոյ , երրորդ հոլովման : 'Ի մահուանէ , եզակի բացառական , ուղղականն մահ , մահու , հինգերորդ հոլովման : 'Ի կեանս , յոքնակի նախդրիւ տրական , անեզական անուանն կեանք , կենաց , երկրորդ հոլովման :

(4) 'Ի նմանէ , եզակի բացառական . նովաւ , եզակի գործիական նա ցուցական դերանուան : 'Ի նոյն , եզակի նախդրիւ տրական նոյն ցուցականին : ամենայն , հանրական անուն՝ եզակի ուղղական :

| | |
|---|---|
| Մի խըղճիր՝ մարդուս ձայէն : | Պաշտօնն Մի փառք մարդուամ : |
| Երկան ըսղան՝ կարճ խըլըի նշան : | Եղու երկայն՝ կարճ մնաց նշանակ : |
| Սանձերան ըսղան՝ յետքը : | Եղու համբոյ՝ ձեռնն : |
| Առաջինեկ տղուն անունը՝ Պետրոս : | Զնուն անդրանկին՝ Պետրոս : |
| Երկու մանչ, երեք աղջիկ : | Երկուս ուստերս, երկս դստերս : |
| Ամէնը հինգ զաւակ : | Ընդ ամենն հինգ որդի : |
| Անոնցմէ ո՞րը աղէկ : | Մի 'ի նոցանէ բարի : |
| Ան որ խօսք մտիկ, ամչկոտ : | Նա որ հնազանդ, ամօթխած : |
| Երկու ձեռքով բանող : | Յերկոցունց ձեռաց աջադակ : |
| Մէկը չորս տարեկան : | Մին քան չորից ամաց : |
| Մէկալը՝ տասնըութը : | Միւսն՝ ութուտասանից : |
| Իրենց դէմքը՝ մէկ, ամա թաբիաթնին՝ տարբեր : | Կերպարանք իւրեանց՝ նոյն, բարք նոցա՝ այլ : |
| Ամէն մարդ ինք իրեն բարեկամ, ինք իրեն թշնամի : | Ամենայն մարդ անձին իւրում բարեկամ, անձին իւրում թշնամի : |
| Ասքան աղւորիկ խօսքը՝ հերիք քեզի : | Այսքան բանք իմ բաւական քեզ : |

Ըստ այսոցիկ օրինակաց կարէ վարժապետն ձեւացուցանել զայլ եւ նման բանս, մանաւանդ այնպիսի բառսն՝ որք գտանին 'ի Քերականութեան : Զնոյն վարժութիւն պիտոյ է հետ զհետէ ընդարձակել ըստ զարգանալոյ աշակերտին 'ի մտաւորութիւն բայից եւ այլոց մասանց բանին :

# ՅԱՒԵԼՈՒԱԾ.

## Հարկաւոր գիտելիք 'ի վերայ Անուան ։

Զպարագայս անուան՝ վեց թուով համառօտ յիշեցաք 'ի սկզբան, (2) թողեալ զմանաւոր տեղեկութիւս նոցա ծանուցանել 'ի դէպ ժամու, յետ ուսանելոյ աշակերտին և սերտողաբար 'ի միտ առնլոյ զհոլովմունս անուանց. վասն զի այսպէս դիւրաւ և լաւ ևս իմանայ զգիտելիսն ։ Արդ՝ զայսոսիկ տեղեկութիւս ի վերայ Անուան, որպէս և դերանուան, դիցուք յառաջիկայդ 'ի ձև հարցման և պատասխանւոյ՝ վասն առաւել դիւրին և ախորժելի առնելոյ 'ի սերտել ։

### Բաժանումն Անուան ։

59. Հց. Անունն նախ առաջին 'ի քանիս բաժանի ։

պխ. Յերկու, 'ի գոյական և յածական ։

Հց. Գոյական անունն ո՞ր է ։

պխ. Այն է՝ որ նշանակէ որոշեալ իր ինչ, և միայնակ իմացեալ լինի. որպ. մարդ, ջուր, երկաթ, վարդապետութիւն ևն ։

Հց. Ո՞ր է ածական անունն ։

պխ. Այն է՝ որ նշանակէ այսպիսի կամ այնպիսի լինել իրին. և միայնակ ոչ իմացեալ լինի որոշակի, այլ պահանջէ զգոյական անուն ինչ. որպ բարի, չար, կարծր, արդար, երկնային ։ Այսոքիկ նշանակեն որպիսի ինչ լինել. բայց թէ ո՛րն է այն՝ ոչ ցուցանեն. որպ բարի ոչ ցուցանէ թէ ո՛ր իրք բարի է, մա՞րդ բարի, կամ խօ՞սք բարի ։

60. Հց. Ո՞րպէս ընտրելի է՝ թէ ո՛ր անուն գոյական է, և ո՛ր անուն ածական ։

պխ. Դիւրին կանոնն որոշելոյ ա՛յս է. պիտոյ է նախ գիտել զնշանակութիւն անուանն, և յետոյ տեսանել թէ կարէ՞ դնիլ ընդ ձայնիս՝ բան ։ Եթէ յարմարի վարիլ ընդ նմա, ածական է. և եթէ ոչ յարմարի, գոյական է. որպ սովորաբար ասեմք՝ քաղցր

քան, ուղիղ քան, երկայն քան, բարի քան: Այսու իմանաս թէ անուանքս քաղցր, ուղիղ, երկայն, բարի, ածական են: Բայց ոչ ասեմք՝ քաղցրութիւն քան, ուղղութիւն քան. նմանապէս ոչ ասի՝ աթոռ քան, հաց քան, կրակ քան. և այսու իմանաս թէ անուանքս քաղցրութիւն, ուղղութիւն, աթոռ, հաց, կրակ, են գոյական:

61. Հց. Կարեմք այլով նշանաւ ևս որոշել ըզգոյական, և զածական:

Պտ. Այո. բազում անուանք ճանաչին 'ի վերջաւորութենէն. որք վերջանան թիւն, ումն, իւն, ուստ, իստ, ուրդ, անք, ոց, սովորաբար գոյական են. Որպէս բարութիւն, գոչումն, լալիւն, փախուստ, հանգիստ, ժողովուրդ, պարծանք, խարտոց:

Իսկ անուանք որք վերջանան աւոր, ին, ական, ղէն, եալ, ող, լի, յատուկ ածական են. Որպէս երկնաւոր, երկրային, մարմնական, հոգեղէն, սիրեցեալ, սիրող, սիրելի:

Բաց յայսմանէ՝ ածական են միջական անուանքն (38.) ցուցական և ստացական դերանուանք. (53. 54) իսկ էական դերանուանք, և ցուցականքն սա, դա, նա, և յարաբերականն որ, են գոյական:

62. Հց. Ածական անունն ունի՞ միշտ զգոյական:

Պտ. Բազում անգամ ոչ ունի յայտնապէս, այլ զօրութեամբ կամ լռելեայն. որ ծածկապէս իմացեալ լինի գոյականն. Որպէս յորժամ ասեմք, այր բարի, ածականն բարի՝ յայտնապէս ունի զգոյականն այր: Բայց ասելով, բարին է սիրելի, ապա գոյականն լռելեայն իմացեալ լինի, որ է բարի մարդն, կամ բարի գործն:

63. Հց. Ածական անունն վարի՞ երբեմն իբրև գոյական:

Պտ. Այո. գոյ անուն՝ որ ըստ կազմութեան՝ է ածական, բայց 'ի գործ ածի իբրև գոյական, և զայլ ածական ևս ընդունի. Որպէս բժիշկ, ըստ բուն նշանակէ՝ բժշկող, բուժացնող, կամ գիտող բժշկութեան, և ըստ այսմ ածական է. բայց սովորաբար նշանակէ՝ հեքիմ. և ըստ այսմ է գոյական, և առնու զայլ ածական. որպէս բժիշկ ճարտար, վարպետ հեքիմ:

Դարձեալ, երբեմն ածականն յոքնակի եղեալ նշանակէ իբր գոյական. որպ. հայրենի, նշանակէ՝ հօրենական, և ածական է. իսկ հայրենիք, նշանակէ՝ նախնեաց երկիրն, կամ ազգն, կամ ստացուածքն. և է գոյական :

---

## Բաժանումն Ածական անուան :

64. Հց. Ածական անունն ունի՞ բաժանումն ինչ :

պխ. Այո. եղև սովորութի բաժանել յերիս. որպ. դրական, բաղդատական, գերադրական :

Հց. Ո՞ր է դրական ածականն :

պխ. Այն է՝ որ նշանակէ զորպիսութիւն իրին պարզաբար, առանց ցուցանելոյ զչափն. որպ. բարի, լուսաւոր, [illegible], այսոքիկ նշանակեն թէ իր ինչ բարի է, լուսաւոր է, այլ ոչ նշանակեն՝ ո՛րչափ բարի կամ լուսաւոր իցէ :

Հց. Ո՞ր է բաղդատական ածականն :

պխ. Այն է՝ որ զնշանակութի դրականին աճե- ցուցանէ, և բաղդատելով առ այլ՝ ցուցանէ աւելի լինել :

Հց. Իսկ գերադրական ածականն ո՞ր է :

պխ. Այն է՝ որ զնշանակութի դրականին հանէ 'ի վերին աստիճանն, և ցուցանէ լինել աւելի քան զայլն ամենայն :

65. Հց. Ասա ինձ այժմ, դրականն ո՞րպէս լինի բաղդատական և գերադրական :

պխ. 'Ի յունական և 'ի լատին լեզու՝ դրականն լինի բաղդատական և գերադրական, յաւելով 'ի վերջն զմաննշան մասնիկ ինչ. որպէս 'ի յոյնն՝ բաղդատականի մասնիկ է տէրօս, և գերադրականին տատօս : 'Ի լատինն բաղդատականն՝ իօր, գերադրական՝ իսսիմուս. որպ. կրանդիս, մեծ. կրանդիօր, աւելի մեծ. կրանդիսսիմուս, յոյժ մեծ : Իտալական լեզուն ոչ ունի յատկապէս ինքնին, այլ առնու 'ի լատինէն : Բայց 'ի հայ լեզու ոչ գոյ այսպիսի եղանակ, որպէս և ոչ 'ի տաճկականն. վասն այսորիկ ստացի վերագոյն թէ սովորութի եղև այսպէս բաժանել,

հայելով 'ի յունական և 'ի լատին սովորութիւնս ։

66. Հց. Եթէ այդպէս է, մեք որպէս ապա ծա- նուցանեմք զբաղդատականն և զգերադրական ։

պխ. Զբաղդատականն ծանուցանեմք, մի՝ յա- րելով 'ի վերջ դրականին զտառն գոյն. և միւս՝ դնե- լով յառաջոյ կամ զկնի դրականին զսաստկացու- ցիչ բառ ինչ ։ Այսպէս դրականքն բարի, լուսաւոր, մեծ, լինին բաղդատական, բարեգոյն, լուսաւորա- գոյն, մեծագոյն ։ կամ, առաւել բարի, եւս լուսաւոր, մեծ եւս. որ է ասել, առաւել լուսաւոր, առաւել մեծ ։

Նմանապէս գերադրական առնեմք, նախ՝ յարե- լով 'ի սկիզբն դրականին կամ բաղդատականին զտառս՝ ամեն, գեր, մեծ, երեք կամ եռ. ոպ. ամենաբա- րի, ամենամեծ, գերամաքուր, մեծափառագոյն, երեք- փառաւորեան, եռամեծ ։

Երկրորդ՝ դնելով մերձ դրականին կամ բաղդա- տականին զայլ բառ սաստկացուցիչ. ոպ. եւս մեծա- գոյն, վեհագոյն եւս, չարի դժուարին, յոյժ հաւատարագոյն, անհնարին չար, ամենևին գեղեցիկ, երիցս օրհնեալ, ևն ։

Այս և այլ եղանակ առնելոյ գերադրական, կրկնելով զդրականն կամ կից, և կամ մօտ. ոպ. մեծամեծ, չարաչար, ծանր ծանր, մանր մանր, սուր սուր, և այլն ։

---

Բաժանումն Գոյական անուան ։

67. Հց. Գոյական անունն 'ի քանիս բաժանի ։

պխ. Յերիս, 'ի յատուկ, 'ի հասարակ, և 'ի հաւաքա- կան ։

Հց. Ո՞ր է յատուկ անունն ։

պխ. Այն է՝ որ եդեալ է 'ի նշանակել զմի եզա- կան անհատ իր, թէ մարդ իցէ, թէ քաղաք, թէ այլ մասնաւոր տեղի. ոպ. Արամ, Նոյ, Աբրահամ, Տրդատ, Եւայ, Սառայ, Աշխէն, Հայաստան, Կարին, Մասիս, Տիգրիս. ևն ։

Հց. Ո՞ր է հասարակ անունն ։

պխ. Այն է՝ որ եդեալ է 'ի նշանակել զբա- զումս, և զմի եզական ևս. ոպ. մարդ, ծառ, լոյս, տուն,

հոգի եւն : զի մարդ, բազում մարդոց ասի, այլեւ այսմ եւ այնմ մարդոյ, պետրոսի, պօղոսի, նմանապէս այլքն :

Հց. Ո՞ր է հաւաքական անունն :

Պխ. Ա՛յն է՝ որ եզական ձայնիւ նշանակէ զբազումս միանգամայն, եւ ոչ ասի միոյ միոյ առանձին . որպ. ժողով, ազգ, բանակ, հօտ : Զի միոյ մարդոյ ոչ ասի ժողով կամ ազգ . եւ միոյ զինուորի ոչ ասի բանակ . եւ միոյ ոչխարի ոչ ասի հօտ, այլ բազմաց միանգամայն : Բայց քանզի գտանի բազում ժողով, բազում ազգ, վասն այն հաւաքական անունն ունի նաեւ յոգնական, ժողովք, ազգք, եւն :

68. Հց. Կարէ՞ յատուկ անուն ինչ լինել հասարակ, եւ հասարակն յատուկ :

Պխ. Յատուկ անուն ինչ թէ եւ բազմաց ասիցի, միշտ միոյ յատուկ . որպ. Յովհաննէս, Գրիգոր, Ներսէս, բազում մարդոց կոչին, բայց միշտ նշանակութեամբ միոյ անհատ եզականի :

Իսկ անուն ինչ հասարակ՝ յորժամ առեալ լինի առ 'ի ցուցանել զմի անհատ, իբր յատուկ 'ի գործ ածի . որպ. Մարտիրոս, հասարակ անուն է, եւ բազում մարտիրոսաց ասի, բայց դնի եւս անհատ մարդոյ անուն : Նոյնպէս Վարդ, Շուշան, ըստ որում նշանակեն ծաղիկ, հասարակ են . բայց անուն եդեալ առն մարդոյ կամ կնոջ, լինին յատուկ :

69. Հց. Մինթէ ածական անունն ո՞չ բաժանի 'ի յատուկ եւ 'ի հասարակ :

Պխ. Հայելով 'ի նշանակութիւն ածականին, միշտ է հասարակ . վասն զի ասի թէ միում, եւ թէ բազմաց : Բայց եթէ դնիցի իբրեւ անուն մարդոյ, լինի յատուկ . որպէս սրբուհի՝ ածական է, եւ ընդ գոյականի վարի՝ սրբուհի կոյս . բայց իբրեւ անուն կնոջ՝ լինի յատուկ :

70. Հց. Յետ գիտելոյ զբաժանումն Անուան, զի՞նչ այլ խնդրես ուսանել :

Պխ. Բաղձամ ուսանել մի ըստ միոջէ զպարագայս անուան :

Հց. Բարւոք ցանկաս . բայց ասա՛ նախ՝ զի՞նչ իմանաս պարագայ ասելով :

պտ. Իմանամ զայն մասնաւոր կերպն՝ որ շուրջ զա-նուամբն մտածեալ լինի, և որոշաբար ծանուցանէ զկազմութիւն և զայլ և այլ փոփոխութիւն անուան ։

Հց. Քանի՞ են պարագայք անուան ։

պտ. Վեց են. որպէս Սեռ, Ձև, Տեսակ, Թիւ, Հո-լով, Հոլովումն ։ Զսոցանէ ուսայ զՀամառօտ գիտե-լեան. ( 2. 3 եւն ) բայց առաւել ևս տեղեկանալ ար-ժան է ։

---

## Սեռք Անուան ։

71. Հց. Զի՞նչ է սեռ անուան, և քանի՞ ։

պտ. Սեռ նշանակէ՝ ազգ, և յայտ առնէ թէ նշանակեալն անուան իրիք որո՞յ բնութեան իցէ, որպէս արո՞ւ՝ թէ էգ եւն ։ Սեռ բաժանի ՚ի չորս. որպէս Արա-կան, Իգական, Հասարակ, Չէզոք ։

Հց. Ո՞ր է արական անունն ։

պտ. Այն անունն յատուկ կամ հասարակ, որ նշա-նակէ զարու, և միայն արուի ասի. որպէս. Յովսէփ, Պե-տրոս, հայր, եղբայր, աներ, քեռահայր, Թագաւոր, ցուլ, եզն, աքաղաղ եւն ։

Հց. Ո՞ր է իգական անունն ։

պտ. Այն անունն որ նշանակէ զէգ, և միայն իգի ասի. որպէս Կատարինէ, Սողոմէ, մայր, քոյր, դուստր, քեռամայր, դշխոյ, կով, եղն, մարի, և այլն ։

Հց. Ո՞ր է հասարակ անունն ։

պտ. Այն անունն որ նշանակէ զարու և զէգ, որպէս նշանակեալն պատշաճի թէ արուի, և թէ իգի. որպէս մարդ, որդի, Թոռն, Թռչուն, ոչխար, ձի, մարգարէ, երգե-ցիկ եւն ։

Հց. Ո՞ր է ապա չէզոք անունն ։

պտ. Այն է՝ որոյ նշանակեալն ոչ արու է, ոչ էգ է ։ Այսպէս են անուանք բնական և արհեստա-կան իրաց, նոյնպէս գիտութեանց, առաքինութեանց եւն. որպէս ջուր, օդ, հող, մարմին, ծառ, քար, տուն, քաղաք, լեառն, միտք, սէր, իմաստութիւն, համբերութիւն եւն ։

72. Հց. Այս սեռ որո՞վ անուան պատշաճիցի, գոյականի՞ն թէ ածականին ։

պտ. Յատկապէս պատշաճի գոյական անուան.

բայց կարէ յարմարիլ նաև ածականին՝ յորժամ առի կամ արուի, կամ իգի, կամ երկուցն ևս. օր. ծեր, ալևոր, [illegible], առի արուաց միայն. իսկ պա- ռաւ, մանկամարդ, անայր, արամբի, ծննդոցին և այլն, առին իգաց միայն: Բազում այլ ածականք հասարակաբար առին արուի և իգի. օր. բարի, [illegible], երէց, [illegible], գեղեցիկ, տգեղ, և այլն:

73. Հց. Եթէ զհասարակ անուն ինչ կամիմք տալ կամ արուի միայն, և կամ իգի միայն, ո՞րպէս որոշելի է:

Պտ. Ի վերայ հասարակ անուան դնեմք զայլ բառ ինչ արական կամ իգական. օր. մարդ, առիւծ, աղաւնի, ձի, տղայ, հասարակ են. յորժամ կամիմք ցուցանել զարուն՝ ասեմք, այր մարդ, արու առիւծ կամ աղաւնի կամ ձի. մանուկ տղայ: Իսկ առ ՚ի ցուցանել զէգն ասեմք, կին մարդ, մատակ առիւծ կամ ձի, աղջիկ տղայ:

74. Հց. Ո՞րգեօք ՚ի վերջաւորութի՞ անուանն որոշի՞ արականն և իգականն:

Պտ. Ոչ. զնա վերջք ինչ մնեալք ՚ի յունականէն և յեբրայականէն, յորոշումն արականին և իգականին: Արական են էս, ոս. իգական, ա, է. օր. յովհաննէս և յովհաննա. կիւրեղէս և [illegible]. յուստինոս և յուստինէ. Անաստասիոս և Անաստասիա:

Գտան և այլ բառք կամ մասնիկք՝ որք յարեալք ՚ի վերջ յատուկ կամ հասարակ անուանց, առնեն զայնս իգական. այսպիսի են ենի, ուհի, անոյշ, դուխտ. օր. վարդենի, վարդանուհի, վարդանոյշ, սահականոյշ, խոսրովիդուխտ, որք նշանակեն՝ դուստր վարդայ կամ վարդանայ, դուստր սահակայ կամ խոսրովու ևն:

Ի սոցանէ առաւել ՚ի գործ ածի մասնիկն ուհի, յարեալ ՚ի յատուկ և կամ ՚ի հասարակ անուանս. օր. Տիգրանուհի, քոյր տիգրանայ. [illegible], քոյր [illegible]. Քրմուհի, կին քրմի, կամ քուրմ կին. մարգարէուհի, կին մարգարէի, կամ կին մարգարէ. Քահանայուհի, կին քահանայի, կամ կին քահանայագործող. [illegible], մարտիկոս կին. իմաստուհի, կին իմաստուն:

## Ձեւ Անուան։

75. Հց. Զի՞նչ է ձեւ անուան։

պտ. Ձեւանալն կամ շինուածն անուան իւիք, որով ճանաչի թէ անուն ինչ ինքնին, կամ յայլմէ ձեւացեալ է։

Հց. Քանի՞ է այս ձեւ։

պտ. Չորեք, պարզ, բարդ, բաղադրեալ։

Հց. Ո՞ր է պարզ անունն։

պտ. Այն է՝ որ չէ կցեալ ընդ այլում բառի, և սկիզբն ևս չէ փոխեալ, այլ պահէ զիւր բնականն. որպ. հոգի, լոյս, սուրբ ևն։

Հց. Ո՞ր է բարդ անունն։

պտ. Այն է՝ որ միաւորեալ է ընդ այլում նշանական բառի՝ ձայնաւոր գրովս ա, ե, է. որպ. 'ի պարզիցն հոգի, բնակ, լոյս, խրատ, պարգեւ, լինին բարդ, հոգաբնակ, հոգելոյս, հոգէխրատ, հոգէպարգեւ։

Այլ թէ 'ի բազում բառից իցէ միաւորեալ, ասի յորաբարդ. որպէս յերկուց՝ Դ, բան, աւէր, կազմի՝ Դաբանաւէր։

Հց. Ո՞ր է բաղադրեալ անունն։

պտ. Այն է՝ որ 'ի սկիզբն պարզ անուան առնի գիր մի, կամ զանազան մասնիկ, որ ասի բաղադրական։ Այս մասնիկ միաւորի ընդ անուանն անմիջաբար առանց կապող ձայնաւորի, և զնշանակութիւն անուանն կամ փոխէ 'ի ներհակն, կամ աճեցուցանէ, և բազում անգամ զգոյականն առնէ ածական։ Այսպիսի մասնիկ ոչ երբէք յարի 'ի դերանուանս։

Հց. Ապա, ո՞ր են այդ մասնիկք։

պտ. Մասնիկք որք փոխեն զնշանակութիւն՝ կոչին ներհական. և են՝ ա, ան, ամ, տ, չ, բ։ Իսկ սաստկացուցիչ են մասնիկքն, ղ, ըն, ըմ, ըմբ։ Օրինակք առաջնոյն, կամայ, ակամայ. ծուխ, անծուխ. այսինքն որ ոչ առնէ ծուխ. արատ, անարատ. բաւ, անբաւ կամ ամբաւ. գեղ, տգեղ. կար, տկար. գոյ, չգոյ. ողջախոհ, բողջախոհ. ողք, բողք։

Իսկ սաստկացուցիչ մասնկաց օրինակք, անց,

ղանց · աչացու , ղալղալու · աւրդ , ղարդ · ուռ , ըմբռատ · բեր , ըմբեեր · թաց , ըռնբաց ։

77. Հց. Ո՞րոց յայտյանէ գո՞ն և այլ բաղադրական մասնիկք ։

Պտխ. Կան ումանք, որք յատկապէս ոչ են բաղադրական · վասն զի ունին զատ նշանակութի , և ձայնաւորաւ կայլին 'ի սկիզբն բառին , երբեմն նաև 'ի վերջն · ուստի առաւել բարդ անուն առնեն՝ քան թէ բաղադրեալ ։

Հց · Ա՛յս տեսից՝ ո՞յք են ։

Պտխ. Ան սոքա , տծ կամ ածծ , աու , աղ , արդ , տար , բայ , հան , համ կամ հոմ , բաղ կամ ժող , բած կամ բան , դար , շար , մահ , ներ , սի ։ Սոքա պէսպէս օրինակաւ այլայլեն զնշանակութի պարզ անուանն · որ · պատեհ , տծպատեհ · գոհ , ածգոհ · բան , աղաբան · կայ , արդակայ · կաց , տարակաց · յայտ , բացայայտ · ձառ , հանձառ · ձայն , համաձայն · անուն , հոմանուն · գատ , բաղգատ · առեալ , բանառեալ · գայ , պարագայ · գիր , մահագիր · կուռ , ներկուռ · կին , սիկին ։

78. Հց. Ո՞յտահետև խօսելով 'ի վերայ բարդ անուանն , տա՛ յորո՛ց բառից , կամ յո՛ր մասանց բաղնին լինի բարդութի ։

Պտխ. Յառաջ զայս ասեմ , թէ յորմէ մասնէ և լինիցի , այն բարդեալն միշտ համարելի է անուն ։ Իսկ թէ յորմէ լինիցի , ոչ ընաւ լինի 'ի շաղկապէ և 'ի միջարկութէ ։ Այլև 'ի բայէն ոչ լինի երբե բայ , այլ յարմատոյ բայլն լինի ։ 'Ի մնացեալ մասանց յամենայնէն լինի ։ որ ·

'Ի գերանուանէ , որ միշտ յառաջոյ դնի · ինքնին , մերաներդ · տղանաղունչ · ինքնագործ · նոյնագոյ ։ Այսպէս են վերբերական անուանքն , այսպիսի , որքան , այնչափ և այլն · (49 ։)

Յարմատոյ բայից , որ 'ի վերջոյ դնի , մարդատեաց , ուղղահայեաց , աշխարհակեցոյց , և այլն ։

Յընդունելութէ , որ դնի յառաջոյ և 'ի վերջոյ · որպէս · ընտրեալ , օրհնեալ , երգելի , լինի՝ ընտրելանիշ , աստուածօրհնեալ , բանսերգելի ։

'Ի նախադրութէ և 'ի մակբայէ , որք միշտ յառաջոյ դնին · որպէս նախադրութիւն ընդ , առ , լինի

ընդարձակ , տառապելի ։ Ի մակբայից արդ , միշտ , դեռ , լինի՝ արդժամանական , մշտական , դեռաբոյս ։

79. Հց. Այսպիսի բարդեալ անուանք՝ գոյակա՞ն են թէ ածական ։

պտ. Սովորաբար լինին ածական , թէ և նոցա պարզն իցէ գոյական . որ արծաթ , ոսկի , երկոքին են գոյական են . իսկ բարդն՝ արծաթասէր , ածական լինի ։ Կոմն սակաւ անուանք՝ որք 'ի բարդելն մնան գոյական . որ ժամանակակէտ , անձրեւաջուր , և այլն ։

80. Հց. Արդեօք նոյն մի անուն բարդի՞ ինքեամբ ։

պտ. Այո . բազում միավանկ անուն ինքեամբ բարդի առ 'ի սաստկացուցանել զնշանակութիւնն , ունելով զձայնաւոր յօդ , կամ առանց այնր ևս . որ մեծամեծ . չարաչար . դեղադեղ . պէսպէս . վաշվաշ . ծործոր ։

Երբեմն այսպիսի կրկնեալ անուանց՝ առաջին կամ վերջին գիրն բարձեալ լինի՝ վասն քաղցրութեան , կամ 'ի ներքս դնի այլ բաղաձայն գիր մի . որպէս առաջնոյն օրինակ , անուանքս՝ փոխ , դար , հեղ , կրկնելով լինին՝ փոփոխ , դադար , հեղեղ . փոխանակ դնելոյ՝ փոխփոխ , դարդար , հեղհեղ ։ Այսպէս են կակաղ , թոթով , շաշափ , թաթաւ , փոխանակ դնելոյ՝ կաղկաղ , թովթով , շաղփշաղփ , թաւթաւ ։ Իսկ յետնոյն օրինակ լիցի , չար , աղխ . որք կրկնելով լինին՝ չարմար , աղխամաղխ , փոխանակ ասելոյ՝ չարչար , աղխաղխ ։

81. Հց. Յորժամ յայլ և այլ անուանէ լինի բարդութիւն , զի՞նչ փոփոխութիւն մտանէ 'ի նոսա ։

պտ. Երրեակ փոփոխութիւն մտանի 'ի նոսա . այս է 'ի կողմանէ թուոյն , հոլովոյն , և հոլովմանն ։

Հց . 'Ի կողմանէ թուոյն զի՞նչ փոփոխութիւն լինի ։

պտ. Պարզ անուն ինչ՝ որ սովորաբար յոգնակի միայն 'ի գործ ածի , (112) 'ի բարդութեան՝ թէ յառաջոյ դնիցի , և թէ 'ի վերջոյ , վարի նաև եզակի . որ անուանքս՝ ջուրք , կամք , միտք , հրաշք , մեղք , 'ի բարդութեան ասին , ջրասէր , մեծաջուր . կամակոր , յօժարակամ . մտայոյզ , բարեմիտ . հրաշակերտ , նորահրաշ . մեղապարտ , բազմամեղ ։

82. Հց. Ի կողմանէ հոլովոյն զի՞նչ փոփոխութիւն լինի ։

պա. Ի յետին տեղւոջ եղեալ անունն ոչ փոփոխի սովորաբար. բայց նախ եղեալ անունն այնպէս մնանէ ի բարդութեան, որպէս փոփոխի ի սեռականն, ձգելով զսեռականի յետին ձայնաւորն կամ զվանկն. որպէս տեսանես ի վերոյեղեալ բարդանուանս ։ Աւստի այն անուանք՝ որք առանց փոփոխելոյ՝ ձայնաւորաւ միով լինին սեռական, ձգելով զնոյն ձայնաւորն՝ միանան ընդ յաջորդ անուանն. որ բան. սեռ. բանի. ի բաց թողեալ ինին, բարդի՝ բանասէր ։ Այսպէս՝ գործ. սեռ. գործոյ. թողեալ ձայնաւորն ոյ, լինի՝ գործունեայ ։ Բայց անուանք փոփոխեալք ի սեռականն, ըստ այնմ մնանեն ի բարդութիւն, ձգելով զյետին ձայնաւորն կամ զվանկն. որ օգուտ, սեռ. օգտի, ի բարդն լինի՝ օգտակար ։ Այսպէս՝ խիղճ, խղճի, խղճապարտ. հուր, հրոյ, հրալից. մանուկ, մանկան, մանկավարժ ։ Գոն և բարդեալք՝ յորս սեռականն պահի ամբողջ, կամ ուղղականն, երբեմն և գործիականն մնանէ ի բարդութիւն. որ մարդահաճ, և մարդկածին. արիւնարբու և արեանարբու. վրէժխնդիր և վրիժառու. կնասէր, կնոջասէր, կանանցասէր. աստղագէտ և աստեղագէտ. այրաձերդ և առնաձերդ. տանուտէր և տնարար. ձեռաձերս և ձեռնաձերս, ձեռբաձեւ, ի գործիականն ձեռամբ ։

Անուանք ինչ՝ որք անեզական վարին, ի հայցական հոլովոյն ես մնանեն ի բարդութիւն. որ կենագործ և կենսագործ. օրինադիր և օրէնսդիր. և այլն ։

Ի վերայ բարդութեան անուան գոն և այլ բազում գիտելոյ արժանի ծանօթութիւնք՝ եդեալք յընդարձակ քերականութեան ։ ( Համար 578 ։ )

83. Հց. Ի կողմանէ հոլովման զի՞նչ փոփոխութիւն առնու բարդ անունն ։

պա. Որովհետև ի հասարակ բարդութեան վերջին անունն միայն հոլովի, բազում անգամ անունն փոխէ զիւր հոլովումն. այնպէս զի պարզ անունն հոլովելի ըստ երրորդ և հինգերորդ հոլովման, ի բարդելն հոլովի ըստ առաջնոյն կամ երկրորդին. որ բոյս, բուսոյ, բարդեալն՝ նորաբոյս, հոլովի՝ նորա-

թուսի, սից ։ Գործ, գործոյ. բարդեալն՝ բարե-գործ, գործի, ծաց ։ Զէն, զինու, բարդեալն՝ ապա-զէն, զինի, զինաց ։

Նոյնպէս լինի փոփոխումն հոլովման նաև ՚ի բաղադրեալ անուանս. (76.) որպէս անգործ. ծի, ծից կամ ծաց. անզէն, զինի. զինաց. անարատ, տի, տից, և ոչ տոյ, տոց. անտեղ, տեղի, աց. և ոչ տեղոյ, տեղոց ։

Նա՛ և այլ փոփոխումն հոլովման և թուոյ, զի պարզ բառ ինչ միայնակ ոչ հոլովի, կամ ոչ վարի յոգնակի. իսկ ՚ի բարդութեան հոլովի նաև յոգնակի. որպէս շան, գար, ձայն, միայնակ անհոլով են. բայց ՚ի բարդելն հոլովին. Եծաշան, նի, նից. Խելագար, րի, րաց. Լռաձայն, լի, լից ։ Նոյնպէս յոյս, տէր, միայնակ ոչ վարին յոգնակի. բայց ՚ի բարդութեան լինի, Մեծայոյս, մեծայոյսք, յուսից. Բարետէրք, տիրաց ։

84. Հց. Ընդէ՞ր ասացեր վերագոյն (83) թէ ՚ի հասարակ բարդութեան յետին անուանն միայն հոլովի. միթէ առաջին անուանն ոչ հոլովի բնաւ ։

Պտ. Ասելով հասարակ, իմանամ յորժամ բառքն կապին այս ամփոփական յօդիւք՝ ա, ե, է, ի. զի յայսպիսի բարդեալս հոլովի յետին բառն միայն ։ Բայց կայ նաև բարդութիւն ու, և, ձայնաւորաւ. և յայսպիսիս կարէ հոլովիլ առաջին անուանն ևս. որպէս այրուձի կամ այրեձի. և հոլովի՝ այրուձւոյ կամ առնուձւոյ, առնեձւոյ, շայրուձի ։ Պարծեալ, եղնամուտ կամ եղնամուտ, հոլովի՝ եղինամտի, եղնամտաց ։

85. Հց. Կապող ձայնաւորն երբ լինի ե, է ։

Պտ. Յորժամ առաջին անուանն կիր բառն վերջանայ ի, նոյնն փոխի ՚ի բարդութեան ե, է. որպէս բարի, բարեկամ. գերի, գերեդարձ, գերեվար. որդի, որդեգիր ։

Սակայն երբեմն առանց այսր պատճառի ևս՝ փոխանակ ա կապող ձայնաւորի դնի ե, է. որպէս փոխանակ ասելոյ՝ ազանկար, ազանիաղ, քնած, ասեմք՝ ազէկար, ազէնիաղ, քնէած ։ Նոյնպէս լինի՝ կորագլուխ և կորէգլուխ, գլխաբաց և գլխէբաց ։

86. Հց. Յորժամ բարդեալ անուանց առաջինն վերջանայ ձայնաւորաւ, կամ յետինն ձայնաւորաւ

սկսանի, յայնժամ կապօղ ձայնաւորն որպէս դնի ։

պխ. Այլ և այլ եղանակաւ լինի. երբեմն ձայնաւորն յետնոյն բաւական է 'ի կապել. որպէս բառքս՝ արգել, երամ, իմաստ, որս, բարդին՝ Բանտարգել, Բաղերամ, Մեծիմաստ, Ձկնորս ։ Բայց երբեմն պահի երկոցունց ևս ձայնաւորն. որպէս Բարեատեաց, Հոգեընկալ ։

Սակայն յաճախակի ձայնաւորն առաջնոյն կամ յետնոյն 'ի բաց ձգի. որպէս Հոգերգօղ, Բարերար, որ բարի արար. Գինարբու կամ Գիներբու, որ գինի արբու. Բարեսաց, որ բարի ասաց. Ապաշխար, որ ապա աշխար ։

Այսպէս կրճատել զձայն մի, երբեմն նաև զվանկ մի՝ սովորութիւն է յայլ բառս ևս՝ վասն համառօտութեան կամ վայելչութեան. որպէս փոխանակ ասելոյ՝ մանկկացու, դնի Մանկացու ։ Փողահարն դնի՝ Փողար. Արտահալածն՝ Արտալած ։ Ճարտարասանն՝ Ճարտասան ։ Այսպէս յանուանէն՝ Արար, բարդին՝ Մեծար, Մեծարեալ, Յարդար, փոխանակ՝ մեծարար, մեծարարեալ, և այլն ։

---

## Տեսակք Անուան ։

87. Հց. Զի՞նչ է տեսակ անուան, և քանի՞ ։

պխ. Այն է որ յանուան անդ մտածի իբրև բնական որպիսութիւն նորա, և կամ իբրև փոփոխեալ ։ Ուստի երկու է, Նախատիպ և Ածանցական ։

Հց. Ո՞ր է Նախատիպ անունն ։

պխ. Այն է որ պահէ զիւր բնական կազմութիւն և զնշանակութիւն. որպէս Երկիր, Երկին ։

Հց. Իսկ ո՞ր է Ածանցական անունն ։

պխ. Այն է որ ունելով զաննշան մասնիկ մի 'ի վերջն, փոխէ զկազմութիւն և զնշանակութիւն անուանն. այն մասնիկ՝ թէ գիր մի լիցի, և թէ վանկ մի, կոչի Ածանցականակերտ. որպէս Երկրաւոր, Երկնային, ուր մասնիկքն ՒՈՐ, ՅԻՆ, ածանցականակերտ են, իսկ միջինս Ա, կապօղ ձայնաւոր է ։

88. Հց. Ածանցական անունն որո՞վ զանազանի 'ի Նախատիպ անուանէ ։

պխ. Այսու զանազանի, զի բաղադրեալ անունն ՚ի սկիզբն առնու զաննշան մասնիկն առանց կապող ձայնաւորի. դր. անլյա. (76) իսկ ածանցականն ՚ի վերջն առնու զաննշան մասնիկ կապող ձայնաւորաւ, դր. լուսաւոր : ՚Ի բարդ անուանէն որոշի, զի այս ՚ի նշանական բառից կազմեալ է, (75) դր. ընտաղֆեա, արքայլյա :

Ուստի բարդ և բաղադրեալ անունն՝ ըստ տեսակին նախադէպ է, իսկ միայն ածանցականն՝ ըստ ձևոյն դարդ է : Զորիցն ևս լիցի օրինակ անունս՝ ֆառ, որ է պարզ և նախատիպ. անֆառ, բաղադրեալ նախատիպ. ֆառակէդ, բարդ նախատիպ. անֆառանաք, բաղադրեալ, բարդ, և ածանցական առ մասնկամբ : Իսկ եթէ առանձին առնուս զրառն առնաք, է պարզ, բայց ածանցական :

89. Հց. Նախատիպ անունն որո՞վ կանոնաւ կապի ընդ աննշան մասնկանն :

պխ. Միշնեւին ըստ կանոնի բարդութե. դր. մի՝ ունելով զկապող ձայնաւոր ա, է, ու : (75) Երկրորդ, նախատիպն յարի ընդ մասնկանն՝ սեռականաւն, կամ ուղղականաւն, կամ աննախդիր հայցականաւն, երբեմն նաև գործիականաւն : (82. 127) Զ այսոսիկ ունիս նկատել ՚ի ներքնաշարեալ օրինակսն :

90. Հց. Արդ ասա, ո՞րք են ածանցականականերտ մասնիկք, և քանի՞ :

պխ. Որովհետև ածանցականականերտն լինելոց է աննշան մասնիկ, պիտոյ է ՚ի բաց հանել զայնպիսիսն՝ որք յինքնեն միայնակ ունին զնշանակութի. որպէս են արը, դր ձև. շան, կերպ. ճար, այժ. ժար, աւերումն կամ աւերեալ. բայ, խօսք. սան կամ սի այժ՝ արմատ բային առնել : Ուստի յայտանէ կազմի անուն բարդ, և ոչ թէ ածանցական : դր. խոքանարք, հրաշալան, օգտակար, չառաժար, խաբեբայ, գիտուն, խօսուն, և այլն :

Այլ մասնիկք որք առաւել աննշան են, բազմապատիկ գտանին, և պէսպէս օրինակաւ փոխեն զնշանակութի նախատպին. և են ևս մասնիկք՝ զորոց լինի կարծիք թէ նշանակամք իցեն : Հա՛մ քեզ,

ած կամ ուած . ակ . ական . այ . ային . ան . անդակ . աստ . ատ . ար . աց . գին . դի . եակ . եայ . եան . եաց . էք . եղ . եղի . եղէն . եմ . եղջ . եստ . էն . էջ . ընդակ . ըստան . ծեստ . ծոտ . ի . իլ . իկ . իճ . իմ . ին . իչ . իստ . իտ . իր . իտն . լի . կան . կեր . կէն . կի . կին . կոտ . կոն . ման . նակ . նի . նոց . չի . ոփ . ող . ոյ . ոյթ . ոյկ . ոյն . ոյր . ոյց . ոնց . ոտ . ոտի . որ . որդ . ոց . ու . ուկ . ումն . ունդ . ունի . ունչ . ուչ . ուստ . ուտ . ուրդ . պան . պատիկ . ստան . տակ . րան . րէն . րորդ . ցի . ցու . ւէտ . ւոր . քեայ . օն . ոն . օտ :

91. Հց. Որք մասնիկք քանի՞ եղանակաւ փոփոխեն զնշանակութիւն նախադասից անուանն :

Պա. Համառօտել կամելով, զայլ և այլ եղանակս սոյն վերածեմք յերեքտասան . որ 1 Հայրանունական . 2 . Ստացական . 3 . Գործողական . 4 . Արուեստական . 5 . Ենթակայական . 6 . Գաւառական . 7 . Ամանական . 8 . Արտաքական . 9 . Նուազական . 10 . Յարանունական . 11 . Մեծացական . 12 . Նմանական . 13 . Թուական :

92. Հց. Ո՞ր է հայրանունականն :

Պա. Այն է՝ որ յարի յանուն հօրն, կամ ազգին, կամ քաղաքին, կամ վարդապետին . որ Աբրահամեան . Գօղթեան . Քրիստոնեայ . Եբրայեցի . Բաբելացի . Արշակունի . Յուլիէ . Պղատոնական . Քեռի . Քաղկեդոնիտ :

93. Հց. Ո՞ր է ստացականն :

Պա. Այն է որ յարի յանուն ստացողին, կամ ունի զնմանակցութիւն ինչ առ ստացօղն . որ . Հողեկան . եղական . արևելեայ կամ արևելեան . կամայ . որկորայ . վաղորդեայն կամ վաղորդայն . կարևոր . զործաւոր . առնացի . յոյանի . արմաւենի . հողեղէն . առաւօտին . մեղացային . մերային . քոյին . երկաթի . առնի կամ արանցի . աղանի . տէրունի . ընկէց . նաւագնացիկ . եռահիւսեան . գեղջուկ :

94. Հց. Ո՞ր է գործողականն :

Պա. Այն է՝ որ յարելով 'ի նախադասն, նշանակէ զարարօղ նորա կամ զգործին . որ . Սղոց . խարտոց . կշռորդ . ցանորդ . խեժան . պատան . վիպասան . բացարան . պահակ կամ պահնակ . ուղղէակ . մարտիկ . սրբիչ . պատերազմիկ . ուտիճ . արբոս . այցելու . ա-

ղաչառոր . յաղթական . տեսող . ընկալող . պահանջէր . գործէ . ողորմած :

95. Հց. Ո՞ր է արտադրականն :

պխ. Այն է՝ որ զնախատպին եղանելն նշանակէ . որպ Արարած կամ արարուած . շինած կամ շինուած . դիպուած : Յայսմանէ լինի կրկին ածանցական . իբր կռած և կռածոյ . կոփած և կոփածոյ :

96. Հց. Ո՞ր է ենթակայականն :

պխ. Այն է՝ որ յարելով 'ի նախատիպն, ցուցանէ զյարմարութիւնն առ այն . որպ մահացու . կիզանոտ . անտառէկ . անյարէր . կամէկ . անցական . զարմանաւոր . հաճոյ . անուղղայ . օժանդակ կամ օժընդակ . վտարանդի :

97. Հց. Ո՞ր է պարունակն :

պխ. Այն է՝ որ նշանակէ զտեղի կամ զծածկոյթ նախատպին . որպ . Արքայարան . ծաղկոց . հիւրանոց . ծառաստան . կայան . պատեան . ստնապան . ընկուզուտ . կացուրդ . տապակ . ձեմելի :

98. Հց. Ո՞ր է առատականն :

պխ. Այն է՝ որ նշանակէ զունօղն նախատպին ; նման ստացականին . որպ Թևաւոր . բանական . բազմաչեայ . երկթևեան . լեզուանի . ծարաւի . անուանի . մտացի . խոհեմ . ուշեմ . մտերիմ . հաւատարիմ . գլխապան . խմորական . կարօտ . ծանօթ . զգօն . կորօն . արգասոր . հասակ . էակ . գոյակ . գանձանակ . ձախող . նկարէն . բաժին . աղտաղտէն . հատոր . մոլար . պարոյր . պարոյկ . ողջոյն . բոլորշի :

99. Հց. Ո՞ր է սաստկականն :

պխ. Այն է՝ որ զսաստկութիւն կամ զառաւելութիւն նախատպին նշանակէ : որպ . Ուարթաքէն . ահեղ . աղտեղի . մեծղի . այգաստեր . ծակոտ . զազրոտ . հատոտ . աղտոյ . խաղաղոտ . վաղվաղուկ . ծակոտկէն . յաղթկոտ . ցասկոտ . խորխորատ . սքանչելի :

100. Հց. Ո՞ր է նուաղականն :

պխ. Այն է՝ որ ընդ հակառակն առատականին՝ զնշանակութիւն նախատպին նուազեցուցանէ , կամ երբեմ փոքրկացուցանել . որպ . նաւակ . անուշակ . պատանեակ . ձորձիկ . դստրիկ . այրուկ . մանկոյկ . ականջօղ . ծայրատ . այրի . իբր պակասեալ յառնէն :

101. Հց. Ո՞ր է Պարունականն :

պխ. Այն է որ ցուցանէ զպարունակն ինչ և զախորժ առ նախադասին . որ . Գինեձան . խրախձան . ախտածէտ . նննգածոփ . պատգրոփ :

102. Հց. Ո՞ր է Վերացականն :

պխ. Այն է՝ որ զնշանակութիւն նախադասին ցուցանէ իբրև յինքեան . որ . Ազատութիւն . գոչումն . հնչիւն . կորուստ . ձանձրոյթ . հարած կամ հարուած . գովեստ . հանգիստ . մնացորդ . յազդուրդ . կրօն . շնորհակ . զայրոյթ . ուռոյց . վրիպակ . յիշատակ . հրաւիրան . պատուաստ . ներբողեան:

103. Հց. Ո՞ր է Նոյնականն :

պխ. Այն է՝ որ ՚ի նախադասին ոչ յաւելու զպայմանի և զմեծ տարբերութիւն . այլ վարին փոխանակ միմեանց իբրև նոյնանշանս . որ . կոյս և կուսան . կերպ և կերպարան . խառն և խառնակ . Թշուառ և թշուառական . տիպ և տիպար . դէզ և դիզէն , կենդան և կենդանի . կշիռ և կշռորդ . երեկ և երեկոյ . օտար և օտարոտի . դի և դիակն . գումար և գումարտակ . ծեր և ծերունի . վայել և վայելուչ . անջուր և անջրդի . անտոհմ և անտոհմիկ . նոր և նորոգ . անտէր և անտէրունչ . ամէն և ամենայն . գոյզն և գուզնաքեայ . կաթ և կաթիլ :

104. Հց. Ո՞ր է Թուականն :

պխ. Այն է՝ որ ՚ի նախայիշատակեալ մասնկացդ յարեալ ՚ի թուական անուն , զնշանակութիւն նորա այլայլէ . որպէս եդաք յիւրում տեղւոջ . ( 40 . 43 . ) որ . միակ . երկեակ . քառորդ . չորրորդ . երեքկին . հնգապատիկ . երիր . կամ , միական . նախկին . առաջին կամ առաջի . եւն :

105. Հց. Ածանցական անունն գոյակա՞ն է , թէ ածական :

պխ. Այսպէս ընտրելի է . վերացական ածանցեալքն ( 102 ) ամենեքին գոյական են : Անուանք որոց նախադասին ածական է , նոցին ածանցեալն եւս նման ածական : Իսկ նախադասքն գոյականք՝ յածանցելն ոմանք նման գոյական , բայց առաւել յաճախ փոխին յածական . և նման որոշել ՚ի նշանակութենէ նոցա՝ ըստ նախ աւանդեալ կանոնին : (60)

106. Հց. Կարե՞ մի և նոյն անուանն ունել զերկու և զերիս ածանցմունս ։

Պտս. Այո՛ լինի, և այնպիսի անուանն կոչի՝ կրկնածանց. որ. Նախատիպ հայր, ածանցի՝ հայրենի, հայրենեան, հայրենական ։ Նախատիպն մի, ածանցի՝ միական, միականութեան ։ Նախատիպն խաւար, ածանցի՝ խաւարին, խաւարչուտ, խաւարչտին, խաւարչտական ։ Կան և այլ այսպիսի կրկնածանց անուանք ։

107. Հց. Որդեօք նախատիպ անուանն կարե՞ վարիլ իբրև ածանցական, և անդրադարձեալ, ածանցեալն իբրև նախատիպ ։

Պտս. Գտանի և այդ. որ. ոսկի, մանուկ, իբրև նախատիպ՝ գոյական են. բայց երբ ասեմք անօթ ոսկի, մանուկ հասակ, իբրև ածանցական նշանակեն՝ ոսկեղէն, մանկական ։ Ընդ հակառակն՝ էական, ածական, ըստ կազմութեանն՝ ածանցական են, բայց երբեմն գնին փոխանակ ասելոյ, Էն, Ած ։

108. Հց. Կարե՞ այլազգ ևս նախատիպ անուանն առնուլ զնշանակութիւն ածանցականի ։

Պտս. Այո՛. այսպէս լինի՝ զի սեռականն նախատիպին ունելով ’ի ծայրն ն, կամ յ, նշանակէ իբրև ստացական ածանցեալ. որ. սեռականս աստուծոյ՝ եդեալ ածն, ածյ, նշանակէ ածային, ածայինք. և յաւելն ղաստուծոյն, նշանակէ՝ զածայինսն ։ Այսպէս Քին, նշանակէ՝ քրիստոսեանք. մարմնոյ, մարմնաւորք. երկրին, երկրաւորք ։ Սոյնպիսի են և դերանուանքն նորին, նոցին, սորայն, սորայ. (54) և ամենեքին հոլովին՝ զմարմնոյն, զերկրին, զնորինն ևն ։

---

## Թուոյ Անուան ։

109. Հց. Թիւ անուան՝ եզական և յոգնական՝ ի՞ւ որոշի ’ի միմեանց ։

Պտս. Նշան յոգնականին են տառքս ք, ց, ս, յորժամ յարին ’ի վերջն եզակի ուղղականին և սեռականին. որպէս երևի կարգաւ ’ի հոլովմունս անուանց ։

110. Հց. Որդեօք լինի՞ յոգնական այլով օրինակաւ ևս ։

պտխ . Այո . գոյ և այլ երկու եղանակ ։ Մին՝ զի առանց հայելոյ յեղականն ըստ սովորութեան , յաւելումն յայն զմասնիկ մի՝ որ թէ ըստ ձայնին , և թէ ըստ նշանակութեան զբազումն ցուցանէ . և այսպիսի մասնիկք են՝ այք , եայք , որայք , որեայք , օրէք , էք , ունք , անք , ոյք , քեան , քին . զր .

Աղախին , աղախնայք . ( ղալայեխներ . ) այգեստան , այգեստանեայք . ( այգիներ . ) վանք , վանորայք կամ վանէրայք . ( վանքեր . ) արտ , արտորէայք . ( արտեր , թառլաներ . ) գիւղ , գիւղօրէք . ( գեղեր . ) դրուատ , դրուատէք . ( գովասանքներ . ) Ճրագ , Ճրագունք ( Ճրագներ . ) մեղք , մեղանք . ( մեղքեր . ) բաշխք , բաշխոյք . ( պարգևք . ) ամենեքեան կամ քին . ( տես 46 ։ )

Երկրորդ եղանակն առնելոյ յոգնական՝ այս է , զի յեղականն յարի մասնիկ ինչ ըստ ձայնին եզական , բայց նշանակութեամբ է յոգնակի . ուստի թէպէտ և եզականաբար հոլովի , սակայն միայն 'ի վերայ բազմաց ասի . այսպիսի են անի , եան , եար կամ էր , քնեար , ջան , ան , էի , ոի կամ ուի ևն . զր .

Ազատ , ազատանի . ( սօյզատէններ . ) խոզ , խոզեան . ( խոզեր . ) վարժ , վարժեար . ( գիտուններ . ) Նեարդ , նեարդէր . ( սինիրներ . ) խուժ , խուժան . ( հալխ . ) քաղաք , քաղաքնեար . ( քաղաքներ . ) ծակ , ծակոտի . ( ծակեր . ) ոսկր , ոսկերոտի . ( ոսկորներ . ) մարդ , մարդիկ . ( մարդեր . ) զօր , զօրական . ( ասկեր ։ )

111 . Հց . Այսպիսի մասնիկք են նաև ածանցականակերտ . և զիարդ որոշելի են 'ի յոգնականէն ։

պտխ . Այսու որոշի , զի ածանցականն սովորաբար ածական է , և յոգնակի ևս հոլովի . իսկ յոգնականացուցիչ մասնկաւ կազմեալն՝ գոյական է , և ոչ հոլովի յոգնակի . զր եանն առնէ ածանցական՝ արևելեան , ըստ արևելցի . և հոլովի՝ արևելեանք , արևելեանց . բայց խոզեանն ոչ լինի՝ խոզեանք ։ Նոյնպէս փտելոտի իբրև ածանցական՝ նշանակէ մռեալ հոտեալ . և ասի՝ մռեալոտի գործք . և յոգնակի ևս լինի , մռեալոտիք , տեաց . բայց ոչ ասի՝ ոսկերոտիք , տեաց ։ Նմանապէս իկ մասնկաւ ածանցեալն մարտիկ , հոլովի յոգնակի՝ մարտիկք , կաց . բայց մարդիկ , հո-

լովն միայն՝ մարդկան, կանք, և ոչ մարդիկք, մարդկանց ։

112. Հց. Ո՞չ իթէ ամենայն անուն վարի՞ անխտիր՝ թէ եզական, և թէ յոգնական ։

պխ. ՚Ի կարգաւորեալ լեզուս գոյ սովորութիւն՝ ոչ անխտիր վարել զամենայն անուն. ուստի ոմանք վարին միայն յոգնակի, և կոչին անեզականք. որպէս ՚ի մեր լեզու՝ բարք, կառք, խելք, կեանք, աղօթք ևն ։

Ոմանք վարին եզակի միայն, և ասին անյոգնականք. որպէս յոյս, սէր, քաղն ևն ։

Ոմանք առաւել ՚ի յոգնականն վարին. օր. շնորհք, օրէնք, ինչք, անդորրք, ցոյցք, ևն ։

Ոմանք ևս վարին առաւել յեզականն. որպէս ձախաձան, մեղր, ջերմ, հուր, հանգիստ ևն ։

Գոն և անուանք՝ որք ըստ միոյ նշանակութեան, կամ հոլովոյ վարին ՚ի յոգնականն կամ յեզականն, բայց ըստ այլ նշանակութեան, կամ այլով հոլովով ոչ այնպէս վարին. այսպէս անուանս մեղք՝ ընդ բայի կարէ վարիլ յեզակի ուղղականն կամ ՚ի հայցականն. օր. զինչ մեղէ. կամ մեղ գնել. և իմանի մեղադրանք, յանցանս գնել. սակայն միայնակ ոչ ասի՝ մեղք, ՚ի մեղէ, մեղօք ։ Նոյնպէս միտք, ընդ բայի կամ նախադրութեամբ վարի յեզականն. օր. միտ դնել, ՚ի միտ կամ ՚ի մտի առնուլ. զմտաւ ածել, ըստ մտի. ևն. բայց միայնակ ոչ ասի, միտ, մտի, զմիտ, մտաւ ։ Նոյնպէս կամք, բայիւ կամ նախադրութեամբ և ՚ի գործիական հոլով վարի յեզականն. օր. կամ է. ըստ կամ, կամաւ. իսկ միայնակ ոչ ասի՝ կամ, զկամ, ՚ի կամէ ։

113. Հց. Յոգնակի ուղղականն զվերջին ք տառն միշտ փոխէ՞ ՚ի ս, յորժամ լինի նախդրիւ տրական կամ հայցական ։

պխ. Յայսմ լինի խտրութիւն ։ Զի անեզական անուանն երբեմն զուղղականն սեփական ունին. օր. փոխանակ ասելոյ՝ պէտք, կեանք, երախտիք, աւետիք, զնոսին՝ պէտս, կեանս, երախտիս, աւետիս ։

Ընդ հակառակն այսմ, ՚ի նախդրիւ տրականն և կամ ՚ի հայցականն պահի ք. ուստի ասի, մինչև ՚ի նշանակն մարմնաւորք, փոխանակ՝ ՚ի նշանս ։ պտղոցն,

ՇԵՇՏՆ. իբր զախպան, զըխծան։ Սաստկին ԳՈՉՈՅ, իբր զգլուխս։

---

## ՀՈԼՈՎ ԱՆՈՒԱՆ։

114. Հց. Առաջին հոլովն ընդէ՞ր կոչի ուղղական։

Պտ. Վասն այնորիկ՝ զի զբուն նշանակեալ իրն ցուցանէ ուղղակի. իսկ այլ հոլովք ոչ այսպէս, այլ կողմնակի ցուցանեն զառացեալն իրին, կամ զվերաբերեալ ինչ առ նա։

115. Հց. Հոլովն սեռական զի՞նչ իմանի։

Պտ. Որպէս կոչեցաւ, զի նշանակէ զայն որ պատշաճի սեռի կամ ազգի անուանն, կամ նորա իրքն է. որ. ուղղ. ՄԱՐԴ, նշանակէ զբուն իրքն. սեռ. ՄԱՐԴՈՅ, նշանակէ զայն որ մարդոյն է, իբր մարդոյ ազգ, տուն, ինչք, հոգի ևն. և յորժամ մերձ դնի այլում անուան, առ նորա ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ. որ ՄԱՀ ՄԱՐԴՈՅ, ասա սեռականն յատկացուցանէ զմահն առ մարդ. իբրև թէ մարդոյ մահ է, և ոչ անասնոյ։

116. Հց. Սեռական հոլովն առնու՞ նախդիր է, կամ ոչ։

Պտ. Նշանակութիւն նորա յատուկ ոչ պահանջէ նախդիր. բայց պատահէ՝ զի նախդիրն մերձաւոր անուան իրիք դնի 'ի վերայ սեռականին. որ փոխանակ ասելոյ՝ ՅՕԳՆԱԿԱՆՈՒԹԵՆ ԱՅ, դնի՝ ՅԱՅ օգնականութեն։ Որպէս փոխանակ ասելոյ՝ ԴԻՐՍ աստեղաց, դնի՝ ԱՍՏԵՂԱՑ դիրս. (տես 281։)

Ունի ևս երբեմն դնել 'ի վերայ բուն սեռականին զնախդիր զ, և իբրև նախադրութի նշանակէ՝ 'ի վերայ. որ. ԶԾԱՌԷ, ԶԳԵՏՈՅ, ԶԱՀԷ, ԶՄՕՐԷ, իմանի 'ի վերայ քարի, գետոյ ևն։

117. Հց. Տրական հոլովն զի՞նչ զօրութի ունի։

Պտ. Որպէս 'ի մէջ բերէ զանունն, որպէս թէ իր ինչ տուեալ լինի նմա, կամ ասի, կամ առաքի։

Հց. Ասացաք 'ի հոլովմունս (10) թէ երկու եղանակաւ կազմի տրականն. մին՝ փոփոխմամբ ծայրին, որ ասի ՎԵՐՋԱՀՈԼՈՎ. և միւսն՝ զնախդիր ունելով 'ի սկիզբն, որ ասի ՆԱԽԴԻՐՆ տրական։ Արդ հարցանեմ,

սորա 'ի կողմանէ նշանակութեան ունի՞ն տարբերութիւն ինչ ։

պտ. Նշանակութիւն սոցա գոլով մերձաւոր և իբր նոյն, դնին փոխանակ միմեանց. որպ. փոխանակ ասելոյ՝ առ իշխանն գրիգոր, դնի՝ առ իշխանին գրիգորոյ ։ Նոյնպէս ասի, առ անձին իւրոյ բաւական, և առ անձին ինչ բաւական ։ Պատահէ 'ի միում իսկ բանի՝ զմի տրականն դնել նախդրիւ, և զմիւսն՝ վերջահոլով. որպ. առ անձնայն հատուկ . . . մշակաց, շինականաց, ևն ։

118. Հց. Վերջահոլով տրականն ո՞չ առնու բնաւ զնախդիր ։

պտ. Երբեմն առնու զնախդիր 'ի, յ, առ 'ի, բայց ոչ լինի այն յատուկ և որիշ հոլով, այլ ստանայ զոյժ նախադրութեան. զոր յետինքն կոչեցին ներգոյական հոլով. որպ. յերկրի, այսինքն 'ի մէջ կամ 'ի վերայ երկրի ։ 'ի տեղւոջ, յեկեղեցւոջ, 'ի մէջ տեղւոյն կամ եկեղեցւոյն ։ 'ի տան, յանդի, 'ի մէջ տան կամ անդի ։

119. Հց. Նախդրիւ տրականն առնո՞ւ երբեմն զտարբեր նշանակութիւն ։

պտ. Այո. նախդրիւս ց, նշանակէ բազում անգամ մինչև. որպ. յասելն՝ ցաւուրն ցայսօրէ, իմանի՝ մինչև յայն աւուրն ։ ցայգ, մինչև 'ի յայգանալ ։ ցերեկոյ, մինչև յերեկոյն ։

Երբեմն ի նախդրիւ նշանակէ՝ վասն. որպ. 'ի փըրկութիւն, վասն փրկութեան կամ ազատութեան. 'ի խրատ, վասն խրատու ։

Երբեմն ևս տայ զնշանակութիւն գործիականի. որպ. 'ի ձայն, այսինքն ձայնիւ. 'ի սուր, սրով. 'ի զօրութիւն, զօրութեամբ ։

120. Հց. Հայցական հոլով զի՞նչ իմանի ։

պտ. 'Ի վերայ ուղղականին յաւելեալ զնախդիրն զ, իբրև հայցել կամ որոնել զայն ցուցանէ ։ Սակայն բազում անգամ յայտնապէս ոչ դնի նախդիրն թէ յոգնականին, և թէ եզականին. և յայնժամ ասի անորոշ կամ աննախդիր հայցական ։

Հց. Որո՞յ անուան, և կամ ո՞ւր մարթ է զանց առնել զնախդիրն զ ։

պտ. Առ միջական, և առ յատուկ անուանս, նմանապէս առ դերանունս ոչ լինի զանց առնել.

ուստի ոչ ասի, կոչեաց ոմանս. առաքեաց զպետրոս. անարգէ ես կամ զնա. այլ պիտի դնել, զոմանս, զպետրոս, զնա, զնո: Բայց Գ թուականն, և յարաբերականն որ երբեմն դնին առանց զայի:

Իսկ յայլ հասարակ անուանս լինի աննախդիր հայցական, յորժամ ոչ ունիցին դիմորոշ յօդ. զր ասի, շինեաց տուն, ծնաւ որդիս, անկեաց այգի. բայց ոչ՝ զտունն, զորդին, զայգին:

Նմանապէս եթէ հասարակ անունն ունիցի դերանուն ինչ կամ սեռական յատկացուցիչ, ոչ վարի աննախդիր. զր մարթ է ասել, ետ նմա իշխանութիւն, բայց ոչ, եբարձ իշխանութիւն նորա. ևն:

121. Հց. Հայցական հոլովն առնու արդեօք զտարբեր նշանակութիւն:

Պտ. Այո. երբեմն նշանակէ իբրև գործիական. զր ասելն՝ զայս օրինակ, նշանակէ՝ այսու օրինակաւ. կամ, պահել զպահս, իմանի՝ պահաւ: (տես 402.)

Երբեմն ևս՝ յորժամ անունն նշանակէ զժամանակ կամ զեղանակ, առնու զոյժ ներգոյական ասացեալ հոլովոյ. զր. զտիւ, զգիշեր, նշանակէ՝ ի տունջեան, ի գիշերի. զամառն, զգարուն, յամառայնի, ի գարնանի:

122. Հց. Ընդէ՞ր ասի բացառական հոլով:

Պտ. Վասն՝ այն՝ զի նշանակէ իբր ինչ մի առնուլ յուղղականէն, կամ թէ յայնմանէ ելանէ կամ գործի իր ինչ:

123. Հց. Նախդիր բացառականին է, կամ յ դնի՞ միշտ՝ թէ երբեմն թողեալ լինի:

Պտ. Պատահէ թողուլ երբեմն ի տեղիս ինչ. մի՝ յորժամ ի նմին բանի կրկնեալ է նոյն անունն տրական և բացառական հոլովով, նախդիրն բազում անգամ դնի ի վերայ յետնոյն միայն. զր. դրանէ ի դուռն. քաղաք ի քաղաքէ. ամ յամէ. կենաց ի կեանս ևն. որ ըստ սովորականին դնելի էր, ի դրանէ ի դուռն, ի քաղաք ի քաղաքէ, ի կենաց ի կեանս:

Երկրորդ, յորժամ յառաջոյ բացառականին կայ նախադրութիւն ինչ, այն լինի փոխանակ նախդրի. զր, առ առաջէ, զր վասն խայտառակելոյ. ըստ

նոցանէ, որ զկնի նոցա. ուր առնելի էր, առ յառակէ, ըստ 'ի նոցանէ :

Երրորդ, բազում բացառական անուն դասանելով 'ի միում բանի և շաղկապաւ միաւորեալ, նախդիր առաջնոյն՝ ծառայէ յետնոյն ևս. որ, 'ի տանէ և ծառայոյ. 'ի մտաց և կենդանեաց : Նոյնպէս լինի նաև առ նախդրիւ տրականին. որ. 'ի զինուորս և ծերունիս. առ պետս և յոգնաժողովս :

Չորրորդ, յորժամ անունն ունի յ բնական, այն լինի երբ նախդիր թէ 'ի բացառականին, և թէ 'ի տրականին. այսպէս առի՝ յաւիտենից յաւիտեանս, փոխանակ՝ 'ի յաւիտենից 'ի յաւիտեանս :

124. Հց. Բացառականին առնու՞ զնախդիր :

Պտ. Այո. բայց ունի յայնժամ զզօրութիւն նախադրութեան. զոր յետինքն կոչեցին պարառական հոլով. որ. զծառոյն, իմանի՝ 'ի վերայ ծառոյն. զքէն, զնոցանէ, 'ի վերայ քո կամ նոցա. կամ վասն քո, վասն նոցա :

125. Հց. Արդեօք բացառականն նախդրիւ եդեալ՝ առնու՞ զտարբեր նշանակութիւ :

Պտ. Այո. երբեմն նշանակէ իբրև գործիական. որ. փոքր յանձնէ, իմանի՝ անձամբ կամ մարմնով փոքր : Շրջիլ 'ի ցուպ, որ ցպով :

Երբեմն ես ըստ միոյ նախադրութեան նշանակէ՝ յետ, վասն, ընդդէմ. որ. յամէ, յետ ամի. 'ի կարծմութենէ, 'ի խիստ գործոյն. որ վասն կարծմութեան, վասն խիստ գործոյն : օգնական 'ի թշնամեաց, որ ընդդէմ թշնամեաց :

126. Հց. Զի՞նչ իմանի գործիական հոլով :

Պտ. Այնպիսի հոլով որ զկերպ անուանն փոխէ, և նշանակէ նովաւ լինել իրի ինչ :

Հց. Գործիականն առնու՞ զնախդիր :

Պտ. Երբեմն առնու զ նախդիր, և յաւելու զնշանակութիւն նախադրութեան, զոր յետինքն կոչեցին պարառական հոլով. իբր զի նշանակէ շուրջ կամ 'ի վերայ անուանն. որ. զեկեղեցեաւ, որ շուրջանակի եկեղեցւոյն. զտամբ, շուրջ տանն. զոսկերօք, 'ի վերայ ոսկերաց. զամենեքումբ. ամենեցուն շուրջանակի կամ 'ի վերայ. զինև, զքև, զնովաւ. 'ի վերայ իմ, քո, նո·

127. Հց. Լինի՞ բարդութ̃ի 'ի գործիական հոլովս:

պտ. Բարդութ̃ի սակաւ լինի. (տես 82) որպէս 'ի ճեռամբեհ լինի՝ ճերբեոխու. 'ի մեռ գերմանուանեն լինի՝ մեռախերով, յ̃պ մերակերով:

Իսկ ածանցումն առաւել յաճախ լինի. որ̃. ճեռամբեայց, տրամբեի, կոնամբեի, երըրոշէն, գլխոշէն, ողջոջէն, իմոխսան, երոշէի լ̃ն. որոց ոմանք կրկն մակբայ նշանակեն:

128. Հց. Ո՞րդեօք գո՞յ գործիական ինչ՝ որ իբր ուղղական վերստին հոլովեսցի:

պտ. Գտանի և այդ. որպէս բնաւ է գործիական բառն անուանն, և հոլովի, բնաւի, զբնաւ. բնաւք, բնաւից, բնաւիւք: Նոյնպէս սակաւ է գործիական սակ անուանն, որ նշանակէ եւ՝ չափ. յորմէ սակաւ իմանի՝ չափով. և հոլովի, սակաւու, սակաւք, սակաւուց լ̃ն: Նման այսոցիկ քննելի են և այլ անուանք:

---

## Հոլովմանց Նոտա:

129. Հց. Յառաջագոյն տեսաք զտասն հոլովմունս. (7.) ցուցանելով թէ ո՛րք անուանք զայլ և այլ փոփոխումն առնուն 'ի վերջս իւրեանց: Արդ խնդրեմ զպատճառն՝ թէ վասն էր 'ի գրաբառ լեզուի միօրինակ ոչ հոլովեմք զանուանսն, որպէս առնեմք յաշխարհաբառն, յորում ամենայն անուան սեռականն, բացառականն, և գործիականն վերջանայ 'ի ին, էն, ով. որ̃. Թագաւորին, Թագաւորէն, Թագաւորով: կարգին, կարգէն, կարգով: մարդէն, մարդով. տնէն, տնով: տեղէն, տեղով. լ̃ն: Եթէ այսպէս առնէաք նաև զգրաբառն, ո՞չ ապաքէն լաւ եւս էր, և դիւրագոյն առ ուսանել:

պտ. Արդարև դիւրութ̃ի լինէր ուսանողին. այլ քանզի գրաբառն է լեզու գրոց և գիտութեանց, պիտանի և հարկաւոր եւս էր ունել զտարբերութ̃ի հոլովման՝ վասն երից պատճառաց: Առաջին, զի գրոց լեզուն ունի նմանաձայն անուանս տարբեր

նշանակութիւն․ որք եթէ միօրինակ հոլովէին, շփոթութիւն մեծ լինէր իմաստիցն․ որպէս ունիմք Թուզ, պտուղ, խնձոր․ և Թեզ, օր․ ղարբզ․ և եթէ երկոքեան ևս հոլովէին՝ թզին, թզեն, թզով, խառնակէր նշանակութիւն․ ուստի առ որոշումն՝ զառաջինն հոլովեմք՝ թզոյ, թզով․ զերկրորդն՝ թզի, թզաւ։ Այսպէս ունիմք՝ Լուր, լսելն․ և Լիր, լիցք, լցուածք․ և առ որոշելոյ առաջինն լինի՝ լրոյ, լրով․ երկրորդն՝ լրի, լրիւ։

130․ Երկրորդ․ պատահէ՝ զի նոյն անուն նշանակէ զերկու կամ զերիս տարբեր իրս․ և մնայ հոլովմն զատանել․ օր․ գայլ, նշանակէ զգազանն, զուրտ, և զտանջանարան բերանոյ, քելէփչէ․ զառաջինն հոլովեմք՝ գայլոյ, գայլով․ զերկրորդն՝ գայլի, լիւ։ Այսպէս որթ, նշանակէ՝ հորթ, դանա, և՝ ասմա․ զառաջինն հոլովեմք՝ որթու, որթուց․ զերկրորդն՝ որթոյ, թով, թոց։ Դարձեալ, օդ, նշանակէ՝ հաւա, և՝ ոտից ամանն, փապուչ․ առաջինն լինի՝ օդոյ, օդոց, երկրորդն՝ օդի, օդիւ ևն։

Երրորդ․ եթէ զամենայն անուն հոլովէաք միապէս, պատահէր՝ զի ՚ի միում բանի գտանէին բազում անուանք հոլովեալք, և յամենեցունց նոյն ձայն լսելի լինէր, որ կարի խափանիչ է վայելչութեան լեզուի․ զի փոփոխութիւն ձայնի քաղցր հնչէ․ իսկ միահնչութիւնն բերէ ձանձրոյթ։ Նա վասն այսպիսի պատճառաց հնարեալ է պէսպէս հոլովումն։

131․ Հց․ Ոնէ այդպէս իցէ, մի՞թէ սովորիմք զիւրաքանչիւր անուն առ այլ և այլ հոլովումն վերաբերել․ ո՞չ իցէ մարթ մի և նոյն անուան ըստ տարբեր հոլովման վարիլ։

պտ․ Արդարև հոլովմունքն տարբեր են․ բայց առաջինն և երկրորդն դրացի գոլով միմեանց, պատահէ՝ զի միոյ հոլովման անունն վարի նաև ըստ միւսոյն․ կամ զեզական իւր, և զյոքնականն ՚ի փոխ առնու ՚ի միւսմէն․ օր․ նշան, սովորաբար լինի ըստ Ա հոլովմ․ նշանի, նաւ, նաց․ բայց երբեմն լինի ևս՝ նիւ, նից, նիւք։ Շնորհ, եզականն՝ շնորհիւ, բայց յոքնականն՝ շնորհաց, հաւք։ Նմին․ նիւթոյ,

Թով, Թոց . կամ, Թի , Թիւ , Թից : Մարմին , մարմ-նոյ կամ մնի : Երկնաղած , ծի , ծաց , կամ ծից : Կա-տարար , րի , րաց կամ րից : Լաւագոյն , գունից կամ գու-նաց : Նոյնպէս այլ բաղդատական անուանք ( 66 ) երկաքանչիւր եղանակաւ ևս հոլովին : (տես 18. 24.)

132. Հց. Որովհետև հոլով և հոլովումն են եր-կու պարագայք անուան , մինթէ հարկ իցէ հոլովել զամենայն անուն :

Պտ. Ոչ է հարկ . զի յամենայն լեզուս գոյ սովո-րութիւն՝ զանուանս ինչ նախդրիւ միայն վարել . և զայնպիսին կոչի Նախդրիւ հոլովելի : Իսկ և զայլ ա-նուանս ոչ վարել և ոչ նախդրիւ . և այն կոչի ան-հոլով :

՚Ի մերում լեզուի նախդրիւ միայն վարին բարդ-անուանք բազմավանկք , կամ դժուարահնչիւնք . զորս հոլովելն երկայնաձայն լինէր և դժոխալուր . զորօրինակ Փիգոստրատոյ , Շրենաշղզաբադ , Բոդոմելիաղա-ւեդ , և այլն :

Իսկ անհոլով վարին բազում բայից արմատքն . որք սովորաբար և ոչ միայնակ վարին , այլ կամ ՚ի մէջ բարդութեան , և կամ ածանցմամբ . որպէս են Քախ . Քայլ . գառ . արէ . ձախ ԻԶ : ( տես 83 . )

---

## Ծանօթութիւնք ինչ ՚ի վերայ Գոյ-անուան :

133 . Հց. Ճառեցեր ցայսվայր յաղագս պարա-գայից Անուան : Իսկ դերանուանն ոչ ունի պարագայ :

Պտ. Ունի պարագայս ինչ , զոր յիւրում տեղւոջ տացաք : ( 50 ) Յատուկ պարագայ նորա է դէմն , որով զանազանի յանուանէ : Ունի վեց հոլով ըստ Թուոյ հոլովից անուան : Սեռ ոչ ունի . այլ նոյն մի դերանունն հասարակաբար ասի արուի և իգի :

134 . Հց. Միթէ ձև ոչ ունի դերանունն :

Պտ. Յատկապէս խօսելով , ոչ ունի ձև . այլ բո-լորն է պարզ : Ոչ լինի բաղադրեալ . վասն զի ոչ

տանու յառաջոյ զանձնական մասնիկ, որպէս առնու անուանն ։ Իսկ եթէ կապիցի ընդ այլում նշանական բառի, ոչ ևս մնայ դերանուն, այլ լինի անուն, կամ իբրև մակբայ նշանակէ ․ օր․ ինքնածին, ինքնագործ, ինքնաստոյգ, իւրաքանչիւր, սողէս, նոյնպէս, նոյնագոյն, այսպէս ևն ։ Նոյնպիսի են վերբերական անուանքն ։ (49)

Արժ է ըստ իրաց ինչ բարդ դերանուն ասել, յորժամ դերանուանք կից իրերաց վարին ․ օր․ ես ինքն, դու ինքն, նա ինքն, սոյն ինքն ․ կամ սոյն այս, դոյն այդ և այլն ։

135․ Հց․ Ո՞ւմն զանէ զտեսակ դերանուանն ։

պխ․ Ըստ իւրում եղանակի մարթ է ճանաչել՝ի նմա զտեսակ ․ օր․ նախատիպ ասել զէական և զցուցական դերանուանսն ․ (52) իբր զի ոչ ձևանան յայլ դերանուանէ ․ իսկ ածանցական են ստացականքն որք յառաջնոց անտի ձևանան, և մնան դերանուն ։ (54)

Բայց դերանուանք որք 'ի վերջն առնուն զմասնիկ կան, նակ, որ, ենի, համարին անուն ․ վասն զի հոլովք նոցա և նշանակութիւն է որպէս անուան ․ օր․ իւրական, այսանակ, ինքնաւոր, իւրաենի ։

136․ Հց․ Որդեօք լինի՞ ածանցումն դերանուան այլ ևս եղանակաւ ։

պխ․ Այո ․ զի հոլովեալն դերանուան, մանաւանդ ցուցականին, լինի նոր ուղղական, և հոլովի յոգնակի ․ օր․ նախ բացառականքն 'ի նմանէ, 'ի նոցանէ, լինին 'ի նմանէք, 'ի նոցանէք, և նշանակեն զեղեալսն 'ի նմանէ կամ 'ի նոցանէ ։ Այսպէս ևս յոգնակի բացառականն՝ 'ի մէնջ, լինի 'ի մէնջք, 'ի մէնջից ։ Նմանապէս հոլովքս 'ի սմա, 'ի դմա, 'ի նմա, լինի՝ 'ի սմայք, օր․ եղեալքն 'ի մէջ սորա ․ 'ի դմայք, եղեալքն 'ի մէջ դորա ․ 'ի նմայք, եղեալքն 'ի մէջ նորա ․ և սոքա հոլովին ևս, զ'ի սմայս, 'ի սմայոց, 'ի սմայովք ևն ։

137․ Հց․ Հոլովք դերանուանց դնի՞ն արդեօք փոխանակ միմեանց ։

պխ․ Պատահէ ստացական և ցուցական դերանուանց զմի հոլովն դնել փոխանակ միւսոյն, կամ զեզական փոխանակ յոգնականի ․ օր․ յայսմ պատճառէ, փոխանակ՝ յայսմանէ ։ այսմ խորհրդով, փոխա-

նակ՝ այսու ։ բոլորքս այսմիկ, փոխանակ՝ այսոքիւք ։ ցեղբառն ձոցոյն, փոխանակ՝ յիւրմէ ։ ( տես 345 . 350 . 359 ։ )

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.

## Յաղագս Բայի ։

138 . Երրորդ մասն բանին կոչի բայ . որ խօսք, զրոյց, ասացուած . վասն զի պաշտօն նորա է՝ ձեւացուցանել զասացուածն կից ընդ անուան կամ դերանուան . և առանց բայի ոչ կազմի բան ։

Արդ՝ բայն է Բառ որ նշանակէ ներգործութիւն, կամ կիրս՝ ժամանակաւ, թուով, և դիմօք ։ որ այնպիսի բառ է՝ որ կարգեալ է 'ի նշանակել զներգործել կամ զառնել, և զկրել ուրուք, և զայն նշանակէ խառնեալ ժամանակաւն, թէ երբ առնէ կամ կրէ, հանդերձ թուով եզական կամ յոգնական, թէ մի է կամ բազում արարողն կամ կրողն . այլև դիմօք, ցուցանելով ո՞ է արարողն կամ կրողն, առաջին դէմն, թէ երկրորդն կամ երրորդն ։

Բայից օրինակքն են, եմ, լինիմ, շարժեմ, շարժիմ, ըմբռնամ, ծնամ, գնամ ։ Ահա 'ի սոցանէ ոմն նշանակէ սոսկապէս լինել, ոմն՝ առնել, ոմն՝ կրել ։ Եւ միով ձայնիւս շարժեմ, յայտ առնէ զներկայ ժամանակն՝ թէ ահա այժմ շարժեմ . ցուցանէ զեզական թիւն և զառաջին դէմն թէ՝ ես շարժեմ ։ Նմանապէս յասելն՝ շարժեմք, միանգամայն ցուցանի ներկայ ժամանակն, յոգնական թիւն, և առաջին դէմն, որ մեք այժմ շարժեմք ։

---

## Բաժանումն Բայից ։

139 . Առաջին բաժանումն բայից լինի յերկու . չեզոքական, և յատկական ։

Չեզոքական բայ է՝ որ նշանակէ միայն զլինելն կամ

գոլ, որ աշխարհօրէն ասի՝ ըլլալ։ Նոյն է սա երրեկանոն ձեւանալոյ այլոց բայից. և այս չորք են, Եմ, Գոմ, Եղանիմ, Լինիմ։

Նոյն քանզի ամենայն բայ ելանէ յանուանէ իմեքէ, նոյնպէս էական բայիցս արմատն է անուն ինչ. ուստի Եմի արմատն է անունս՝ է, էի, էից. որ է իրք մի։ Նոյնպէս Գոմի արմատն՝ գոյ, գոյի. գոյից։ Եղանիմի արմատ՝ եղ. Լինիմի արմատ՝ լի, լիոյ։

Արտաքին բայ իմացեալ լինին այլ ամենայն բայք՝ որք նշանակեն առնել ինչ կամ կրել։

Նախագրեալ համառօտ բացատրութեամբ ծանուցաք զկատարեալ պարագայս բայից, և են վեց այսոքիկ. Սեռ, Ժամանակ, Թիւ, Դէմք, Խոնարհումն, Լծորդութիւն։

---

## Սեռք Բայից։

140. Չորք են սեռք բայի. Ներգործական, Կրաւորական, Չէզոքական, Հասարակ։

Ներգործական բայն նշանակէ զառնելն, զներգործելն ինչ. որպէս Սիրեմ, Գրեմ, նշանակէ՝ շարժումն ինչ առնել յայլս, գրուած առնել։

Կրաւորական բայ՝ ընդ հակառակն նշանակէ՝ կրել ինչ յայլմէ. որպէս. Սիրիմ. Գրիմ, իմանի՝ շարժումն ընդունել յայլմէ, կամ յայլմէ գրեալ լինել։

Չէզոքական կամ Չէզոք բայ՝ նշանակէ թէ և ոչ մին է. որ ոչ առնել առ այլ, և ոչ կրել յայլմէ. այլ ինքն յինքեան առնել կամ կրել. որպէս Գնամ, Աշխատիմ, իմանի՝ ես ինքնին երթամ, ես ինքնին աշխատութիւն կրեմ։ Յորժամ այսպիսի չէզոք բայ ունի զձայն ներգործականի, ասի՝ Ներգործաչէզոք. որպէս Գնամն. իսկ ունելով զձայն կրաւորականի, կոչի Կրաւորաչէզոք, որպէս Աշխատիմն։

Հասարակ բայն ընդ հակառակն չէզոքին՝ միով ձայնիւ նշանակէ զառնելն և զկրելն. որպէս Դատիմ, նշանակէ՝ դատել զայլ, դատաստան առնել, և յայլմէ դատեալ լինել։

## Ժամանակ Բայից։

141. Առնել կամ կրելն կապեալ է ընդ ժամանակի, և ժամանակաւ կատարի։ Եւ զի երեք են մասունք ժամանակի, Ներկայ, Անցեալ, Ապառնի, ըստ նմին երրեակ է և ժամանակ բայից. Ի Ներկայ, որ ցուցանէ՝ այժմ առնել կամ կրել. Անցեալ, որ արդէն արարեալ կամ կրեալ նշանակէ. և Ապառնի, որ տակաւին առնելոյ կամ կրելոյ նշանակէ. Օր. Գրեմ, ներկայ, այժմ գրեմ. Գրեցի, անցեալ՝ յառաջ գրեցի. Գրեցից, ապառնի՝ տակաւին գրելոց եմ։

---

## Թիւ և Դէմք Բայից։

142. Այս երկու պարագայք յայտնի են։ Յորժամ բայն ցուցանէ զառնել կամ զկրել միոյ, եզական թիւ է. և յորժամ ցուցանէ զառնել կամ զկրել բազմաց, լինի յոգնական թիւ։

Նոյնպէս յորժամ ինքն արարողն կամ կրողն խօսի, առաջին դէմ է, յորժամ առ արարողն կամ առ կրողն խօսի, երկրորդ դէմ է. իսկ յորժամ խօսի 'ի վերայ այլոյ արարողի կամ կրողի, լինի երրորդ դէմ. Օր. Ես գրեմ, Դուք գրէիք, Նոքա գրեսցին։

---

## Խոնարհումն Բայից։

143. Բայն պէսպէս փոփոխելով 'ի վերջն իւրում, ցուցանէ զժամանակ, զթիւ և զդէմս։ Այս փոփոխութիւն կոչի Խոնարհումն. իբրև թէ այսու բայն խոնարհի և զիջանէ ինքն յինքեան. ուստի յասելն, Գրեմ, Գրես, Գրեցի, Գրեցից, Գրեա, Գրեցէք ևն., այս կոչի Խոնարհել։

Են բայք՝ յորս այսպիսի փոփոխումն լինի միակերպ և ամբողջաբար ըստ ամենայն ժամանակի, թուոյ և դիմաց. և այս ասի՝ կանոնաւոր խոնարհումն։ Սակայն կան և բայք՝ որք ոչ միօրինակ փոփոխին.

և առի անձնական խոնարհումն ։ Եթէ պակասի նոցա ժամանակ ինչ, կամ թիւ, առի պակասաւոր ։ Եթէ ժամանակ ինչ նոցա խոտորի ՚ի սովորական փոփոխմանէն, առի՝ անոմալի. իսկ եթէ դէմքն պակասեն, առի՝ դիմազուրկ ։

Այսպէս փոփոխելով բայն, նաև նշանակութիւն նորա ընդունի զտարբեր եղանակ. որ և լինի չորեակ, այսինքն սահմանական, հրամայական, ստորադասական, աներևոյթ. որոց տարբերութիւն երևի ՚ի ներքոյ եդեալ օրինակսն ։

---

## Լծորդութիւն Բայից ։

144. ՚Ի բայս որք ունին զտարբեր վերջ, տարբերի և խոնարհումն նոցա, և այս առի Լծորդութիւն. իբրև թէ մասնակցութիւն, կամ հաղորդակցութիւն. վասն զի բայք ունօղք զնման վերջաւորութիւն՝ ունին և զնման խոնարհումն ։

Այսպիսի տարբեր վերջք բայից՝ չորք են. այսինքն եմ, ամ, ում, իմ. որով և Լծորդութիւն բայից լինի չորեակ. որպէս, Շարժեմ, Լուանամ, Հեղում, Ածանիմ ։

Որչափ ինչ ծանուցաք ցայսվայր ՚ի վերայ պարագայից բայից, դնեմք յառաջիկայդ միանգամայն զամ չորից Լծորդութեանց ևս. որպէս զի աշակերտն տեսանիցէ միով հայեցուածով իբրև ՚ի միում պատկերի զիւրաքանչիւր նոցա փոփոխումն ։

Տես դու համբակ, լուր ՚ի միտ առ.
զի վարժապետն՝ զէտ գթած մայր,
զուսմունս ծամքէ՝ իբրու պատառ,
տայ ՚ի բերանդ՝ զի լիցիս այր ։

Զնոյն ամբողջ ուսար յըստակ.
արդ ըղձայինն՝ ուսիր դասակ.
երկուց մասանցդ՝ թէ ես գիտակ,
հիւսուած բանի լինիս հասակ ։

# Չորք Լծորդութիւնք կարգաւ.

## Սահմանական եղանակ.

### Ներկայ ժամանակ.

| Լծորդ. | | Եզակ. | | | Յոգն. | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ա. | Շարժ . . . | եմ. | ես. | է. . . . | եմք. | էք. | են. |
| բ. | Լուան . . . | ամ. | աս. | այ. . . . . | ամք. | այք. | ան. |
| գ. | Հեղ . . . . | ում. | ուս. | ու. . . . . . | ումք. | ուք. | ուն. |
| դ. | Ուսան . . | իմ. | իս. | ի. . . . . . | իմք. | իք. | ին: |

### Անցեալ ժամանակ անկատար.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Շարժ . . . | էի. | էիր. | էր . . | էաք. . | էիք . . | էին. |
| Լուան . . . | այի. | այիր. | այր. . | այաք. | այիք . |ային. |
| Հեղ . . . | ուի. | ուիր. | ոյր. . | ուաք. . | ուիք. | ուին. |
| Ուսան . . | էի. | էիր. . | էր. . | էաք. . | էիք. . | էին: |

### Անցեալ ժամանակ կատարեալ.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Շարժ. | եցի. | եցեր. | եաց. | եցաք. | եցիք. | եցին. |
| Լուա. . | ցի. | ցեր. | աց. | ցաք. | ցիք. | ցին. |
| Հեղ. . . | ի. | եր. | հեղ. | աք. | իք. | ին. |
| Ուս. . . | այ. | ար. | աւ. | աք. | այք. | ան. |

### Ապառնի ժամանակ.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Շարժ . . . | եցից. | եսցես. | եսցէ. | եսցուք. | եսջիք. | եսցեն. |
| Լուա . . . | ցից. | սցես. | սցէ. | սցուք. | սջիք. | սցեն. |
| Հեղ . . . | ից. | ցես. | ցէ. | ցուք. | ջիք. | ցեն. |
| Ուս . . . | այց. | ցիս. | ցի. | ցուք. | ջիք. | ցին: |

## Հրամայական եղանակ.

### Ներկայ ժամանակ.

| | | | |
|---|---|---|---|
| Շարժեա՛, | մի՛ շարժեր. | շարժեսցէ, | մի՛ շարժեսցէ. |
| շարժեցէ՛ք, | մի՛ շարժէք. | շարժեսցեն, | մի՛ շարժեսցեն: |
| Լուա՛, | մի՛ լուանար. | լուասցէ, | մի՛ լուասցէ. |
| լուացէ՛ք, | մի՛ լուանայք. | լուասցեն, | մի՛ լուասցեն: |
| Հե՛ղ, | մի՛ հեղուր. | հեղցէ, | մի՛ հեղցէ. |
| հեղէ՛ք, | մի՛ հեղուք. | հեղցեն, | մի՛ հեղցեն: |

Ուսի՛ր, մի՛ ուսանիր. ուսցի՛, մի՛ ուսցի.
ուսարո՛ւք, մի՛ ուսանիք. ուսցի՛ն, մի՛ ուսցին։

Ապառնի ժամանակ.

Շարժեսջի՛ր կա՛մ շարժեսցե՛ս, . շարժեսցէ.
շարժեսցո՛ւք, շարժեսջի՛ք, . շարժեսցեն։
Լուասջի՛ր, կա՛մ լուասցե՛ս, . լուասցէ.
լուասցո՛ւք, լուասջի՛ք. . . . լուասցեն։
Հեղջի՛ր կա՛մ հեղցես, . . . հեղցէ.
հեղցո՛ւք, հեղջի՛ք, . . . հեղցեն։
Ուսջի՛ր կա՛մ ուսանիջի՛ր, . . ուսցի.
ուսցո՛ւք, ուսջի՛ք կա՛մ ուսանիջի՛ք, ուսցին։

'Ի վերայ սոցա եւ դի՛ր զմ̃ մասնիկն որպէս վերնոյն։

Ստորադասական եղանակ.

Սորա ներկայ ժամանակ լինի Սահմանականի ներկայն։

Ապառնի ժամանակ.

Շարժ. իցեմ. իցես. իցէ. իցեմք. իցէք. իցեն.
Լուան. այցեմ. այցես. այցէ. այցեմք. այցէք. այցեն.
Հեղ. . ուցում. ուցուս. ուցու. ուցումք. ուցուք. ուցուն.
Ուսան. իցիմ. իցիս. իցի. իցիմք. իցիք. իցին։

Անորոշ եղանակ.

Շարժել. (հլ̃) շարժելոյ, 'ի շարժել, շարժելով.
Լուանալ . . լուանալոյ, 'ի լուանալ, լուանալով.
Հեղուլ. . . հեղլոյ, 'ի հեղուլ, հեղլով.
Ուսանել. . . ուսանելոյ, յուսանել, ուսանելով։

Ընդունելութիւն.

Ներկ. Շարժող, շարժեցող. Լուացող. Հեղող. Ուսանող ։
Անց. Շարժեալ, եցեալ. Լուացեալ. Հեղեալ. Ուսեալ։
Ապառ. Շարժելոց. լի. Լուանալոց. լի. Հեղլոց. լի. Ուսանելոց. լի։

Այսուհետեւ ըստ պահանջելոյ կարգին դասեսցուք զխոնարհմունս բայից ուրոյն ուրոյն. բայց նախ դնել արժան է զխոնարհումն էական բայից, որք են արմատ ածական բայից. եմ բայն արմատ է վերջացելոցն եմ, ամ, իմ, իսկ գոմն արմատ ում վերջացելոցն։

# ՅՕԴՈՒԱԾ Ը.

## Խոնարհումն Էական բայից:

145. Էական բայս ոչ ունին ամբողջ զամենայն ժամանակ՝ և զեղանակ. ուստի գոլով պակասաւոր, (143) 'ի միմեանց լնուն զպակասութիւն, որպէս երևի յառաջի եդեալ կարգիդ:

### Էական բայն ԵՄ.

Սահմանական ներկայ.

Եզն. Եմ, ես, է. Պէն իմ. սէն սին. օ տըր.
Յոգն. եմք, էք, են. Պիզ իզ. սիզ սիզ. օնլար տըր:

Անցեալ անկատար.

Եզն. Էի, էիր, էր. Իտիմ, իտին, իտի.
Յոգն. էաք, էիք, էին. Իտիք, իտինիզ, ըտըլար:

Անցեալ կատարեալ ոչ ունի, 'ի լինիմէն առնու:

Հրամայական.

Եզն. Ե՛ր. Էլէր, օլ: Յոգն. էք, երուք. Էլէք, օլուն:

Ստորադասական.

Եզն. իցեմ, իցես, իցէ. ըլլամ, ըլլաս, ըլլայ. օլամ էն:
Յոգն. իցեմք, իցէք, իցեն. ըլլանք, ըլլաք, ըլլան. օլաք էն:
Աներևոյթ. Իլ. ելոյ, ելով. ըլլալ, օլմաք:
Ընդ. անց. Եալ, եղած, օլմուշ: ապառ. ելոց, ըլլալու, օլաճաք:

146. Դիտողութիւն Ա. Հրամայական սորա ոչ վարի միայնակ, այլ ընդ բառին՝ ողջ եր, ողջ էք կամ երուք. որպէս ողջ լեր, լերուք: Սովորաբար վարի հրամայականն լինիմին, լեր, լերուք: Իսկ ընդունելութին եալ, գտանի 'ի գիրս նաև միայնակ, և հոլովի (տես 15) եալ, ելոյ. եալք, ելոց:

147. Դիտողութիւն Բ. Տեսանես՝ զի այս էական բայ յարեալ 'ի վերջս կանոնաւոր բայից, ձևացուցանէ զնոցա զեղանակն, զթիւն և զժամանակն. որպէս Ը ար-

ժեմ, շարժես, շարժէ. շարժեմք ևն: Հրամայականն էր, առնէ՝ մի շարժեր: Ստորադասականն էջեմ, առնէ՝ շարժէջեմ. Նմանապէս աներևոյթն, ընդունելութին՝ շարժել, շարժեալ, շարժելոց: Յայսցանէ ոմանց հաւանիլ, թէ այլ ևս խոնարհումն կանոնաւոր բային ձևանայ յետականէն. որ շարժեցի, շարժեցիր, շարժեցաւ, շարժեա, շարժեաջիք, շարժեցէք. թէպէտ և այս վերջք միայնակ ոչ երևին 'ի գիրս:

---

## 148. Լծական բայն ԳՈՄ.

### Սահմանական ներկայ.

Եզր. Գոմ, գոս, գոյ. կամ, կաս, կայ:
Յոգն. գոմք, գոյք, գոն. կամք, կայք, կան:

### Անցեալ անկատար.

Եզր. . . . . . գոյիր, գոյր . . . . . կայիր. կայր.
Յոգն . . . . . . գոյին . . . . . . կային:
Ստորադասական . . . . գուցէ . . . . . կայ նէ.
. . . . գուցեն . . . . . կան նէ:
Աներևոյթ. Գոլ, գոլոյ, գոլով. կենալ, ըլալ:
Ընդունելի. Գոյող, ողի, գաւ. եղող:

Գիտելիք Ա. Ոչ եղաք զբանի մի դէմս այսր հականի, կիրզի ոչ երևին 'ի գիրս. սակայն մարթ էր ասել, գոյէ, գոյաք, գոյէք. գոյցեմ, գոյցես, գոյցեմք, գոյցէք:

Գիտելիք Բ. Գոմ յատկապէս նշանակէ՝ կամ, վանրիմ. որպէս յասելն. Ոչ գոյ որ իմաստուն. որ չկայ մէկ խելացի մը: Ոչ գոյր նոցա տեղի. որ անոնց տեղ չկար: Բայց երբեմն նշանակէ և իբրև պարզ եմ. որպէս. բացականացն գոյ բաղձալի. որ հեռակայից բաղձալի ես:

## 149. Խոտորական բային ԵՂԱՆԻՄ.

Սահմանական ներկայ.

Եզ. Եղանիմ, եղանիս, եղանի. կըլլամ, կըլլաս, կըլլայ.
Յոգն. եղանիմք, եղանիք, եղանին. կըլլանք, կըլլաք, կըլլան.

Անցեալ անկատար.

Եզ. Եղանէի, եղանէիր, եղանէր. կըլլայի, կըլլայիր, կըլլար.
Յոգն. եղանէաք, եղանէիք, եղանէին. կըլլայինք, կըլլայիք, կըլլային:

Անցեալ կատարեալ.

Եզ. Եղէ կամ եղայ, եղեր, եղև. եղայ, եղար, եղաւ.
Յոգն. եղաք կամ եղեաք, եղէք կամ եղայք, եղեն. եղանք, եղաք, եղան.

Ապառնի.

Եզ. Եղէց, եղիցիս, եղիցի. ըլլամ, ըլլաս, ըլլայ.
Յոգն. Եղիցուք, եղիջիք, եղիցին. ըլլանք, ըլլաք, ըլլան.

Հրամայական ներկայ.

Եզ. Եղիր, մի եղանիր, եղիցի. Եղիր, մ'ըլլար, ըլլայ.
Յոգն. եղերուք, մի եղանիք, եղիցին. Եղէք, մ'ըլլաք, ըլլան.

Ապառնի.

Եզ. Եղիջիր, եղանիցիս, եղիցի. պիտի ըլլաս, պիտի ըլլայ.
Յոգն. եղիցուք, եղիջիք կամ եղանիջիք, եղիցին. պիտի ըլլաք ևն:

Ստորադասական ներկայ որպէս սահմանականն:

Ապառնի.

Եզ. Եղիցիմ կամ եղանիցիմ, ցիս, ցի. ըլլամնէ, ըլլասնէ, ըլլայնէ.
Յոգն. եղիցիմք կամ եղանիցիմք, ցիք, ցին. ըլլանքնէ, ըլլաքնէ, ըլլաննէ:
Աներբ. Եղանել կամ եղանիլ, նելոյ, նելով. ըլլալ:
Ընդուն. անց. Եղեալ, եղելոյ, լով. եղած:
ապառ. եղանելոց, եղանելի. ըլլալու, ըլլալի:

Գիտելիք. Հրամայականն եղիր, եդաւ վասն կարգին միայն, որ աշխարհօրէն վարի. իսկ ըստ գրոց վարի եղէր, հրամայական յաջորդին եղեմ:

## 150. Կրական բայն ԼԻՆԻՄ.

Սահմանական ներկայ.

Եզա. Լինիմ, լինիս, լինի. կըլլամ, կըլլաս եւն.
Յոգն. լինիմք, լինիք, լինին. կըլլանք, կըլլաք եւն:

Անց. անկատար.

Եզա. Լինէի, լինէիր, լինէր. կըլլայի եւն.
Յոգն. լինէաք, լինէիք, լինէին. կըլլայինք եւն:

Անց. կատարեալ, եղէ, յեղանիմն:

Ապառնի.

Եզա. Լիցիմ, լիցիս, լիցի . . . ըլլամ, ըլլաս եւն.
Յոգն. լիցուք, լիցիք կամ լինջիք, լիցին. ըլլանք, ըլլաք եւն:

Հրամայական ներկայ.

Եզա. Լեր, մի լինիր, լիցի. ըլլա կամ եղիր, մըլլար, ըլլայ.
Յոգն. լեք կամ լերուք, մի լինիք, լիցին. . եղէք, մըլլաք, ըլլան:

Ապառնի.

Եզա. Լիջիր կամ լինիջիր, լիցիս, լիցի. ըլլաս պիտի, ըլլայ պիտի.
Յոգն. լիցուք, լիջիք կամ լինիջիք, լիցին. ըլլանք պիտի եւն:

Ստորադասական ներկայ, որպէս Սահմանականն:

Ապառնի.

| | | |
|---|---|---|
| Եզա. | Լինիցիմ, լինիցիս, լինիցի. | ըլլամ նէ, ըլլաս նէ եւն. |
| Յոգն. | լինիցիմք, լինիցիք, լինիցին. | ըլլանք նէ, ըլլաք նէ եւն: |
| Աներեւ. | լինել. լինելոյ, լինելով. | ըլլալ եւն: |
| Ընդուն. | ներկ. Լինող, ողի, ողաւ. | ըլլօղ. |
| | անց. լինեալ կամ լեալ. | եղած. |
| | ապառն. լինելոց, լինելի: | ըլլալու: |

Դիտելիք. Ընդունելութիւն լինող, սակաւ ուրեք գոյ. փոխանակ նորա վարի՝ ըլլօղ կամ եղօղ: Իսկ ըլլալ, և ըլլալը, նախադրիւ միայն հոլովին, ըլլալուն, ընդ լինելոյն:

Ժամ է արդ ուրոյն շարադասել զխոնարհմունս չորից լծորդութեանց.

# ՅՕԴՈՒԱԾ Ի .

## 'Ի վերայ Առաջին Լծորդութեան :

151 . Զբայն որոց սահմանականն վերջանայ 'ի եմ, ասացաք առաջին Լծորդութիւն լինել . (144) բայց և սա ունի զորս այլ և այլ խոնարհմունս որոշեալս 'ի վերջի կատարեալ ժամանակին : Վասն զի ոմանք աւարտին 'ի եցի , ոմանք 'ի պարզ ի , ոմանք 'ի ացի , և ոմանք 'ի ոյի . և այս յետին կոչի՝ անցողական բայ : (157 . 164) Աստանօր զխոնարհմունս երեցն միայն շարակարգեմք միանգամայն ըստ ներգործականացն . և ապա զկրաւորական նոցա դնեմք :

---

## Առաջին լծորդութեան երեք օրինակք :

### Սահմանական ներկայ .

| | | | | |
|---|---|---|---|---|
| Եզ . | Շարժեմ , | ժես , | ժէ . | կըշարժեմ , ևն . |
| | Հանեմ , | հանես , | հանէ . | կըհանեմ , ևն . |
| | Ասեմ , | ասես , | ասէ . | կըսեմ , ևն : |
| Յոգն . | Շարժեմք , | շարժէք , | շարժեն . | կըշարժենք , ևն . |
| | Հանեմք , | հանէք , | հանեն . | կըհանենք , ևն . |
| | Ասեմք , | ասէք , | ասեն . | կըսենք , ևն : |

### Անցեալ անկատար .

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Եզ . | Շարժէի , | շարժէիր , | շարժէր . | կըշարժէի , | ժէիր , ժէր . |
| | Հանէի , | հանէիր , | հանէր . | կըհանէի , | նէիր , նէր . |
| | Ասէի , | ասէիր , | ասէր . | կըսէի , | կըսէիր , կըսէր . |
| Յոգն . | Շարժէաք , | շարժէիք , | շարժէին . | կըշարժէինք , | ժէիք , ժէին . |
| | Հանէաք , | հանէիք , | հանէին . | կըհանէինք , | նէիք , նէին . |
| | Ասէաք , | ասէիք , | ասէին . | կըսէինք , | կըսէիք , կըսէին : |

### Անցեալ կատարեալ .

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Եզ . | Շարժեցի , | շարժեցեր , | շարժեաց . | շարժեցի , | ժեցիր , ժեց . |
| | Հանի , | հաներ , | եհան կամ հան . | հանեցի , | հանեցիր , հանեց . |
| | Ասացի , | ասացեր , | ասաց . | ըսի , | ըսիր , ըսաւ . |

Յոգն. Շարժեցաք, շարժեցիք, շարժեցին. շարժեցինք, ցիք, ցին.

Հանաք, հանիք, հանին. հանեցինք, նեցիք, նեցին.

Առացաք, առացիք, առացին. առինք, առիք, առին:

### Ապառնի.

Եզ. Շարժեցից, ժեսցես, ժեսցէ. պէտք շարժեմ, ժես ևն.

Հանից, հանցես, հանցէ. պէտք հանեմ, նես ևն.

Առացից, առնուցես, առնուցէ. պէտք առնեմ, ևն.

Յոգն. Շարժեսցուք, ժեսջիք, ժեսցեն. պէտք շարժենք ևն.

Հանցուք, հանջիք, հանցեն. պէտք հանենք ևն.

Առնուցուք, ուջիք, ուցեն. պէտք առնենք ևն.

### Հրամայական Ներկայ.

Եզ. Շարժեա, մի շարժեր, շարժեսցէ. շարժէ, մի շարժեր, թող շարժէ.

Հան, մի հաներ, հանցէ. հանէ, մի հաներ, թող հանէ.

Առ, մի առներ, առնուցէ. առէ, մառներ, թող առնէ:

Յոգն. Շարժեցէք, մի շարժէք, շարժեսցեն. շարժեցէք, մի շարժէք, թող շարժեն:

Հանէք, մի հանէք, հանցեն. հանեցէք, մի հանէք, թող հանեն.

Առացէք, կամ առէք, մի առնէք, առնուցեն. առէք, մառնէք թող առնեն:

### Ապառնի.

Եզ. Շարժեսջիր, կամ ժեսցես, ժեսցէ. շարժես պէտք ևն.

Հանջիր կամ նիջիր, հանցէ. հանես պէտք ևն.

Առնուջիր կամ առնուցես, առնուցէ. առնես պէտք ևն.

Յոգն. Շարժեսջուք, ժեսջիք, ժեսցեն. շարժենք պէտք ևն.

Հանցուք, հանջիք կամ նիջիք, ցեն. հանենք պէտք ևն.

Առնուցուք, առնուջիք, առնուցեն. առնենք պէտք ևն:

### Ստորադասական Ներկայ որպէս Սահմանականն:

### Ապառնի.

Եզ. Շարժիցեմ, ժիցես, ցէ. շարժեմ նէ ևն.

Հանիցեմ, նիցես, նիցէ. հանեմ նէ ևն.

Առնիցեմ, առնիցես, առնիցէ. առնեմ նէ ևն:

Յոգն. Շարժիցեմք, ժիցէք, ժիցեն. շարժենք նէ ևն.

Հանիցեմք, հանիցէք, հանիցեն. հանենք նէ ևն.

Առնիցեմք, առնիցէք, առնիցեն. առնենք նէ ևն:

ԱՆԵՐԵՒՈՅԹ.

Շարժել, Հանել. Առնել. եւս. եւն:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ:

Ներկ. Շարժօղ կամ շարժեցօղ. Հանօղ. Առօղ կամ առացօղ. ողի. ողու:
Անց. Շարժեալ կամ շարժեցեալ. Հանեալ. Առացեալ:
Ապառ. Շարժելոց. Հանելոց. Առնելոց:

153. ԳԻՏԵԼԻՔ Ա. Ընդունելութիւն ներկայ և անցեալ եղակի կրկին եղանակաւ. որ՝ շարժօղ և շարժեցօղ, շարժեալ և շարժեցեալ, նմանապէս առօղ և առացօղ: Վասն զի օղ և եալ վերջքն՝ ըստ առաջին կերպին յարին 'ի բուն արմատն բային, շարժօղ, շարժեալ, առօղ. իսկ յերկրորդ կերպն յարին 'ի կատարեալն. որ՝ շարժեցօղ, շարժեցեալ. առացօղ, առացեալ: Նոյնպէս իմանալի է և յայլ բայս. զի որոց ներգործականն կամ կրաւորականն ունի էց մասնիկ 'ի կատարեալ ժամանակն, այնոցիկ միայն լինի եցօղ, եցեալ: Վասն այսորիկ 'ի Հանեմն ոչ լինի հանեցօղ, հանեցեալ. վասն զի 'ի կատարեալն նորա չիք էց մասնիկ. և նոյնպէս այլ բայք խոնարհեալք ընդ նովաւ՝ ոչ լինին եցիւ կամ ացիւ:

154. ԳԻՏԵԼԻՔ Բ. Ներկայ ընդունելութիւն եղակի գրեալ օղիւ, շարժօղ ևն. սակայն ըստ հնագոյն և լաւ գրչութեան առաւել գրի ող, շարժող, հանող ևն. օղիւ գրելն՝ յետոյ մուծեալ է: (տես 202)

155. ԳԻՏԵԼԻՔ Գ. Յայլ լեզուս՝ սահմանական և ստորադասական եղանակքն ունին աւելի անցեալ ժամանակ յատուկ վերջիւ ձեւացեալ. զորոց զմին ասեն՝ յարակատար ժամանակ, և զմիւսն՝ գերակատար: Սակայն 'ի մերում լեզուի չունիմք յատուկ խոնարհումն այնպիսի ժամանակաց. այլ զանցեալ ընդունելութիւն իւրաքանչիւր բայի յարելով ընդ ժամանակաց էական բայի, այնպէս ձեւացուցանեմք. որպէս յարակատար ժամանակ առնեմք դնելով, շարժեալ եմ, հանեալ եմ, առացեալ եմ: Գերակատար առնեմք, շարժեալ էի, հանեալ էի, առացեալ էի: Նմանապէս ստորադասականի անցեալ առնեմք, շարժեալ

իցեմ, հանեալ իցեմ, ասացեալ իցեմ։ Նոյնպէս լինի նաև էական բայից, եղեալ եմ կամ իցեմ, լեալ եմ, էի, իցեմ. ըստ այսոցիկ իմանալ պարտ է 'ի վերայ մնացեալ լծորդութեանց։

---

## 156. Կրաւորականն վերոյեղեալ ներգործական բայից։

### Սահմանական ներկայ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Եզ. | Շարժիմ, | ժիս, | ժի. | կըշարժիմ ևն. |
| | Հանիմ, | հանիս, | հանի. | կըհանվիմ ևն. |
| | Ասիմ, | ասիս, | ասի. | կըսվիմ ևն. |
| Յոգն. | Շարժիմք, | շարժիք, | շարժին. | կըշարժինք ևն. |
| | Հանիմք, | հանիք, | հանին. | կըհանվինք ևն. |
| | Ասիմք, | ասիք, | ասին. | կըսվինք ևն։ |

### Անցեալ անկատար.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Եզ. | Շարժէի, | շարժէիր, | շարժէր կամ ժիւր. | կըշարժըվէի ևն. |
| | Հանէի, | հանէիր, | հանէր կամ նիւր. | կըհանվէի ևն. |
| | Ասէի, | ասէիր, | ասէր կամ ասիւր. | կըսվէի ևն. |
| Յոգն. | Շարժէաք, | շարժէիք, | շարժէին. | կըշարժըվէինք ևն. |
| | Հանէաք, | հանէիք, | հանէին. | կըհանվէինք ևն. |
| | Ասէաք, | ասէիք, | ասէին. | կըսվէինք ևն։ |

### Անցեալ կատարեալ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Եզ. | Շարժեցայ, | շարժեցար, | շարժեցաւ. | շարժըվեցայ ևն. |
| | Հանայ, | հանար, | հանաւ. | հանվեցայ. ևն. |
| | Ասացայ, | ասացար, | ասացաւ. | ըսվեցայ ևն. |
| Յոգն. | Շարժեցաք, | շարժեցայք, | շարժեցան. | շարժըվեցանք ևն. |
| | Հանաք, | հանայք, | հանան. | հանվեցանք ևն. |
| | Ասացաք, | ասացայք, | ասացան. | ըսվեցանք ևն։ |

### Ապառնի.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Եզ. | Շարժեցայց, | շարժեսցիս, | շարժեսցի. | շարժիմ պիտի ևն. |
| | Հանայց, | հանցիս, | հանցի. | հանվիմ պիտի ևն. |
| | Ասացայց, | ասասցիս, | ասասցի. | ըսվիմ պիտի ևն. |
| Յոգն. | Շարժեսցուք, | շարժիջիք, | շարժեսցին. | շարժինք պիտի ևն. |
| | Հանցուք, | հանիջիք, | հանցին. | հանվինք պիտի ևն. |
| | Ասասցուք, | ասիջիք, | ասասցին. | ըսվինք պիտի ևն։ |

Հրամայական.

Եզ. Շարժեա՛ց, կամ շարժեցի՛ր, ժիջի՛ր, մի՛ շարժիր, շարժեսցի. — շարժըլէ՛ եւն.
Հանի՛ր, հանջի՛ր, հանցես, մի՛ հանիր, հանցի. — հանըլէ՛ մէյ դի եւն.
Ասիջի՛ր, ասասջի՛ր, ասասցես, մի՛ ասիջիր, ասասցի. — ըսըլէ՛ եւն:

Յոգն. Շարժեցարո՛ւք, մի՛ շարժիք, շարժեսցին. — շարժըլէցէ՛ք եւն.
Հանարո՛ւք կամ հանա՛յք. հանիջիք, հանցին. — հանըլէցէ՛ք մէյ դի եւն.
Ասացարո՛ւք, ասիջիք, ասասցեն. — ըսըլէցէ՛ք եւն:

Ստորադասական Ներկայ որպէս Սահմանականն:

Անցանի.

Եզ. Շարժիցիմ, ժիցիս, ժիցի. — շարժըլիմ նէ եւն.
Հանիցիմ, նիցիս, նիցի. — հանըլիմ նէ եւն.
Ասիցիմ, ասիցիս, ասիցի. — ըսըլիմ նէ եւն.
Յոգն. Շարժիցիմք, ժիցիք, ժիցին. — շարժըլինք նէ եւն.
Հանիցիմք, նիցիք, նիցին. — հանըլինք նէ եւն.
Ասիցիմք, ասիցիք, ասիցին. — ըսըլինք նէ եւն:

Աներեւոյթ.

Շարժել. Հանել. Ասել. ելոյ, ելով:

Ընդունելութիւն.

Անց. Շարժեալ կամ ժեցեալ, շարժելի. Հանեալ. Ասացեալ:
Ապառն. Շարժելոց, Հանելոց, հանելի. Ասելոց, ասելի:

Դիտողութ. Այս կրաւորականք էական բայիւ եւս կարեն ձեւանալ. որպ. Շարժեալ լինիմ, կամ լինէի. շարժեալ եղէ կամ եղէց. շարժեա՛լ լեր. շարժեալ լինիցիմ եւն:

---

## Չորրորդ Կերպ Առաջին Լծորդութեան:

157. Յիշեցաք վերագոյն (151) թէ 'ի բայս վերջացեալս 'ի եմ գոն եւս 'ի ցանեմ, եւ ունին զատարբեր խոնարհումն, որ եւ աւելի անցողական բայ. վասն

զի այնպէս նշանակեն զառնելն, զի զնոյն անցուցանեն յայլ. օր. առնեն զի և միւսն առնիցէ. այսպէս ՊԱՏՃԱՌԱԿԱՆՆ, նշանակէ՝ տամ զօրանալ, զօրաւոր առնեմ:

Անցողականն ձեւանայ 'ի չէզոք բայից, իսկ 'ի ներգործականաց յոյժ սակաւ: 'Ի կատարեալ ժամանակէ նոցա հատեալ զյետին ձայնաւորն, միաւորեմք ընդ ՈՒՑԱՆԵՄՆ, և լինի անցողական. օր. չէզոք է ԴԱՌՆԱՄ. կատարեալն՝ ԴԱՐՁԱՅ. հատեալ զձայնաւորն ԱՅ, առնեմք՝ ԶԴԱՐՁՈՒՑԱՆԵՄ: Այսպէս ԱՄԱՉԵՄ. կատար. ԱՄԱՉԵՑԻ. ձգեալ զձայնաւորն Ի, լինի՝ ամաչեցուցանեմ: Զարհուրիմ. կատար. ԶԱՐՀՈՒՐԵՑԱՅ, զարհուրեցուցանեմ: Շիջանիմ, կատար. ՇԻՋԱՅ. շիջուցանեմ: Զարթնում. կատար, ԶԱՐԹԵԱՅ, զարթուցանեմ:

Արդ՝ խոնարհումն այսպիսի բայից լինի որպէս Շարժեմին, և հրամայական նոցա է կէսն սահմանականի ներկային. որպէս ԴԱՐՁՈՒՑԱՆԵՄ, 'ի բաց հատեալ 'ի Մ գրոյն, մնացեալն ԴԱՐՁՈ՛ լինի հրամայական: Բայց վասն օրինակի դիցուք զմիոյ խոնարհումն:

| | |
|---|---|
| Սահմ. ներկ. | Ամրացուցանեմ. նես. նէ. նեմք. նէք. նեն: |
| Անկատար. | Ամրացուցանէի. նէիր. նէր. նէաք. նէիք. նէին: |
| Կատարեալ. | Ամրացուցի. ցուցեր. ցոյց. ցուցաք. ցուցիք. ցուցին: |
| Ապառնի. | Ամրացուցից. ցուսցես. ցուսցէ. ցուսցուք. ցուսջիք. ցուսցեն: |
| Հրամայ. | Ամրացո՛. մի ամրացուցաներ. ամրացուսցես, ամրացուսջիր, ամրացուցանիջիր, ամրացուսցէ. ամրացուսցո՛ւք, ամրացուցէք, ամրացուսջիք, ամրացուսցեն: |
| Ստորադ. | Ամրացուցանիցեմ. նիցես. նիցէ. նիցեմք. նիցէք. նիցեն: |
| Աներև. | Ամրացուցանել: Ընդուն. Ամրացուցանող կամ ցուցող. ամրացուցեալ. ամրացուցանելոց: |

Սորա կրաւորականն կարէ խոնարհիլ որպէս Շարժիմ. օր. Ամրացուցանիմ. ամրացուցայ. ամրացուցայց. ամրացուսջիք. ամրացուցանիցիմ եւլն: (տես 192:)

Յետ իմանալոյ զայլ և այլ խոնարհմունս բայից առաջին լծորդութեան, պիտոյ է զի աշակերտն սերտեսցէ քանի մի բայս իւրաքանչիւր օրինակի, և զխոնարհումն նոցա արասցէ բերանով, այլև գրելով ըստ ամենայն եղանակի և ժամանակի նոցա :

---

### 158. Բայք որ խոնարհին որպէս Շարժեմ :

#### Ներգործականք :

| | | |
|---|---|---|
| Ազդեմ. | դեցի. դեա. | Իմաց տալ. հապէրլէմէք : |
| առակեմ. | կեցի. կեա. | առակ բերել. խալք ընել : |
| բեւեռեմ. | ռեցի. ռեա. | գամել. մըխլամաք : |
| գանեմ. | նեցի. նեա. | ծեծել. թակել. տէօյմէք : |
| գրաւեմ. | ւեցի. ւեա. | ձեռք առնել. գրաւ ընել. ռեհին դնել : |
| ըմբերանեմ. | նեցի. նեա. | պապանձեցընել. աղզըն գափամաք : |
| ըմպեմ. | պեցի. պեա. | խմել. իչմէք : |
| Թելադրեմ. | դրեցի. դրեա. | խրատ տալ. էօյիտ վէրմէք : |
| Ծախեմ. | խեցի. խեա. | խարճել, հատցընել : |
| կազմեմ. | մեցի. մեա. | շինել, խառամըշ ընել : |
| Ծաղրեմ. | ղեցի. ղեա. | մասխարա ընել : |
| Ծաղկեմ. | կեցի. կեա. | չըպուխով ծեծել : |
| Ճանաչեմ. | չեցի. չեա. | ճանչնալ. տանըմաք : |
| Ճառեմ. | ռեցի. ռեա. | պատմել. խօսել. նագլ էթմէք : |
| Մարզեմ. | զեցի. զեա. | կրթել. վարժեցընել. էօյրէթմէք : |
| Նուաճեմ. | ճեցի. ճեա. | տակ առնել. զապտը ալմաք : |
| Որոնեմ. | նեցի. նեա. | փընտռել. արամաք : |
| Պատրեմ. | րեցի. րեա. | խաբել. ալդաթմաք : |
| Պարտեմ. | տեցի. տեա. | յաղթել. եէնմէք : |
| Ջամբեմ. | բեցի. բեա. | կերցընել. եէտիրմէք : |
| Սպառեմ. | ռեցի. ռեա. | հատցընել. տիւքէթմէք : |

Ներգործակերպ չեզոքականք ։

Ամաչեմ. չեցի, չեայ. չեալ կամ՝ չեցեալ. } Ամչնալ. ութանմագ ։
ապաշաւեմ. ւեցի. ւեայ. փիշման ըլլալ վազ գալ ։
դանդաչեմ. չեցի. չեայ. Երերալըքիլ ։
զանգիտեմ. տեցի. տեայ. Վախնալ. գօրգմագ ։
խուսեմ. սեցի. սեայ. Մէկ դի քաշուիլ. սըվըշմաք ։
ձեմեմ. մեցի. մեայ. քալել. կէզինմէք ։
մեղանչեմ. չեցի. չեայ. Մեղք ընել. ղաբահաթ ։
յամեմ. մեցի. մեայ. ուշանալ. կէճիքմէք ։
նիրհեմ. հեցի. հեայ. Մրափել. ույուգլամագ ։
չուեմ. ուեցի. ուեայ. Ճամբայ ընել. եօլա չըգմագ ։

Կրաւորակերպ չեզոքականք և հասարակք, որք նման Ապ-րիմին խոնարհին ։

Ապրիմ. րեցայ. րեայց. Ապրիլ, կառավարուիլ. կէ-չինմէք ։
բնակիմ. կեցայ. կեայց. տեղ մը կենալ. օթուրմագ ։
դադարիմ. րեցայ. րեայց. դադրիլ. տուրմագ ։
երևիմ. րևեցայ. րևեայց. երեւնալ. կէօրինմէք ։
հրաժարիմ. րեցայ. րեայց. ետ կենալ. վազ կէչմէք ։

159. Ի սոցանէ ոմանք են և մերձանան, և լինին ներգործակերպ. որպէս բնակեմ, դադարեմ, հրաժարեմ, և խոնարհին իբրև զներգործականն, բնակեցի, դադարեցի ևն ։

Բարբառիմ. ռեցայ. ռեայց. Խօսիլ և խօսուիլ ։
դատիմ. տեցայ. տեայց. դատել և դատուիլ ։
խորշիմ. հեցայ. հեայց. Մամռալ և մամռծուիլ ։
խօսիմ. սեցայ. սեայց. խօսիլ և խօսուիլ ։
խոստովանիմ. վանեցայ. նեայց. խոստովանանք ընել և խոստովանուիլ ։
կամիմ. մեցայ. մեայց. ուզել և ուզուիլ ։
շահիմ. հեցայ. հեայց. շահ ընել և շահուիլ ։
Այսպիսի հասարակ բայք առաւել ըստ ներգոր-

ծական նշանակութեան 'ի գործ ածին. Թէպէտ և ձայնն կրաւորական հնչեսցէ. ուստի բարբառիւր, դառնիւր, խոստովանիւր, իմանի՝ խօսէր, դաւանէր, խոստովանէր։

Եթէ պիտոյ լինիցի զկրաւորական նշանակութիւն յայտ առնել, եական բայիւ դնին, որպ. զատեալ եղև, եղև կամեցեալ, խօսեալ լինիցի ևն։

---

160. Բայք որք խոնարհին որպէս Հանեմն, առաւել այնոքիկ են, որք վերջանան անեմ կամ անիմ. որք և 'ի ժամանակս ինչ խոտորին։

Ներգործական բայք։

| | |
|---|---|
| Ածեմ. ածի. եած կամ ած. | Բերել. կէթիրմէք։ |
| անիծանեմ. անիծի. անէծ. | անիծել. նալէթ տալ։ |
| արկանեմ. արկի. արկ կամ էարկ. | ձգել, նետել. բրագմաք։ |
| բեկանեմ. բեկի. եբեկ. | կոտրել. գըրմաք։ |
| բերեմ. բերի. եբեր. | բերել. կէթիրմէք։ |
| գտանեմ. գտի. եգիտ. հր. գիտ. | գտնել. բուլմաք։ |
| եղծանեմ. եղծի. եղծ. | աւրել. ճմայընել. բօզմաք։ |
| զատանեմ. զատի. զատեաց. հր. զատեա. | զատել. այըրմաք։ |
| լուծանեմ. լուծի. ելոյծ. հր. լոյծ. | արձըկել. չէօզմէք. սէօքմէք։ |
| լուցանեմ. լուցի. ելոյց. լոյց. | վառել. եագմաք։ |
| հարկանեմ. հարի. եհար. հար. | զարնել. վուրմաք։ |
| մուծանեմ. մուծի. եմոյծ. մոյծ. | մըտցնել. խօթել. սօգմաք։ |
| սատանեմ. սատի. սատեաց. հր. սատեա. | մեղադրել. այըպլամաք։ |
| ցուցանեմ. ցուցի. եցոյց կամ ցոյց։ | ցուցնել. կէօսթէրմէք։ |

Ոմանք յայսցանէ վերջանան ևս 'ի պարզ էն. որ· անիծէն, բեկէն, եղծէն, զատէն. և յայնժամ խոնարհին որպէս շարժեմ. որ անիծեցի, զատեցի այլն։ Այլև բարդեալքն սոցա, վերածէն, ձեռնարկէն, նորաստեղծէն, լինին, վերածեցի, ձեռնարկեցի, նորաստեղծեցի։

Ներգործական բայք։

| | |
|---|---|
| Անցանեմ. անցի. անց. | Անցնիլ կեչմէք։ |
| ելանեմ. ելի. ել. | Ելլել. չըգմագ։ |
| իջանեմ. իջի. էջ. | Իջնալ. էնմէք։ |
| համբերեմ. բերի կամ բերեցի. | համբերել. սապր էթմէք։ |
| յանցանեմ. յանցեայ. եաւ. եայց. յանցիր. | խօսքէ կամ օրէնքէ անցնիլ. գապահատ էթմէք։ |

161. Կրաւորական բայք, և հասարակ բայք որ նման զանիմն խոնարհին։

| | |
|---|---|
| Ագանիմ. ագայ. ագիր. (իբրև հանդերձ, լաթ հագնել.) | Գիշերը տեղ մը կենալ, գօնագ էթմէք։ |
| անկանիմ. անկայ. անկիր. | ընկնել, տիւշմէք։ |
| բուսանիմ. բուսայ. բուսիր. | բուսնել, պիթմէք։ |
| զգօսանիմ. զգօսայ. զգօսիր. | զգօն ընել. ուէֆալանմագ։ |
| զնստանիմ. զնստայ. զնստիր. | ցածնալ, տաշլիլ։ |
| մածանիմ. մածայ. մածիր. | կպչիլ, թանձրնալ։ |
| նստիմ. նստայ. նիստ. | նստիլ, օթուրմագ։ |
| ջեռանիմ. ջեռայ. ջեռիր. | տաքնալ, ըսընմագ։ |
| սնանիմ. սնայ. սնիր. | սնիլ, պէսլէնմէք։ |
| Ծնանիմ. ծնայ. ծնիր. | Տօղուրմագ և տօղմագ։ |
| ուսանիմ. ուսայ. ուսիր. | Էօյրէնմէք և էօյրէլէնմէք։ |
| սկսանիմ. սկսայ. սկսիր. | պաշլամագ և պաշլանմագ։ |
| վարկանիմ. վարկայ. վարկիր կամ վարկեայ. վարկեալ կամ կուցեալ. | սայմագ և սայըլմագ։ |

տանիմ. տարայ. տար. — կէօթիւրմէք և կէօթիւրիւլմէք ։

## Այսպէս խոնարհին կրաւորակերպ չէզոքքն որք չեն վերջանան ։

Երկնչիմ. երկեայ. երկի՛ր. (ընդունել.) երկուցեալ. — Վախնալ. գօրգմաք ։
Թաքչիմ. թաքեայ. թաքի՛ր. թաքուցեալ. — պահվըտէլ. սագլանմագ ։
Թռչիմ, և թռանիմ. թռեայ. թռի՛ր. թռուցեալ. — Թռչիլ. ուչմագ ։
կորնչիմ. կորեայ. կորի՛ր. կորուսեալ. — կորսուիլ. գայպ օլմագ ։
մատչիմ. մատեայ. մատի՛ր. մատուցեալ. — մօտենալ. եագլաշմագ ։
մարտնչիմ. մարտեայ. տի՛ր. մարտուցեալ ։ — կռուիլ. չէքիշմէք ։

162. Գիտելիք Ա. Այսոցիկ չէզոք և հասարակ բայից ստորադասականն կրկնակի լինի, որպէս ծնցիմ և ծնանիցիմ. ուսցիմ և ուսանիցիմ. վարկիցեմ և վարկանիցիմ. տարցիմ և տանիցիմ ։ Նմանապէս՝ երկիցեմ և երկնչիցիմ. թաքիցեմ և թաքչիցիմ. կորիցեմ և կորնչիցիմ ։

Գիտելիք Բ. Հասարակ բայք ներգործական նշանակութեամբ առնուն զմասնիկն ող. ուստի ասի ծնող և ծնանող. ուսող և ուսանող. նմանապէս, դատող, խօսող, հաճող և հաճեցող ևն ։

163. Այն բայք որք խոնարհին որպէս առեմն, են սակաւք ։

Գիտեմ. գիտնալ. պիլմէք ։ Գիտացի. գիտաց. հր. գիտեա՛. գիտացից. գիտիցեմ. գիտող. գիտացեալ ։ Կրաւորական ոչ լինի Գիտեմ. այլ եական բային, գիտացեալ լինիմ ևն ։ Գոյ Գիտանամ կամ Գիտենամ, որ ներգործական է ։ տես (174)

Կարեմ. կրնալ. գատիր օլմագ ։ Կարացի. կարաց. կարացից. հր. կարացի՛ր, կամ կարօղ լե՛ր.

կարացեալ։ Կրաւորական ոչ լինի կարեմ. և կրաւորական մտօք ոչ վարի, այլ չէզոք։ Նոյն Կարեմ նշանակէ կար կարել, խոնարհի որպէս շարժեմն կրաւորականաւ իւրով։

---

## 164. Անցողական բայք։

Վասն յայտնի տեսանելոյ զձևանալ սոցա, դիցուք նախ զպարզն իւրաքանչիւրոց հանդերձ կատարեալ ժամանակաւն, յորմէ ձևանայ անցողականն. որոց ոմանք փոխանակ ց գրոյն դնեն` ւ կամ զ, 'ի պատճառս նմանաձայն գոլոյն։

Ապրիմ. ապրեցայ. Ապրեցուցանեմ. ապրեցընել. գուրթարմագ։

Արբենամ. արբեցայ. Արբեցուցանեմ. գինովցընել. սարհօշլամագ։

Թագչիմ. Թաքեայ. Թաքուցանեմ. պահըրտել. սագլամագ։

Կեամ. կեցի. Կեցուցանեմ. կենդանացընել. տիրիլթմէք։

Մեղայ կէր. Մեղուցանեմ. մեղք խօթել. կիւնահա սօգմագ։

Ելանեմ. ելի. Ելուզանեմ. ելուզի, ելոյզ, հր. ելուզեա. դուրս հանել։

Ընկլնում. ընկլայ. Ընկլուզանեմ. ընկլմ. պաթըրմըշ ընել։

Կորնչիմ. կորեայ. Կորուսանեմ. կորս. կորսընցընել. գայպ էթմէք։

Փլանիմ. փլայ. Փլուզանեմ. փլմ. փլցընել. եըգմագ։

Արբի. Արբուցանեմ. խըմցընել. իչիրմէք։

Զգենում. զգեցայ. Զգեցուցանեմ. հագցընել. կիյտիրմէք։

Լնում. լցի. Լցուցանեմ. լեցընել. տօլտուրմագ։

Լսեմ. լսեցի. Լսեցուցանեմ։ լուայ. Լուուցանեմ. լսել տալ. իշիթտիրմէք։

Ծանեայ. Ծանուցանեմ. իմացընել. թանըթըրմագ։

Հատանեմ. հատի. Հատուցանեմ. կտրել. վճարել։

Ուսանիմ. ուսայ. Ուսուցանեմ. սորվեցընել. էօյրէթմէք։

165. Անպտուղի բայք առաջին լծորդութեան:

Ներգործական ԱՌՆԵՄ. Կենս. Եղանակ:

Սահմ. Առնեմ. նես. նէ. նեմք. նէք. նեն:
Առնէի. նէիր. նէր. նէաք. նէիք. նէին:
Անց. Արարի. արարեր. արար. արարաք. արա-
րիք. արարին:
Ապառն. Արարից. արասցես. արասցէ. արասցուք.
արասջիք. արասցեն:
Հրամ. Արա. արասջիր կամ առնիջիր. մի առներ.
արասցէ. արասցուք. արարէք. արասջիք
կամ առնիջիք. մի առնէք. արասցեն:
Ստոր. Առնիցեմ. նիցես. ցէ. առնիցեմք. նիցէք,
կամ արասցէք. նիցեն:
Անոր. Առնել: Ընդուն. Արարող. (սակաւ առնող.)
արարեալ. առնելոյ:

Սորա կրաւորականն նշանակէ որպէս Լինիմ:

Սահ. Առնիմ. նիս. նի եւ: Առնէի, որպէս ներ-
գործականն:
Անց. Արարայ. արարար. արարաւ. արարաք.
արարայք. արարան:
Ապառն. Արարայց. արասցիս. արասցի. արասցուք.
առնիջիք. արասցին:
Հրամ. Առնիջիր. արասցիս. մի առնիր. արասցի.
առնիջիք. մի առնիք. առնիցին:
Ստոր. Առնիլ. նելոյ: Ընդուն. արարեալ. (ոչ արա-
րեցեալ.) առնելի, առնելոյ:

166. Այլ ներգործական ԴՆԵՄ.

Սահ. Դնեմ. դնես. դնէ. դնեմք. դնէք. դնեն,
դնէի եւ:
Անց. Եդի. եդիր կամ եդեր. եդ. եդաք. եդիք.
եդին: (իբր աշխարհաբար դրին)
Ապառն. Եդից. դիցես. դիցէ. դիցուք. դիջիք.
դիցեն:

Հրամ. Դի՛ր. դիջի՛ր. մի՛ դներ. դիցէ՛. դի՛ք կամ դիջի՛ք. մի՛ դնէք. դիցե՛ն։
Սոր. Դնիցեմ. ցես, ցէ եւն։
Աներ. Դնել. դնելոյ. լով. Ընդուն. դնող. եդեալ. դնելոց։ (սակաւ դրեալ)

Սորա կրաւորականն։

Սահ. Դնիմ. նիս նի։ Դնէի եւն, որպէս ներգործականն։
Անց. Եդայ. եդար. եդաւ. եդաք. եդայք. եդան։
Ապառ. Եդայց. դիցիս. դիցի. դիցուք. դիջիք. դիցին։
Հրամ. Դիջի՛ր. դնիջի՛ր. դիցի՛ս. մի՛ դնիր. դիցի՛. դիցո՛ւք. եդարո՛ւք, կամ դնիջի՛ք. մի՛ դնիք. դիցի՛ն։
Սոր. Դնիցիմ. ցիս եւն։
Աներ. Դնիլ. դնելոյ։ Ընդուն. եդեալ. (ոչ դրե-ցեալ). դնելի. դնելոց։

Սորա պարզն ոչ լինի դրօղ, դրեալ, բայց բաղ-դեալն՝ վերադրեմ, ենթադրեմ, խոնարհի որպէս շարժեմ. ուստի լինի՝ վերադրել, վերադրեցի, վերադրօղ, վերադրեալ եւն։

---

Պակասաւոր բայք առաջին լծորդութեան։

167. Ներգործական Ուտեմ, Կերի։

Սահ. Ուտեմ. տես. տէ. տեմք. տէք. տեն։ Ուտէի եւն։
Անց. Կերի, կերեր. եկեր. կամ կերայ. կերար. կերաւ. կերաք. կերիք կամ կերայք. կե-րին կամ կերան։
Ապառ. Կերից կամ կերայց. կերիցես. ցէ. կերի-ցուք. րիջիք. րիցեն։

Հրամ. Կեր, կերիջիր. ուտիջիր. մի ուտեր. կերիցէ. կերիցուք. կերէք կամ կերայք. կերիջիք. մի ուտէք. կերիցեն։
Ապառ. Կերիցեմ, կամ ուտիցեմ. ցես. ցէ ևն։
Աներ. Ուտել. Ընդուն. կերող. կերեալ. ուտելոց։

Սորա կրաւորականն, Ուտիմ. տիս ևն։ Ուտիցիմ կմ կերիցիմ, ցիս ևն։ Ուտիլ. ուտելի կամ կերելի։ Անցեալն որպէս ներգործականն, կմ էական բայիւ. կերեալ եղէ, եղէց, լինիցիմ և այլն։

168. Այլ ներգործական Արբի. որ զպակասն լնու յԸմպեմէն։

Սահ. Ըմպեմ, ըմպել ևն։
Կատ. Արբի. արբեր. արբ կամ էարբ. արբաք. արբէք. արբին։
Ըղձ. Արբից. արբցես. արբցէ. արբցուք. արբջիք. արբցեն։
Հրամ. Արբ. արբջիր. արբցես. մի ըմպեր. արբցէ. արբցուք. արբէք. արբջիք. մի ըմպէք. արբցեն։
Ապառ. Ըմպիցեմ, ցես ևն։
Աներ. Ըմպել։ Ընդուն. ըմպող. ըմպեալ կամ արբեալ. ըմպելոց։

Սորա կրաւորականն էական բայիւ միայն լինի, ըմպեալ, կամ արբեալ լինիմ ևն։

---

169. Այլ պակասաւոր հասարակ Ունիմ, որ զպակասն առնու ՚ի Կալայէն, որոյ սահմանականն սակաւ ուրեք վարի։

Սահ. Ունիմ. նիս. ևն։ Ունէի, նէիր ևն։
Կատ. Կալայ. կալար. կալաւ. կալաք. կալայք. կալան։
Ըղձ. Կալայց. կալցիս կամ ցես. ցի կամ ցէ.

կալցուք ․ կալջիք կամ ունիցիք ․ կալցին կամ կալցեն ։

Հրամ․ Կա՛լ կամ կա՛ ․ կալջիր ․ կալցիս կամ ցես , կամ ունիջիր ․ մի՛ ունիր ․ կալցի , կամ ունիցի ։ Կալէք կամ կալարուք , կալջիք ․ մի՛ ունիք ․ կալցին ։

Ստոր․ Ունիցիմ, ցիս ևն ։

Աներ․ Ունել կամ նիլ ․ նելոյ ։ Ընդուն․ ունող ․ կալեալ ․ ( ոչ ունեցեալ ) ունելի , ունելոյ ։

Սորա կրաւորականն էական բային ևս լինի , կալեալ լինիմ, եղէ ևն ։

Կազմի յՈւնիմէն՝ ընդունիմ , որ է խապուլ ընել ․ խոնարհի՝ ընկալայ ․ ընկալայց ․ ընկա՛լ ․ ընդունիցիմ ․ ընդունող ․ ընկալեալ ․ ընդունելի ։ Սակաւ ուրեք շարժեմի նման , ընդունեցի ․ ընդունեա՛ ․ ընդունեալ ։

Գոյ բարդն ակնունիմ , որ միայն խոնարհի , ակնկալայ ․ ակնկալայց ․ ա՛կնկալ ։ Եթէ մերձանայ եմ , Ընկալեմ , Հիւրընկալեմ , Տիեզերակալեմ , ամենևին նման շարժեմին խոնարհի ներգործական և կրաւորական ։

## 170 . Այլ պակասաւորք ։

Պարտիմ , իբրև հասարակ բայ , նշանակէ՝ պարտական եմ , և այսչափ խոնարհումն ունի ․ Պարտիմ , տիս ․ ևն ․ Պարտէի ևն ․ Պարտիցիմ , ցիս և այլն ։

Մարթեմ , իբրև կրաւորակերպ , նշանակէ՝ կրնամ ․ խոնարհի , մարթիմ , թիս ևն ։ Մարթիցիմ , ցիս ևն ։ Ուր գոյ մարթացեալ կամ մարթացայց , նորա սահմանականն մարթանամ է ։

Գոգ , միայն հրամայական գոյ ․ և նշանակէ՝ ըսէ , ասէ ։ Լինի , գոգջիր , գոգցես , գոգցէ ․ գոգցուք , գոգէք , գոգջիք , գոգցեն ։

# ՅՕԴՈՒԱԾ Գ.

## Ի վերայ Երկրորդ Լծորդութեան.

171. Երկրորդ լծորդութիւն այնց բայից է, որք վերջանան 'ի ամ. և ունի զերկու կերպ. միոյն կատարեալն վերջանայ ի կամ ցի, և ապառնին՝ ից, նման առաջնոյ լծորդութեան. իսկ երկրորդին վերջանայ՝ այ, այց, նման կրաւորականի առաջնոյն։

Օ երկուցն ես օրինակ տացուք միանգամայն 'ի վերայ ներգործական բայիցս՝ Լուանամ, լուանալ. եայքամաք, և Խոստանամ, խօսք տալ. սէօզ վէրմէք։

### Սահմանական ներկայ.

Լուանամ. նաս. նայ. լուանամք. նայք. նան.
Խոստանամ. նաս. նայ. նամք. նայք. նան.

### Անց. անկատար.

Լուանայի. նայիր. նայր. նայաք. նայիք. նային.
Խոստանայի, նայիր, նայր. նայաք. նայիք. նային.

### Անց. կատարեալ.

Լուացի, լուացեր, լուաց. լուացաք, ցիք, ցին։
Խոստացայ, ցար, ցաւ. խոստացաք, ցայք, ցան.

### Ապառնի.

Լուացից, ասցես, ասցէ. լուասցուք, ասջիք, ասցեն.
Խոստացայց, ասցիս, ասցի. խոստասցուք, ասջիք, ասցին.

### Հրամայական.

Լուա՛, կա՛մ լուասջիր, լուասցես. մի՛ լուանար. լուասցէ. Լուասցո՛ւք. լուացէք. լուասջիք. մի՛ լուանայք. լուասցեն։

Խոստացիր, խոստասջիր. մի՛ խոստանար. խոստասցի. Խոստասցո՛ւք. խոստացէք. խոստացարո՛ւք, խոստասջիք. մի՛ խոստանայք, խոստասցին։

Ստորադասական.

Լուանայցեմ. ցես. ցէ. ցեմք. ցէք. ցեն։
Խոստանայցեմ. ցես. ցէ. ցեմք. ցէք. ցեն։
Աներ. Լուանալ. խոստանալ. նալոյ. լով։
Ընդ. Լուացող. լուացեալ. լուանալոց։
Խոստացող. խոստացեալ. խոստանալոց։

172. Գիտելիք. Բայք այսր լծորդութեան, և մանաւանդ վերջացեալքն 'ի լոկ ամ, սակաւ ուրեք վարին կրաւորական ձայնիւ, և առաւել սահմանականի ներկայն. այլ ձեւանան եական բայիւ, և կամ ներգործականն վարի իբրեւ կրաւորական։ Վասն օրինակի դիցուք զկրաւորականն լուանամին։

Սահ. Լուանիմ, նիս. նի. նիմք. նիք. նին։
Անկ. Լուանայի եւս. և ոչ ընթանէ։
Կատ. Լուացայ, ցար, ցաւ. ցաք, ցայք, ցան։
Ապառ. Լուացայց, լուասցիս, սցի. սցուք. սջիք. լուասցին։
Հրամ. Լուա՛, կամ լուացիր, լուասջիր. լուասցի. լուասցուք. լուասջիք, լուացարուք. լուասցին։
Ստոր. Լուանայցիմ, նայցիս, ցի. ցիմք. ցիք. ցին։
Աներ. Լուանիլ. լուանալոյ. Ընդուն. լուացեալ. լուանալի։

Գնեմք այսուհետեւ զբայս ինչ այսր լծորդութեան, զկրաւորականն նոցա եւս ծանուցանելով։

173. Աներգործականք որպէս Լուանամ։

Աղամ, աղալ. էօյիւթմէք։ աղացի, աղա՛. աղայցեմ։ Կրաւ, աղացեալ լինիմ, աղացայ, աղացիր. աղայցիմ։
Ամամ, Քաղել, Հնձել. պիչմէք։ ամացի, ամա՛. Կրաւ, ամացայ. ամացիր. ամայցիմ։
Բանամ, Բանալ. աչմագ. բացի. բացեր. եբաց. բա՛ց։ Կրաւ. բանիմ. բացայ. բացայց. բացիր. բանայցիմ։
Բառնամ. Վերցնել. գալտըրմագ։ բարձի, բարձեր,

եբարձ, բարձ. բառնայցեմ. բարձից. բար-ձեալ։ Կրաւ. բառնիմ. բարձայ. բառնայցիմ. բարձայց. բարձիր։ Նոյնպէս համբառնամ կամ ամբառնամ, իբրև ներգործական, վեր վերցնել. համբարձի են։ Կրաւ. համբարձայ. ձայց, ձիր։

Նոյնպէս խոնարհի չեզոք նշանակութե՛ն ևս։

Զգամ, դփալ, ելմալ. պալյմաք։ զգացի, ցեր, զգաց. զգացից. զգա՛։ Կրաւ. զգացեալ լինիմ են։

Թանամ, Թրջէլ. քուլթմաք։ թացի. թա՛ց։ Կրաւ. թանամ, կամ թացեալ լինիմ. թացայ. թա-ցայց. թանայցիմ։

Լամ, լալ. աղլամաք։ լացի, ելաց, լա՛ց. լայցեն։ Կրաւ, լացեալ լինիմ են։

Խոկամ, մտմտալ. տուշինմէք։ խոկացի կամ խոկա-ցայ. խոկա՛. խոկայցեմ։ Կրաւ, ոչ լինի։

Կարդամ, կարդալ. օխումաք. կանչէլ, չաղըրմաք։ կար-դացի. կարդա՛։ Կրաւ. սակաւ, կարդացեալ լի-նիմ. կարդացայ։

Հաւատամ, հավտալ. ինանմաք։ հաւատացի. հաւա-տա՛. հաւատայցեմ։ Կրաւ, հաւատացեալ լինիմ, հաւատացայ. հաւատացայց. հաւատայցիմ։

Ողբամ, խեղճ լալ. խինչէնմէք։ ողբացի. ողբա՛։ Կրաւ. ողբացեալ լինիմ։

## Չեզոքական որպէս Լուանամ։

Անամ, խօսք մնէլ. գուլագ էթմէք։ անասցի, անա՛ս. անասցեմ։

Գնամ, երթալ. կիթմէք։ գնացի. գնա՛։

Եռամ, եփ ելլէլ, գայնամաք։ եռացի. եռա՛։

Կամ, կենալ. տուրմաք։ կացի, եկաց. կա՛ց։

Մնամ, մնալ. գալմաք։ մնացի. մնա՛։

Տոկամ, տինմալ. դայանմաք։ տոկացի. տոկա՛։

Ընդ սմին խոնարհի կեամ, ապրիլ. եաշամաք. բայց ունի և զատուբեր կերպ. ի Ներկայ. կեի, կեիր, կեայր. կեաք, կեիք, կեին։ Կատար. կեցի, կեցեր, եկեաց. կեցաք, կեցիք, կեցին։

Ըղձա. կեցից, կեցցես, կեցցէ. կեցցուք, կեց-ջիք, կեցցեն։

Հրամ. կեա՛ց, մի՛ կեար, կեցջի՛ր. կեցէ՛ք, կեց-ջի՛ք, կեցցեն ։

Մաղթ. կեցցեմ կամ կեայցեմ, ցես եւ ։

Ընդուն. կեցօղ, կեցեալ, կելոց ։

## 174. Ներգործականք որոց՝ Խոստանամ ։

Անգիտանամ, չգիտնալ · պիլմէմէք ։ անգիտացայ · ցայց · ցի՛ր ։

Գիտանամ կամ գիտենամ, գիտնալ · պիլմէք, գի-տացայ · ցայց · ցի՛ր, կամ գիտա՛ ։

Գողանամ, գողնալ · չալմաք ։ գողացայ · ցայց · ցի՛ր ։

Զլանամ, չէ՛ ըսել, ուրանալ · ինքեար էթմէք ։ զլացայ · ցայց · ցի՛ր ։

Զղջանամ, փիշման ըլլալ ։ զղջացայ · ցայց · ցի՛ր ։ Կոյ զղջամ · զղջացի · զղջա՛ ։

Խմանամ, խմել · իչմէք ։ խմացայ, ցայց · հր · խմա՛, խմացի՛ր, խմա՛ց ։ կրա · խմանիմ, նիս · եւ · խմա-նայցիմ, ցիս եւ · մնացեալն նման ներգործա-կանին, կամ եականն բայից ։

Հոգամ, հոգ տանիլ · գայըրմաք ։ հոգացայ, ցայց · ցի՛ր · կամ հոգա՛ ։ երբեմն, հոգացի · ցիք ։

Մերկանամ, լանթը հանել · սոյունմաք ։ մերկացայ, ցար, ցաւ, կամ մերկաց · ցայց · ցի՛ր · երբեմն, մեր-կացի, ցիք ։

Մոռանամ, մոռնալ · ունութմաք ։ մոռացայ · ցայց · մոռա՛ կամ մոռացի՛ր ։ կրա · մոռանիմ · մոռա-նայցիմ · կամ մոռացեալ լինիմ, եղէ եւ ։

Յղանամ, ծոյէր ըլլալ · կէպէ օլմաք ։ յղացայ · ցայց · ցի՛ր ։ Այս բայ հասարակ է, որ յղանալ զաղայն, եւ յըղացվիլ ։

Որսամ, ձուկ կամ թռչուն բռնել · աւլամաք ։ որսացայ · ցայց · որսա՛ ։

Ստանամ, ձեռք բերել, ունենալ · էլէ կէթիրմէք · ստա-ցայ · ցայց · ցի՛ր ։ կրա · ստացանիմ, նիս, կամ ստացեալ լինիմ եւ ։

### Չեզոքական որպէս խոստանամ:

*Ամրանամ*, տեղը ամրանալ. սաղլամլանմագ: *ամրացայ. ցայց. ցիր:*

*Արբենամ*, գինովնալ. սարհօշլանմագ: *արբեցայ. ցայց. ցիր:*

*Անձկամ կամ անձկանամ*, բաղձալ. արզուլանմագ: *անձկացայ, ցայց. անձկեա՛:* Այլեւս բաղձամ. *բաղձացայ, ցայց. ցիր, կամ բաղձա՛:*

*Գթամ*, գութ ունենալ. րահմ էթմէք: *գթացայ. ցայց. ցիր, կամ գթա՛:*

*Դառնամ*, դառնալ. դէօնմէք: *դարձայ. ցայց. դա՛րձ կամ դարձիր:*

*Դողամ*, դողալ. թիթրէմէք: *դողացայ կամ ցի. ցայց. դողա՛:*

*Ընթանամ*, վազել. գօշմագ: *ընթացայ. ցայց. ընթա՛ց կամ ընթացիր, կամ ընթա՛ց:*

*Ջանամ*, ջանք ընել. գայրէթ էթմէք: *ջանացայ. ցայց. ջանացիր, կամ ջանա՛:*

*Ցնծամ*, խիստ ուրախանալ. սէվինմէք: *ցնծացայ. ցայց, ցնծա՛:*

*Փութամ*, արտորալ. աճէլէ էթմէք: *փութացայ. ցայց. ցիր, կամ փութա՛:*

---

### Արտաքոյ բայք երկրորդ լծորդութեան:

### 175. Ներգործական ՏԱՄ:

Սահ. Տամ, *տաս, տայ. տամք, տայք, տան:*
Տայի, *տայիր, տայր. տայաք, տայիք, տային:*

Կատ. Ետու, *ետուր, ետ. տուաք, ետուք, ետուն:*

Ըղձա. Տաց, *տացես, տացէ. տացուք, տաջիք, տացեն:*

Հրամ. Տո՛ւր *կամ տաջի՛ր, տացես, մի՛ տար, տացէ:*

տացուք, տուք կամ տաջիք, մի տայք, տա-
ցեն:

Ստոր. Տայցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն:
Աներ. Տալ. լոյ, լով: Ընդուն. տուող, տուեալ,
տալոց:

Սորա կրաւորականն, Տուեալ լինիմ է: Տուայ, ար, աւ. տուաք, այք, ան: Տուայց, տացիս, ցի: Տայցիմ, ցիս: Տուեալ կամ տուեցեալ. (ոչ գործածեալ) տալի:

### 176. Անկանոնէ բայն ԳԱԼ.

Սահ. Գամ, գաս, գայ. գամք, գայք, գան:
Գայի, գայիր, գայր. գայաք, գայիք, գային:
Կատ. Եկի, եկիր, եկն. եկաք, եկիք, եկին:
Ապա. Եկից, եկեսցես, եկեսցէ.
եկեսցուք, եկեսջիք, եկեսցեն:
Հրամ. Եկ՛, եկեսջի՛ր, մի գար, եկեսցէ.
եկա՛յք, եկեսջի՛ք, մի գայք, եկեսցեն:
Ստոր. Գայցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն:
Աներ. Գալ. լոյ, լով: Ընդուն. եկեալ, գալոց:

### 177. Այլ անկանոնէ բայն ՅԱՌՆԵԼ.

Սորա սահմանականն ունի զկերպ առաջին լծորդութեն, բայց այլ ժամանակքն նման են երկրորդ լծորդութե:

Կատ. Յարեայ, եար, եաւ. եաք, եայք, եան:
Ապա. Յարեայց, յարիցես, ցէ. յարիցուք, յարիջիք, րիցեն:
Հրա. Արի, յարիջի՛ր, կամ յառնիջի՛ր, մի յառնէր, յարիցէ:
յարիցուք, արի՛ք, կամ յարերուք, յարիջի՛ք, յառնիջի՛ք, մի յառնէք, յարիցեն:
Ստոր. Յարիցեմ կամ յառնիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն:
Աներ. Յառնել. նելոյ: Ընդուն. յարուցեալ, յառնելոց:

### Պակասաւոր բայք երկրորդ լծորդութեան։

178. Համարինք պակասաւոր բայս այսր լծորդութեան նաեւ զայն բայս՝ որոց սահմանական ներկայն կատարի յառաջին լծորդութեան. եւ մնացեալ ժամանակքն խոնարհին ըստ երկրորդ լծորդութեան։

Այսպիսի է Ծանեայ, սահմանականն՝ ճանաչեմ. Լուայ, սահմանականն՝ լսեմ. Մեղայ, սահմանականն՝ մեղանչեմ։

### 179. Ներգործական, ԾԱՆԵԱՅ.

Կատ. Ծանեայ, եար, եաւ. ծանեաք, եայք, ծանեան։

Ըղձ. Ծանեայց, նիցես, ցէ. ծանիցուք, նիջիք, նիցեն։

Հրամ. Ծանիր, ծանիջիր, նիցես, մի՛ ճանաչեր, ծանիցէ։
ծանիցո՛ւք, ծանի՛ք կամ ծանեարո՛ւք, ծանիջի՛ք, ծանիցեն։

Ստոր. Ծանիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն։

Ընդուն. Ծանուցեալ. (սակաւ ծանեալ.)

Մնացեալ ժամանակքն՝ ՚ի ճանաչեմէն, նմանապէս զկրաւորականն անտի առնու, կամ յանցողականէն՝ ծանուցանիմ, ծանուցայ, ցայց եւն. կամ էական բայիւ, ծանուցեալ լինիմ եւն։ Միայն ստորադասականն լինի, ծանիցիմ, ցիս եւն։

### 180. Ներգործական, ԼՈՒԱՅ.

Կատ. Լուայ, լուար, լուաւ. լուաք, լուայք, լուան։

Ըղձ. Լուայց, լուիցես, իցէ. լուիցուք, իջիք, իցեն։

Հրամ. Լո՛ւր, լուիջի՛ր, լուիցես, մի՛ լսեր, լուիցէ. լուիցո՛ւք, լուարո՛ւք, լուիջի՛ք, մի՛ լսէք, լուիցեն։

Ստոր. Լուիցեմ կամ լսիցեմ, ցես, ցէ եւն։

Ընդուն. Լուեալ. լսելոյ ։

Կրաւորականն, լսիմ. լսեցիմ կամ լուայիմ. լսիլ, լսեցեալ, լսելի ։ Մնացեալ ժամանակքն եղական բայիւ, լուեալ կամ լսելի եղէ. լուր կամ լու եղիւ. լո՛ւր լեր, լսելի՛ լիցի եւն ։

### 181. Զեղչական, ՄԵՂԱՆՉ.

Կատ. Մեղայ, մեղար, մեղաւ. մեղաք, մեղայք, մեղան ։

Ապ. Մեղայց, մեղիցես, ցէ. մեղիցուք, ղիջիք, ղիցեն ։

Հրամ. Մեղի՛ր, մեղիջի՛ր, մեղիցես, մի՛ մեղանչեր. մեղիցէ՛.
մեղիցո՛ւք, մեղի՛ք կամ մեղարո՛ւք, մեղիջի՛ք, մի՛ մեղանչէք, մեղիցե՛ն ։

Ստոր. Մեղիցեմ, ցես, ցէ. ցեմք եւն ։

Ընդուն. Մեղուցեալ, մեղանչելոյ ։

### 182. Այլ պակասաւորք են, Երթամ, Չոգայ ։

Սահ. Երթամ, երթաս, երթայ. երթամք, թայք, թան ։
Երթայի, թայիր, թայր. երթայաք, թայիք, թային ։

Կատ. Չոգայ կամ չողայ, գար, գաւ. չոգաք, գայք, չոգան ։

Ապ. Երթայց, թիցես, ցէ. երթիցուք, թիցէք, թիցեն ։

Հրամ. Երթ, երթիջի՛ր, երթիցես, մի՛ երթար, երթիցէ՛.
երթիցո՛ւք, երթա՛յք, երթիջի՛ք, մի՛ երթայք, երթիցե՛ն ։

Ստոր. Երթայցեմ կամ երթիցեմ, ցես, ցէ եւն ։

Ներ. Երթալ ։ Ընդուն. երթող, երթեալ, երթալոյ ։

# ՅՕԴՈՒԱԾ Գ.

## Ի վերայ Երրորդ Լծորդութեան.

183. Ծանուցանել մնայ զխոնարհումն բայից երրորդ լծորդութեան, որք վերջանան 'ի ուլ. և այս դարձեալ ունի զկրկին կերպ. զի միոյն կատարեալն և ապառնին աւարտի է, էց. և միւսոյն՝ այ, այց. Զերկուսն միանգամայն ցուցանեմք 'ի վերայ ներգործականացս, Հեղում, թափել. տէօքմէք, և Ընթեռնում, կարդալ. օգումաք.

### Սահմանական ներկայ.

Հեղում, հեղուս, հեղու. հեղումք, հեղոյք, հեղուն.
Ընթեռնում, նուս, նու. ընթեռնումք, նոյք, նուն.

### Անց. անկատար.

Հեղուի, հեղուիր. հեղոյր. հեղուաք, ղուիք, ղուին.
Ընթեռնուի, նուիր, նոյր. ընթեռնուաք, նուիք, նուին.

### Անց. կատարեալ.

Հեղի, հեղեր, եհեղ կամ հեղ. հեղաք, հեղիք, հեղին.
Ընթերցայ, ցար, ցաւ. ընթերցաք, ցայք, ցան.

### Ապառնի.

Հեղից, հեղցես, հեղցէ. հեղցուք, հեղջիք, հեղցեն.
Ընթերցայց, թերցցիս, ցի. ընթերցցուք, թերցջիք, ցին.

### Հրամայական.

Հեղ, կամ հեղջիր, հեղցես, մի հեղուր, հեղցէ.
հեղցուք, հեղէք կամ հեղջիք. մի հեղուք, հեղցեն.
Ընթերցիր, կամ ընթերցջիր, ընթերցցիս, մի ընթեռնուր,
ընթերցցի. ընթերցցուք, ընթերցէք կամ ընթերցարուք,
ընթերցջիք, մի ընթեռնուք, ընթերցցին.

### Ստորադասական.

Հեղուցում, ցուս, ցու. ցումք, ցուք, ցուն.
Ընթեռնուցում, ցուս, ցու. ցումք, ցուք, ցուն.

Աներ· Հեղուլ, լոյ · Ընթեռնուլ, նլոյ ·
Ընդ· Հեղող, հեղեալ, հեղլոյ: Ընթերցող, ընթերցեալ, ընթեռնլոյ :

Աոցա կրաւորականն սակաւ ուրեք վարի : Ընթեռնումն ոչ լինի՝ ընթեռնանիմ, ընթեռնանեցայ եւ այլն. այլ եղական բայիւ, ընթերցեալ լինիմ, եղեւ, եւ այլն : Գոյ ընթերցանեմ, որ ունի յատուկ ներգործական, և նորա ընդունելութիւն՝ ընթերցանել, նշանակէ՝ ընթերցող, կարդացող :

Իսկ հեղումն սակաւ ունի զկրաւորականն նման հանեմին · որպէս ·

Սահ· Հեղանիմ · նիս եւ այլն : Հեղանէի, նէիր եւ այլն :
Կատ· Հեղայ, ղար, ղաւ · Հեղաք, ղայք, ղան :
Ապառ· Հեղայց, ցիս, ցի, Հեղցուք, ջիք, ցին :
Հրամ· Հեղիր, Հեղցիս, ցի · Հեղարուք, Հեղ ջիք, Հեղցին :
Ստոր· Հեղանիցիմ, ցիս եւ այլն :
Ընդուն· Հեղեալ, Հեղլի :

---

184. Բայքն ըստ առաջին օրինակին՝ բազումք ներգործական են կամ հասարակ · և ոմանք եւս խոտորին :

Առաւելում · աւելցնել, շատցնել · արդըրմագ : առաւելլի · առաւելլից · առաւել կամ առաւելցես : Կրա· առաւելայ, լայց, առաւելլիր · որ յաւէտ իբրեւ չէզոք վարի :

Առնում · առնել · ալմագ : առի, առեր, եառ կամ առ · ա՛ռ : Կրա· առայ, ար · աւ · առայց · ցիս · ցի : Եւ լինի, առնանեմ, առեցեալ, կամ հրամ, առէր :

Արգելում · արգիլել · մանի օլմագ : արգելլի, լեր · արգել : Կրա· արգելայ, արգելայց, արգելլիր :

Գելում · ճմլել · սըխմել : գելլի · գել :

Գիզում · դիզել · եըղմագ : դիզի, եդեզ, դիզեա՛ :

Զեղում · ջէշընէլ · բօշալդմագ : զեղլի · զեղ : Կրա· զեղայ · զեղայց :

Զենում · մորթել · բօղազլամագ : զենի · եզեն , կա

զե՛ն. զե՛ն: Կրաւ. զենանիմ. զենայ. զենայց. զենի՛ր:

Ընկենում. ձգել, նետել. պրոյիցեր, յաջեր: ընկեցի, ցեր, ընկեց կամ ընկեաց. ընկեցի՛ց. ընկեա՛: Կրաւ. ընկեցայ. ցայց. ընկեցի՛ր. բայց ոչ ընկենանիմ:

Թողում. թող տալ. ֆօյ վերդէ. թողի, եթող կամ թող. թո՛ղ: Կրաւ. թողանիմ (սակաւ,) թողայ. թողայց. թողանիցիմ:

Լնում. լցնել. լցուցանել: լցի, ելից կամ լից. լի՛ց: Կրաւ. լնանիմ (սակաւ.) լցայ. լցայց. լնանիցիմ:

Խնում. խցել. խցփակել: խցի, եխից կամ խից. խի՛ց: Կրաւ. խցանիմ. խցայ:

Կասում. յորէն կասել. հարկանել: կասի, կասեաց. կա՛ս:

Յաւելում. աւելցնել. փոխել. յաւելի, յաւել. յաւե՛լ: Կրաւ. յաւելայ. լայց. յաւելի՛ր:

185. Դիտողութիւն ա. Յայսց բայից ոմանք վերջանան 'ի եմ, իբր արգելեմ, առաւելեմ, գիղեմ. և խոնարհին որպէս շարժեմ: Իսկ ոմանք ևս վերջանան 'ի անեմ. իբր գիղանեմ, խցանեմ, կիզանեմ, և սոցա անկատարքն և ստորադասականքն լինին որպէս հանեմին:

186. Դիտողութիւն բ. Կրաւորականի սահմանականին վերջաւորութիւն 'ի անիմ, յատուկ է այնց բայից՝ որք խոնարհին ընդ հանեմիւ. իսկ այլոց չորրորդութեանց բայք սակաւ ուրեք լինին այսպէս կրաւորական. այլ կամ ներգործականն վարի կրաւորական նշանակութեամբ, և կամ ձևանայ չէզոք բայիւ: Ոմանք կրաւորակերպ վերջ համարեցան՝ ուլիմ, դնելով առնուլիմ, արգելուլիմ, ընուլիմ, խնուլիմ. բայց աշխարհօրէն է այս, և 'ի գիրս զգուշալի:

187. Որք բայք նման ընթեռնումին, որոց բաղդատ չէզոք են:

Զգենում. հագնիլ. զգենուլ: զգեցայ, ցայց: Կրաւ. զգեցեալ լինիմ:

Հատնում . սպառ գործել . թօգէնմաք : Հատեայ . Հատ :
Սկսնում . պաշլայել . սկսայ . սկսիր :
Այտնում . ուռենալ . շիշմէք : այտեայ . այտիր . այտուցեալ :
Երդնում . երդում ընել . եէմին էթմէք : երդուայ . երդուայց . երդուիր . երդնուցում . երդուեալ :
Զարթնում . արթննալ . օյանմաք : զարթեայ . զարթիր . զարթուցեալ :
Զրօսնում . սէֆալանմաք : զրօսայ . զրօսիր . զրօսնուցում . զրօսեալ :
Հեծնում . հեծնիլ . պինմէք : հեծայ . հեծիր . հեծեալ :
Յենում . կռթնիլ . տայանմաք : յեցայ . յեցիր . յենուցում . յեցեալ :
Սառնում . ձեր ցամքել . ուշիւրմաք : սառեայ . սառիր . սառնուցում . սառուցեալ :
Պակնում . խիստ վախնալ . չօխ գօրգմաք : պակեայ . պակիր . պակնուցում . պակուցեալ :
Ցասնում . սրդողիլ . էօֆքէլէնմէք : ցասեայ . ցասիր . ցասուցեալ :
Քաղցնում . անօթենալ . գառնը աճըմաք . քաղցեայ . քաղցիր . քաղցեալ :

---

# ՅՕԴՈՒԱԾ Ժ.

## Ի վերայ Դիմաւորի Բայի :

188. Դիմազուրկ կամ անդէմ բայ՝ եթէ յատկապէս խօսել կամիցիմք, միայն աներևոյթ եղանակին և ընդունելութեան պատշաճի. վասն զի սոքա միայն ոչ ցուցանեն դէմս. այլ մին նշանակէ զառնելն և կամ զլինելն, և միւսն՝ զեղեալն կամ զլինելոցն :

Սակայն որոց քերթողքն ընդարձակ խօսելով, դիմաւորէ համարին զայն բայս՝ որք սովորաբար վարին յերրորդ դէմս միայն՝ եզակի և յոքնակի : Այսպիսի բայ ոչ գոյ տիրապէս ’ի լեզուի մերում. այլ յարմարելով ևեթ ասեմք երբեմն օրինակաւ . ցր

գիմազուրկ ըստ նշանակութեան, ըստ ստորոգութեան, և ըստ ձայնութեան։

---

## Գործառորք ըստ նշանակութեան։

189. Այն բայք՝ որք նշանակեն զգործս կամ զկիրս անզգայ և անբան իրաց, տիրապէս խօսելով ոչ վարին յառաջին և յերկրորդ դէմս. զի որովհետև ոչ են գործք կամ կիրք մարդկային, ոչ յարմարի թէ մարդ ոք յիւր դէմս ասիցէ զայնպիսիս, կամ ՚ի դէմս այլոյ՝ որում խօսի. այլ միայն զերրորդէ հնար է ասել։ Այս ահա այսպիսի են բայքն՝ որք նշանակեն զգործս կամ զկրուածս բնական պատճառաց, տարերաց, տնկոց, անասնոց ևն։ զ͞ր

Ամպէ, անձրևէ, ցօղէ, հեղեղատէ, ձիւնէ, ճառագայթէ, առաւօտէ, մրրկէ, փայլատակէ, պտղաբերէ, մռնչէ, կաղկանձէ, բառաչէ ևն, որք խոնարհին որպէս շարժեմն։ Կամ, այգանայ, առաւօտանայ, երեկոյանայ, լուսանայ, խաւարանայ, հրանայ, որոտայ, խմիջայ, ևն, որք խոնարհին որպէս խոստանամ։

Այսպիսի բայք՝ յորժամ ըստ յատուկ նշանակութեան իւրեանց առեալ լինին, վարին միայն յերրորդ դէմս ըստ ամենայն եղանակի և ժամանակի՝ յեզականն և յոգնականն. զ͞ր Ամպք անձրևեն, ամպերը անձրև կընեն։ Գետք հեղեղատեցին, գետերը կոխեցին։ Աստեղք ճառագայթեցին. աստղերը կըփայլէին։ Արեգակն խաւարանայր, արևը կըխաւարէր։ Առիւծ մռնչեաց. թէ որ առիւծը մռնչայ, կանչէ։

Սակայն այսպիսի բայք երբեմն նմանութ͞ ինչ ասին ՚ի վերայ բանականի, և ի͞ մարդկային գործոց, և կամ խօսելով առ արարիչ պատճառ նոցա. և յայնժամ կարեն վարիլ նաև յառաջին և յերկրորդ դէմս. զ͞ր. Ամպեմ և ոչ անձրևեմ։ Որպէս աղաւնի մնչեցի։ Որոտաս Տէր յերկնից, ևն։

### Դիմազուրկ ըստ սովորութեան:

190. Գոն բայք ինչ կրաւորական և չէզոք, որք ՚ի սովորութենէ յերրորդ դէմս ՚ի գործ ածին, թէպէտ հայելով ՚ի նշանակութիւն նոցա՝ կարեն ունել զերիս դէմսն ևս:

Այսպիսի են՝ ասի, երևի, կարծի, լսի, հասանէ կամ հասանի, պատահէ, հանդիպի, պիտի, ցաւէ կամ ցաւի ևն: Խոնարհումն սոցա լինի ըստ առաջին լծորդութեն:

---

### Դիմազուրկ ըստ կազմութեն:

191. Զայն ասեմք դիմազուրկ ըստ կազմութեն, որ ձևացեալ է անուամբ ինչ և եական բայի երրորդ դիմաւն, և վարի իբրև մի բայ յեզականն և ՚ի յոգնականն:

Այսպիսի է, անկ է, արժան է, անհնար է, բաւական է, կամ է, կամք են, հարկ է, մարթ է, վայել է, պէտք են, օրէն է, օրէնք են, փոյթ է, օգուտ է, ՚ի դէպ է, և այլն:

Այսպիսի դիմազուրկք ՚ի մէջ շարադրութեան պահանջեն՝ զի գտանիցի դերանուն մի ՚ի տրական հոլով, և աներևոյթ բայ մի. որ. Կամ եղև և ինձ կարգաւ գրել քեզ. ուր տեսանի տրականն՝ ինձ, և աներևոյթն՝ գրել:

---

## ՅՕԴՈՒԱԾ Զ.

### Հանրական ծանօթութիւնք ՚ի վերայ բայից:

192. Աւանդեցաք կարգաւ ցայսվայր յաղագս սեռից և լծորդութեանց բայից, որչափ պիտոյ էր աշակերտին ՚ի միտ առնուլ սերտողաբար. և մնայ տալ համառօտ տեղեկութիւն ինչ ՚ի վերայ այլևս պարագայից բային, և թէ ՚ի կիրառութեան նորա զինչ այլ գիտելի կայցէ:

Նախ. ներգործականք վերջացեալք 'ի եմ, ունին անխափան զկրաւորական իւրեանց 'ի իմ. որպէս տեսաւ յառաջին լծորդութեան: (156.) Գոյ միայն տարբերութիւն ինչ յանցողական բայսն. զի վերջացեալն 'ի լոկ ուցանեմ, ունի և զիւր կրաւորականն ըստ ամենայն ժամանակի. օր. մատուցանեմ, լինի և կրաւ. մատուցանիմ, մատուցայ, ցայց, մատուցանիցիմ: Կորուսանեմ, կրաւ. կորուսանիմ, կորուսայ, կորուսանիցիմ. ևն:

Բայց որք վերջանան 'ի եցուցանեմ, ացուցանեմ, օր. Ապրեցուցանեմ, Օրացուցանեմ, ոչ այնչափ վարին դիմաւոր ժամանակաւ 'ի կրաւորականն. և ոչ ասի՝ ապրեցուցայ, ապրեցուցայց, շիջացուցայ ևն, այլ նոցա չէզոքն գնի, ապրեցայ, շիջայ:

Իսկ ներգործականք վերջացեալք 'ի ամ, ում, սակաւ ուրեք ախորժեն ունել զկրաւորական՝ իմ. որպէս յիւրում տեղւոջ ծանուցաք. (112. 184.) այլ ըստ սովորութեան նախնի լեզուագիտացն, մանաւանդ յԱծաշունչ գրուածս, այսպիսի բայք իբրև հասարակ վարին 'ի սահմանական ներկայն, յանկատարն և 'ի կատարեալն, միով ձայնիւ պահելով զներգործական և զկրաւորական նշանակութիւն. օր. Ծով ոչ լնու, նշանակէ՝ ոչ լցեալ լինի, չլեցվիր: Թանան ճանապարհք իմ, նշանակէ՝ թացեալ լինելն, կրթրջելն: Սառումն նորա յայտնի իմացաւ. օր. իմացեալ եղև, իմացվեցաւ:

193. Երկրորդ. կրաւորականք չէզոքն վերջացեալ 'ի իմ, առ նախնիս բազում ուրեք վերջանայ եմ, և աներևոյթն՝ էլ. օր. փոխանակ՝ բնակիմ, դադարիմ, պատկառիմ, գնեն՝ բնակեմ, դադարեմ, պատկառեմ. և յայնժամ լինելով ներգործականք չէզոք, խոնարհին որպէս շարժեմ: (տես 159.)

Յայսմ պատճառէ՝ երբեմն այսպէս եմ վերջացեալն առնու զնշանակութիւն անցողականի. որպէս աշխատեմ, նշանակէ՝ աշխատեցուցանեմ. հնազանդեմ, հնազանդեցուցանեմ:

194. Երրորդ. Բոլոր կրաւորական բայն երբեմն իբրև հասարակ բայ ունի զներգործական նշանակութիւն. որ յայտնի ճանաչի 'ի մերձաւոր հայցական

ամուսանէն ․ որպէս արկաւ հանդերձ ․ արկար զլոյս ․ և խմանի՝ եարկ, արկեր ։ (160․) Նոյնպէս, ճօճանեցան զաւար ․ փոխանակ՝ բաժանեցին ։ Լուացոյց զձեռս իմ ․ փոխանակ՝ լուացից ։ Եդաւ զթագ․ փոխանակ՝ եդ ։ Գտոյց զփրկութիւն, փոխանակ՝ գտից ։

195․ Չորրորդ ․ Ասացեալ եմք յառաջ թէ կրաւորականքն ձևանան ևս եական բայիւ ․ այլ վասն այսր գոն ինչ ինչ գիտելի ։ Այն զի նաև չեզոք բայն ձևանայ երբեմն եականաւ, պահելով զչեզոք նշանակութիւն ․ որպէս փոխանակ ասելոյ՝ ելայ, անկայ, գայցեն, ասի՝ ելեալ եմ, անկեալ եմ, եկեալ լիցին ․ Նոյնպէս՝ սաստկացեալ լինէր, որ սաստկանայր ․ լինի թագաւորեալ, որ թագաւորէ ․ նմանեալ լիցին ․ որ նմանիցին ։

Այլ ևս գիտելի, զի ներգործական բայն ձևանալով եական բայիւ, պահէ երբեմն զներգործական նշանակութիւն, առնելով զհայցական անուն ․ որպէս ․ Զոր խուրովք աչօք տեսեալ լինէր ․ որ զոր տեսանէր ։ Զձի գուշակեալ լինի ․ որ գուշակէ, ճանուցանէ ։ Նոյն զգեցեալ զքս ․ որ զգեցան զքս ։ Ընկալեալ լինին պատուհաս, որ ընդունին ։

196․ Այլ 'ի բարւոք և ուղիղ իմանալոյ զկիրառութիւն նախնեաց՝ պարտ է գիտել, զի զժամանակս կամ զեղանակս բայից 'ի գործ ածեն երբեմն փոխանակ միմեանց ․ որպէս ․ զսոյն հրամայականն՝ գործեցէք, առացէք, արարէք, հասուցէք, պատմեցէք, եւ, գնեն փոխանակ կատարելոյ՝ գործեցէք, առացէք եւ ։ Նմանապէս ասեն՝ մնացարուք, դարձարուք, երկերուք, լուացարուք, օրհնեցարուք, արդարացարուք, յարերուք, որք են հրամայական, փոխանակ՝ մնացայք, դարձայք, երկեայք, լուացայք, օրհնեցայք, արդարացայք, յարեայք ։

Հակառակ այսմ, զսահմանականի ներկայն և զկատարեալն գնեն փոխանակ հրամայականի ․ որ լսէք, ասէք, խնդրէք, իմացեալ լինի՝ լուարուք, ասացէք, խնդրեցէք ։ Նմանապէս բարկանայք, կալայք, որոշեայք, հնազանդեցայք, զգաստացայք, իմանի՝ բարկացիք, կալէք, որոշեցարուք, հնազանդեցարուք, զգաստացարուք ։

197․ Յայսպիսի սովորութենէ՝ յորժամ փոխանակ հրամայականի գնի բայն, սովորութիւն է շեշտ դնել

տու որոշելոյ 'ի կատարելոյն ։ Սակայն յայժմու կիրառութեան լաւ ես է ոչ վարել զայն ազատութիւն, զի մի շփոթումն լինի ընթերցողին ։ Բայց որպէս և տեսանես, զհրամայական և զսահմանական փոխան միմեանց 'ի յոգնականն միայն վարեն Նախնիք. իսկ յեզականն չիք սովորութի, այլ սակաւ ուրեք զսահմանականի երրորդ դէմն դնեն իբր հրամայական՝ նման աշխարհաբարին, որպէս շարժէ, խնամատուրէ. նմանապէս փոխանակ ասելոյ՝ մի պատմեր, մի հաւատար, դնեն յերկրորդ դէմն, մի պատմէս, մի հաւատաս ։

## 'Ի վերայ Աներևոյթ եղանակի ։

198. 'Ի կարգի լծորդութեանն եդաք զԱներևոյթ եղանակն իւրաքանչիւրոց, որ և ձևանայ փոխելով զՄ սահմանականին 'ի Լ. միայն թէ առ բայսն վերջացեալս ԻՄ, ես և կրաւորականն՝ փոխանակ դնելոյ ԻԼ, Նախնիքն սովորաբար դնեն ԵԼ. բայց եթէ տեղին պահանջիցէ յայտ առնել զկրաւորական նշանակութիւն՝ և զատանել 'ի ներգործականէն, յայնժամ դնեն ԻԼ. որպէս Թշնամանել և Թշնամանիլ. անպատուել և անպատուիլ. հարկանել և հարկանիլ. բամբասել և բամբասիլ ։ Սակայն այսպիսին 'ի հոլովելն՝ ԵԼ դնի. և ոչ երբեք լինի ասել, Թշնամանիլոյ, հարկանիլոյ, բամբասիլով, այլ՝ Թշնամանելոյ, և այլն ։

Աներևոյթ ասացաւ այս եղանակ, որ անորոշ, վասն զի ինքնին նշանակէ միայն զներգործութիւն ինչ կամ զկիրս՝ առանց որոշելոյ զդէմ, զժամանակ և զթիւ ։ Նշանակութիւն նորա իբրև բայի է, բայց ոչ ունելով զխոնարհումն, հոլովի իբրև անուն յեզականն միայն (տե՛ս Գ. հոլով. 15.) որպէս և յիւրաքանչիւր լծորդութիւս եդաք. որպէս շարժել, շարժելոյ, շարժելով ։ լուանալ, լուանալոյ, լով ։ հեղուլ, հեղլոյ հեղլով, և ոչ հեղուլոյ ։

199. Հոլովեալն աներևութին՝ կոչի Դերբայ, որ փոխանակ բայի. վասն զի բազում անգամ ունի

զբայի զօրութի՛ն , այլև զժամանակ ինչ կամ զդէմս ակնարկէ զօրութի՛բ մերձաւոր բառին ․ որ․ յասելն , 'ի տեսանել իմ , նշանակէ՝ յորժամ տեսանեմ կամ տեսի ։ Տեսեալ նորա զայս , իմանի , յորժամ ասացին նորա ։

Նմանապէս առանց հոլովելոյ իսկ՝ երբ ասեմք , Հրամայեաց նոցա լուծել , իմացեալ լինի , հրամայեաց նոցա զի լուծցեն , ուր նշանակէ իբր ստորադասական երրորդ դէմ յոգնական ։ Դարձեալ , մի՛ օտարոտի համարել զեղ ․ ուր իբր հրամայական յոգնակի նշանակէ՝ մի՛ համարիցիք ։

200․ Յորժամ աներևոյթն ունի այսպէս զօրութի՛ն սահմանականի կամ ստորադասականի , կամ եդեալ է ընդ դիմաւոր բայի , որպէս Կարել կայցեմ , տալեաց , յայնժամ միշտ ունի զպաշտօն բայի ։ Իսկ յորժամ դիմորոշ յօդիւ կայ , կամ ունիցի առ իւր զածական անուն , կամ լինիցի տեղ այլում բայի , յայնժամ վարի իբրև անուն ․ որ․ * Տեսեալ ամենեցուն՝ խնայել դու յամենայն ․ || ուր տեսեալ դիմորոշ յօդիւ իբրև անուն նշանակէ , իբրև թէ տեսութի՛դ , իշխանութի՛դ ․ իսկ խնայել իբրև ստորադասական նշանակէ , զի խնայիցես ։ ( տե՛ս և 415 ։ )

---

## Ի վերայ Ընդունելութեան ։

201․ Ի խոնարհմունս իւրաքանչիւր բայից ծանուցաք զնոցա ընդունելութի՛ւնս․ զոր քերթօղք համարեցան իբրև առանձին մասն բանի ․ և ստանօր դիցուք զյատուկ զխօսելիս նորա ։

Ընդունելութի՛ւն ասացաւ , իբրև թէ հաղորդակցութի՛ն , կամ առնուլ ինչ յայլմէ ։ Վասն զի ձևանայ 'ի բայէն , և նման բայի ցուցանէ զժամանակ ինչ առանց դիմաց ։ Նա և իբրև անուն՝ հոլովի եզակի և յոգնակի ․ որով հաղորդեալ բայի և անուան , յերկուցն ևս ընդունի զպարագայս ինչ կամ զյատկութիւնս ։

202․ Ի կողմանէ ժամանակին՝ յերիս բաժանին ․ որ․ Ներկայ , Անցեալ , Ապառնի ։

Ներկայ ընդունելութիւն ասացին յետին քերթողք զայն՝ որ վերջանայ ՚ի ող կամ օղ. որպէս շարժող, տեսող, տարող, ասող։ Սակայն լաւ ևս քննելով, ընտրելի է համարել ածանցական անուն՝ ձևացեալ ող մասնիկաւ, (98) հոլովելի ըստ ե հոլովմ. (13) որպէս. շարժողի, ղաւ, ղաց։

Այս ող մասնիկ ոչ յարի յամենայն բայս։ Նախկան բայից՝ միայն գոլն լինի գոյող, և լինելն սակաւ ուրեք լինող։ Չեզոքաց վերջացելոց ՚ի ում, եմ, ամ, այլև կրաւորական բայից ոչ լինի։

203. Անցեալ ընդունելութիւն վերջանայ ՚ի եալ, որպէս, շարժեալ, տեսեալ և այլն։ (տես 153.) Կազմի սա յամենայն բայից. և ուր առանց հոլովելոյ ունի առ իւր զտէր բայի յայտնապէս կամ լռելեայն, անդ իբրև բայ վարի. որպէս * Եւ տեսեալ Յս զհաւատս նոցա. ‖ ուր Յս է տէր բային տեսեալ։ Դարձեալ. * Հայեցեալ ընդ իս զարմանայք. ‖ աստ տէր բային լռելեայն կայ. որպէս դուք հայեցեալ։

Իսկ յորժամ անցեալ ընդունելութիւնն՝ հոլովեալ է, կամ թէ ունի առ իւր զգոյական անուն, յայնժամ իբրև անուն վարի. որպէս բանն տեսեալ, բանից տեսելոց, բանս տեսեալս, և այլն։ Որ և տեսանի՝ զի հոլովումն իւր լինի (ըստ 15.) որպէս շարժեալ, ժելոյ, ժելում, ժելով, ժեալք, ժելոց և այլն։ Իսկ ՚ի յոգնակի նախդրիւ հոլովմն բազում անգամ պահի ե դիրն. (ըստ 113) մանաւանդ յորժամ ունիցին ս դիմորոշ. որպէս. ընթացեալս մեզք. ՚ի գործեալս, ՚ի խօսեցեալս։

Բազում ուրեք անցեալ ընդունելութիւնն՝ իբրև ներգործակերպ ունի զնշանակութիւն ողի, և փոխանակ նորա դնի՝ նաև յայն բայսն որք արդէն ունին ող ընդունելութիւն. ուստի փոխանակ ասելոյ՝ գողող, ծառայող, խոստովանող, շահեցող, դնի՝ գողեալ, ծառայեալ, խոստովանեալ, շահեցեալ։ Ըստ այսմ նշանակութեան սովորաբար հոլովեալ դնի։

204. Ապառնի ընդունելութիւն է վերջացեալն ՚ի լոց, լի, որպէս. շարժելոց, շարժելի, տեսելոց, տեսելի։ Սոյնն յարի յամենայն բայս, և ունի զնշանակութիւն թէ ներգործական, թէ կրաւորական, և թէ չեզոք. որպէս

ըւրծելոց՝ նշանակէ, նա որ ունի շարժել, նա որ ունի շարժիլ ։ Եւ սա նախդրիւ միայն հոլովի, 'ի շարժելոյն, զշարժելոյն, շարժելոցն, զշարժելոցն ։

Իսկ վերջացեալն 'ի լի՝ յարի 'ի կրաւորական եւ 'ի չէզոք բայս . եւ հոլովի (է̃ջ 29) շարժելի, շարժելւոյ, ժելեաւ . ժելիք, ժելեաց ։ Այսպէս ըստ նշանակութեան՝ առ նախնիս յաճախ դնի ըստ մնացողի, մանաւանդ յօրինականն . որ ընթերցանելիք, իմանի՝ ընթերցողք . բերելիք, բերողք . գուշակելիք, գուշակողք . լսելիք, լսողք . առնելիք, առնողք . գործելիք, գործողք . կոչելի, կոչող . ստանալի, ստացող . տալի, տուող ե̃ւն ։

205. Անցեալ եւ ապառնի ընդունելութիւնք ընկերացեալք ընդ ժամանակս էական բային, ցուցանեն զայլ եւ այլ ժամանակ . որպէս ծանուցաք ։ ( 155. ) Եւ գիտելի է, զի էական բային կարէ դնիլ յետ եւ յառաջ, եւ բազում ընդունելութեանց 'ի միում բանի գոլոց՝ բաւական լինի մի էական ։ որ տեսեալ եմ, էի, իցեմ, կամ, եմ տեսեալ, էր տեսեալ, իցէ տեսեալ . գործելոց եմ, իցէք, լսելոց էք ե̃ւն ։

Այսպէս ասի . * Որդի իմ զքեզ սպանեալ էր, եւ զդա ապրեցուցեալ . ուր առաջնոյն էրն՝ իմացեալ լինի եւ երկրորդին . փոխանակ ասելոյ, այժմ զքեզ սպանեալ էի, եւ զդա ապրեցուցեալ էի ։ Դարձեալ օրինակ . * Որ սպանեալ եւ ապրեցուցեալ եւ խնայեալ էր . ‖ Աստ մի էրն բաւական եղեւ երից ընդունելութեանց ։ Դարձեալ . * Դուք իջանելոց էր ա̃ծողդին . ‖ Աստ եւս երկուց ապառնեաց մի էր բաւեաց ։

206. Ընդունելութիւն լի՝ ունի եւ զայս կիրառութիւն, զի բազում անգամ միայնակ ընդ էական բայի եդեալ, տայ զզօրութիւն դիմազուրկ բայի ըստ կողմանց ։ ( 191 ) Աստի փոխանակ ասելոյ՝ պարտ է խնդրել, արժան է դառնալ, ասի, խնդրելի է, կի̃ր պահանջելի է, դառնալի է, արժանելի է ։ Այսպէս ասի . * Այս է մեզ առնելի, եւ յաւէտ գործելի, ‖ ա̃յ զայս արժան է մեզ ասել, եւ միշտ արժան է գործել ։

Ան եւ այլեւս գիտելի բանք յաղագս Աներեւոյթ եղանակին, եւ Ընդունելութեան . բայց վարժեալքն յայսոսիկ համառօտ ծանօթութիւնքս՝ կարող են

տեղեկանալ զառաւելագոյնն յընդարձակ քերականութեան ։

Աստանօր մնայ մեզ ծանուցանել զայլ երկու պարագայ բայից, որք են Ձեւ, և Տեսակ ։

207. Ձեւ բային առեալ լինի յանուանէն՝ յորմէ կազմի. ուստի երեք է ըստ անուան. (75) Որ պարզ, որ 'ի պարզ անուանէ կազմի. օր. պատուեմ, հաւատամ, գիտանամ եւն ։

Բաղադրեալ, որ 'ի բաղադրեալ անուանէ, կամ ածանցական մասնկաւ կազմի. օր. անպատուեմ, անհաւատամ, անգիտանամ, տկարանամ, կամ, պարզեմ, շնչենամ, պանծանեմ եւն ։

Բարդ բայ է, որ 'ի բարդ անուանէ կազմի. օր. պատուաւորեմ, մեծամտանամ, ընդունանամ, գեղեցկարեմ, և այլն ։

208. Յաղագս խոնարհման սոցա գիտելի է, զի որոց պարզն վերջանայ 'ի ամ, նամ, նոցին բաղադրեալն և բարդն միշտ խոնարհի որպէս պարզն. օր. մեծամտանամ, մեծանամ, խոնարհին որպէս բանամ, առնամ ։ (173. 184.) Նմանապէս վերջացեալքն 'ի եմ, որք խոնարհին ըստ շարժեմին, 'ի բաղադրելն և 'ի բարդելն խոնարհին որպէս պարզն. օր. բարեգործեմ, անարգեմ, խոնարհին որպէս գործեմ, յարգեմ ։

Այլ վերջացեալքն 'ի եմ, որք խոնարհին ըստ հանեմին, 'ի բարդելն փոխեն երբեմն, և լինին ըստ շարժեմին. օր. ածեմ, ածի, ած. բարդեալն վերածեմ, լինի՝ վերածեցի, վերածեա ։ Նոյնպէս բերեմ, բերի, բեր. բարդեալն՝ վերաբերեմ, լինի՝ վերաբերեցի, վերաբերեա ։ (տես 160.)

209. Տեսակ բային երկու է, որպէս և անուանն. (87.) Որ նախադէպ և ածանցեալ ։ Նախադէպ է՝ որ յարմատական բառէ ձեւանայ՝ առանց ածանցական մասնկան. օր. գործեմ, սիրեմ, շինեմ, թողում, տամ, ցաւեմ և այլն ։

Ածանցեալ է՝ որ կամ յածանցական անուանէ ձեւանայ. որպէս 'ի բանաւոր անուանէ կազմի՝ բանաւորեմ. 'ի հայրենիէն՝ հայրենանամ. 'ի հաճոյէն՝ հաճոյանամ. եւն ։ Կամ 'ի նախադէպ բայն 'ի ներքս մտանէ գիր ինչ կամ մասնիկ ածանցական, որ յո-

մասն սաստկացուցանէ զնշանակութիւն, և յոմանս քաղցրացուցանէ միայն զբայն ։ Սաստկացուցիչ են ատ, ոտ, տ ․ որպէս խածել, և խածատել, կտրել, և կոտրատել, խոցել և խոցոտել, քակել և քակոտել ևն ։ Իսկ քաղցրացուցիչ է մասնիկն ուն ․ և սովաւ ածանցեալք առաւել վարի առ նախնիս ․ որպէս բեկել և բեկանել ․ անիծել և անիծանել ․ մտել և մտանել ․ այսպէս՝ պագանել, ստեղծանել ևն ։ Սակայն այսպիսեաց նախատիպն դնի ՚ի բարդութեան ․ որպէս ոտնաբեկել, երկրպագել, վերաստեղծել ։

Կայ և երրորդ կերպ ածանցականի՝ բայից միայն յատուկ, յորժամ ՚ի կատարեալ ժամանակն յարի մասնիկն ուցանել, և առնէ անցողական ․ զորմէ խօսեցաք ՚ի տեղւոջն ։ ( 157 ․ 164 ․ )

Բաց համարեալ զայսչափ տեղեկութիւն ՚ի վերայ բայից, յառաջ առցուք զՆախադրութիւն ։

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ․

## Յաղագս Նախադրութեան ։

210․ Ուրոյն մասն բանի կարգեցին քերթողք զՆախադրութիւն, զի դիւրին լիցի մանկանց ուսանել որոշաբար զմասնաւոր ծանօթութիւնս նորա ։

Նախադրութիւն ըստ բառին ասի այն՝ որ յառաջ եդեալ է, կամ դնելի է ։ Իմացեալ լինի դիր մի, կամ մասնիկ, կամ բառ՝ որ յառաջոյ դնի այլոց բառից, և փոփոխէ զհոլովս նոցա, կամ զնշանակութիւնն ։

Յատուկ կամ բուն Նախադրութիւն՝ յորժամ փոխէ միայն զհոլով մօտակայ բառին, ասի հոլովակերտ, կամ՝ նախդիր ․ և են ՚ի, յ, ՚ի յ, ց, զ, առ կամ առ ՚ի, ընդ ն, ըն, ըմ, ըմբ, ներ, աղ ։ ՚Ի վերայ այսոցիկ խօսեցաք վերագոյն որչափ ինչ արժան էր ․ և զի սոքա երբեմն առանց կազմելոյ զհոլով, յարին ՚ի սկիզբն բառից, լինին մասնիկ բաղադրական, և այսպէս փոփոխեն զնշանակութիւս նոցա ։ ( 76 ․ 77 ․ )

Իսկ են և այլք՝ որք ունին զատ նշանակութիւն, և առանց միանալոյ 'ի սկիզբն մօտակայ բառին՝ պահանջեն ինքեանք զայլ հոլովեալ բառ ինչ. և սա է որ սովորաբար ասի Նախադրութիւն. և առ որոշելոյ յառաջնոյն՝ մասնաւոր անուամբ կոչի Հոլովառու, իբր որ առնու կամ պահանջէ զհոլովեալ բառ ինչ:

Յասացելոցս ծանուցաւ թէ երկու է Նախադրութիւն, իբր հոլովակերտ և հոլովառու: 'Ի վերայ առաջնոյն խօսեցաք 'ի գլուխ Անուան, ծանուցանելով ևս թէ երբեմն յաւելմամբ նոր նշանակութիւն 'ի վերայ մերձակայ անուան, ոչ միայն լոկ հոլովակերտ, այլ և հոլովառու: ( տես 118. 119. 125. 126:) Արդ խօսեսցուք այժմ 'ի վերայ երկրորդին:

---

## Հոլովառու Նախադրութիւնք:

211. Հոլովառու նախադրութիւն՝ որ ինքնին նշանական բառ է, կրկնակի է, իբր պարզ և բաղադրեալ

Պարզ նախադրութիւն է միակ բառ ինչ, որ կամ չէ այլ մասն բանի. իբր առ, ընդ, ենթ, ըստ, զերդ, էէր, թարց, տան, մինչ. և կամ անուն է, և յանուանէ կազմեալ, բայց իբրև նախադրութիւն վարի. իբր փեր, պէս, կոյս, կողմն, պատեա, պինի, չափ, արտաքոյ, ներքոյ, և այլն:

Բաղադրեալ նախադրութիւն ձևանայ յայլ և այլ բառէ. իբր կամ յերկուց անուանց, որպէս յառաջնոյ, 'ի վեր կոյս: Կամ յանուանէ և 'ի դերանուանէ. որպէս յայսկոյս, յայնկոյս: Կամ 'ի նախադրութենէ և յանուանէ, որպէս առանց, ընթեր, առընթեր, ընդդէմ:

Այսուհետև ծանուսցուք զնշանակութիւն և զկիրառութիւն ամենեցուն սոցա:

### 212. Յաղագս պարզ նախադրութեանց:

Զերդ կամ զերթ. նշանակէ՝ որպէս, նման. և կամի 'ի հայցական անուն. իբր. զերդ դաղանի, շրջէր սգա:

Բայց այս նախադրութեան յատկանաւոր բանս միայն 'ի գործ ածի ։

Կիբի, կիբին, կիբիսի. օր. պես. վարի ընդ հայցականի. օր. եեր ըստադն. եերն ըստադանի ։ օր. եօրիւմ'ձեկի պես, աղաւնու պես ։

Դըշարդ կամ Թանդ, առանց, ընդ սեռականի. օր. Թարդ Դեդ երկնասութեն ։

Սաան, համար. ընդ սեռականի. օր. Ճաան Թափառ֊րոց. յանցառածոց ճաան ։

Իւան. աւելի. և երբեմն՝ խորև, պես. ընդ հայ֊ցականի. օր. ֆան պարծութ. օր. աւելի քան թէ արծաթն ։ Իւան ըստան մանանխոյ. օր. խորև գհանն ։

Էնթ, 'ի ներքոյ. ընդ սեռականի. օր. էնթ ֆեսանէ. օր. 'ի ներքոյ տեսակի. և առաւել վարի 'ի բարդու֊թեն. օր. էնթաւշոյ, էնթադրել եւ ։

Մէնչ, մինչև. խչման, ընդ նախդրիւ տրականի. օր. մինչև չերկնոս ։

Համդերջ, նշանակէ՝ ընդ, 'ի միասին, հետը. ընդ գործիականի, և երբեմն ընդ սեռականի. օր. համ֊դերջ մարբն, մօրը հետ ։ Այդուրն համդերջ. ասից հետը կամ ասոնցմով ։ համդերջ ամէնայն սդացուածոց. ամէն ունեցածներուն հետ, կամ ունեցածներով ։

Վարբ նախադրութեանց յառաջ ։

213. Դրոն բաղում անուանք՝ որոց ուղղականն կամ հոլովեալն վարի խորև նախադրութեն. որպես.

Գէր, վեր, աւելի, զխատէ. ընդ հայցականի, և երբեմն ընդ տրականի. օր., գեր ըմարդիկ, 'ի վեր քան զմարդիկ ։ Գէր օրէնայն, 'ի վեր քան զօրէնս ։

Պէս, փոխանակ. ընդ սեռականի կամ տրականի. օր. քո պէս, խորայելացոյն պէս. շանց փոխանակ, նման շանց ։ փոխանակ որդւոյ, նման որդւոյ ։

Դէմ. դէմը, գարշը. կամ դէպ 'ի, դի. որպես և դէպ ։ ընդ տրականի. օր. դէմ հօրէն. դէմ յարևելք, արևելքի կողմը ։ դէպ ձեռ, դէպ արեւմտեան ։

Կոյս, կողմն. դի, կողմը, թարաֆ ։ Ընդ նախդրիւ տրականի յետադաս վարի. օր. 'ի ահեղանն կոյս, ահ֊ղանի կողմը ։ յարև կոյս, դէպ քէնարը ։ 'Ի կէսն կողմն, դէպ 'ի կլինն ։

Զատ, *ինչպան, խըտար* · զկնի գործիականի վարի · օր · արեամբ զատ · *ինչպան արիւն թափելով* ։ Ահուամբ զատ, *ինչպան մեռնիլը* ։ Ձեզ զատ, *ձեզի խըտար* ։

Շուրջ, շուրջանակի · *բոլորտիքը, չորս դին, էթրաֆը* ։ Ընդ պարառական ասացեալ հոլովս, կամ ընդ սեռականի · օր · շուրջ զտեղեաւն, *այն տեղի բոլորտիքը* ։ Շուրջանակի քաղաքին, *քաղքի չորս դին* ։

Յետ, *ետքը* · յետոյ, *ետևը* · յետուստ, *ետևէն* ։

Փոխան, փոխանակ · *տեղը* · *խարշըլըը* ։

Արտաքս, արտաքոյ, *դուրս, տըշարը* ։

Ներքոյ, ՚ի ներքոյ · *ներքը, տակը* ։

՚Ի վեր, վերոյ, ՚ի վերոյ, *վեր, եօքարը* ։ ՚ի վերայ, *վրան* ։

՚Ի մէջ, *մէջը* · ՚ի մէջոյ, *մէջէն* · ՚ի մէջէ, *մէջը, ներսը* ։

՚Ի ձեռն, *ձեռքով · անով* ։ Զհետ, զհետէ, *ետևէն* ։ Ըզ-րէն, *պէս, կիպի* ։

Յաղագս, աղագաւ, ՚ի պատճառս, սակս, ՚ի սակս, ՚ի համար, ՚ի պէտս ։ *Ամենայնն նշանակէ՝ վասն, համար, իչին* ։

Յաջմէ, ընդ աջմէ · *աջ դիէն, սաղ թարաֆտան* ։ ՚Ի ձախմէ, ընդ ձախմէ, կամ յահեկէ, ընդ ահեկէ · *ձախ դիէն, սոլտան* ։

*Այս նախադրութիւնք առ հասարակ ունին յառաջոյ կամ զկնի զսեռական հոլով* · օր · փոխան նորա, *անոր տեղը* · որդւոյն փոխանակ, *որդուն տեղը* ։ ՚Ի մէջ ձեր · փորձութեան ՚ի մէջ · ՚ի վերայ բարձի, ՚ի ձմերայութեն վերայ · *և այլն* ։ *Ոմանք ևս ունին զորական անուն, կամ* տան *նախադրութիւ* · օր · ՚ի վեր քան զերկինս · ՚ի վերոյ երկնականաց · արտաքոյ այգւոյն, *կամ* տան զայգին ։

214. Դիտելիք · *Յառաջի եղեալ օրինակացդ ցուցանի թէ որպէս ձևանայ յանուանէ նախադրութիւն, կամ իբրև նախադրութիւն վարի* ։ *Նա և այլ բառք բուն ածականք, որք ըստ իւրեանց նշանակութեան կամին զանուն ինչ յայլ և այլ հոլով · և վասն այսր համարեցան երբեմն նախադրութիւ* · *այսպիսի են՝* նման, հեռի, մերձ, առանց, բաց *կամ* բայց, զատ · *և սոքա կամին զբացառական* · օր · հեռի ՚ի քաղաքէն ·

գաղտ 'ի ծնողաց . ասացին 'ի Մարդկանէ . Բաց յաչացանէ . զատ 'ի մէնջ ։

Այսպիսի են՝ հապա, մերձ, մօտ, չեւ, շուտ, նման, հակառակ, փոխարէն եւս . որք կամին զտրական հոլով . օր. հանդ արտաքոյ, կամ առ արտաքս ։

---

Բաղադրեալ նախադրութիւնք ։

215. Որպէս յառաջ ասացաք, (211) բաղադրեալ նախադրութիւն ձեւանայ յանուանէ, 'ի դերանուանէ, կամ 'ի նախադրութենէ ։ Այսպէս է

Առանց, 'ի նախադրութենէ առ, եւ յանուանէ անց ։

Առաջի, յառաջոյ, ընդառաջ . առջեւ, առջեւէն, դիմացը ։ 'Ի առ կամ ընդ նախադիր, եւ աջ անուն ։

Որպէս . ձեւացեալ 'ի որ եւ 'ի պէս ։ ընդ հայցականի, որպէս պարեգօտն ։

Ընթեր, առընթեր ։ ձեւացեալ 'ի ընդ, եւ թեր ։ քովը, մօտիկը ։

Ընդդէմ, դիմացը . դէմ ընդդէմ, դիմացէ դիմաց . հանդէպ, յանդիման, դէմյանդիման . դիմացը . ախոյանդիման . դիմացը, բաց, էշկեարէ ։ Ձեւանան 'ի ընդ, դէմ, դէպ ։

Այսպիսիքս կամին սեռական կամ տրական հոլով . օր . առանց յանցանաց . առաջի Մարդկան . ընդառաջ արքայի . ոյր ընթեր . առընթեր սորին . հանդէպ տանն . յանդիման դրախտին ։

Յայնկոյս, անդին . յայդկոյս, ատդին . յայսկոյս, ասդին . յետկոյս, ետեւի դին . 'ի վերկոյս, դէպ 'ի վեր . 'ի վայրկոյս, դէպ 'ի վար ։ Այսոքիկ կամին զսեռական . օր . յայնկոյս գետոյն . գետի անդին ։

Մեկուսի, մէկ դի կեցած, զատված, հեռու . ձեւանայ 'ի մի, եւ կոյս, եւ կամի զբացառական . մեկուսի յամբոխէն, հալխէն հեռու ։

Վերայ վերոյ, վեր 'ի վերոյ . դէպ 'ի վեր, բարձր ։ ընդ տրական հոլովոյ, կամ քան նախադրութեամբ . օր վեր 'ի վերոյ քան, նմանապէս՝ վեր քան, առաւել քան ։

Այսր քան, աւել ասդի . անդր քան, աւել անդին . արտաքոյ, արտաքս քան, աւել դուրս . յետոյ քան, աւել ետքը .

յառաջ քան, նախ քան, ալ առաջ։ Յայտքնի կամին զհայցական 'ի պատճառս քանին։

Յաւուհետև տացուք զմանաւոր ծանօթութիւնս 'ի վերայ երից յատուկ նախադրութեցս Առ կամ առ 'ի, Ընդ, Ըստ։

## Առ, Առ 'ի։

216. Առհասարակ նշանակէ՝ վասն, համար, ունելով զսեռական, զտրական, զբացառական, երբեմն և զգործիական։ օր.

Առ ահէն, վախուն համար։ առ 'ի թաղելոյ, թաղելու համար։ առ սէր ընկերի, ընկերի սիրուն համար։ առ 'ի քակտումն, քակելու համար։ առ 'ի չգոյէ, չըլլալուն համար։ առ ամօթէ, վասն խայտառակելոյ, խախտութեան համար։ առ բարոյէ, վասն բարուցն, թափիկէթին համար։

Բազում անգամ նշանակէ՝ մերձ, մօտ, առաջի, մէկուն քովը, առենը. և վարի զանազան հոլովով։ զորօրինակ.

Առ դրանն, դատաւորին քովը, առջևը։ առ որում գոյէ, որուն քովն որ գտնի։ առ հոգևոր հարստութեանն, հոգևոր հարստութեան քովը, կամ անոր բաղդատելով։ առ ցորենով, ցորենի քով, կամ անոր բաղդատելով։ առ արխաթարքա, արխաթար քահանային առենը։ առ լերամբ, լեռան մօտ։

Երբեմն ընդ տրական և բացառական հոլովոյ նշանակէ՝ ընդդէմ, հակառակ. օր. առ անզգամն, ընդդէմ անզգամաց։ օգնութիւն առ 'ի թշնամեաց, օգնութի ընդդէմ թշնամեաց։

Երբեմն և ընդ նախդրիւ տրականի նշանակէ՝ ըստ, փոխանակ, 'ի տեղի. օր. առ 'ի մտաց, ըստ բուն մտացն։ առ պատուականս, առ անարգս, փոխանակ կամ 'ի կարգի պատուականաց, անարգաց։

## Ընդ ։

217. Սովորեալ նշանակութիւն է՝ հետը, միատեղ. և կամի զտրական, մերթ և ս զգործիական. զր. ընդ իս, իմ հետըս ։ ընդ ամենեսեան, ամենեկին հետ ։ ընդ մեզ գնան. մեր հետը կերթան ։

Դարձեալ, նշանակէ՝ վասն, համար, կամ փոխանակ. ընդ սեռականի, և երբեմն ընդ բացառականի. զր. ընդ ամենայն դատարկ բանի, վասն ամենայն անօգուտ բանի կամ խօսից ։ ակն ընդ ական, ակն վասն ական, աչք աչքի համար, կամ տեղը ։ Դարձեալ ընդ իմ և ընդ քո, վասն իմ և վասն քո ։ ընդ կորուսանելոյ, վասն կորուսանելոյն ։

Բազում ուրեք նշանակէ՝ 'ի ներքոյ, տակը. և կամի զգործիական, երբեմն զսեռական ։ զր. ընդ ծառով, ընդ հողով, 'ի ներքոյ ծառոյ, հողոյ ։ Նուաճիլ ընդ հարկաւ ապաշխարութեան, 'ի ներքոյ կանոնաց ապաշխարութեան մտանել ։

Նշանակէ դարձեալ՝ 'ի մէջ, օրթան, արանքը. ըստ այսմ կրկնի ընդն, և միշտ տրական հոլով կամի ։ զր. ընդ երկինս և ընդ երկիր, 'ի մէջ երկնից և երկրի ։ ընդ իս և ընդ քեզ, 'ի մէջ իմ և քո, մեր մէջը ։ ընդ բազումս և ընդ սակաւս, 'ի մէջ բազմին և սակաւուն ։

Ընդ տրական հոլովոյ երբեմն նշանակէ՝ 'ի վերայ, կամ դէպ ։ զր. Նախանձիլ ընդ նա կամ ընդ նմա, 'ի վերայ նորա ։ խռովիլ ընդ բանին կամ ընդ բանս, 'ի վերայ բանին կամ խօսիցն ։ ուրախանալ ընդ ճգնութիւնս, 'ի վերայ ճգնութեան ։ շրջիլ ընդ երկայնութիւն, դէպ յերկայնութիւնն ։ տնկել ընդ արևելս, 'ի կողմն արևելից ։

---

## Ըստ.

218. Նշանակէ սովորաբար՝ պէս, կէօրէ. ընդ սեռականի կամ տրականի ։ զր ըստ հրամանի, հրամանին պէս ։ ըստ բանի քում, քու խօսքիդ պէս կէօ-

րէ ։ ըստ լեզուի , լէզուայ կէօրէ ։ ըստ գործոյ , գործ-քին կէօրէ ։

Երբեմն եւ նշանակէ՝ վասն , համար ։ որ . ըստ յանցանաց , վասն մեղաց ։

Ուրեք նշանակէ՝ 'ի վերայ , դէպ յայն ։ որ . բառ-նալ ըստ անցին , 'ի վերայ անձին , իր վրա առնել ։ ըստ ճանապարհին , 'ի վերայ ճանապարհին ։

Ընդ նախդրիւ տրականի նշանակէ երբեմն՝ ար-տաքս , արտաքոյ , դուրս ։ որ . ըստ հաւատարմութեան , ըստ երդումն , արտաքոյ դաշին կամ երդման ։ ըստ օրէնս , ըստ չափ , արտաքոյ օրինաց կամ չափոյ ։

Ընդ բացառականի նշանակէ՝ յետոյ , զկնի ։ որ . ըստ նոցանէ , զկնի նոցա ։ ամ ըստ ամէ , ամ զկնի ամի , տարի տարիան վրա . այր ըստ առնէ , մարդ զկնի մար-դոյ ։

Այսչափ տեղեկութիւն շատ համարեալ առ տե-ղեաւս , զառաւելագոյն գիտելիս 'ի վերայ նախա-դրութեան՝ ունի գտանել աշակերտն յընդարձակ Քերականութեան ։

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ ։

### Յաղագս Մակբայի ։

219. Անունդ Մակբայ՝ ըստ ձայնին նշանակէ 'ի վե-րայ բայի , որ է բառ մի որ յայտ առնէ զինչ 'ի վե-րայ բային . ուստի սահմանի . Մակբայ է՝ նշանակիչ պարագայից բային , կամ ներգործութեան ։ Վասն զի եդեալ յառաջոյ կամ զկնի բային , յայտնէ՝ զեղա-նակն , կամ զժամանակն , կամ զտեղին , կամ զչափն առնելոյ եւ կրելոյ ։ Զոր օրինակ , գրեցի , բայ է . եւ երբ ասես՝ ուղիղ գրեցի , յայտնէ զեղանակ գրելոյն . այժմ գրեցի , յայտնէ զժամանակն . աստ գրեցի , յայտնէ զտեղին . 'ի կարճոյ գրեցի , յայտնէ զչափն ։

220. Բաժանումն մակբային ընդհանրապէս՝ որո-շելի է ըստ կրկին մտածութեան , որ ըստ կազմութեան նոցա , եւ ըստ նշանակութեան ։

Ըստ կազմութեան՝ երկատեսակ է մասնկայն. նախնական կամ բնական, և ածանցեալ: Նախնականն է ինքնին զատ բառ, որ չէ ձևացեալ յանուանէ կամ յայլ մասանէ բանի. և այսպիսի բուն մասնկայ՝ սակաւ է: որ.

Աստ, հոս · այդր, հոդ · անդ, անդր, հոն · այժմ, արդ, հիմա · այսօր, այսօր · դեռ, տակաւ · մինչ, երբոր · միշտ, ամէնհեղ · միթէ, պաղիքերէ · այո, հա · ոչ, չէ · զիմ, ինչու:

Ածանցեալ մասնկայ է՝ որ յայլմէ բառէ ձևացեալ, առնու զնշանակութիւն մասնկայի: Այս է կրկին. պարզ, որ մասնկաւ ինչ կամ հոլովով ձևանայ մասնկայ. և բաղադրեալ, որ կազմի յայլ և այլ բառից: Օրինակ իւրաքանչիւրոցն դիցուք զատաբար:

## Պարզ մասնկայք ձևացեալ մասնկաւ:

221. Մասնիկք ձևացուցիչք մասնկայի՝ են այսոքիկ. էն, ըն, ես, ի, է, ակի, ցի, եալ, րէն, այն, անօր, ոյն, իմէ: Որք յարին 'ի վերջս անուան, կամ դերանուան, կամ նաև մասնկայի, և առնեն մասնկայ տարբեր կամ նման նշանակութեք: որ.

էն. Ինէն, ինծմէ, ինծմով · քեզէն, քեզմով · մեզէն, մեզմով · ձեզէն, ձեզմով: Այսք 'ի դերանուանց ձևացեալ. իսկ 'ի մասնկայից, այսրէն, դէպ հոս · այդրէն, դէպ հոդ · անդրէն, դէպ հոն · այժմէն, արդէն, հիմակուց:

ըն. Ինքնըն, ինքնիրմով · գլխովին, բոլորովին, լման, ամբողջութիւն · կամովին, կամքով, ուզելով: Այս յետինք 'ի գործիականէ ձևացան:

ես կամ էս. Երբէս, անգամ մը · ուստէս, տեղաց մը · ուրէս, տեղ մը:

ի. Աստի, ասկից · այդի, ատկից · անդի, անկից · ուստի, որ տեղէն · կարի, խիստ շատ · իւրովի, ինքիրէն:

է. Իմնէ, բանով մը, մէկ կողմանէ մը:

ակի. Սաստկակի, խիստ ուժով, զօրով · կողմնակի, մէկ կողմէն, եամբուրի · ուղղակի, շիտակ, տողով:

ցի. Ձեռամբացի, ձեռքով · նշանացի, նշանով, իշարէթով · հայեցի, հայերէն · աքացի, թէքմէով:

ⴟⴄⴐ · Ⴍⴐⴟⴄⴐ, երկու հեղ · ⴑⴀⴋⴟⴄⴐ, իրեք հեղ · ⴐⴀⴋⴟⴄⴐ, քանի հեղ ·

ⴐⴄⴌ · Ⴁⴄⴐⴛⴌⴓⴐⴄⴌ, հոռոմերէն · ⴄⴁⴐⴀⴈⴓⴐⴄⴌ · չըփուտերէն ։

ⴀⴌ ⴉⴈ ⴄⴀⴌ · Ⴂⴄⴑⴋⴈⴐⴀⴌ, գիշերանց, կէսճէլէ · ⴃⴓⴄⴑⴋⴈⴀⴌ, սուսիկ, սէսսիզ ։

ⴀⴌⴍⴐ · Ⴀⴎⴀⴌⴍⴐ, հաս · ⴀⴌⴎⴀⴌⴍⴐ, հոն · ⴈⴐⴀⴌⴍⴐ, ուր որ ։

ⴍⴌ · Ⴑⴄⴌⴃⴀⴌⴍⴌ · ողջ ողջ, տիրի տիրի · ⴄⴓⴓⴀⴌ, շուտ մը, ան սահաթը ։

ⴄⴋⴄ · Ⴀⴂⴄⴍⴑⴄⴋⴄ, սօյով սօյով · ⴁⴍⴐⴍⴑⴄⴋⴄ, ⴀⴋⴌⴄⴋⴄ, պիւսպիւթիւն ։

---

## Ⴂⴀⴐⴂ ⴋⴀⴄⴑⴀⴑ ⴌⴓⴜⴄⴌ ⴟⴄⴀⴑⴄⴀⴃ ։

222. Գործիական հոլովն բազում անգամ վարի որպէս մակբայ · զր ⴃⴈⴐⴀ, ⴌⴄⴑⴌⴄⴀ, նշանակէ՝ դիւրաւ, խոլայութենով · որոյ ուղղական է՝ ⴃⴈⴐ, ⴌⴄⴑ ։ Նոյնպէս են հետեւեալքն ։

Ⴀⴌⴀ, ձիպ, պիւթիւն · ⴈⴀⴃⴈⴀ, սէրթութենով · ⴉⴀⴌⴈⴀ, առջեւկուց, շատ առէնէ · ⴉⴀⴋⴀ, ուզելով · ⴛⴈⴃⴈⴀ, սրխրյով · ⴛⴈⴋⴀⴐⴈⴀ, իրաւցընէ · ⴋⴄⴈⴑⴋ, կակղութենով · ⴁⴀⴐⴀⴃ, ադէկ · ⴟⴀⴂⴈⴀ, վաղը · ⴀⴐⴂⴈⴀⴃ, իրաւցընէ ։ Ուղղականք սոցա յայտնի են · զր ⴐⴀⴌ, խիստ, կանուխ, կամք, ճիշդ, ճշմարիտ, մեղմ, բարի (գործի · բարեաւք ·) վաղ, արդ · (գործի, արդիւք կամ դուք ։)

՚Ի բացառական հոլովոյ մակբայք, ՚ի ⴁⴌⴄ, բնութը, ղաթը ։ ⴢⴀⴀⴎⴓⴄ, ⴢⴀⴀⴎⴓⴍⴃ, առջեւկուց, էվվէլէն · ՚ի ⴛⴄⴐⴈⴀⴃ, չըլըլպալս · ՚ի ⴑⴀⴌⴄ, մէկ փայով, կտոր մը ։

՚Ի սեռական և ՚ի տրական հոլովոյ մակբայք · ⴀⴀⴀⴀⴍⴌⴀ կամ ⴀⴀⴀⴀⴍⴌⴍⴃ, առավօտանց · ⴂⴄⴑⴈⴐⴈ, գիշերվան առէնը · ⴑⴈⴐⴀⴃ, իրաւցընէ · ⴢⴐⴛⴀⴌⴈ, արժանապէս · ⴢⴀⴌⴑⴀⴂⴈ, չափէն աւելի ։

Բաց այսոցիկ նաև հայցական հոլովն տայ երբեմն զզօրութիւն մակբայի · (տես 121 ·) որպէս և տեղըն՝ ⴜⴄⴌ, ⴢⴄⴌ, ուրեք նշանակէ՝ նոյնպէս, սոյնպէս ։

## Ածանցեալ բաղադրեալ մակբայք ։

223. Առաւելագոյն մասն մակբայից բարդութեամբ կազմեալ են յանուանէ կամ 'ի դերանուանէ, կամ յայլ բառից ։

Յանուանէ բարդք են, մարդօրէն, մարդկաբար, մարդկապէս ․ վասն զի օրէն, պէս, բար, են անուանք, և նշանակեն՝ կերպ, կարգ ։

Յանուանէ և 'ի դերանուանէ, յայնժամ, յայնմհետէ, նոյնչափ, այսօր, այնօր, որպէս, որչափ, որքան եւն ։

Նմանապէս 'ի նախադրութենէ, 'ի մակբայէ, և 'ի շաղկապէ բարդութեամբ ձևանայ այլ մակբայ ․ որպէս առժամայն, առօրէն, համօրէն, ընդվայր, այլ ընդ այլոյ, ընդ ամենն կամ ընդ ամենայն, եւս քան զեւս, ետ և ետ եւն ։

Բազում անգամ յերկուց անուանց ձևանայ մակբայ, կամ նոյն անուան կրկնելէ ․ որպէս ․ միանգամայն, ձևացեալ 'ի միէն և յանգամէն ․ 'ի հարևանցի, 'ի հարէն և յանցէն ։ արագ արագ, առ առաւել առաւել, ատեղ ատեղ և այլն ։

Արդ՝ ըստ կազմութեան այսպիսի է բաժանումն մակբայից ․ տեսցուք այսուհետև զբաժանումն նոցա ըստ նշանակութեան ։

---

## Բաժանումն մակբայի ըստ նշանակութեան ։

224. Մակբայն ըստ որքան եղանակս ցուցանէ զպարագայս ներգործութեան, նոյնքան և բաժանի՝ հայեցեալ 'ի նշանակութիւն ․ զոր և վերածեմք յերկոտասան ․ այսինքն Որակական, Քանակական, Ժամանակական, Տեղական, Թուական, Հարցական, Մաղթական, Ներբայական, Բացասական, Զատական, Յորդական, Ընդրական ։ Զայս ամենայն ծանուսցուք քանի մի օրինակօք ։

225. Որակական մակբայ է՝ որ նշանակէ զորակութիւն ներգործութեան, այսինքն զորպիսի լինելն, այսպէս կամ այնպէս, բարւոք կամ յոռի, ուղիղ կամ թիւր,

յայտնի կամ ծածուկ եւն ։ իբր. Այսպէս, այդպէս, ասանկ, պու թարգ. այսպէս, դոյնպէս, այնպէս, նոյնպէս. նոյնօրինակ, միօրինակ. որպէս, զիարդ, բարւոք, բարւոքապէս, այլապէս, այլազգ ։ Յայտնապէս, մեկին, մեկնօրէն, իբր խասակ, էշկէարէ. լու 'ի լու, բաց, աչըք. 'ի ծածուկ, ծածկապէս, գաղտնաբար, գաղտուկ, կիզլի. բռնի, բռնաբար, զօռով. 'ի հարկէ, հարկաւ, չուզելով, նաչարի. զուր, 'ի նանիր, ընդվայր, փուճ տեղը ։

Ասա այս մակբայք և նմանք եւս զորպէսն ներգործութեան ցուցանելով, ասին որակական. իբր յասելն, յայտնապէս խօսեցայ, նշանակէ զորպէսն խօսելոյն թէ ոչ ծածուկ խօսեցայ, այլ յայտնի ։ Նոյնպէս յասելն, յանդգնաբար ընկալան, յայտնէ զեղանակն ընդունելոյն՝ թէ ոչ գիտելով, առանց ճանաչելոյ ընկալան ։

226. Քանակական մակբայն յայտնէ զքանակ կամ զչափ ներգործութեան, իբր շատ կամ սակաւ, աւելի կամ պակաս, բոլոր կամ ըստ մասին, եւն ։ Այսպէս վարին վերբերական անուանքն ձևացեալք չափ և քան բառիւքն. ( տես 49 ) Նմանապէս սոքին, համօրէն, համանգամայն, 'ի միասին, առհասարակ, իբր բոլորը մէկէն, ամմէնը մէկտեղ ։ Յոյժ, յաւէտ, առաւել, շատ, աւելի, զիատէ ։ Սակաւ, խուն մի, սուղ ինչ, դոյզն մի, քիչ, քիչ մը, ազ, ազճըք. փոքր 'ի շատէ, քիչէն շատէն, ազտան չօքտան ։

Այսպէս յորժամ ասի. փոքր 'ի շատէ գիտեմ, կամ լսեմ, յայտ առնէ զչափն գիտելոյն կամ լսելոյն, թէ 'ի բազմաց զսակաւն գիտեմ, և ոչ զբոլորն ։

227. Ժամանակական ասի մակբայն՝ որ յայտ առնէ զժամանակ կամ զտեւողութիւն ներգործութեան, թէ երբ լինի, որչափ ժամանակ, արագ թէ անագան, յառաջագոյն թէ յետոյ, յերկար թէ կարճ, միշտ թէ երբեմն եւն ։ Այսպիսի են, այժմ, այժմիկ, արդ, զարդիս, հիմայ, շիմտի ։ այժմէն, արդէն, հիմակուց, շիմտիտէն ։ այսօր, 'ի սերկեանս, ասօր, պուկիւն ։ Վաղիւ, վաղը, եարըն ։ Երէկ, յերէկն, երեկ, տիւն ։ յետանդն, երեկ չէ մէկալօր ։ զմիջաւուրբ, կէսօրվան դէմ ։ այգուն, այգոյ, առաւօտը ։ Վաղ, վաղորդեան, 'ի վաղուոյ, առաջուց, շատոցմէ ։ յայսմհետէ, այսու հետեւ, ասկէց

ետքը · յորժ հետէ, քանի որ : յետոյ, ապա, զկնի, ետքը, սոնրա : երբեմն, մերթ, պազըքերէ : երբ, երբ, յոր-ժամ, զինչ, երբոր, հաչան : հանապազ, յար, յարաժամ, յաւէժ, յաւէտ, միշտ, ամմէն իժիր, տայիմա : դեռ, տակաւին, տահա : չեւ, չեւեւս, մինչեւ, քանի որ չէ : առ-ժամայն, նոյնհետայն, հէմէն ան ատենը, օլ սահաթ : յանկարծ, յեղակարծ, ղաֆիլ : արագ, արագապէս, փոյթ, ձեպով, շտապաւ, չապուք, շուտ մը, թեզով, աճելէ իլէ : հապճեպ, ճորով, կիւճակելա : անագան, ուշորէն, ուշ, կէճուն կէճ : դանդաղ, կամաց, քիչ քիչ :

Այսոքիկ պէսպէս եղանակաւ ցուցանեն զժամա-նակ ներգործութեան, զոր 'ի մի յայս բան նկատեա․ * Եւ այժմ ասացի ձեզ՝ մինչչեւ եղեալ․ զի յորժամ լինիցի, հաւատասջիք : ‖ ուր այժմն յայտնէ զժամա-նակ առնելոյն, իսկ մինչչեւ, յորժամ, զժամանակ լինե-լոյն :

228 · Տեղական մակբայ ցուցանէ զտեղի կամ զդիրս ներգործութեան, այսինքն թէ աստ կամ հեռի, 'ի վեր կամ 'ի վայր, 'ի ներքս թէ արտաքոյ, եւն : Այսպէս են, ասդ, ասդանօր, ասդէն, հոս, պուրտա · այդր, այդանօր, այ-դրէն, հոտ տեղ, շուրտա · անդ, անդր, անդէն, անդա-նօր, հոն տեղը, օրտա · յայսկոյս, յայնկոյս, ասդին, ան-դին : արտաքս, 'ի դուրս, դուրս, տըշարը : 'ի ներքս, ներքոյ, ներսը, իչէրտէ : հեռի, 'ի բաց, 'ի բացեայ, հե-ռու, ուզաք : մօտ, մերձ, հուպ, մօտիկ, եաքըն : ստորեւ, 'ի վայր, վարը, տակը : 'ի վեր, 'ի վեր անդր, վերը : ուր, ուրանօր, ուր տեղ : ուր ուրեք, ուր տեղ որ : ուս-տեք, տեղէ մը : յառաջոյ, յառաջ կուսէ, առջեւէն, առ-ջի դիէն : յետոյ, յետուստ, յետ կուսէ, 'ի թիկանց, ետ-եւանց, կռնակէն : յո՛, ընդ ո՛, յոր կոյս, որ դին որ :

Տեղականի օրինակ առցես զմկայութիւն․ * Ոչ ասիցեն թէ աստ է կամ անդ․ զի ահա արքայութիւն այ 'ի ներքս 'ի ձեզ է : ‖ ուր աստ, անդ, 'ի ներքս ցու-ցանեն զտեղին՝ ուր է, կամ ոչ է արքայութիւն :

229 · Թուական մակբայն ցուցանէ զթիւ ներգոր-ծութեան, կամ զկարգ նորա՝ թէ յառաջ է կամ յետոյ, միանգամ թէ կրկին կամ բազում անգամ : Բայց այս թուական անուանքն 'ի վերայ բայի առա-ցեալ՝ վարին մակբայօրէն : (40 · 221 ·) Այսպէս,

Երկիցս, Երիցս, Քառիցս. կամ առաջին, երկրորդ ևն։ Նախ, Նախ առաջին, յառաջինն, էն առաջ։ Միանգամ, մէկ հեղ. առ անգամ մի, առ մի նուագ, մէկ հեղվան։ Մի՛ և մին, մէկ մը, մէկմալ։ Բազում անգամ, յոլովակի, յաճախակի, յոգնակի, շատ հեղ, չօք քերէ։ Դարձեալ, Վերըստին, անդրէն, միւսանգամ, թէքրար, կէնէ։

Թուականի օրինակ տես դասելն. * Եթէ հարեալ էիր հնգիցս, կամ վեցիցս. ‖ ուր զթիւ հարկանելոյն ցուցանէ։

230. Հարցական լինի մակբայն՝ յորժամ 'ի վերայ ներգործութեան ասի հարցման եղանակաւ, հարցանելով զպատճառս նորա, կամ զորպէսն, զտեղին և զտեղին և զժամանակն. և ըստ այսմ նախայիշատակեալ մակբայքն ամենայն կարեն լինել հարցական ձևանալ, եթէ ասիցի. Ո՞րպէս պատասխանի տաս։ Ո՞րչափ ժողովեցեր։ Ե՞րբ եկիր։ Ո՞ւր տանես։ ևն։

Նաև յայսցանէ, բուն հարցական համարեալ են, Է՞ր, Զի՞, Զէ՞, Հի՞մ, ինչու՞, նիչի՞ն։ Առ ի՞մ, Ընդէ՞ր, Վասն է՞ր, Է՞ր վասն, Յո՞ր աղագս, Էր ո՞ւմ, Առ ի՞նչ. ինչու բանի համար, ինչ պատճառաւ։ Զի՞նչ, Ի՞նչ, նէ՞։ Ո՞չ, Ո՞չ ապաքէն, չէ՞ մի, տէյի՞լ մի։ Իւ՞, Իւ՞ իւիք, ինչո՞վ, նէ՞ իլէ։ Նոյնպէս յորժամ ասի։ * Զի՞ խռովեցան հեթանոսք, ‖ հարցանէ զպատճառս խռովելոյն։

231. Սաստական ասի մակբայն՝ որ ցուցանէ հաստատել զներգործութիւնն. որպ. Այո, Հա, Հէ՛, այնէ՛։ Այո, Արդարև, Ստուգ, Անշուշտ, իրաւցընէ, հէմէն սահանկ, կէրչէք, հագքըթ։ Ապաքէն, Արդեաք, իրաւ որ, ըղորդ, տօղրուսու։ Գրեթէ, Գէթ, Գոնեա, սապէ որ, ամյքի։ Ձն և ձն, սանկ նանկ, շէօյլէ պէօյլէ։ Նոյնպէս տեսանի 'ի բանսն. * Ամէն ասեմ քեզ։ Արդարև ասեմ ձեզ։ ‖

232. Երկբայական ասի մակբայն՝ որ զներգործութիւն ցուցանէ ընդ երկբայութե՛, որ յուսալի կամ կասկածելի. որպ. Գուցէ, Գուցէ երբեք, չըլլայ թէ, օլմայաքի։ Թերևս, Արդեաք, Իցէ թէ, Իցէ ոչ, ըլլայ որ, պէլքիմ, օլաքի։ Միթէ, Մի արդեօք, աճապա։ Նոյնպէս յասելն. * Գուցէ ոչ լիցի մեզ և ձեզ բաւական, ‖ կասկածելի ցուցանէ զլինելն բաւական։

233. Բացասական մակբայն՝ դիմադրեալ երկուց անցեալ մակբայից, ցուցանէ զներգործութիւն ոչ հաստատելի, այլ մնացական 'ի բաց տանելի. և են, ոչ, ոչ եւս, ոչ բնաւ, ամենեւին ոչ, ոչինչ, մի, մի երբէք, ամենեւին մի, մի եւս, մի անդր, բաւ : Սոցին նշանակութիւն և կիրառութիւն յայտնի է. իսկ ոչն բազում անգամ միայն չ գրով յարի ընդ բային, որ չասիցես, չփութայցես, չերկնչիս ևն :

224. Զատական ասի մակբայն՝ որ ցուցանէ զներգործութիւնն իբրև զատեալ կամ միայնիկ. որ. միայն, զատ, ընդ, սոսկ, սակայն : միայնակ, միայն ընդ միայն, մինակ, մինակուկ : մի մի, մեկիկ մեկիկ : մեկուսի, առ- բոյն, զատ, պաշկանա : առանձինն, առանձնակի, իւրե- րէն, մարդուստան, եալընդ :

235. Զուգական մակբայ ասի՝ որ զներգործութիւն իբր ցուցանելով յայտ առնէ. և են, ընդ, ընդ առ- ընդ կամ առընդ, ընդ առընդ կամ առընդ, ընդ առանձին կամ առանձին. և սոցա նշանակեն՝ հինգա, իշտ. որ- պէս յասել, Ընդ առընդ ողջացար, ցուցանէ իբրև մտաւոր զուգադրութիւն :

236. Ընտրական ասի մակբայն՝ յորժամ զներգործութիւն ցուցանէ իբր առաւել ընտրելի. ուստի լաւ լեալ կամ յաւելուածաբար ունի բան նախադրութիւն : Այսպիսի է, նա, նախապատիւ, նա նախապատիւ. լաւ, լաւ ես, լաւագոյն : յաւէտ, առաւել, աւելի, առաւել զկատ : թէ, թէ նա, իլա, հաւասար : Որպէս յասել : * Նշա- նելի է նախապատիւ տալ՝ քան առնուլ, ‖ ասա նախապատիւն ընտրելի ցուցանէ զտալն :

237. Դիտելի. Ըստ այսոցիկ տեղեկութեանց վար- ժեալ աշակերտն, կարօղ լինի ընտրել յիւրաքան- չիւր բանի՝ թէ որ բառ, և ուր վարի իբրև մակ- բայ, և կամ առ որ տեսակ պատշաճի : Զոյ բառ՝ որ ըստ պէսպէս նշանակութեան վերաբերի առ այլ և այլ տեսակ. որ յաւէտ, նշանակէ՝ յոյժ բազում, և ըստ այսմ քանակական է. նշանակէ՝ միշտ, լինի ժամանակական. նշանակէ՝ աւելի քան, և լինի ըն- տրական :

Նմանապէս նոյն մի բառ ըստ այլ և այլ նշանա- կութեան լինի անուն, նախադրութիւն, մակբայ, շաղ-

կապ ևն. որպ. արդ, իբրև ձև, յօրինուած՝ անուն է. Նշանակէ՝ այժմ, լինի մակբայ. Նշանակէ՝ որ իմն, լինի շաղկապ։ Այսպէս՝ առ, ըստ որում առումն նշանակէ՝ անուն է. հրամայական առ, բայ է. իբրև նախդիր, և իբր նշանակէ՝ վասն, լինի նախադրութիւն։ Նոյնպէս ընտրելի են այլ բառք ևս, հայելով ՚ի նշանակութիւն նոցա։

# ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ.

## Յաղագս Շաղկապի։

238. Ըստ անուանն՝ շաղկապ, նշանակէ ՚ի միաւորն կապօղ, միաւորիչ. և ՚ի քերականութեան իմանի, մասն բանի՝ որ կարգաւ կապէ զայլ մասունս բանի, որպ. զբառ ընդ բառի, և զբան ընդ բանի. զոր օրինակ յասելն, * Որ ոք եթող զտուն, կամ զհայր, կամ զմայր, կամ զորդիս. Աստ կամն ՚ի մի կապեաց զչորս անուանսն։ Նմանապէս յասելն. * Ո՞վ է մարդ, զի յիշես դու զնա, կամ որդի մարդոյ՝ թէ այց ինչ արասցես դու նմա. Աստ զի, կամն, թէն ՚ի մի կապեաց զբան ընդ բանի։

239. Իսկ թէ զիարդ բաժանի շաղկապն, որոշելի է՝ որպէս վասն մակբայից ասացաք (220) ըստ կազմութեան, և ըստ նշանակութեան։

Ըստ առաջնոյն՝ երկու է շաղկապն, որպ. պարզ և ածանցեալ։ Պարզն է՝ կամ բուն ինքն շաղկապ, և ոչ այլ մասն բանի. որպէս և, ևս, թէ. և կամ է նաև այլ մասն բանի, որպէս արդ, նա, այլ, քան։

Ածանցեալ շաղկապն է ձևացեալ յայլմէ բառէ, կամ բարդեալ. որպ. և ևս, քանզի, բայց արդ, վասն որոյ, սակայն, այսինքն ևն։

240. Ըստ նշանակութեան մտածեալ, կամ ըստ որում այլ և այլ եղանակաւ կապեն զբանն, բաժանեմք յերկոտասան. որպ. Ընդհանրական, Տրոհական, Ընդդիմական, Ենթադրական, Սեփհական, Սահմանադրական, Պատճառական, Յարաբերական, Համեմատական, Թուե-

կան, Սաստկական, Թարմատար։ Օժանդակիչքն ճա-նուցմունք կարծառօտ ։

241. Լրացուցական ասի այն շաղկապ, որ առանց այլ ինչ նշանակութիւն յաւելլոյ՝ կապէ լոկ զբանս կամ զբանն ։ Այսպիսի են՝ և, եւս, ու, աւ, մէ ։ և և, և եւս, այլ, այլեւս, նաև, իսկ, դարձեալ, կամ, նա իսկ, և այս, թէ, եթէ ․ որոց նշանակութիւնն է՝ հեմ, հեմ ալ, եայ, մէտախի, կերեք ։ Որպէս յասելն, եթէ կենօք, և եթէ մահուամբ, խմանի՝ հեմ կենդանի, հեմ ալ մեռած ․ կամ, կերեք ապրիմ, կերեք մեռանիմ ։

242. Տրոհական՝ ընդ հակառակն բաղհիւսականին այնպէս կապակցէ զբանս կամ զխօսս, զի ցուցանէ միանգամայն զորոշումն նոցա կամ զտարբերութիւնն ։ Այսպիսի են կամ, և կամ, կամ թէ, թէ, եթէ ։ Օրի-նակ յասելն, * Պարտ էր քեզ ցուրտ լինել, և կամ ջերմ, || այնպէս կապէ զցուրտն և զջերմն, զի միանգամայն ցուցանէ թէ տարբեր և ներհակ են միմեանց ։ Այնպէս յասելն, * Գաւազանաւ եկից, եթէ սիրով հոգւոյն, || ցուցանէ եթէն, այլ է զաւա-զանաւ գալն, և այլ՝ սիրով ։

243. Բացառական, այն շաղկապ է՝ որ զբանն կա-պելով ընդ անցեալ բանին, ցուցանէ իբր ՚ի բաց առնուլ յայնմանէ զինչ, կամ իբր ուղղել ինչ ։ Այս են, այլ, հալպ, ամմա ․ բայց, առանց, հանդոյն, ան-ճախ, լաքին ։ այլ առանց, բայց առանց, վէլաքին ։ բայց միայն, բայց եթէ, անճախ հեմէն ։ միայն, միայն թէ, կամ թէ, փախատ ։ Որպէս յասելն, * Ոչ ոք ՚ի նո-ցանէ սրբեցաւ՝ բայց միայն Նէեմանն ասորի ․ || սատ ՚ի բազում բորոտից ՚ի բաց առնու զՆէեմանն ։

244. Ենթադրական, այն շաղկապ է՝ որ կիսակատար ցուցանէ զբանն, և պահանջէ կապել ընդ այլում բանի բացատրական շաղկապաւ իւիք ․ և են, թէև, թէպէտ, թէպէտև, փարազամ ։ թէ և ոչ, ոչ եթէ, էէր ոչ եթէ ․ չէ որ, եօք քի ։ ոչ միայն ․ չէ որ մինակ ։

Այս երկու շաղկապք հաղորդ են միմեանց ըստ պաշտամանն, և միով օրինակաւ տեսանելին յա-սելն ․ * Թէպէտև մարմնով հեռի եմ, այլ հոգւով ընդ ձեզ եմ ․ || ուր Թէպէտևն անկատար թողու-

զբանն, և պահանջէ կատարել յաջորդաւն. և աշխարհօրէն իմանի, փարազամ մարմնովս հեռու եմ, ամմա կամ անճախ հոգւով ձեր հետն եմ։

245. Մեկնական է՝ որ զանցեալ բանն կամ զբանն կապէ ընդ յաջորդին՝ մեկնելով կամ բացատրելով. և են, այս է, այն է, նա է, այսինքն, այսինքն է. կէօյա, կէօյաքի։ որպէս, իբր, իբրև թէ, որպէս այն թէ, իբր այն թէ. ինչպէս թէ, եանի, եանի քի։ ըստ որում, կէօյաքի։ ըստ օրինակ, օրինակ իմն, մէսէլա, խուլասէի քէլամ։ Օր. * Ի քաղաք դաշտին, այն է Քեբրոն. || ուր այն է՝ մեկնէ կամ բացատրէ թէ որ քաղաք իմացեալ լինի։

246. Սկզբնաւորական այն շաղկապ է՝ որ սովորաբար դնի 'ի սկիզբն նոր բանի առ 'ի կապել զայն ընդ անցելոյն. և են, արդ, և արդ, այլ արդ, բայց արդ, իսկ արդ. ամ, ամ իմտի, էյ։ ապաքէն, այն չէ, նա ապաքէն. հաղըրդէթ։

Առաջինքն որք արդ ունին, յորժամ նշանակեն զժամանակ՝ լինին մակբայ ժամանակական. (227) որպէս յասելն * Բայց արդ ոչ ևս գոյ ինձ տեղի 'ի կողմանս յայսոսիկ. || Հռ. այժմ ոչ գոյ։ Իսկ յորժամ սոսկ սկսուած առնեն բանին, են շաղկապ սկզբնաւորական. որպէս յասելն. * Արդ ում նմանեցուցից։ Իսկ արդ զի՞նչ առնիցեմ || Ես։

247. Պատճառական է՝ որ յառաջ բերելով զպատճառ բանին՝ այնպէս կապէ ընդ միմեանս. և են զի, քանզի, վասն զի, զէրէ, զիրա։ որպէս զի, որ։ որովհետև, փոխանակ զի, այնու զի, անուլ որ, չիւնքի։ այն զի, նա զի, ինչու որ։ մինչ, չիւնքի. առ, ուր որ. որ, քի։ Որպէս յասելն * Իսկ որովհետև զայս աւետիս ունիմք, սրբեսցուք զանձինս մեր. || ուր իսկն է սկզբնաւորական կամ շաղկապական, և որովհետևն է պատճառական. զի տայ զպատճառն թէ ընդէ՞ր պարտիմք սրբել զանձինս։

248. Մակաբերական, ընդ հակառակն պատճառականին՝ այնպէս կապէ զբանն, զի ցուցանէ զայն մակաբերեալ կամ յառաջ ածեալ յանցելոյ բանէն. և են, ապա, ուրեմն, ապաքէն, ապա ուրեմն, նա ուրեմն, անանկ է նէ, էօյլէ իսէ, իմտի։ ուստի, վասն որոյ,

այսր աղագաւ , ոչին էրէ , զինչ՝ էրէ , նչին էրէ ․ ասոր համար , պատճառն իչին , ճնտան եօթիւրիւ , օլ սեպեպ-տէն ։

249․ Համեմատական շաղկապն նման է բաղդատական անուան ․ (126) զի մինչես կապէ զբան ընդ բանի , որ ցուցանէ զհամեմատութիւն կամ զբաղդատութիւն 'ի մէջ նոցա ․ և են , քան , քան թէ ․ նէքի ։ առաւել , մանաւանդ , յաւէտ , նա , էլլա , իլլաքի ։ Բէօղ թէ , թէօղ քի , չէ քի ։ Պէս , պէսէ , պէս չէ , անտամ , խնչվան , անխըտար որ , պիլէ ։ Օր ․ * Լաւ է կոյր աչօք՝ քան կոյր մտօք ․ Ուր քանն կապելով զկոյրն մտօք ը̃ն ծնցեալ բանին , և համեմատելով ցուցանէ առաւել լինել քան զայն ։

250․ Թէական իմացեալ լինի այն շաղկապ՝ որ զմի բան կապէ ընդ այլում իբրև թէութիւն նորա , կամ իբրև պայման կամ դաշն ․ և են , թէ , եթէ , էյէր ․ էօք թէ , ապա թէ , ապա եթէ կամ ապ եթէ , այլ թէ , և եթէ , արդ եթէ ․ հայպա թէ , ամմա էյէր ։ ապա թէ ոչ , հապա թէ չէ , եօղուսա ։ Որպէս յասելն ․ * Եթէ թողուս զմեղս նոցա , թող ․ ապա թէ ոչ՝ ջնջեա և զիս 'ի դպրութենէ քումմէ ։ Ուր եթէն ցուցանէ զպայման թողութեան տալոյն , և ապա թէ ոչն ցուցանէ զպայման ջնջելոյն ։

251․ Սորանական իմացեալ լինի շաղկապն՝ որ իբր վարանելով կամ տարակուսելով կապէ զբանն , և իբրև ակամայ ընտրել զայն՝ յորժամ չկայցէ յայս լաւագոյնն ․ և են , գոնէ , գոնեա , գէթ , պարէ ։ Պօտանի եա ֆարբար , ձահար , որ և աշխարհօրէն ասի՝ մէկէր , մէյէր ։ Որպէս յասելն ․ * Եթէև յոյժ ոչ երկնչիմ , գոնէ վասն աշխատ առնելոյ զիս այրւոյն՝ արարից նմա դատ ․ Ուր գոնէ ցուցանէ մինչես ընտրել զվճարումն դատի այրւոյն վասն ազատելոյ 'ի թախանձանաց նորա , զի լաւագոյն էր վճարել զայն վասն երկիւղին այ̃ ։

252․ Թարմատար , նշանակէ՝ աւելորդ , մնացորդ ․ և իմացեալ լինի այն շաղկապ՝ որ կապակցէ զբան առանց նոր իմաստ տալոյ , կամ առանց ինչ հարկի , և միայն առ 'ի տալ յարմարութիւն և զարդ ․ և են , թէ , եթէ , և թէ , զի , իսկ , իսկ , որ ․ որք նշա-

նականն՝ որ, քի. գր. * Նշանս ԵԹԷ հաճոյ է։ Ասա ԶԻ քարինքս այսոքիկ հաց լինիցին։ Նստցի, ԲԱՆ ցրեցից զնոսա։ ||

ԴԻՏՈՂՈՒԹ. Ըստ որում վերադրյն ասացաք (237) պարտ է ուշ դնել՝ զի նոյն շաղկապ ըստ այլ և այլ նշանակութեան վերաբերի առ զանազան տեսակ. և աշակերտն փոյթ տարցի ընտրել ըստ տեղւոյն. որպէս ՚ի յառաջբերեալ օրինակդ՝ ԵԹԷՆ եղև թարմատար. զի ոչ յարմարի իմանալ աստ՝ էթէ, որ լինէր թէական. նոյնպէս ԶԻ ոչ է պատճառական, ըստ որում չյարմարի իմանալ՝ զերէ։

# ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ.

## Յաղագս Միջարկութեան։

153. Վերջինն մասանց բանի ասացաւ Միջարկութիւն, իբր զի է մասնիկ ինչ կմ բառ՝ որ ընդ մէջ արկանի խօսից առ ՚ի յայտնելոյ զկիրս և զշարժմունս հոգւոյն։

Ըստ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ երկու է, նխ ՅԱՏՈՒԿ, որ չէ այլ մասն բանի, այլ ձայն ինչ մարդկային բնական կրից. գր. ՎԱՇ, ՈՀ, ԱՅ, ԵՀ, ԷՂԱ և այլն։ Եւ ածանցեալ, որ առեալ է յանուանէ կամ ՚ի բայէ, գր. ԵՐԱՆԻ, ԱՒԱՂ, ՎԱՅ, ԲԵՐ, ԹՈՂ և այլն։

Իսկ ըստ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՆ, բաժանի որչափ այլ և այլ եղանակք են յայտնելոյ մարդկային կրից և շարժմանց. զորս վերածեմք յութ. գր. ԸՂՁԱԿԱՆ, ՀՐԱՇԱԿԱՆ, ՍԱՂԱԿԱՆ, ՀԵՇՏԱԿԱՆ, ՀԵԳՆԱԿԱՆ, ԽՐՈԽՏԱԿԱՆ, ՄՏԱՀՐԱՄԱՆ, ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ։

254. ԸՂՁԱԿԱՆ է՝ որ յայտնէ զիղձս, զբաղձանս սրտի. որպէս, ԵՐԱՆԻ, ԵՐԱՆԻ ԹԷ, էրնէկ, նէ մութ-լու։ ՅԱՆԿԱՐԾ, ԵՂԷ ԹԷ, ԵՂԻ–, Ո՞Վ, Օ՞Վ, ԳՈ՞ՅՇ, ՃԱՐՏԱՆ, որք նշանակեն՝ ըղձար որ, մեր է որ, օգաքի, պաւ-լաքիմ, քեչքէ։

՚Ի սոյանէ ստէպ ՚ի գործ ածի ԵՐԱՆԻ. որ եթէ ու-նիցի մօտ ուղղական անուն ինչ, եական բայ իմանի

լուելեայն, օր. յասելն, Երանի տղայոց, իմանի՝ երանի է կամ լիցի։ Իսկ երբեմն ունի հայցական անուն. և յայնժամ լուելեայն իմանի ներգործական բայ. օր. Երանի ղղաղատեալսն. կամ երանի է ղղաղատեալսն. որ երանելի համարել պարտ է զաղատեալսն։ Սակայն յայսպիսի բանս՝ առաւել իբրև անուն վարի, քան իբրև միջարկութի։

255. Հրաշական է՝ որ զարմացումն կամ գովասանս ցուցանէ. և այսպիսի է՝ ա՞, ա՞հ, ա՞հ բէ, բա՞րէ, վա՞հ, բա. որք նշանակեն՝ պա՜, փեհ, հա՛յ հո՛յ։ Սարքն սաքա ընդ տրական կամ ուղղական անուան, և լուելեայն իմանի էական բայ. օր. ա՞հ սքանչելեացս. ա՞հ զարհուրելի վճիռս։ բա՞րէ անոխակալութեանն. բա՞րէ երանութիւնքն։

256. Ողբական միջարկութի է որ զկսկիծ, զցաւ կամ զերկիւղ յայտ առնէ. և են, ա՜հ, ա՜ ա՜, ա՜հ ա՜հ, էհ, ըհ, ըհը. օր. ահ, ախ, օխ։ վա՜յ, վա՜յ վա՜յ, ա՜ ա՜, ա՜մա՜ն, ազէ՜ն, ա՜մա՜ն, եղա՜ն, բա՜բէ. և նշանակեն, վա՜խ, եաղ լը, հայրփ։ Սոքա վարին միայնակ, և ընդ հոլովեալ անուանց. օր. վա՜յ ինձ կամ ղինա. եղա՜ն դա կամ ղիա. եղա՜ն ես եմ, ևն։

257. Հեգնական միջարկութի է՝ որ զուրախութի սրտի կամ զախորժումն ցուցանէ. և են՝ վա՜շ, վա՜շ վա՜շ, ա՜հ ա՜հ, հէ՜յ, օ՛խ օ՛խ, խօ՛շա խօ՛շա։ Ընդ տրականի ասի, վա՜շ ինձ, վա՜շ բաշէտ։

258. Հենգնական է միջարկութին որ ցուցանէ ծաղր առնել. որպէս. վա՜հ, վա՜շ, ա՜հ, յէ՜հ, ա՜յ, է՛, էհէ՛, հէ՛ հէ՛, ատահ. և նշանակեն՝ իւֆ, փիւֆ։ Միայնակ վարին, և ոմանք ընդ ուղղականի. օր. ա՜յ չարագործ. է՛ տառապեալ։

259. Խրխրական միջարկութի է՝ որ ցուցանէ զատատ, զբարկութիւն, զկշտամբանս. որպէս. ա՜յ, ա՜հ, էյա, հա՛ղա, աէ՛ր, աէ՛, և նշանակեն՝ հօլա՛, պրէ՛։

260. Մատհրաման, նշանակէ՝ մօտ հրամանի, և է միջարկութի կամ բառ՝ որ ցուցանէ յորդոր, քաջալերս կամ պատուէր. որպէս. ա՞ղէ, հա՞յդա, օ՞ն, հա՞. օր. տէ՛, տէ՛խմոի, հա՛յտէ, տէ՛ կէօրէիմ։ Սոքա վարին ընդ հրամայական բայի, և ոմանք ընդ ուղղական անուան. օր. ա՞ղէ դու. հա՛յդա ատաբէնէք։ Ըստ այսմ

մտաց վարին և հրամայականքս, ԹՈՂ, ԱԾ, ԷԿ, ԲԵՐ. որպէս և ածէ 'ի յունականէն առեալ նշանակէ՝ բեր։

261. Շնորհակալական, կոչի ըստ հին քերականին՝ այն բառ որ զովութիւն ցուցանէ զշնորհակալութեն, և դնի անդ՝ ՏԷՆ, ԱՐԺԷՆ, ՏՐՈՒԱԴ։ Յայլ գիրս ոչ երևին այսոքիկ։

---

## Խրատ։

Ահաւասիկ զբացատրութիւն ութ մասանց բանի համառօտեցաք ցայսվայր ըստ կարևոր գիտելեացն. յորս բարւոք վարժեալ աշակերտին, կարող է ապա անաշխատ և ախորժաբար պարապիլ յայլևս տեղեկութիւն՝ որք կան յընդարձակ Քերականութեն։

Այլ աստանօր պիտոյ է՝ զի վարժապետն դնիցէ առաջի աշակերտին զբանս ինչ գրոց 'ի մը Աւետարանէն կամ յայլ դիւրին մատենից. և տայցէ ընտրել թէ ո՞ր բառ անուն է կամ դերանուն, ո՞ր թիւ կամ հոլով. նմանապէս ո՞ր բառ իցէ բայ, ո՞րպիսի բայ, ո՞ր թիւն է, կամ դէմն, կամ ժամանակն։ Այսպէս ընտրելի է նախադրութիւնն, մակբայն, շաղկապն։ Յետ այսպիսի ընտրութեն, զգրաբառ բանն պիտոյ է բացատրել աշխարհօրէն, որով աշակերտն առ սակաւ սակաւ զճաշակ կամ զպտուղ աշխատութեանն տեսեալ ուրախանայ, և յօժարի զարգանալ 'ի կատարեալ ուսումն լեզուի։

Ընդ ութմասնեայ՝ սանդուղս 'ի վեր՝ մասանց բանի,<br>
՝Թէ խանջեցար՝ մտաւորութեամբ՝ ո՞վ պատանի.<br>
մի՛ վեհերիր, ահա 'ի գլուխ՝ ոգւոյ թարմի,<br>
ՇՈՂՇՈՂԱԿԱՆ՝ քեզ ընդարձակ սրահ բանի։<br>
Այլէր դու ցարդ՝ բանին մասանց՝ սոսկ լսելի.<br>
լեցիս արդեօք՝ նոցին շարից՝ ըն խօսելի.<br>
տալ և առնուլ՝ բան ուղղակարգ՝ և հաճելի.<br>
յիմաստ ու'ի գործ՝ մտաւորաց՝ անբաւելի։

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ.

## ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ.

### Յաղագս բաղդատութեան մասանց բանի։

262. Զյօդուածս ձայնս մարդկայինս լեզուի կամ զբառս առանձինն նկատեալ, կոչեմք մասն բանի, որ մասն խօսից մարդկան. զորս առ միմեանս մերձ դնելով կազմի բան կամ խօսք։ Այս միաւորութիւն բառից կոչի բաղդատութիւն, որ 'ի միասին դասել, շարել։

Ուսումն բաղդատութեան է՝ Վարդապետութիւն կապակցութեան մասանց բանի. որ յարմար կարգաւ այնպէս կապակցել զբառսն՝ ըստ կանոնաց լեզուի, զի արտայայտեսցէ զխորհուրդս մտացն։

263. Իսկ թէ քանի եղանակաւ կապի բառ ընդ բառի, գիտելի է այսպէս, զի անուն լինի կապի ընդ այլում անուան և դերանուան՝ կամ իբրև ածական նորա, կամ իբրև բացայայտիչ, կամ իբրև յատկացուցիչ, կամ իբրև խնդիր։

Բայն կապի ընդ անուան, որ լինի կամ խնդիր նորա, և կամ տէր, կամ անուն բային։

Նախադրութիւն կապի ընդ անուան կամ դերանուան՝ իբրև խնդիր իւր։

264. Զասացեալս պարզաբանեսցուք օրինակաւ։ Ածական և գոյական անուն թէ զինչ են՝ ծանուցաք վերագոյն։ (59) յորժամ դնիցին մօտ իրե-

բայց այսպէս, ծառ բարի, եթէ ունին զնոյն թիւ և զնոյն հոլով, որպէս եդեալք, ասին համաձայն թուով և հոլովով: Իսկ եթէ կամ թիւն տարբեր է, կամ հոլովն, ասի՝ անհամաձայն թուով, կամ հոլովով. Օր., 'ի բարի ծառոյ, համաձայն է թուով, երկուքն ևս գոլով եզական. բայց ըստ հոլովոյ անհամաձայն, զի գոյականն բացառական է, և ածականն ոչ հոլովեալ: Իսկ յասելն, 'ի բարի ծառոց, լինի անհամաձայն նաև թուով, գոյականն յոգնակի, և ածականն եզակի: Բայց ասելով, 'ի բարեաց ծառոց, կամ 'ի ծառոց բարեաց, յայնժամ համաձայն լինին թէ թուով, թէ հոլովով: Այս է ահա համաձայնութիւն մասանց բանի:

265. Գոյական անուն ինչ ասի բացայայտիչ կամ յայտնիչ այլում գոյականի, յորժամ յայտնէ զնորա զինչ լինելն, կամ ո՛ր լինելն. Օր. յասելն միայնակ ծառ, ոչ իմանի զինչ կամ ո՛ր ծառ լինելն. և դնելով առ նմա՝ թզենի կամ նռնենի, բացայայտէ թէ ծառ թզոյ է կամ նռան, և ոչ տանձի կամ խնձորոյ. ուստի թզենի կամ նռնենի՝ լինի բացայայտիչ, իսկ ծառն ասի բացայայտեալ կամ բացայայտելի:

266. Յատկացուցիչ ասի գոյական անունն՝ որ զայլ մերձակայ անուն ցուցանէ որո՛յ լինել. Օր. ծառ, կամելով իմանալ թէ որո՛յ տեղւոյ, կամ որո՛յ իրի ծառ իցէ, ասեմք՝ անտառին, կամ դրախտին, կամ գիտութեան. և այս սեռական անուանք ցուցանելով որո՛յ ծառ լինել, ասին յատկացուցիչ, իսկ ծառն ասի յատկացեալ:

267. Խնդիր, նշանակէ՝ խնդրեալն կամ պահանջեալն, ուզածը. և է՝ յորժամ անուն ինչ կամ բայ, կամ նախադրութիւն ունի առ իւր զհոլովեալ բառ ինչ յարմար նշանակութեան իւրում. այն հոլովեալ բառն ասի խնդիր, իսկ պահանջօղն զայն՝ ասի խնդրառու: Օր. փրկութիւն 'ի մեղաց, անունդ՝ փրկութիւն, իբր ազատութիւն՝ պահանջէ զբացառական անուն. ուստի 'ի մեղաց՝ ասի խնդիր փրկութեան: Նոյնպէս՝ փրկեաց զմեզ 'ի մեղաց, երկու հոլովեալքդ ասին խնդիր փրկեաց բային: Նմանապէս յասելն, վասն փրկութեան, այս սեռական ասի խնդիր վասն նախադրութեան.

268. Տէր կամ անուն բայի՝ իմացեալ լինի այն բառ, որ դնի մերձ բային կամ ընդունելութեան, և նշանակէ զներգործօղն կամ զկրօղն. որպէս Տէր կէլէ, կամ կէլիրըմ բէն, կամ օղլու գէօրիւլ, աստ անուանքն սէն, բէն, այսին տէր կամ անուն բային կէլէ, կէլիրըմ. իսկ դերանունն օղլու՝ այսի տէր գէօրիւլ ընդունելութեան։

Արդ՝ զայս ամենայն ունիս տեսանել 'ի միակ յայսմ բանի. * Ես որդի գտւթի՝ ողորմեայց ինձ։ ‖ (Ղուկ. ժԸ. 38.) Աստ Ես է տէր ողորմեաց հրամայականին բային. որդի, է բացայայտիչ ցուցանելով որ Ես լինելն. դաւիթ, է յատկացուցիչ ցուցանելով որոյ որդի լինել. իսկ ինձ դերանունն է տրական խնդիր հրամայականին ողորմեաց։

Քանզի է այսուհետև դհամառօտ տեղեկութիւս բացատրել կարգաւ մի առ մի 'ի վերայ իւրաքանչիւր մասանց բանի. փոյթ տարեալ որչափ հնար է՝ դիւրիմաց օրինակաւ պարզաբանել. և եթէ աշակերտն կից ընդ ջանին իւրոյ տաժան կրեսցէ 'ի սրտի և 'ի բերանի զվերոյգրեալ աղօթական վկայութիւն, անն ունիմք թէ փոքր աշխատութեամբ զարգանայցէ յուսմունս լեզուի, 'ի սակաւ ժամանակի քաղեալ պտուղ բազում։

---

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

## Ի վերայ Բաղդատութեան Անուան։

269. Անուն ինչ դասաւորի ընդ այլում անուան, մի՝ խերև բացայայտիչ. երկրորդ՝ խերև յատկացուցիչ. երրորդ՝ խերև խնդիր. չորրորդ՝ խերև ածական. որպէս և կանխաւ ասացաք։ (263)

Բայց իւրաքանչիւր սոցա արժան է ուրոյն յօդուածով աւանդել զգիտելիսն. և զոր 'ի վերայ անուան ասեմք, նոյն իմանալի է նաև 'ի վերայ ածականին, և դերանուան, և աներևոյթ բային, և որ ինչ խերև անուն վարի 'ի խօսս։

# ՅՕԴՈՒԱԾ Ա.

## Յաղագս բացայայտիչ և բացայայտեալ.

270. Ի սովորական դասաւորութեան՝ բացայայտիչ անուանն գնի զկնի բացայայտեալ անուանն, թէպէտ երբեմն ընդ մէջ երկուցն անկանի և այլ բառ։ Իսկ ներքին իմաստիցն՝ ի մէջ բացայայտիչ անուանն և բացայայտելոյն փակի մեկնական բառ ինչ, այսինքն, այս է, որ է և այլն. որպէս յասելն, Ներսէս աթոռ Ա.Յ, անուանդ աթոռ՝ է բացայայտիչ Ներսէս անուանն. և լսելեայն իմանի՝ որ է, կամ այսինքն աթոռ այ։

Գիտելի է ևս, զի մի եզական անուն կարէ լինել բացայայտիչ կամ բացայայտեալ յոգնական անուան, և բազում անուանց միանգամայն, երբեմն նաև ամբողջ բանի ինչ։ Ի հետևեալ կանոնակս պարզաբար տեսանիցեն այսոքիկ, և յօրինակս իւրաքանչիւր յայտ արասցուք ըստ տեղւոյն։

### Կանոն Ա.

271. Բացայայտիչ և բացայայտեալ համաձայնին միմեանց հոլովով և թուով։

Մեկնութիւն. Եթէ բացայայտեալ անուանն է ուղղական, կամ տրական, կամ հայցական, բացայայտիչն ևս գնի ուղղական կամ տրական, կամ հայցական։ Նմանապէս՝ եթէ բացայայտեալն է եզական կամ յոգնական, բացայայտիչն ևս գնի եզական կամ յոգնական։ որպէս.

* Եւ էին երկոքեան մերկ՝ այրն և կին իւր. ‖ (Ծննդ. Բ. 25։) ուր երկու ուղղականքն այրն և կին՝ բացայայտիչ են յոգնակի ուղղականին երկոքեան, ուստի համաձայնին հոլովով և թուով։

* Շրջել զեղբարբք իւրովք զորդովքն Իսրայելի։ ‖ (Գործ. Է. 23։) ուր զորդովքն է բացայայտիչ անուանն զեղբարբք, երկոքին ևս պարառական հոլով յոգնակի։

* Մինչև ամենայն բնակչացն Ասիացւոց լսել զբանն Տն Հրէից և Հեթանոսաց ։ ‖ ( Գործ . ԺԹ . 10 . ) ուր երկու յետին սեռականքդ են բացայայտիչ բնակչացն, համաձայնք հոլովով և թուով . և ընդ մէջ նոցա անկեալ բառիցն՝ լսել զբանն Տն ։

* Յս Քս որ 'ի ձեզ մեւք քարոզեցաւ՝ ինեւ և Սեղբանոսիւ և Տիմոթէիւ ։ ‖ ( Բ . կորն . Ա . 19 . ) ուր երեք գործիականքն՝ են բացայայտիչ դերանունանն մեւք յոգնակի գործիականին, ընդ մէջ նոցա անկեալ բային՝ քարոզեցաւ ։

Եթէ պատահիցի ուրեք , զի մի անունն իցէ անեզական կամ հաւաքական , և միւսն դնիցի եզական , տակաւին համարին համաձայն թուով ։ Օր . * Ամոզեալ 'ի բաց չքնաղն հայրենի՝ պճնազարդութեան . ‖ ( Բ . մակ . ԺԴ . 7 ։ ) ուր չքնաղնայաւն է բացայայտիչ անեզական հայցականին պճնաւն ։

* Եւ ամենայն ինչ խառնիխուռն , արիւն և սպանութիւն , գողութիւն և նենգութիւն ։ ‖ ( Իմաստ . ԺԴ . 25 ։ ) ուր չորք եզակի ուղղականք են բացայայտիչ հանրականին՝ ամենայն ինչ ։

Եթէ մին յերկուցն իցէ վերջահոլով տրական , և միւսն՝ նախդրիւ , տակաւին պահի համաձայնութիւն հոլովով , իբրզի երկոքին ևս մօտաւորք են նշանակութեամբ ։ ( 117 ) Օր .

* Զոր ինչ արարէք ընդ երկուս Թագաւորսն Ամովրհացւոց , ընդ Սեհոնի և ընդ Ովգայ ։ ‖ ( Յեսու . Բ . 10 ։ ) ուր երկու յատուկ անունքդ վերջահոլով տրական՝ են բացայայտիչ նախդրիւ տրականին՝ ընդ Թագաւորսն ։

272 . Ծանօթութիւն Ա . Արտաքոյ սովորական կանոնիս եղանեն յատուկ անունք տեղւոյ , որք 'ի նախադաս լինելն՝ բազում անգամ ոչ համաձայնին հոլովով . այսպէս ասի՝ յԱնտիոք քաղաքէ . առ ափն Քոբար գետոյ . ուր ըստ սովորականին ասելի էր , յԱնտիոքայ քաղաքէ , Քոբարայ գետոյ . Թէպէտ երբեմն ասի և այնպէս . Օր . 'ի Հեբրոնէ 'ի Քեռնէ փոքուէ ։ Սակայն եթէ յետադաս դնի յատուկ անունն , միշտ համաձայնելի է հոլովով ։

Նաւացք , յատուկ անուն տեղւոյ . վասն զի եթէ

անուն մարդոյ լիցէ, յառաջ և զկնի եդեալ, համաձայնելի է սովորաբար, այսպէս. 'ի Դարեհէ արքայէ։ յաւուրս Հերովդէի արքայի։ առ Աբիաթարաւ քահանայապետիւ։ Սակաւ ուրեք անհամաձայն տեսանի նախադասեալ, յօգոստոս կայսերէ։

273. Խոտորումն Զ. Պատահի ուրեք՝ զի բացայայտիչն դնի յայլ հոլով 'ի պատճառս մերձակայ բային, որոյ խնդիր կամ տէր է բացայայտիչն և բացայայտեալն, և որում յարմարին երկոքին հոլովքն ևս։ Օր.

* Իսկ արդ մատուցեալ երկոտասանիւրոցն առաջի քո արդարադատ, ամենեքեան առ մեզ վնասակարագոյնք, և ես առ քեզ։ || (Նար. ձգ. 1։) Ուր ուղղականքդ ամենեքեան, ես, են բացայայտիչ սեռականին՝ երկոտասանիւրոցն. և ամենայնն է տէր ընդունելութեան մատուցեալ, որ զերկոսին հոլովս ևս ընդունի։

Նոյնպէս է և բան շարականին. * Այսօր ժողովեալ ուխտից 'ի միասին՝ երանելի առաքելոցն և 'նր. կո-անք. || ուր երկու ուղղականքս են բացայայտիչ սեռականին ուխտից. և ամենայնն տէր ժողովելոյ բային։ (տես 380. 424։)

274. Խոտորումն Է. Որոշեալ ընդ մէջ բացայայտիչ անուանն և բացայայտելոյն՝ իմանի մեկնական բառ ինչ, որպէս ասացաք, (270) վասն այսորիկ բացայայտիչն մերթ ոչ համաձայնի հոլովով ընդ բացայայտելոյն, այլ առաւել հետևի մեկնական բառին. Օր. * Վաղով լինէր առ նոսա բազում զօրաց աստացող, ազգն հզօր և պատերազմող։ (Ա. Մակ. Զ. 42.) ուր ուղղական դնի ազգն՝ բացայայտիչ սեռականին զօրաց. զի լծեալ իմանի, որ էր ազգ հզօր։

Նոյնպէս և ասելն. * Երկու մասամբք, զմարմին և զհոգին. || (Յաճախ. եր. 173.) ուր երկու հայցականքդ են բացայայտիչ գործիականին՝ մասամբք. զի լծեալ իմանի՝ ասել կամ ըստ զմարմին և զհոգին։

Կանոն Զ.

275. Իսկ բացայայտեալն հոլովեալ է նախդրիւ, կամ ունի նախդրութիւն ինչ, նախդիրն դնի նմա, կամ նաև առ բացայայտիչն, յորժամ մօտ իրերաց են։ Օր.

* Եւ ընտրեցին զՍտեփաննոս՝ այր լի հաւատովք... եւ զՆիկողայոս զեկն անտիոքացի։ ‖ (Գործ. Զ. 5.) ուր այր բացայայտիչ Ստեփաննոսի՝ կայ առանց զ նախդրի. իսկ զեկն՝ բացայայտիչ Նիկողայոսի՝ ունի զնախդիր։

Սակայն ուր այլ բառք ընդ մէջ մտանեն երկուցն, նախդիրն կամ նախադրութիւնն երկուց եւս դնի սովորաբար։ օր.

* Ամենայն օրէնք 'ի մի բան կատարին 'ի սիրեսցեսն զընկեր քո իբրեւ զանձն քո։ ‖ (Գաղատ. Ե. 14։) Ուր պատուիրանն՝ Սիրեսցես զընկեր քո եւն., յառաջ բերի իբրեւ բացայայտիչ բանին 'ի մի բան, եւ յերկուսին եւս դնի նախդիրն 'ի։

Դարձեալ. * Ոչ եթէ 'ի ձեռագործ սրբութիւնսն եմուտ Քս յօրինակս ճշմարտութեան։ ‖ (Եբրայ. Թ. 24։) ուր յօրինակս՝ է բացայայտիչ ձեռագործ սրբութեանցն, եւ նախդիր եդեալ յերկուսին եւս։

## Կանոն Գ.

276. Մեկնական բառն լինելեայն իմացեալ 'ի մէջ բացայայտելոյն եւ բացայայտչին՝ երբեմն ներգործութեամբ կամ յայտնապէս դնի, որ է, այսինքն, ասեմ, իմա, եւն։

Սովորական կանոնն. Ուր դնի՝ որ է, բացայայտիչն լինելոց է ուղղական. օր. * Զաւակի քում, որ է Քս։ ‖ (Գաղատ. Գ. 16։)

Ուր դնի՝ այսինքն, կամ այսինքն է, բացայայտիչն համաձայնելի է ընդ բացայայտելոյն հոլովով. օր. * 'Ի ձեռն վարագուրին, այսինքն է՝ մարմնոյն իւրոյ. ‖ երկուքն եւս սեռական։ Դարձեալ. * Մատուցուք պատարագ օրհնութեան, այսինքն է՝ պտուղ շրթանց։‖ ուր երկուքն եւս հայցական են. (Եբրայ. Ժ. 20։ ԺԳ. 15։)

Իսկ ուր դնի՝ ասեմ, իմա, բացայայտիչն կամ զնոյն հոլով բացայայտելոյն պահէ, եւ կամ դնի հայցական խնդիր բային։ օր.

* Ուսանել զզօրութիւն իմաստից 'ի նորին աղբերէ, 'ի յիմն ասեմ վերծանութենէ. ‖ (Խոր. պատմ. Գ. 62.)

ուր բացայայտիչ և բացայայտեալ են 'ի բացառական հոլով:

Դարձեալ. * Ամենայն տնօրէնութեանցն Տեառն, զնորին ատեմ և զնեղողսն: ‖ ( Յոհան. իմաստ: )

Դարձեալ. * Երբեք զբարկնս էր ոսկի և արծաթ յերկրի մերում. զնորայրութիւն ատեմ և զորբութեանն: ‖ ( Լամբ. Ատեն. 11: )

---

## ՅՕԴՈՒԱԾ Ի.

### Վասն Յարակացուցիչ և Յարակացեալ:

277. Անուն ինչ կամ դերանուն՝ յորժամ ծանուցանէ 'ի բանի թէ այս ինչ որո՞յ իցէ, ասի յարակացուցիչ: ( 266. ) Զայս գործ առնեն ոչ միայն գոյական անուանքն, այլև ածականք՝ յորժամ միայն են, այլ և աներևոյթ բայն իբրև անուն վարելով լինի յարակացուցիչ, նաև յարակացեալ:

Ըստ բնական դասաւորութեան պիտոյ էր՝ զի յարակացուցիչն դնիցի զկնի յարակացելոյն. սակայն սովորութիւն է յաճախ նախադաս առնել. և ընդ մէջ երկուցն մտանեն այլևս բառք:

Պատահէ 'ի բանի՝ զի մի յարակացեալ անուն ունի զերկուս և զերիս յարակացուցիչս. և մի յարակացուցիչ կարէ ունել ինքեան զայլ յարակացուցիչ: Զայսոսիկ ծանօթութիւնս ունիս նկատել 'ի ներքոյեդեալ օրինակս:

#### Կանոն Ա.

278. Յարակացուցիչն պահանջէ լինել 'ի սեռական հոլով:

Մեկնութիւն. Յարակացուցիչն ոչ հայի թէ յինչ հոլով իցէ իւր յարակացեալն. մինչ զի եթէ նա իցէ ուղղական կամ տրական, կամ հայցական ևն, ինքն միշտ դնի սեռական հոլովով: Օր.

* Ցուցանէ նմա զամենայն թագաւորութիւնս աշ-

խարհի, և զփառս նոցա ։ ‖ (Մատթ. դ. 8.) Ահա-ւասիկ երկու սեռականք՝ աշխարհի, նոցա, են յատ-կացուցիչք հայցականայն՝ թագաւորութիւնս, զփառս. ցուցանելով թէ որո՞յ թագաւորութիւն կամ փառք իմացեալ լինի ։

* Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայու-թիւն երկնից. ‖ (Մտթ. ե. 3.) աստ յատկացեալն արքայութիւն ուղղական է, և իւր յատկացուցիչն երկնից՝ սեռական, ցուցանելով թէ ոչ է արքայութիւն երկրի ։

* Առանց բարեգործից հրամանաց անսարկու-թեն ։ ‖ (Նար. ծդ. 2.) ուր ըստ ընական դասաւո-րութեն ասելի էր, առանց անսարկութեն հրամանաց բարեգործից ։ առանց նախադրութեն, և սեռականն անսարկութեն, նորա խնդիր. (215.) հրամանաց է յատ-կացուցիչ անսարկութեն . իսկ բարեգործից՝ յատկացու-ցիչ հրամանաց . ուր անունդ բարեգործ ածական գոլով, միայնակ եղեալ է իբրև յատկացուցիչ, ընելեայն ունելով զգոյականն, որ բարեգործ [illegible] ։

279. Խոտորումն ա. Յորժամ յատկացեալն է ՚ի բացառական կամ ՚ի գործիական հոլով, բազում անգամ յատկացուցիչն ևս դնի ՚ի նոյն հոլով փո-խանակ դնելոյ սեռական ։ որպէս.

* Հաստատեա զխրատ քո պատուիրանաւ միով հոգւով ։ ‖ (Պատու. ժթ. 5.) ուր դնելի էր՝ հոգւոյ ։

* Ոչ էր արբեալ նորա այնչափ յօրէ ծննդենէ հարդէ ։ ‖ (Յուդիթ. ժբ. 19.) փոխանակ ասելոյ՝ յօրէ ծննդեան հարց ։

* Նա յամենայնէ բազմաց յառաջ կալան զաղէքսան-դրոս ։ ‖ (Կորձ. ժթ. 33.) փոխանակ ասելոյ, ՚ի բազմութենէ ամենայնի ։

* Նուրովք մարգարէիւք ձայնիւք ։ ‖ (Ագաթանգ. 157.) փոխանակ ասելոյ, ձայնիւք մարգարէիցն իւրոց ։

Տեսանի յօրինակդ, զի ոչ միայն յատկացուցիչն՝ այլ և ածական իւր դերանունն զհետ երթայ հոլո-վոյ յատկացելոյն, փոխանակ ասելոյ՝ հարց, հարց, դնելով հարդէ, հարովք ։ Նոյն եղանակ պահի և յայլ ածականս. որպէս * Յօրինմամբ այսպիսեօք վճռիւք, (Նար.

խլթ. 1.) փոխանակ՝ այսքանեաց վեհից: Իսկ վասն այսր պատճառի՝ երբեմն թէ և յատկացուցիչն դնիցի սեռական հոլովով, ածական նորա դերանունն համաձայնի յատկացելոյն. որպէս. (Նար. ԺԱ. 2.) * Զնորայն՝ խորովքն տուժեաց կրէց տաժանմամբ.|| ուր գործիականն ածականաւ՝ է յատկացեալ, կրէց՝ սեռական յատկացուցիչ նորա. խորովքն ածական կրէց. և ասելի էր՝ տաժանմամբ կրից իւրոց տուժեաց, վճարեաց զնորայն, այս է զպարտիս նորա, ադամայ:

280. Խոտորումն Է. Երբեմն լեզուագէտք մեր փոխանակեն զհոլովս սոցա. այս է զյատկացուցիչն դնեն 'ի հոլով յատկացելոյն, և զյատկացեալն դնեն 'ի սեռական հոլով: որ.

* Յանդգնեցայ շրթամբք խօսել 'ի քանս երկրաւորս:|| (Նար. Ի. 2.) փոխանակ ասելոյ՝ խօսիւք շրթանց: Այնպէս ասի. * Ընդունողք լուսոյն ոչ եմք նոյն՝ որք 'ի ծարծին աչաց զնոյն պարփակեմք: || (Լամբ. Պատար.) փոխանակ ասելոյ՝ յաչս մարմնոյ պարփակեմք զնոյն, զլոյսն:

## Կանոն Է.

281. Յատկացեալն երբ կայ նախդրիւ հոլովեալ, նախդիրն դնի առջրաբար 'ի նախադասն:

Մեկնութ. Յորժամ յատկացեալն է նախդրիւ տրական, կամ հայցական, կամ բացառական, նախդիրն դնի յայն՝ որ յառաջոյ կայ, թէ յատկացեալն իցէ, և թէ յատկացուցիչ, և կամ այլ բառ վերաբերեալ առ նոսա: որ.

* Վասն լոյսի մեզ թողուլ զօրէնս և զխրատունս դոյ, և 'ի հրամանս դառնալ թագաւորի: || (Ա. Մակ. Բ. 21.) Աստ յատկացեալքն՝ հայցական և նախդրիւ տրական՝ նախադաս են, ունելով զնախդիրս զ, 'ի. և առանց նախդրի կան յետադաս յատկացուցիչքն՝ դոյ, թագաւորի:

* Բայց զի վրիպեցան յայս գիտութենէն, և 'ի նորին օրհնութենէն: || (Իմաստ. ԺԵ. 19.) Աստ յատկացուցիչքն նախադասք յայս, 'ի նորին, ունին զբացառական նախդիր յետադաս յատկացելոցն գիտութենէն,

օրհնութիւն . և աւելի էր , վրիպեցան 'ի գիտութէն այ , և յօրհնութէ նորին ։

* Ընդունիցիք զանթառամ փառացն պսակ ։ ‖ ( ա . Պետ . Ե . 4 . ) Ըստ հայցական նախդիրն զ եդեալ է 'ի բառն անթառամ , որ է ածական յատկացելոյն՝ պսակ . իսկ սեռականն փառաց՝ է յատկացուցիչ , և բուն շարն լինելոց է , զանթառամ պսակ փառաց ։

Սակայն 'ի հայցական հոլով յատկացելոյն՝ բազում անգամ , և վայելչաբար իսկ՝ նախդիրն զ դնի առ յետադաս յատկացուցիչն . որպէս . * Գաւառս բազումս հատէք զիմոյ թագաւորութե . ‖ ( ա . Մակ . ԺԵ . 29 . ) ուր յատկացեալն է հայցականն գաւառս , և զ նախդիրն կայ 'ի վերայ յետադաս յատկացուցչին , փոխանակ ասելոյ՝ զգաւառս տէրութեան իմոյ ։ Սոյնպէս է . * Քանի՞ սակառի լի բարձէք զկոտորոցն ։ ‖ ( Մարկ . Ը . 19 . ) փոխանակ ասելոյ , զքանի սակառի կոտորոցն ։

Դարձեալ , յոժ վայելուչ բազում անգամ կրկնի նախդիրն առ երկոսին ևս , այլ և յածականս նոցա և 'ի մերձակայ բառս , մանաւանդ ուր այլ բառ ընդ մէջ անկանի , կամ յատկացուցիչքն բազում իցեն . որ . * 'Ի պղծութիւ մարդոյ , կամ յանասնոց պղծոյ ։ ‖ ( Ղևտ . Է . 21 . ) ուր անասնոց՝ է սեռական յատկացուցիչ յատկացելոյն 'ի պղծութէն , և ունի զնորա նախդիրն յ ։ Դարձեալ ( անդ . 23 . ) * Զամենայն ճարպ զարջառոյ և զոչխարի և զայծեաց մի ուտիցէք . ‖ ուր առ երիս յատկացուցիչս կրկնեալ է զ նախդիրն ։

* Նաև զտառապանս իսրայէլի զյոյժ դառնութեանց ։ ‖ ( Դ . Թագ . ԺԴ . 26 ։ ) ուր զ նախդիրն կրկնի առ յոյժն , որ է ածական յատկացուցչին՝ դառնութեանց ։

* Խաղաղութի արասցուք ընդ արս ընդ ազգիդ այդորիկ ։ ‖ ( ա . Մակ . Զ . 58 . ) ուր նախադրութին ընդ՝ կրկնի առ յատկացուցիչն ազգին ։

## ԿԱՆՈՆ Գ.

282. Որ յատկացեալն լռելեայն կայ ՚ի բանին, կամ հեռաւոր է, ՚ի յատկացուցչէն դնելի է նախդիրն։

*Մեկնութ.* Պատահէ բազում անգամ, զի յատկացեալն զօրութեամբ միայն կամ լռելեայն իմացեալ լինի, և յատկացուցիչ նորա դնի յայտնապէս. և յայնժամ եթէ բանն պահանջէ նախդրիւ հոլով, նախդիրն հարկաւ դնելի է ՚ի յատկացուցիչն, հանդերձ դիմորոշ յօդիւ։ Այնպէս պատահէ՝ զի յատկացեալն եդեալ կայ յառաջ միանգամ, և յետոյ գան բազում յատկացուցիչք. և յայնժամ ևս կրկնի նախդիրն. որպէս տեսանի ՚ի վերոյիշեալ օրինակդ. տես և զհետևեալսն։

* Յոգի փախձանեալ մի՛ մնցէ ՚ի հօր և ՚ի մօր, յեղբօր և ՚ի քեռ.‖ (Թուղթ. Գ. 7.) ուր յատկացեալն է բառն՝ յոգի, նախդրիւ տրական, և նախդիրն կրկնի առ չորս յատկացուցիչսն. որով իբր կրկնէ զյատկացեալն, փոխանակ ասելոյ, յոգի հօր, յոգի մօր, յոգի եղբօր, յոգի քեռ։

* Որդիքն եբրայեցւոց իբրև լուան զԹագաւորին.‖ (Գ. Մակ. Ե. 20։) ուր յատկացեալն զօրութեամբ իմանի, այսինքն զհրաման Թագաւորին։

* Զտղայութեանն ՚ի բաց խափանեցի.‖ և յատկացեալն իմանի, զգործս տղայութեան։ Նաև, * Նոքա զի զեղծանելի պսակն առնուցուն, և մեք զանեղծութեանն.‖ ուր յատկացեալն պսակն՝ լռելեայն կրկնի նախդրիւն՝ զանեղծութեանն, այսինքն զպսակն անեղծութեան։ (Ա. Կորն, Ժգ. 11. Թ. 25։)

283. Գուշակելի. Զգուշալի է, մի՛ զոր և իցէ սեռական համարիլ յատկացուցիչ. վասն զի կարէ ըստ տեղւոյն լինել նաև բացայայտիչ, կամ խնդիր բայի և նախադրութեան, կամ տէր բայի։ (տես 287. 293։)

Եւ որոշելոյ զբացայայտիչն ՚ի յատկացուցչէն՝ այս է կանոն։ Բացայայտիչն յայտ առնէ թէ մերձաւոր անունն կամ ասացուածն զի՞նչ է, կամ ո՞վ է։ Իսկ յատկացուցիչն յայտ առնէ՝ թէ որո՛յ է, կամ ում պատշաճի. որպէս յասելն * Գիրք ծննդեան Յի

Ք͞ի, Այս սեռականք են յատկացուցիչ. զի ծնն-դեան յայտ առնէ թէ զիրքն որո՞յ է, ըստ ծննդեան. իսկ թէ ո՞յր ծննդեան, յայտնէ՝ Յ͞ի Ք͞ի ։ Բայց զկնի գայ սեռականն՝ Որդւոյ Դաւթի, սեռականն որդւոյ բացայայտէ՝ թէ ո՛ր յո՛ է, ըստ այնր որ է որ-դի, որո՞յ, Դաւթի ։

# ՅՕԴՈՒԱԾ Գ.

## Անուն խնդիր և խնդրառու ։

284. Ուղղում անգամ անուանն ունի մերձ իւր զայլ անուն ինչ կամ դերանուն, որ ասի խնդիր նո-րա. (267.) որ ոչ բացայայտիչ է, և ոչ յատկա-ցուցիչ, այլ ծայր կամ ենթակայ ներգործութեան ինչ, և կամ կրից ։

Անունն իբրև արմատ բայի, կամ ածանցեալ, առնու զնշանակութիւն ինչ բայի. և վասն այսորիկ՝ որպէս բայն կամի զխնդիր ինչ, նոյնպէս անունն՝ թէ գոյական, և թէ ածական՝ պահանջէ զխնդիր. և առաւել խօսեսցուք նախ յաղագս գոյական անուանն, թողեալ զածականն 'ի յաջորդ Յօ-դուածդ։ (292)

Նախատիպ անուանք ինչ, ես առաւել ածան-ցեալքն (102) որք վերջանան 'ի թիւն, ումն, ունդ, ուած, բազում ուրեք նշանակեն իբրև աներևոյթ բայ, կամ իբրև ընդունելութիւն ներգործական կամ կրաւորական մտօք. որպէս ծնունդ նշանակէ՝ ծնանելն, ծնեալ ։ փրկութիւն, փրկելն, փրկիլն, փրկօղ. եւն ։ Ըստ այսպիսի այլ և այլ նշանակութեան առնուն խնդիր 'ի զանազան հոլովս. և այս են կանոնքն ։

### Կանոն Ա.

235. Գոյական անուանն՝ նշանակելով իբրև ներգործական աներևոյթ, խնդրական հայցականին՝ առնու սովորաբար զսեռա-կան ։

Մեկնութի. Նոյնանքս՝ ատելութ, անարգութ, ճա-շակումն, պատառումն, կորուստ, ծնունդ եւն, իբրեւ ներ-գործական նշանակեն՝ ատել, անարգել, ճաշակել, պատառել, կորուսանել, ծնանել։ Այսպա սովորա-կան խնդիր լինելոց էր 'ի հայցական հոլով (299.) որ ատել զթշնամիս, անարգել զմեզս, ճաշակել զպտուղ եւն. բայց սովորաբար դնի սեռական հո-լովով ըստ կանոնի յատկացուցչին (278.) որ.

* Դարձն զսիրտ նորա յաղթութեան թշնամւոյն մե-րոյ։ ‖ (Եսթեր, ժզ. 13.) որ յաղթել զթշնամին մեր։

* Յանարգութիւն մեղաց. (որ զմեզս.) Յետ ըն-դունելութե փրկաւէտ ճշմարտութեն. ‖ որ յետ ըն-դունելոյ զգիտութի։ (Եբրայ. Թ. 26. Ժ. 26։)

* Ճաշակմանէ պտղոյն ճաշակեցին զդառնութի մե-ղաց։ ‖ (Շարակն.) որ ճաշակելով զպտուղն։

Ըստ այսոցիկ օրինակաց դիւրաւ իմացեալ լի-նին՝ եւ այս բանք. * Նա՝ դժոխոյն ժառանգութի. ‖ որ առ 'ի ժառանգել զդժոխս։ * Օ՛ փառացն ան-կշռութիւնս. (որ ոչ կշռելն զփառսն.) ուխտիդ մոռացութենս ‖ որ զմոռանալն զուխտս։ (Նար. Ի. 2. խե. 2։)

286. Բայց զի յայտնի լինիցի՝ թէ այդպիսի սե-ռականք ունին զտեղի եւ զմիտս հայցականի, հե-ղինակքն բազում անգամ հայցական եւս դնեն։ որ * 'Ի ձեռն ծննդեանն Եւայի Կայենի. ‖ որ ծնանելոյն զկայէն։ (Յաճախապատ. 28։)

* Առաւել քան զարարչագործութեանն յոյժ է զաշ-խարհս. ‖ որ քան զարարչագործելն զաշխարհս։ (Եղիշ. պատմ. 30։)

* Նմա կրկին տեղացմանց, մինն նետս, եւ միւսն՝ քարինս. ‖ որ տեղալոյ զնետս, զքարինս։ (Նար. Հ.։)

* Օրհնութեանցն իսահակայ յակոբայ, եւ յակոբայ յուդայ, ոչ 'ի նոսա՝ այլ 'ի թոռունս նոցա կատա-րեցան. ‖ որ օրհնելն զյակոբ, զյուդա։ (Մարգ. մեկն. 316.)

Նոյնպէս իմացեալ լինի եւ ասացեալն (Գործոց. Բ. 11.) * Լսեմք խօսից նոցա 'ի մեր լեզուս պէ-ծամեծս այ. ‖ որ լսեմք խօսելոյ նց զմեծամեծս այ։

## Կանոն Է.

287. Գոյական անուն՝ նշանակիչ իրին ընդունելութեան ներգործական, փոխան հայցականի՝ առնու սեռական :

Մերձաւոր է այս անցեալ կանոնին . որպէս անուանքս՝ նշանակ , փրկիչ , հնարք , ընդունելի , առիթ , եւն , յորժամ խնդրի՝ նշանակող , փրկող , հնարող , ընդունող , առթող կամ ներգործող , առնուն 'ի սեռական հոլով : օր .

* Տկարաց ես ընդունելութիւն . || որ ընդունող զտկարս : ( Յուդիթ . Թ . 16 : )

* Ապստամբութեան նշանակ . ( որ նշանակող կամ ցուցող զապստամբութիւն . ) Որ փրկութիւնդ ես անձանց . ( որ փրկող զհոգիս . ) Հնարք ներհնման . ( որ հնարող զներհնումն . ) Առիթ պատճառաւորաց . || որ ներգործող զառեղծուածս : ( Նար . Ի . 1 . 3 . Ճռ . 1 . Ղկ . 1 : )

288. Գիտելիք . Այսպիսի սեռական անուանք մերձ եղեալք առ այլ գոյական՝ ոչ միշտ խնդիր են նորա . այլ կարեն լինել յատկացուցիչ կամ տէր բայի : Եթէ նորավարժն չկարիցէ ընտրել , թող յատկացուցիչ համարեսցի : Բայց զարգացեալն ունի որոշել այսպէս . եթէ սեռական անունն 'ի մէջ բերէ զներգործողն , անդ տէր բայի է . եթէ 'ի մէջ բերէ զձայր ներգործութեան , անդ խնդիր է . իսկ եթէ 'ի մէջ բերէ որոյ լինել , անդ յատկացուցիչ է :

Յառաջինկայ բանիդ տեսանի այս . * Ըստ յառաջագոյն քարոզութեն յովհաննու մկրտութեան ապաշխարութեան : || ( Գործ. ԺԳ . 24 . ) որ պարզելի է . ըստ յառաջագոյն քարոզելոյն յովհաննու զմկրտութիւն ապաշխարութեան . ուր քարոզողն է յովհաննէս , ուստի է սեռական՝ տէր քարոզելոյն . Մկրտութեան հայցական խնդիր քարոզութեն . զոր մարթ է եւս դնել սեռական , որ քարոզութեան մկրտութեան . իսկ թէ որոյ իցէ մկրտութիւն է , ապաշխարութեան , եւ այս եղեւ յատկացուցիչ : Այսպէս լուծանելի է եւ զայլ բանս :

## Կանոն Գ .

289. Գոյական անուն կրաւորական նշանակութեամբ եդեալ՝ պահանջէ զբացառական հոլով:

Մեկնութիւն . Նմանոյն կրաւորական բայ կամ ընդունելութիւն հասարակ խնդիր առնու զբացառական հոլով: (399 .) Աստի և անուանք որք զկրաւորական նշանակութիւն ունին, բացառական կամին. որպէս առաջնորդ, ծնունդ, նշանակեալ՝ առաքեալ, ծնեալ. և բացառականաւ ասի . * Որ շաղախեալ առ 'ի հօրէ և 'ի հոգւոյդ բանին յաշխարհ՝ մարգարէին ծանուցեր . ‖ (Շարակն.) ուր երկու բացառականքդ են խնդիր անուանն առաջնորդ, և սեռականն՝ բանին է տէր բայի . իսկ նախդրիւն յաշխարհ, ասի խնդիր բնութեան : (413)

Նոյնպէս յասելն . * Հրաշափառ ծնունդ քո 'ի մէ հօրէն . ‖ (Շարակն .) բացառականն 'ի հօրէն՝ է հասարակ խնդիր անուանն ծնունդ . և սեռականն քո, տէր բայի . որ ծնանիլն քո 'ի սբ. կոյս Ածածնէն :

## Կանոն Դ .

290. Գոյական անուն՝ արմատ չեզոք բայի, կամ ունօղ չեզոք նշանակութեան, ըստ յարմարութեան առնու զայլ և այլ հոլով:

Հասարակ կանոն է չեզոք բայից, զի առնուն միայն խնդիր ըստ պահանջելոյ նշանակութեան իւրաքանչիւր բայի յայլ և այլ հոլով: (414) ուստի նոյնպէս առնուն և անուանք հաղորդք նշանակութեան նոցա : որ .

Ուստ յաշխարհ : Ապստամբութիւն յօրինաց : Համբերութիւն փորձանաց : Գալուստ յերկնաւորէն : Ելք յերկինս :

Սակայն պատահէ և յայսպիսի անուանս 'ի սեռական հոլով գտանել զխնդիր նոցա, որ և համարի իբրև յատկացուցիչ : Նոյնպէս ասի՝ յանցանք օրինացն, փոխանակ ասելոյ՝ զօրինօք կամ ընդ օրէնս : Ելք ծառոյն, կամ եգիպտոսէ, փոխանակ, 'ի ծառոյն, յեգիպ-

տան։ Օտարութիւն դից, իբր 'ի դից կամ 'ի կռոց։ (Նար. ժը. 2. Հն. 8. 12։)

291. Գուշակ. Բազում ուրեք գոյական անուանս ունի առ իւր զխնդիր ինչ, բայց ոչ է իւր յատկապէս, այլ էական բային՝ որ կայ լռելեայն. իբր ասի. * Նշա տեսակաւ, այլ ոչ համեղութիւն. ‖ (Նար. լդ. 4.) ուր երկու գործիականքդ երևին խնդիր աղին, որ չէ այնպէս, այլ ծածկապէս իմանի՝ աղ եմ տեսակաւ կամ արտաքին երևութիւ, և ոչ թէ համ տալով։

Նոյնպէս իմացեալ լինին, կեանք 'ի կենաց. լոյս 'ի լուսոյ. խաղաղութիւն առ քեզ. եղբայր առ 'ի հօրէ կամ առ 'ի մօրէ. ըստ 'ի կուսէն տնտեսութեն Քի. իբր կեանք որ է 'ի կենաց, լոյս որ է 'ի լուսոյն, խաղաղութիւն որ է առ քեզ, եղբայր որ է 'ի հօրէ, որ է 'ի մօրէ, ըստ տնտեսութեն որ է 'ի կուսէն։

## ՅՕԴՈՒԱԾ Դ.

Գոյական անուան խնդիր ածական։

292. Ածական անուանք՝ պարզք, կամ բաղադրեալք և ածանցեալք՝ ունելով զնշանակութիւն ինչ բայի, կամ զհայեցումն ինչ առ այլ, առնուն զայլ անուն կամ զդերանուն իբրև խնդիր իւրեանց. և այնպիսի անուանք ըստ բազմագոյն մասին գոյականք են, և սակաւք՝ ածական։ Իսկ թէ յինչ հոլով լինին խնդիր, ծանուսցուք կանոնօք ինչ։

Կանոն Ա.

293. Ածականք նշանակեալք ներգործաբար՝ խնդրեն հայցական հոլովոյ սեռական անուան սովորաբար։ (տե՛ս 287)

Մեկնութիւն. Ածականքն ածանցեալք կամ բարդք՝ բազումք ունին զնշանակութիւն ներգործողի. որպէս վերջացեալքն 'ի ող, իչ, ակ, ար. իբր Խնդրակ նշանակէ՝ խնդրօղ, որոնօղ. Մատնիչ, մատնօղ. Գործօն կամ գործուն, գործաւոր, գործօղ. Նախանձողական, տրտմե-

ցուցանող են : Նոյնպէս այսպիսեաց սեռական դնի . զորօրինակ :

* Կարօտեալ եմ խնդրակ . անյագաց եմ փրկիչ : ( Յուդիթ . Ժ. 16 : )

* Գործօնաց գործոյն . ( Դ. Թագ. ԺԲ. 14 : ) այսինքն գործողաց զգործն :

* Նապաստական աշխատութեանցն գործաւոր : ( Իմաստ. ԺԷ. 16. )

* Հոգւոյս իմ Թախծողական . ( տրտմեցուցիչ . ) Խոստովանութեան հաշտարանք . ( հաշտեցուցիչք . ) Սկզբնաձիր ողորմածութեան . այսինքն առաջին շնորհօղ : ( Նար. ԽԵ. 1 . ԼԱ. 2 . ՀԲ. 2 : )

Սակայն առ այսպիսիս նաեւ զհայցական դնեն հեղինակք . ( որպէս և 286 . ) որ Օծնողս անարգուք . ( անարգօղք . ) Նշարելի շեշտա : Հաստողին սրտէ : Տածողական շնորհաւ . ( այսինքն տածօղ , հոգացօղ . ) Նզգիտակ ընդդէմ . այսինքն ոչ գիտօղ :

Նոյնպէս և 'ի բանս շարականաց . Ընդունիչ շնորհ . լցուցիչ շնորհաց : Նաև 'ի միում եւս բանի երևին երկու հոլովք յասելն . * Դատապարտօղք ոչ ինչապաշտից . այսինքն դատապարտօղք ոչ խոստովանողացն զԱստուած . ուր հայցականն պէտ է խնդիր սեռականին [illegible] , և սա խնդիր [illegible] անուանն :

Կանոն Է.

294. [illegible] (տե՛ս 289)

Նոյնպէս ասի , շարժուն 'ի հոգւոյ . այսինքն շարժեալ կամ շարժելի : [illegible] 'ի խղճէ , այսինքն ինքնին դատեալ : [illegible] 'ի [illegible] . այսինքն ոչ խաբեալ , ոչ խաբելի :

Սակայն լինի այսպիսի անուանց , որպէս և ընդունելութեան , փոխան բայառականի դնել սեռական . որ , [illegible] , նշանակէ՝ վիրաւորեալք 'ի սրոյ : [illegible] , այսինքն կոխեալ յոտից : Նոյնպէս * Կապեալք [illegible] , կաշկանդեալք [illegible] ( Իմաստ. ԺԷ. 2. ) այսինքն 'ի խաւարէ , 'ի գիշերոյ :

## Կանոն Գ.

295. Ածականք նշանակելք նմանութեան, յարմարութեան եւն, առնուն զտրական վերջաւորովն, կամ նախդրիւ:

Այսպիսի են՝ բաւական, իշխան, քաղցր, կարող, արժանի. եւն: Ուստի ասի, բաւական արդարոյն, կամ առ անձինս ցանկոյն: Իշխան մահու եւ կենաց: Քաղցր դժնէից: Կարօտ հացի, կամ առ այս: Արժանի վարձուց:

Յայսպիսեաց ոմանք առնուն նաեւ զբացառական, եւ համարակաբար բաղադրեալքն մասնկամբ ան կամ տ, անխտիր առնուն զտրական եւ զբացառական: որ. կարօտ ի կերակրոյ: Տգէտ գրոց կամ ի գրոց: Անմասն կամ անհաղորդ ծնողաց, կամ ի ծնողաց. եւն:

## Կանոն Դ.

296. Ածականք նշանակելք հեռաւորութեան, թերութեան, եւն, առնուն առաւելաբար զբացառական, թէպէտ եւ տրական եւս լինի:

Այսպիսի են՝ խափանեալ, հեռի, արձակ, աղքատ, դատարկ, թերի, օտար, ազատամիտ եւն:

Ուստի ասի. փախստեայ ի չարեաց: Արձակ ի ցաւոյ: Ազատ ի մեղաց. Թերի ի ծնողաց: Անպարտ ի յանցանաց: Ապստամբ յօրինաց: Հեռի ի տանէ կամ արդարութենէ: Օտար ի մօրէ, կամ աշխարհէ եւն:

297. Դիտողութիւն. Տեսանի յառաջ բերեալ օրինակօքդ՝ զի անուանք ածականք ըստ իւրաքանչիւր նշանակութեան առնուն զայլ եւ այլ հոլով: Բայց յուշ ածելիք, թէ գործիական հոլովն գրեթէ հասարակ է ամենայն անուանց, որպէս եւ բայից, (409) նմանապէս եւ ներգոյական ասացեալ հոլովն: Ուստի մարթ է ասել. Աղքատ ընչից, կամ ընչիւք, կամ յընչս: Անզեղջ ի չարեաց, կամ ի չարիս: Անփոյթ գիտութեան, ի գիտութենէ, ի գիտութիւնս. եւն:

## Կանոն Է.

298. Դերանուն և բաղդատական անուանք ընդունելեան առաջնակայն հոլովին :

Մեկնութիւն. Որովհետև այսպիսի անուանք 'ի մէջ բերեն զհամեմատութիւն առ այլս ըստ առաւելլին, կամ ըստ նուազին, ապա են առնուլ զայնս 'ի սեռական կամ 'ի տրական հոլով, կամ 'ի բացառական, կամ 'ի ներգոյական, կամ նախադրութեամբ քան, առ, 'ի մէջ : որպէս.

* Ամենեցունց նախարարացն մերոց հայրապետացն և խոհեմագոյն : || ( Խոր. ա. 23 : )

* Ոչինչ նուազ էր կոյսն Արքայէն հասակէ : || ( Խոր. բ. 80. ) այսինքն ոչ պակաս էր քան զհասակ արքային :

* Մեծն պետականաց : Մեծն 'ի ձէնջ : Մեծն 'ի մարգարէս : Մեծ քան զաշխարհ : 'Ի մէջ իմաստնոց իմաստնագունի . || այսինքն իմաստնագունին 'ի մէջ իմաստնոց :

* Ներագոյնքն 'ի նոցանէ : Յայլոցն վերագոյն. ( այսինքն քան զայլսն. ) Կրտսերագոյն յորդւոց նորա : ||

299. Դիտելի. Միջական անուանք ըստ մեծի մասին գոլով ածականք, ( 38. ) ըստ կանոնի ածականաց առնուն խնդիր, առաւել 'ի բացառական հոլով, այլև 'ի սեռական ևս : որպէս.

Բացառական. * Եղև իբրև զմի 'ի մէնջ : Դուստր միոյ ուրուք 'ի մեծամեծաց : Ո՞վ ոք յամենայն աստուածոց : Ոչինչ յայտնագունեաց : Ո՞ ոք 'ի ձէնջ. Իւրաքանչիւրոք 'ի ձէնջ : Ամենայնք 'ի ժամանակագրաց : Նոյնպէս և թուական անուանց, երկուս 'ի նոցանէ. հինգն 'ի կուսանաց Մտ. :

Սեռական. * 'Ի վերայ միոյ լերանց : Երկուս հազարս երիվարաց : Ամենայն ինչ չնաղածոյ Աբրովդ : Յինչ և ձեռնարկէ ոք վարժելոյն . ( այսինքն 'ի վարժելոյն : ) Օ՜ բնաւն ծայրագունին բարութեան . ( այսինքն զոլորն 'ի ծայրագոյն բարութէն : ) Որ ոք ծերոց և տղայոց, և եթէ յողորմածաց ոք . || յայսմ երևի սեռականին և բացառականին :

# ՅՕԴՈՒԱԾ Ի.

## Ածական անուան՝ համաձայն գոյականին:

Ածական անունն՝ յորժամ ներգործութեամբ, կամ յայտնապէս ունի առ իւր զգոյականն, կարէ դասիլ յառաջ և զկնի, որ ասի Նախադաս, և Յետադաս: Իսկ թէ զիա՞րդ պարտի համաձայնիլ ընդ գոյականին, 'ի հետևեալ կանոնսդ ցուցանի:

### Կանոն Ա.

300. Ածականն նախադաս գոյականի՝ ազատ է 'ի համաձայնելոյ:

Մեկնութիւն. Ածականն մի՝ կամ բազում, յորժամ յառաջ դնի քան զգոյական իւր, ոչ է պարտական համաձայնիլ նմա 'ի հոլովս և 'ի թիւս. այնպէս զի եթէ յետադաս գոյականն իցէ յոքնակի սեռական կամ գործիական, ածականն կարէ դնիլ եզակի ուղղական: Օր.

* Ազգին հրէից՝ օգնական նիզակակից սուսերական բարեկամաց մերոց: || (Ա. Մակ. ԺԱ. 33:) ուր երեք ածականքդ են եզակի ուղղական, իսկ գոյականն բարեկամաց՝ յոքնակի սեռական:

* Յամենադէտ յամենակալ դատաստանացն Այ: || (Բ. Մակ. Է. 35.) ուր երկու ածականդ նախադիր միայն ունին եզակի, և գոյականն 'ի դատաստանացն՝ յոքնակի բացառական:

* Կենդանի և մշտնջենական բանիւն Այ: || (Ա. Պետ. Ա. 23.) ուր գոյականն բանիւն՝ եզակի գործիական, և ածականքն՝ ուղղական: Այսպէս դիտելի է 'ի յաջորդ օրինակսն:

301. Ասացաք, նախադաս ածականն ազատ է, կամ չէ պարտական համաձայնիլ. որով տամք իմանալ թէ չէ նմա ընդդէմ համաձայնիլ, այլ ըստ տեղւոյն համաձայնի ևս հոլովով, և թուով. և եթէ բազում են նախադաս ածականքն, հեռաւորն համաձայնի, և մօտաւորն մնայ անհամաձայն: Օր.

* Ի պղծոց և ՚ի նորաձայն բանից ։ || (ա. Տիմ. Զ. 2.) ահա առաջինն համաձայնեալ է, և երկրորդն ոչ ։

* Մեծաւն և կատարելոյն և անձեռագործ խորանաւն ։ || (Եբրայ. Թ. 11.) ուր յերից ածականաց առաջինքն համաձայն, և երրորդ մօտաւորն անհամաձայն ։

Նոյնպէս ասի . * Հաստատարմօք և ստուգեալ վկայիւք ։ Հանդերձելոց և յաւիտենից բարութեանց ։ || (Գլխ. 342. 345.) ուր հանդերձելոց՝ հոլովով միայն համաձայնեալ է. երկրորդն՝ և ոչ հոլովով ։

302. Գիտելի. Միավանկ կամ երկավանկ ածականքն առաւել դիւրաւ համաձայնին ՚ի նախադաս լինելն . որպիսի են մեծ, նոր, ողջ, մի, այլ, ամէ, բարի, բոլոր . ևն . ուստի վայելչաբար ասի, ՚ի մեծի տօնին . նորոյ օրինակին . յաջում թևի . ՚ի միոջէ մարդոյ . բարեաց աւետեաց . բոլորից արարածոց . ևն ։

Նմանապէս ածանցականքն վերջացեալք ՚ի եան, ին, ւոր, ային, լի, ջեն ևն, վայելչաբար համաձայնին դնելով, ՚ի բնաւորականաց կամ յանբնականացն ախտից . իմաստնոցն բանից . լուսաւորին ուխտին ևն ։

Սակայն զայս համաձայնութիւն չէ պարտ իմանալ ՚ի նախդրիւ հոլովս յոգնականին, յորժամ ածականն անմիջաբար մօտ գոյականին կայ . ուստի անպատշաճ է ասել, յերկնային բանս . ՚ի բնաւոր գործս . ՚ի երկրոր բարիս . ՚ի յաւելեալ վիշտս . ՚ի յառաջին աւուրս ։ Բայց ուր ընդ մէջ երկուցն մտանէ այլ բառ, մարթ է համաձայնել . որ . * Յիշելով զմեծամեծ նորա պարգևաց շնորհս . || (Ժամագիրք .) ուր հեռաւորն համաձայնեցաւ, իսկ յետինն անհամաձայն թողաւ, պարգևաց . և դժուարաւոր լինէր ասել, զանչափս շնորհս ։

Կանոն Է.

303. Յետադաս ածականն՝ մի կամ բազում համաձայնի անխտրաբար ընդ գոյականին ՚ի հոլովս և ՚ի թիւս ։ որ . * Փեղկին աներևութ թաքուցեալ ծածկեսցես ։ || (Ղուկ . ԺԲ . 12 ։) ուր երկու յետադաս ածականքն եզակի գործիական՝ համաձայն գոյականին փեղկին ։

* Եւթն ջլօք դալարովք չչորացելովք . . . Եւթն ջլօք դալարս անձեռս ։|| ( Դատաւ. ժզ. 7. 8։ ) յորս երկու ածականք կան համաձայնք 'ի հոլով և 'ի թիւ։

* Ուր և լուիցէ զանուանէ քումմէ մեծէ, և զձեռանէ քումմէ հզօրէ, և զբազկէ քումմէ բարձրէ ։|| ( Գ. Թագ. Ը. 42։ ) ուր երեք ածականք համաձայնք են 'ի հոլով և 'ի թիւ։

Բազում և այլ օրինակք 'ի ցոյց երկուց կանոնաց տեսանին 'ի հետևեալսդ, որովք իմանի սովորական եղանակ համաձայնելոյ՝ կամ ոչ համաձայնելոյ ածականին։ Բայց ըստ յետադաս ածականաց գոն մանաւոր գիտելիք։

304. Երկրորդ ա. Յորժամ գոյականն անկանի ընդ մէջ երկուց ածականաց, բազում անգամ յետադասն ևս՝ նման նախադասին ոչ համաձայնի ընդ գոյականին, այլ միայն՝ եթէ կայցէ նախդիր կամ նախադրութիւն ինչ, այն կրկնի առ յետադասն։ Օր.

* Գեղեցիկ վարուց և աշխարհեղէն. || ուր յետինն դնի անհամաձայն՝ որպէս զառաջինն՝ գեղեցիկ, և ոչ ստորաբականին դնելի էր՝ աշխարհեղինաց։ Նոյնպէս դարձեալ. * Միշտ անքակ մնասցէ 'ի վերին իմաստութեան՝ 'ի սուրբ և 'ի խաղաղարար. || ուր նախդիրն կրկնեալ է։ Նոյնպէս, * Ըստ հոգևոր մասին՝ և ըստ մարմնաւոր. || ուր նախադրութիւն կրկնեալ է, և ասելի էր՝ ըստ մարմնաւորին։ ( Յաճախապատում. 51. 236. 238։ )

* Հանդերձ անմահ անուամբ և հաւաքելի. ( փոխանակ՝ հաւաքելեաւ. ) Ընդհանուր մարդկան և պարզամիտ. || փոխանակ՝ պարզամտաց։ ( Պիտոյ. 25. 131։ )

* Գաւիթ 'ի կրօնաւորական կարգէ, և սարգիս՝ յաշխարհական. || փոխանակ՝ յաշխարհականէ։ ( Յոհ. կաթող։ )

* Նա անուն տան բանի տեղեկացեալ, կամ ես ասելի՝ տան. || փոխանակ՝ բանին։ ( Սարգիս. 150։ )

305. Նոյնպէս անհամաձայնութիւն լինի երբեմն նաև առանց ընդ մէջ երկուցն անկանելոյ գոյականին, մանաւանդ եթէ յետադաս ածականն իցէ անցեալ ընդունելութի. Օր. * Մխիթարեցան

'ի բանից անտի յուդայ՝ 'ի զօրեղ և 'ի փեղչեցէք ։ ‖ (Ա. Մակ. ԺԵ. 17 ։) ուր 'ի բանից յոգնակի բացառական, և երկու յետադաս ածականք ունին միայն զնախդիրն, և ըստ սովորականին ասելի էր, 'ի զօրեղաց և 'ի գեղեցկաց ։

Նոյնպէս են. * Ի՛ քաղաքայ՝ և քաղաքայի և դաշտայի ։ ‖ (Պիտոյ. 424 ։) * Որ հօրհեան պաշտպանութիւն 'ի դիմամարտից՝ յաներևոյթ և յերևելի ։ ‖ (Նար. ԳԹ. 9 ։) յորս ասելի էր, լեռնայնոց և դաշտայնոց, յաներևութից և յերևելեաց ։

* Բոլոր վարսաւորաց չափաւորեալ 'ի պտուղս. ‖ (Եզր. Ա. 15.) ուր մի ածականն վարսաւորաց համաձայնեալ է հոլովով և թւով. իսկ ընդունելութիւն չափաւորեալ՝ թւով միայն, փոխանակ զանազանելոց ։

* Ագռաւուն գլխոյն ձորձով պատեցեալ ։ ‖ (Նար. ԿԷ. 4.) փոխանակ՝ պատեցելոյ ։

Ածականք վերջացեալք 'ի եան, եայ, յորժամ կարճ են, կամ երկավանկ, ոչ հոլովին վայելչաբար. որոյ վասն 'ի յետադաս լինելն դնին անհամաձայն սովորաբար. որ. Խուղոյ նորդեան ։ 'Ի ցեղէն նորեննեան ։ Պարսիւ ծայրեայ ։ Պսակաւն ծղեայ. ևն ։

306. Խոտորումն Ե. Յարուեստաւոր շարադրութե գոյականն և ածականն փոխադրեն զհոլովս իրերաց՝ կրկին եղանակաւ ։

Նախ՝ ածականն յետադաս առանց հայելոյ 'ի հոլով գոյականին, դնի սեռական հոլովով իբրև յատկացուցիչ. որ. * Նա շինեցին զամբակողմն գլխոյ քաղաքին՝ 'ի պարիսպս ամուր, յաշտարակս հզօրաց ։ ‖ (Ա. Մակ. Ա. 35.) փոխանակ ասելոյ՝ յաշտարակս հզօրս, կամ հզօր աշտարակօք ։

Նոյնպէս իմանի. * Ո լի թունոց մահաբերաց ։ ‖ (Յակոբ. Գ. 8.) փոխանակ՝ թունոք մահաբերօք, կամ մահաբեր թունիւք ։ Այս և այլ հեղինակս բազում այսպիսի, և առաւել 'ի Նարեկն. որ., փառաբանչօքն անձանց. կամ անմահ փառաբանչօք ։ Ընդ արդարս երջանկաց, կամ ընդ երջանիկ արդարս ։ Զեռամբդ նորոգողի, մատամբդ կենսաբաշխի. կամ նորոգող ձեռամբդ, կենսաբաշխ մատամբդ. (ԼԴ. 8. ՁԸ. 7. ԳՃ. 3 ։)

Այսպիսի խոտորումն յաճախ լինի յանցեալ ընդունելութիւն. որ. * Խմոլ արբեալք վասն ձեր հեղլոյ. ‖ փոխանակ՝ հեղլոյ։ ( Ղուկ. իբ. 20 ։ )

* Պատուհասիւքն 'ի՝ վերայ եկեալ։ ‖ փոխանակ՝ եկելովք ։ ( Յաճախապ. 231. ) Նոյն ևս, * Պատգամօքս 'ի սմա եղեալ։ Ձե մատամբքն գրածեալ ։ ‖ փոխանակ, եղելովք, տատանելովք ։ ( Նարեկ. բ. 2. ժդ. 2 ։ )

Պիտելի է յառաջ բերեալ օրինակդ և յայլս ևս, զի սեռական հոլովով դնել զածականն՝ առաւել երևի յորժամ 'ի գործիական հոլովն կայ գոյականն ։

307. Երկրորդ, ընդ հակառակն անցելոյն՝ գոյականն լինի սեռական յատկացուցիչ, իսկ ածականն նախադաս՝ առնու զհոլով գոյականին, նման այնմ զոր յաղագս յատկացուցչի ասացաք ։ (280.)

Այսպէս ասի. * Զաջակողմն թևին բեկանէր. ‖ ուր թև է գոյականն, և ածական նորա՝ աջակողմն, և ասելի էր՝ զաջակողմն թևն բեկանէր ։ ( ա. Մակ. Թ. 15. ) Այնպէս * Արգելականաց կուսանաց 'ի պարիսպս ընթանային. ‖ փոխանակ, արգելական կուսանքն ։ ( Բ. Մակ. Գ. 19 ։ )

* Հակառակորդք բազում են գործակցաց բանսարկուին. ‖ ( Յաճախ. 239 ։ ) փոխանակ, գործակից բանսարկուին ։

* Եւ տեսէն զհանդիսան . . . յազգիազգի տրամութեց գեղեցկագունի տեսոյ. ‖ ( Խոսր. ժամ. 9. ձեռագ. ) փոխանակ, գեղեցկագոյն բնով ։

* Պահպանաւ հոգւոյս ։ Աջակցաւ պտղոյն ։ Աջակցաւ մարմնոյդ. ‖ ( Նար. ժթ. 1. գդ. 2. ղե. 1. ) փոխանակ, պահապան հոգւոյս, աջակից պտղոյն կամ մարմնոյդ ։

'Ի վերայ երկուց խոտորմանցս են և այլ ևս մանր գիտելիք. այլ առ համառօտել եղաք զկարևորն միայն, և զայս ևս՝ ոչ զի անխտիր ինքեանք ևս հետևեսցին 'ի շարադրելն, այլ զի գիտասցեն ուղիղ իմանալ և լուծանել զբանս հեղինակաց ։

## Կանոն Գ.

308. 'Ի նախադաս ածական, և կամ 'ի գոյական՝ դնելի է նախդիրն :

*Մեկնութիւն. Յորժամ 'ի նախդրիւ հոլովս կան ածականն և գոյականն, կամ ունին զնախադրութիւն, բաւական է 'ի վերայ նախադասին միայն դնել զնախդիրն, թէ ածականն իցէ, թէ գոյականն : Հասարակ է այս կանոն, որպէս և վերադրին ասացաւ. ( 281 ) և յամենայն եղեալ օրինակս տեսանի :*

*Սակայն 'ի բազում տեղիս կրկնի նախդիրն կա՞մ նախադրութիւն, մանաւանդ ուր այլ բառ անկանիցի 'ի մէջ ածականին և գոյականին : զր.* * Տէ՛ր, զազգ մի զանգէտ և զարդար կորուսանիցես : || (Ծննդ. Ի. 4.) *ուր զ նախդիրն եղեալ առ գոյականն՝ կրկնի առ երկու յետադաս ածականսն :*

* Շրջեցաք ընդ ամենայն անապատն ընդ մեծ և ընդ ահագին : || (Բ. Օրին. Ա. 19.) *ուր առ երկս ածականս կրկնի ընդ նախադրութիւն :*

* Ասէ ցորսն ցյարուցեալսն 'ի վերայ նորա : || (Դատաւ. Զ. 31.) *ուր ց նախդիր կրկնի, և մարթ էր ասել, ցարսն յարուցեալս :*

* Յանապատէ եկեալ յերկրէ : || (Եսայ. ԻԱ. 1.) *ուր յ նախդիրն կրկնի առ գոյականն փոխանակ ասելոյ, յանապատ երկրէ :*

*Պատահէ սակաւ ուրեք՝ առ յետադասն միայն դնել զնախդիր, առաւել 'ի հայցական հոլով. զր.* * Ճանապարհ զարքունի գնասցուք. || (Թուոց. Ի. 17.) *փոխանակ, զճանապարհ արքունի : Այնպէս.* * Յաւել զխոզս, և խառնակ զանասունս. || (Ա. Մակ. Ա. 50.) *փոխանակ, զխառնակ անասունս :*

## Կանոն Դ.

309. Այս գոյականի ունելով բազում ածականս նախադաս կամ յետադաս, եթէ կապեալ իցեն և շաղկապաւ, նախդիրն կրկնի առ իւրաքանչիւրն առանձնաբար. առանց շաղկապի, մարթ է կրկնել, և կամ ոչ : զր.

* Առ հասարակ 'ի շրջահաւար պատենազէն ոսկեզօծ վահանացն նշոյլքն զլերամբքն փայլատակէին ։ ‖ (Ա. Մակ. Զ. 39.) ուր երից նախադաս ածականաց՝ առաջնոյն միայն դնի 'ի նախդիրն ։

* Ոչ հալէին սառնակերպ դիւրահալ զազգ անուշակ կերակրոյն ։ ‖ ( Իմաստ. ԺԹ. 20. ) ուր յերկու նախադաս ածականս կրկնի նախդիրն զ։

* Յանբնակ և յանկոխ և յանջուր և յանպտուղ երկրին ։ ( Երեմ. Բ. 6. ) աստ չորք նախադաս ածականք շաղկապեալք՝ ունին զնախդիրն յ։

* Ո վէմն և հաստատուն հիմերս ։ ‖ (Պիտոյ. 56.) աստ՝ թէ և շաղկապեալք, երկրորդն առանց նախդրի է ։ Սոյնպէս 'ի յաջորդն. * Յառաջին ընթացն և խաղաղ բնութեան ։ ‖ ( Սարգ. 28. )

Իսկ յետադաս ածականաց օրինակ. * Զջուր գետոյն զզօրն և զշատ ։ ‖ ( Եսայ. Ը. 7. ) աստ կրկնի նախդիրն ։ Իսկ առանց կրկնելոյ. * Ընդ անապատն մեծ և ահագին ։ ‖ (Բ. Օրէնք. Ը. 7.) և մարթ էր ասել, ընդ մեծ և ընդ ահագին ։

Սակայն յետադաս ածականաց իբր ստորական է՝ զի մօտաւորն գոյականին առանց նախդրի դնի, և հեռաւորն՝ նախդրիւ. օր. * Յազգ օտար և 'ի չար, յազգ անօրէն և 'ի կոխեալ ։ ( Եսայ. ԺԸ. 2 ։ )

## Կանոն Է.

310. Ածական անուն՝ որ հոլովով համաձայն է գոյականին, համաձայնի ստորաբար նաև թուով ։

Մեկնութիւն. Տեսանի արդէն 'ի նախադրեալ օրինակդ, զի ուր ածականն համաձայնեալ է ընդ գոյականին 'ի տրական հոլովն, կամ 'ի բացառականն, կամ 'ի գործիականն, անդ եզական կամ յոգնական դնի՝ ըստ որում է և գոյականն. որպէս այն, * Նաւթն ջրօք պղտորեալ ընղարեալք ։

Սակայն ուր ուղղական հոլով է, կամ նախդրիւ միայն, չէ հարկ համաձայնել թուով. օր. * Որով մեծամեծ և պատուական աւետիք պարգևեալ են մեզ ։ ‖ (Բ. Պետ. Ա. 4. ) ուր երկրորդ ածականն չէ համաձայնեալ թուով ։ ( տես և 302. )

311. Դիտելիք Ա. Առ անեզական գոյականն (212) բազում անգամ եզակի դնի ածականն, թէ և հոլովով համաձայնեալ իցէ. որպ. Մեծաւ տանջանօք: Անձնական տոց: Փառացս անցաւորի: Ուրացս ցանկա-ւորի: Մեծագոյն երախտեաց:

312. Դիտելիք Բ. Հանրական անունն, հաւաքական, թուականն, և այլ բառք՝ որք նշանակու-թիւն բազմի ունին, յաճախակի եզական ձայնիւ առնուն զածական յոգնակի, կամ ընդ հակա-ռակն՝ ինքեանք յոգնակի եդեալ, ածականն եզակի դնի: որպ.

* Ամենայն ժողովրդեանն ելելոց յեգիպտոսէ. (Յես. Ե. 4.) ուր յոգնակի սեռական է ելելոցն՝ վասն հանրական և հաւաքական անուանն եդելոյ եզական ձայնիւ:

* Սատակեսցի ամենայն մարդ դիմակայք թագաւորի: (Յուդիթ. Է. 4.) ուր ամ հանրականն բազմա-ցուցանէ զմարդն, ուստի և ածականն դնի յոգնա-կի՝ դիմակայք:

* Արբել զգինս և զմարմինս յամենայն խղճէ չարէ՝ յերեւելեաց և յաներեւութից: (Յաճախ. 45.) ուր հանրականն ամ բազմացուցանելով զխղճն, թէպէտ մօտաւոր ածականն չարէ՝ եզակի դնի, բայց յետին երկուքն՝ յոգնակի են:

Նոյնպէս ասի, Եւթնհարիւր այր սուսերաքաշս. ուր թուական անունն բազմացուցանէ զայրն. (տես 315) Երեքհազար հայոցս, (փ. բոլորից :) 'ի Երեքհազար վայելչականս: 'ի մէջ Մեծի նորափակականացս: Ընդ ամենահասարակ Եօթնի ընդ-թեանս ներհակ միանանց: Բազմօք փոխաբանութեամբ. ուր յոգնականն Բազմօք զեզակի գոյականն բազմա-ցուցանէ:

'Ի վերայ այսր՝ գտանի ուրեք, զի և հասարակ անուն ածական դնի անհամաձայն ըստ թուոյ. որպ. Նեղութեանն կերակրոց: Այսպիսի բարեաց առատութեան: Մշտնջենաւորին բանի: յառաջելոյս ակնկալութեան. ևն: (տես և 326:)

## Գլուխ Է.

313. Ածական անուանն՝ յընտիր շարադրութե բազում անգամ բացատրի գոյականաւ:

*Մեկնութի. Երկին եղանակաւ պատահէ զածականն գոյականաւ բացատրել՝ ՚ի բանս: Մի՝ զգոյականն կամ զնախադասն ածականին դնելով ՚ի գործիական հոլով, և կամ Նախադրութք. որ, փոխանակ ասելոյ՝ ցաւալից կ՛ ծոյլ կեանք, խօսուն պատարագ, ասի՝ լի ցաւօք կեանք, ծուլութե կեանք, խօսիւք պատարագ: Կամ, փոխանակ ասելոյ՝ անքննելի, անմնացանելի, անհամար, անկարգ, ասի՝ առանց քննելոյ կամ անցանելոյ, առանց համարոյ, արտաքոյ կարգի. և այլն:*

*Երկրորդ, ածականի ածանցեալ անունն դնի սեռական հոլովով իբրև յատկացուցիչ միւս գոյականին. որ փոխանակ ասելոյ՝ անբժշկելի հարուածովք, ասի՝ հարուածովք անբժշկութե: փոխանակ, տկար մտօք, ասի՝ տկարութե մտօք: փոխանակ, թանձր քնով, ասի ՚ի քուն թանձրութե: փոխանակ, լսող մոռացկոտ, ասի՝ լսող մոռացութե: փոխանակ, գազանական ատամամբք, ասի՝ ատամամբք գազանութե:*

*Ըստ այսմ ոճոյ պատահէ ՚ի վայելուչ շարադրութե, զի ՚ի միում բանի յերկուց ածականաց մին դնի ածականաբար, և միւսն սեռական յատկացուցիչ: որ.*

** ՚Ի վերայ աբրահամեան զաւակիս, ՚ի որդւոյ սահակայ, յորդիս յակոբայ: ‖ (Փ. Մակ. Է. 2.) ուր որպէս աբրահամեանն է ածական զաւակին, նոյնպէս յետին սեռականքն իմացեալ լինին, ՚ի սահակեան զաւակն, ՚ի յակոբեան որդիսն:*

*Այսու կանոնաւ ասի. * ՚Ի ձերոց ունայնութե հայրենաւանդ գնացիցն. ‖ (Ա. Պետ. Ա. 18.) որ ունայն գնացից: Նոյն ասի անդ. * Ոչ յապականութե սերմանէն, այլ յանապականացուէն. ‖ ուր որպէս յետինս ածական է, նոյնպէս իմանի և սեռականն, որ յապականացու սերմանէն:*

*Այսպէս և յայլ հեղինակս ասի: ՚ի հոգւոյ և ՚ի*

մարմնական ախտից ։ Բարեգործելոյ ունել զօրութիւն, և ոչ տանջողական ։ Բան քաղցր և մխիթարութիւն ։ Քահանայական կարգ և կրթութիւն ։

---

# ՅՕԴՈՒԱԾ Ձ.

## Յաղագս համաձայնութեան Մէջական անուանց ։

Խօսեցաք յիւրում տեղւոջ (38) 'ի վերայ Մէջական անուանց, թէ ո՛յք են և քանի ։ Բազումք յայնցանէ գոլով ածական, զհամաձայնութիւն նոցա ընդ գոյականացն մարթ է 'ի միտ առնուլ 'ի նախաւանդեալ կանոնացն ։ Բայց քանզի ունին և զայլ մասնաւոր զխտելիս, ծանուսցուք ուրոյն, և համառօտ ։

### Թուական անուանք ։

314. Թուական անուանց առաջին տեսակն ասի բացարձակ. և են, մի, երկու, հինգ, տասն, հազար եւն ։

Յորժամ սոքա նախադաս են գոյականին, ազատ են ըստ համաձայնութեան հոլովոյն. որպէս. Քսան հազար արամբք ։ Երկոտասան հազարաւ արամբ, և ութ հազար հեծելոյ սպառազինաւ ։ ‖ ( Ա. Մակ. Թ. 4. ԺԵ. 13. ) ուր տեսանի՝ միոյն համաձայնեալ, և այլոյն՝ ոչ ։

Սակայն 'ի բաց հանելի են առաջին միաւորքն, մի, երեք, չորք. որք սովորաբար համաձայնին հոլովով. զի ոչ ասի՝ մի վկայիւ, կամ երեք վկայից, կամ 'ի չորք հողմոց, այլ միով վկայիւ, երից վկայից, 'ի չորից հողմոց ։ Նոյնպէս ասի, 'ի միոջէ մարդոյ. 'ի միում մարմնի. միով պատարագաւ. առ երկու կամ երեք վկայիւք, եւն ։

Իսկ յորժամ այս թուականք յետադաս են գոյականին, սովորաբար համաձայնին հոլովով իբրև զայլ ածականս. (303.) և ուր կից գտանին մեծ և փոքր թիւ, բաւական է զյետինն միայն հոլովել,

Թէպէտ չէ ընդդէմ հոլովել զերկուսն ևս. օր. Ձկամբք հարիւր յիսուն և երիւք ։ Ամաց վեց հարիւրոց ։ Անուանց իբրև հարիւր և քսանից ։

Սակայն գտանի և անհամաձայն հոլովով յետադաս Թուական. օր. ամաց յիսուն և ութ. ամաց հարիւր և քսան և ութ. յաւուրց քառասուն. ասպարիզօք հինգ ։

315. Ըստ համաձայնութեան Թուոյն, յատուկ է բացարձակ Թուականաց՝ զի յորժամ նախադաս են եզակի, կամ յոգնակի, գոյականն նոցա յետադաս՝ եզակի դնի սովորաբար ։ Իսկ ուր յետադաս են, նախադաս գոյականն միշտ դնի յոգնակի, Թէպէտև Թուականն իցէ եզակի ։ օր.

* Քառասուն և վեց ամ էր 'ի Թագաւորելն ։ ‖ ուր գոյականն ամ՝ ամաց եզական ։ Ամաց քառասուն և վեց. ուր գոյականն նախադաս գոլով՝ դնի յոգնակի ։ (Բ. Մնաց. ԺԲ. 13. ԼԳ. 11.) Այսպիսի են հետևեալքն ։

* Եւթն երինջքն՝ եւթն ամ են ։ ‖ (Ծննդ. ԽԱ. 26.) ուր առաջին գոյականն յոգնակի, յետինն՝ եզակի ։

* 'Ի լայնութիւն կանգնոց երից, և յերկայնութիւն 'ի վեց կանգնոց ։ ‖ (Յուդիթ. Ա. 2.) ուր նախադաս գոյականն՝ յոգնակի, յետադասն՝ եզակի ։

* Անկանէին յաւուր յայնմիկ վիրաւորք իբրև երեք հազարք այր. (ուր գոյականն՝ եզակի.) Արամբք իբրև վեց հազարաւ. ‖ ուր գոյականն նախադաս՝ յոգնակի, Թէև Թուականն՝ եզակի ։ (Ա. Մակ. Դ. 15 ։ Բ. Մակ. Ը. 16 ։)

* Եւ եղև քաղաքն յերիս մասունս ։ ‖ (Յայտ. ԺԶ. 19.) ուր յետադաս գոյականն՝ եզակի, փոխանակ ասելոյ՝ յերիս մասունս ։ Այս եղանակ համաձայնութեան բազում է և յայլ տեղիս. զոր մարթ է տեսանել յընդարձակ Քերականութեան. [(համար 948 ։)

316. Բացարձակ Թուականքն՝ յորժամ են Ը գոյականի, ոչ վարին յոգնակի նախդրիւ, և ոչ եզակի հոլովով դնին սովորաբար, բաց 'ի երկու, երեք, չորք Թուոց. օր. ասեմք համարձակ, արս եր-

կոտն, չնչին աւուրս, զամս չոր։ Բայց ոչ առի, որս հինգս, վեցս աւուրս. այլ պարզաբար՝ աւուրս վեց, կամ քառասուն. լուերս հարիւր. հնձեալս եօթանասուն, ևն։

Նմանապէս ոչ առի եզակի, տասին աւուր, կամ աւուրց տասին, այլ՝ տասն աւուր, կամ աւուրց տասանց, ևն։

Իսկ յորժամ միայնակ են՝ առանց գոյականի, հոլովին եզակի, այլև 'ի նախդրիւ յոգնականին. որպ. հնգիւ չափ։ Կերիցէ զքեզ, և չորեքին քո։ Ընտրեաց 'ի նոցանէ երկոտասան։

317. Դասական թուականքն՝ առաջին, երկրորդ ևն (40) ըստ յատուկ նշանակութեան իւրեանց ընդ եզակի գոյականի վարին, և 'ի յետադաս լինելն՝ համաձայնին միշտ հոլովով, և նախդիրն կարէ կրկնիլ։ Իսկ նախադաս եղեալ, յաճախ համաձայնին ըստ հոլովոյ. և ուր զուգակից են մեծ և փոքր թիւ, երկաքանչիւրն հոլովին։ Օրս ամենայն տես յօրինակդ։

* Յամին վեցերորդի, չորեքտասաներորդում ամսեանն. 'ի վեց հարիւրերորդի և 'ի միում ամի. յամսեանն առաջնում. 'ի չորրորդում ազգի։ ‖ (Ծննդ. Է. 11։ Ը. 13. ԺԵ. 16։)

* Յամին հարիւրորդի յիսներորդի յառաջնում։ ‖ (Ա. Մակ. Է. 1։)

* Յերեքտասաներորդէ ամէ յոլովից։ ‖ (Երեմ. ԻԵ. 3։) * 'Ի սաղմոսին գրեալ է յերկրորդում ։ ‖ (Գործ. ԺԳ. 33։) * Նուագ եօթանասներորդի երկրորդի սաղմոսին։ ‖ (Նար. Ա. 1։)

Սոյն ուրեք երբեմն առքս եղեալ յոգնակի, երկրորդք, երրորդաց, չորրորդաց ևն, առդ կամ միայնակ են առանց գոյականի, կամ են ընդ անեզական գոյականի, և առնուն զսարքեր նշանակութի։ որպ 'ի չորան առաջինս, երկրորդս ևն։ Փոխանակ երրորդաց սերմանս. այս երրորդ մասին։ Քահանայից երկրորդաց, այս երկրորդականաց։

318. Մասնաւոր թուականքն՝ երկոքեան, չորեքեան ևն (42) զոլով յոգնական թէ ըստ ձայնին, և թէ ըստ նշանակութեան, միշտ կամին զգոյական յոգնակի. և

համաձայնին հոլովով նախադաս և յետադաս. որ. Յերկոցունց 'ի ձէնջ: 'ի սոցանէ յերկոցունց: 'Ի չորե-ցունց կողմանց: 'Ի ցլուցն երկոտասանեցունց: Վեցե-քումբք աստիճանօք. ուր բացարձակ թուականն դնի անհամաձայն, վեցն աստիճանօք: (Գ. Թագ. Ի. 10:)

319. Զարդական թուականքն մեակ, երկեակ ևն, (41) նախադաս լինին գոյականին առանց համաձայնե-լոյ. որ. չորեակ տարերց. (Պիտ. 287:) Նորոց և չորեակ տասանց . . . եւթնեակ շաւակօք: (Նար. ԽԹ. 1. լն. 1.) եօթներեակ և իններեակ աւուրբք: (Յոհ. կաթող:)

Սակայն 'ի լինելն միայնակ, կամ փոխանակ բա-ցարձակ և դասական թուականի, հոլովին. որ. յասելն (Նար. ԻԴ. 2.) երկեակ տասնեկի, յետինս իբրև գոյական կմ՛ բացարձակ եղեալ է, որ տասն, ուստի ինքն հոլովեալ է, բայց ոչ երկեակն: Նոյն-պէս 'ի Յիշատակարանին ասի, իններեակ յոբելինին, մնի տասնեկին, որ տասներորդ յոբելինին:

320. Արկնական թուականն՝ ածանցեալ էին մասն-կամբ, (43) յեղականն հոլովի՝ ընդ գոյականի 'ի նախդրիւ հոլովս: Իսկ ածանցեալն պատիկ մասն-կամբ կարէ հոլովիլ միայնակ, և ընդ գոյականի նախադաս վարի 'ի նախդրիւ հոլովս. որ. Զհարեւր-ապատիկն փոխանորդէ օգուտս: (Պիտոյ. 177.) Տասնպատիկ յաւելուածով: (Յոհ. կաթող:)

## Հանրական անուանք:

321. Ամենեքեան, բոլորեքեան: (46) Համաձայնու-թիւն սոցա նման է ճակեալի թուականաց. որ ընդ յոքնակի գոյական անուան յառաջ կամ զկնի, միշտ համաձայն հոլովով. որ. Սրբովք ամենեքումբք: Ամե-նեցունց թագաւորացն: Ամենեքումբք առաքինութեամբք: Բոլորեցունց հաւատացելոցն. ևն:

Յորժամ նախադաս իցեն անուան կամ դերա-նուան, միշտ կամին զնախդիրն կամ զնախադրու-թիւն. իսկ յետադաս եղեալ, կարեն առնուլ կամ ոչ. որ. զամենեքեան զհաւատացեալս: զամենեքեան զնոս

սա ։ յամենեսին 'ի մեզ ։ Նման զնոսա ամենեսին ։ 'ի ձեռն ամենեցուն ։ 'ի ցանկալեան ամենեսին , եւն ։

322. Ամէն , ընդ գոյականի վարի յոգնակի 'ի սեռական եւ 'ի բացառական հոլովս . իսկ եզակի՝ յայլ հոլովս եւս . որ . ամենից հօտուց . յամենից մասանց . ամէն նորա . սրբոյն ամենի ։

Իսկ միայնակ գտեալ , վարի նաեւ յայլ հոլովս . որ . Օ ամենեցուն գերազանցեալ ։ Ամենուամբ 'ի միջոյ եանց ։ (Պիտոյ . 16 . 122 ։)

323. Ամենայն ։ Այս համրական յաճախագոյն 'ի կիր արկեալ է , մանաւանդ յեզականն . միայնակ՝ նշանակէ , ամենայն որ , ամենայն ինչ ։ Ընդ գոյականի , ասի մարդոյ , եւ այլոց իրաց ։

Նախադաս կամ յետադաս եղեալ գոյականի , թէ եւ հոլովով համաձայնեալ իցէ , ըստ թուոյն եզակի գնի սովորաբար , եւ սակաւ ուրեք 'ի յոգնականն ։ որ . * Պէտք վերոյ ամենայնի լինել մարդկան ։ Յամենայնի դադարել չարեաց ։ ‖ (Պիտոյ . 5 . 48 ։)

Բայց յեզականն առաւել եւս . * Յետ այսր ամենայնի առաքինութեանց ։ (ա . Եզր . ա . 25 .) Օրացն ամենայնի ։ (բ . Մակ . թ . 9 .) Լեռնականօքն ամենայնիւ ։ (Խոր . բ . 47 ։) Ամենայնիւք պարտական չարեաց ։ Պատճառ բարեաց ամենայնի ։ (Նար . հբ . 1 . ժբ . 5 .) Օ ամենայնիւ զմարդկեղէն կարծեօք ։ (Սարգ . 125 ։)

Այսպէս յեզականն վարի յուղղական եւ 'ի նախդրիւ հոլովսն՝ յորժամ մօտ կայ գոյականին . ուստի սովորաբար ասելի է , ամ̃ չարիքն , կամ չարիքն ամ̃ . յամ̃ գործս , յիրս ամ̃ , զամ̃ աւուրս եւն ։ Այլ ոչ ասի , զամենայնս աւուրս , յամենայնս գործս , բայց եթէ այլ բառ անկանիցի ընդ մէջ երկուցն . որ . * Ամենայնիւն պայծառացեալ լինէին ձայնք ։ Ընդ ամենայնսն էր անցեալ Բերոսիւ ։ ‖ (Պիտոյ . 91 . 23 ։) տես եւ 302 . 312 ։

324. 'Ի կողմանէ հոլովոյն , յետադաս եղեալ գոյականին՝ միշտ համաձայնի . սոյնպէս յորժամ նախադաս է , բայց կայ 'ի միջի այլ բառ , կմ̃ դերանուն . որպէս երեւի 'ի վերոյիշեալ օրինակս ։

Իսկ անմիջաբար նախադասեալ գոյականին , ա-

ռանց հոլովելոյ վարի սովորաբար. ուստի ասի՝ յամենայն գործոց. ամ տամբն. յամ չարէ, եւն. եւ ոչ, յամենայնս գործս, ամենայնիւ տամբ, յամենայնում տեղւոջ: Սակաւ ուրեք գտանի հոլովեալ. որ. ամ ամենայնի խրատանցս: (Ա. Օրէնք. Գ. 8.) Յամենայնէ յայնպիսեաց անտի: (Ա Եա. Իբ. 25:)

Ի նախդրիւ հոլովն միշտ ունի զնախդիրն՝ յորժամ նախադաս է. իսկ առ գոյականն եւս դնել, կամ ուր ինքն յետադաս է՝ կրկնել զնախդիրն, վայելուչ եւս է. որ. յամենայն 'ի կեանս քո: ընդ քաղաքն ընդ ամ: յամ 'ի բազում մեծութեն: ընհպարտութիւն ամ:

325. Ոչ եւ բացասական համրական. (47) ոչ ոք, ոչ մի ոք. որք ասին 'ի վերայ մարդոյ, հոլովոլ եզակի մին եւ ոքն: Յատկապէս գոյական է, բայց վարի եւս ածական. ոչ ոք ծառայ. եւ ասի եւս իրաց, ոչ ոք ախորժակ:

Ի նախդրիւ հոլովն՝ սովորաբար 'ի վերայ մասնականին դնի նախդիրն. որ ոչ զոք, ոչ 'ի միջէ եւն. իսկ 'ի վերայ ոչինն՝ սակաւ ուրեք. որ. յոչ ոք ապաւինեցան. (Խոր. Գ. 44.) յոչ մոյ հակառակամարտէ: (Պիտոյ. 205:)

Ոչ ինչ, ոչ իմն, ոչ մի ինչ, ոչ մի իմն: Այն եւ սոքա բացասական համրական, ասին 'ի վերայ իրաց, եւ վարին ածական: Ի հոլովիլն՝ մի եւ իմն հոլովին եզակի, եւ նախդիրն դնի 'ի վերայ նոցա. որ. ոչ իմիք, ոչ զմի ինչ, ոչ միով իւիք, ոչ 'ի միջէ ինչ. եւ ոչ ասի, զոչ ինչ, զոչ իմն, զոչ մի ինչ, յոչ միոյ իմեքէ:

Բայց 'ի նախդրիւ տրականն, կամ ընդ գոյականի լինի դնել նախդիր 'ի վերայ ոչին. որ, յոչինչ պիտանացու, յոչինչ պէտս:

## Վերբերական անուանք.

326. Ասացաք յիւրում տեղւոջ (49) թէ վերբերական անուանք կազմին յերից բառից, չափ, քան, պէս. եւ ամենեքին են ածականք: Բարդեալն 'ի չափէն, միշտ նախադաս լինի գոյականին, եզակի եւ 'ի նախդրիւ հոլովս. որ զայսչափ գանձս. յայնչափ քաջութէ. եւ ոչ ասի, զայնչափս գանձս:

Նմանապէս բարդեալն 'ի քանէն, նախադաս լինի դոյականին, այլ կարէ համաձայնիլ նմա հոլովով և թուով։ դր. այսքանեաց պարտուց. այնքանոյ թագաւորի. այսքանեամ կարգի. այնքանեօք չափովք եւն։ Բայց 'ի նախդրիւ հոլովս յոքնականին ոչ ասի, յայսքանս բարիս, զայսքանս շնորհս. այլ միայն յորժամ դոյականն կայցէ հեռի. որպէս. յայսքանս և 'ի սոյնպիսիս և յեւս ընտրելական երգս։

Իսկ բարդեալն 'ի պէս բառէն՝ կարէ յետադաս լինել դոյականին, բայց 'ի որպիսէն՝ որ միշտ նախադաս դնի. և համաձայնի յաճախ հոլովով և թուով. դր. զբանս այդպիսիս. այսպիսի գործովք. յազգէ այնպիսւոյ. նոյնպիսւոյ շնորհի. յայսպիսւոյ չփոթման. որպիսեաց իրաց. կոչմամբ այսպիսեաւ. այդպիսեաւ ջերմութբ. այսպիսեօք բարեօք։

Սոքա բազում անգամ ընդ յոքնակի դոյականին մնան եզական. դր. յայնպիսւոյ կապանաց. այդպիսւոյ անուանց. այնպիսւոյ խոնարհացն. որպիսւոյ պսակաց։

## Հարցական անուանք։

327. Հարցականքն ո՞վ, ո՞, (48) յատուկ դոյական են, և մարդոյ առնին, և սակաւ ուրեք 'ի վերայ իրաց. վարին ևս 'ի միասին ընդ ոք մասնականին, երբեմն ևս իբրև ածական։

'Ի նախդրիւ հոլովս՝ առաջնոյն միայն դնի նախդիր. իսկ յայլ հոլովս երկոքեան ևս հոլովին. դր. զո՞ ոք. ընդ ո՞ւմ ումեք. ո՞յր ուրուք. յումմէ՞ ումեքէ։ Նոյն իբրև ածական, ո՞վ ոք իբրև զիս այր։ ո՞ ոք 'ի ձէնջ հայր։

Եզական ձայնիւ վարին ընդ յոքնականի. դր. ո՞ այնոքիկ իցեն, փոխանակ՝ ո՞յք այնոքիկ։ ո՞վ և ո՞վ իցեն. ո՞վ էիք. ո՞վ ոք նոքա իցեն։

328. Ո՞ր, հարցական և վերբերական. ածական է, և առնի մարդոյ և այլ իրաց. նախադաս լինելով դոյականին, համաձայնի սովորաբար. դր. որո՞վք այսոքիւք. յորմէ՞ աշխարհէ. որո՞ւմ նմանութե. որո՞վ զօրութբ. որո՞յ խնդրոյ. վասն որոյ յուսոյ. որո՞վ կամօք։

՚Ի յոգնակի ուղղականն և ՚ի նախդրիւն ոչ լինի առել, որք անկարգութիւնք. յորս տեղիս. զորս բանս. բայց եթէ այլ բառ ընդ մէջ մտանիցէ. զր. Օ՞րս հիւսեցից զորս և զոգս բանից : (Նար. ի. 2 :)

329. Այս որ յարեալ ՚ի մասնականն՝ որ ոք, նշանակէ՝ ով ոք (47.) գոյական գոլով, երբեմն իբր ածական առի, որ ոք եղբայր :

Նախդիրն դնի առաջնոյն, զոր ոք. և ՚ի վայելուչ շարադրութե̃ ընդ մէջ երկուցն անկանի բայ, կամ այլ բառ. զր. որ կամիցի ոք, փոխանակ ասելոյ, որ ոք կամիցի : Այսպէս, որ ուտիցէ ոք. որ ապստամբի ոք. որ ՚ի բունութե̃ ոք. եւ̃ :

330. Որ ինչ, կամ ինչ որ. վարի գոյական և ածական. և ոչ առի մարդոյ՝ բայց սակաւ ուրեք. զր. որ ինչ քաղաքացիք :

Հայցական հոլովոյ նախդիրն կարէ դնիլ միոյն՝ կամ միւսոյն, զր, զոր ինչ, որ զինչ, զինչ որ : Իսկ այլ հոլովոյ նախդիրն ՚ի վերայ որոյն դնի, յոր ինչ :

## Մասնական անուանք :

331. Ոք, ոմն, ածական են, և առին մարդոյ, երբեմն այլոց իրաց ևս՝ առաւելապէս ՚ի յոգնականն : Ընդ գոյականին դնին նախադաս և յետադաս, սովորաբար համաձայն հոլովով և թուով : զր. Ո՞ ոք այդր այր. փոխանակ, այր ոք : Հարկ-բաղենի ումեմն : Այս ոմանս. զոմանս եղբարս. ոմանք արք. ոմն երիտասարդ. ծերովք ոմամբք. յումեմնէ ոչ պարտաւորէ. յընդդիմակցէ ումեքէ : Արեգակնայինք ոմանք. կշռօք ոմամբք :

Նախդիրն՝ որ սովորաբար դնի առ նախադասն, երբեմն դնի առ յետադասն մասնականն, կամ առ երկուսին ևս. զր. զայր զոք, փոխանակ ասելոյ զայր ոք : զմիմեանց զոմն. Թագաւոր զոմն. իբրև զհաւատարապատիւ զոք : Ասացեալ եմք յառաջագոյն՝ (44) թէ ոքն բաղում ուրեք վարի փոխանակ յոգնականի :

332. Ոչ, իբրև մասնական անուն՝ առաւել վա-

րի զկնի գոյականին, համաձայն հոլովով. որպ. առն քո կամ քոյ. արամբ քով. 'ի հօրէ քումէ. յաւուր քում, կին 'ի քում աւուր:

Իսկ ուր նախադաս լինի գոյականին, առաւել թուական է անդ. որպ. քով խոկ հոգմով. քոյ առն կին. քով ակամբ կոյր. եւն:

Հոլովք սորա փոխանակ միմեանց դնին. որպ. առ ծովեզերբ քում, փոխանակ՝ մօտ 'ի քում կողմանէն, փոխանակ՝ 'ի միջէ:

Կրկնելով քո քո, նշանակէ՝ իւրաքանչիւր. յառաջոյ գոյականի դնի, և հոլովի համաձայնութբ. որպ. քո քո ազգ. ըստ քոյ քոյ առաքինութե. քոյ քոյ չարեաց. ընդ քոյ քոյ զառաջնոցն. 'ի քումէ քումէ:

333. Ինչ, իմն, իբրև մասնական ածական՝ իրաց ասին, և սակաւ ուրեք մարդոյ. որպ. * Իբրև ընդերձեալ իմն խաղաղութ. ‖ (Նար. հէ. 3.) * 'Ի հնարաւոր ինչ 'ի ծարակտէ. ‖ (Պիտոյ. 390.)

Միայնակ ոչ լինին նախադաս գոյականին, և ոչ ասի՝ ինչ գործ, իմն բան, զիմն բարի: Այլ կամ յետադաս են գոյականին, և կամ նախ՝ և 'ի միջոցին ունին զայլ բառ. որպ. Օ բան ինչ մեծ. (ուր յետադաս է.) Օ փոքր ինչ դատաստան. (ուր նախ ունի ...) Այսպէս ասի. * Եթէ ունիցին ինչ ընդ ումեք բանս: խօսեցաւ ինչ վասն քո չարութեան. (որ բանս ինչ, չարութիւն ինչ.) Օտարոտի իմն դեղ: Այսպիսւոյ իմն սահմանի: Ընդ կռիւք իմն:

334. Ընդ յոքնակի գոյականի դնին միշտ յեզականն և առանց հոլովելոյ, որպէս երևի յօրինակդ: Եթէ հոլովել պիտոյ է, 'ի գործ ածին հոլովք իւ մասնականին. (44) որպ. Բանից իրիք յանցանաց: 'Ի մարմնաւոր կարեաց իմիք: Պատկաւ իմիք, փոխանակ՝ իւիք: Ընդ օրինակաց իրիք, փոխանակ՝ ումանց:

Այսքիկ 'ի վայելուչ շարադրութե դնին մերձ անուան կամ բայի, կամ մակբայի, առ 'ի զարդ միայն. որպ. * Յայս իմն այսպէս առնէր: Ո՛չ առ բաղում ժամանակս ինչ: Իբրև կամէին իմն թէ փոխեսցուք զնա: ‖ (Է. Մակ. Է. 9. Ջ. 13: Ա. Մակ. ԺԱ. 63.)

335. Կրկնելով ասի, ինչ ինչ, և նշանակէ՝ քանի

մի. բայց երբեմն գոյական վարի առանց հոլովելոյ. որ. ինչ ինչ դժուարինաց: Որ վասն ինչ ինչ. որ վասն զանազան իրաց: Սակաւ ուրեք գտանի երբ ածական՝ առ միջին հեղինակս. որ. ինչ ինչ տեղեկութիւն:

Յայսպէս լինի իմն իմն, ածական, և եզակի հոլովեալ. որ. վասն իրիք իրիք տեսչութեանց: Պատճառանաց իմիք իրիք:

Սոքա ընդ մի մասնականին վարին, մի ինչ, մի իմն, և լինին գոյական և ածական: Յետինն հոլովի միանգամայն, միոյ իրիք, 'ի միոջէ իմեքէ, միով իւիք. իսկ յառաջնումն մին և եթ հոլովի, միոյ ինչ, միով ինչ ևն:

336. Ամենայն կամ ամ. (44) ածական է, նախադաս գոյականին սովորաբար՝ համաձայնեալ եզակի հոլովով. որ. 'ի ամենայն աւուր. 'ի գալ ամենայն շաբաթու: Ամենամբ միով ուրախացաւ, և ամենայն հաւանէ տրտմեցաւ: Սակաւ ուրեք կայ յետադաս և անհամաձայն: որ. 'ի գալ ամսոյն ամենայնի. 'ի ամենայն կողմանէ գետոյն:

337. Այլ, ածական, սովորաբար նախադաս գոյականին, և ազատ է առ համաձայնիլ հոլովով և թուով. որ. Այլոց ազգաց. վասն այլոյ աւուր. այլում ժողովրդեան. յայլմէ ազգէ. այլովք բանիւք: Կամ, առ այլ երկնչովք. յայլ ճարտարպետս. այլ յօրինուածոյ:

Յետադաս ևս վարի, բայց միշտ համաձայնեալ 'ի հոլովս և 'ի թիւ. որ. Ազն այլոյ. ազգի այլում. յայր այլ. զխիղտ այլ. զազգս այլս: Երկին առակաւն այլովք. փոխանակ՝ այլովք կրկին առակօք. (Իգնատ. մեկն. 229. 337:)

338. Այլ ընդ մասնականաց, այլ ոք, այլ ոմն. և ասին մարդոյ, գոյական և ածական. յեզականն՝ վերջինն հոլովել բաւական է. որ. այլոյ ուրուք, կամ այլ ուրուք. յայլմէ ումեքէ, կամ յայլ ումեքէ ևն: Բայց 'ի յոգնականն երկոքին ևս հոլովելի են. որ. այլոց ոմանց, զայլս ոմանս, այլովք ոմամբք:

Այլ ինչ, այլ իմն. ասին իրաց՝ միայնակ, կամ ընդ գոյականի. սակաւ ուրեք ասին մարդոյ ևս. որ.

չայլ էին նորոգ բժշկէ ։ ( Տարգ · 208 · ) Ի հոլովիլ յեռանոյն՝ կարեն երկուքն ևս · որ · այլ էրէք , կամ այլոց էրէք · այլոց էրէք ։

339 · Իւրաքանչիւր , Երկաքանչիւր ։ Հոլովք սոցա յայտնի են ։ ( 42 · 44 · ) Ածական են , սովորաբար նախադասեալ գոյականին , և համաձայնիլն ազատ է · որ · յիւրաքանչիւր մնաց · յիւրաքանչիւրում ժամանակի ։ Երկաքանչիւր ծայրիւք · յերկաքանչիւրոց կողմանցն · Իւրաքանչիւրոց նոցա ։

Իւրաքանչիւրն ուղղական հոլովով դնի փոխանակ սեռականի և տրականի , մանաւանդ ևս եզակի՝ Թէև գոյականն լցէ յոգնակի · որ · *Իւրաքանչիւր 'ի վերայ նոցա ։ || ( Գործ · Բ · 3 · ) փոխանակ ասել , 'ի վերայ իւրաքանչիւրոց նոցա ։ Նոյնպէս ասի , 'ի դարս իւրաքանչիւր , փոխանակ յիւրաքանչիւր դարս · 'ի դառնալ ձեզ իւրաքանչիւր , փոխանակ ձեզ իւրաքանչիւրոց ։ Գրոշից անդամ իւրաքանչիւր , փոխանակ գրոշից իւրաքանչիւրոց ։

Այլ ընդ մասնականին ոք , ասի մարդոյ , երբեմն այլ իրաց ևս · և հոլովի ոքն · որ · Իւրաքանչիւր որոց սպասու կին պիտոյից ։ Նոյնպէս և ընդ ինչ մասնականին , իւրաքանչիւր ինչ , որ մարդոյ ոչ ասի ։

Հերիք համարեսցի այսչափ տեղեկութիւն 'ի վերայ բաղդատութեան Անուան՝ ըստ այլ և այլ տեսակաց նորա · որով աշակերտն վարժեալ , կարող է այլ ևս զարգանալ ասացելովքն յընդարձակ Քերականութեան ։

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

## Ի վերայ բաղդատութեան Դերանուան ։

340 · Շարադասութիւն Դերանուան նկատեալ ընդ բայի , լինի Տէր , կամ խնդիր բայի · և ըստ այսմ մնայ խօսիլ 'ի բաղդատութեն Բայից ։

Իսկ ընդ Անուան բաղդատեալ , լինի խնդիր Անուան , ( 284 ) Բացայայտիչ կամ Բացայայտեալ · ( 271 )

և յարակայացին՝ (277) Զոր ինչ ըստ այսոցիկ պատահմանց արժան էր գիտել, ասացեալ եմք ՚ի բաղդատութեան Անուան ։

Այլ և նախադրութեան լինի խնդիր․ զորմէ յիւրում տեղւոջ խօսեցաք ։ (211)

Վասն որոյ մնայ ատամնօր ծանուցանել երկու ինչ․ մի, թէ Դերանունն ինքնին որպէս վարի․ և միւս, թէ զիարդ կապի ընդ անուան իբրև գոյական նորա, և կամ ածական ։

# ՅՕԴՈՒԱԾ Ա․

## Առաջին դերանուանք՝ Ես, Դու, Ինքն ։

341․ Դիմականք են սոքա, և ունին ինքեանց ածական զայլ անուն, կամ ընդունելութիւն, կամ զայլ դերանուն ։ Լինին նախադաս և յետադաս՝ համաձայնեալք ՚ի հոլով և ՚ի թիւ․ իբ․ մեք ամենք, ուր ամենք է ածական դերանուանն մեք, երկոքին եւ յոքնակի ուղղական ։

Այսպէս ասի, վասն ձեր հեղձամղաց ։ Անարգեալ ՚ի ձէնջ շինողաց ։ Ծրհեբցս մեզ ։ Հրեշտակեցեալս ինչ ։ ես դերեալս ։ օտարս ես ։ չես ՚ի մեղաւորս ։

Իսկ, եթէ նշանակէ՝ բուն, յատուկն, ամբ (52) իբրև ածական վարի ընդ անուան նախադաս կամ յետադաս․ իբ․ Տեղին ինքն․ ինքն ամենայն ։ Ընդդիմամարտ իմն ինքեան անձին․ իբ խորում յատուկ անձինն ։

Վարի և ընդ էական դերանուան՝ յետադաս և համաձայն․ իբ․ ես ինքն մարդ եմ․ դու ես ինքն․ ինձ ինքեան․ ՚ի մեզ ինքեանս․ ՚ի ձեզ ինքեանս․ իւր ինքեան ։

## Յաղագս՝ Սա, Դա, Նա ։

342․ Սոքա յատկապէս գոյական են, առնուն ածական՝ նախադաս և յետադաս, համաձայն ՚ի հոլով և ՚ի թիւ․ իբ․ Դոքա յետինք․ Նոցա չարութեանցն․ և այլն ։

Սովորաբար ասին մարդոյ կամ անձնաւորաց. բայց երբեմն ասել և այլոց իրաց. որպէս 'ի վերայ խոզոյ ասի (Ղուկ. Ը. 33.) * Որ ոք մտցէ 'ի տանէ այլազգւոյն ։ ‖ Սոյնպէս խօսելով 'ի վերայ թզենւոյ. (Մատ. Իա. 19.) * Եկն 'ի նա, և ոչ եգիտ 'ի նմա ։ ‖ Նոյնպէս ասի. * Յաճախ են սոքա. ‖ այսինքն այսպիսի բանք ։ կամ. Նա ոչ զմի որ 'ի սոցանէ. այսինքն 'ի վտանգացս ։

Կից ընդ այլ դերանուանս վարին առ 'ի սաստկացուցանել միայն զնշանակութիւնն. որպէս Սա ինքն, Դա ինքն, Սա այս, Սոյն սա եւ այլն ։

Ցուցականք՝ Սոյն, Դոյն, Նոյն ։

343. Ըստ նշանակութեան ածական են, և առաւել նախադաս լինին գոյականին, ազատ 'ի համաձայնիլ. ուստի ասի, 'ի նոյն աւուր, կամ 'ի նմին աւուր. նոյն մախանացն, կամ նոյնին մախանաց ։

Առաւել վայելչաբար համաձայնին 'ի հոլովս, թէ և 'ի թիւս ոչ միշտ. որպէս. Ըստ նմին բանից ։ Վասն նորին մեղաց ։ Նոյնին աւետեաց ։ Նովին հոգւով կամ շաւղօք ։ Նոյնովիմբք բարեգործութեամբք ։ Նոյնոցունց զհերձուածողաց ։

Ի նախդրիւ հոլովմն յետադաս կարեն լինել, և նախդիրն կրկնի. որպէս. Յորոգայթ 'ի նոյն ։ Ճանապարհ ընդ որ եկն՝ ընդ նոյն դարձցի. այսինքն ընդ նոյն ճանապարհ ։ Նոյնպէս ընդ նոյն ընդ որ առնիցիք ։

344. Ի պատճառս այսր յետ և յառաջ դասաւորութեան՝ նախդիրն 'ի գործ ածի այլ և այլ եղանակաւ. որպէս. * Ընդ այնու հետև յընդունայն եղեալ 'ի նոյն խորհուրդս ։ ‖ (Եղիշ. 18.) փոխանակ՝ 'ի նոյն ընդունայն խորհուրդս ։

* Մեծատանց և աղքատաց միապէս բաժանեաց իբրև եղբարց՝ աչս ամենեցուն նոյն, ձեռս և ոտս նոյն ։ ‖ (Մանդակ. Ճառ Է.) այսինքն զնոյն աչս, զնոյն ձեռս ։

* Տեղի մի և նոյն ցուցանեն երեքեան. ‖ (Իգնատ. 127.) այսինքն զնոյն մի տեղի ։ Նաև. * Նոյն զաղօթմն կատարեմք՝ զոր յեկեղեցին ։ ‖ (Նամ. Պատար.) այսինքն զնոյն աղօթս ։

Հոլովք սոցա փոխան միմեանց վարին․ օր․ նմին մանութբ, փոխանակ՝ սովին․ նմին օրինակաւ, փոխանակ՝ նովին ։ ՚ի նոյին իսկ յառաքելականացն դասուց, փոխանակ՝ ՚ի նոցունց ։ նոյին ախտից, փոխանակ՝ նոցին ։

345․ Ընդ այլ ցուցականաց վարին յառաջոյ, կմ զկնի, սովորաբար համաձայնք, երբեմն անհամաձայն, և նախադիրն կրկնի․ օր․ սոյն այս, ՚ի դոյն յայդ․ նմին այսմիկ․ այնորիկ նմին իրի․ վասն սորին իսկ այսորիկ․ ՚ի նմին յայսմ ժամանակի․ սովիմբ սա այսու․ սոյն այսմ․ ՚ի սոցունց յայսցանէ․ յայսմ և ՚ի սոյն․ ՚ի սոյն իսկ յայսոսիկ ։

346․ Գերանունն ինքն, յարի և առ սոսա՝ յետադաս լինելով, սոյն ինքն, դոյն ինքն ևն ։ Այլ միայնակ են, երբեմն գոյական նշանակեն՝ սա ինքն, դա ինքն․ որպէս (Մար․ իզ․ 4․) * Նոյն ինքն որ զայս բան տպաւորեաց․ ‖ կամ․ * Նոյն ինքն մատուցումն առնէ ։ ‖ (Հե․ 12 ։) Այսպէս ասի․ * Նոքա ոչ նոքին ինքեանք գիտեն ։ ‖

Իսկ ընդ գոյականի՝ յառաջոյ կայ, և նախադիրն դնի ՚ի վերայ ցուցականին․ և թէ մերձ կայցէ գոյականին, յայն ևս կրկնի նախադիրն, թէպէտ յայլ հոլովս ոչ միշտ համաձայնին․ օր․ * Զդոյն ինքն զԳրիգոր ։ ‖ (Ագաթ․ 358․) * Գոյ տեսանել ՚ի նոյն ինքն ՚ի մեզ հաստատեալ ։ ՚ի նոյն ինքն ՚ի նա ։ (Իգնատ․ 78․) նմին ինքեան Քրիստոսի․ նորին ինքեան հեռանդին, ևն ։ Զնոյն ինքն զքահանայիցն, նոյն ինքն յինէն առելով ճառամբն, փոխանակ՝ նովին մասամբն ։ ՚ի նոյն ինքն յանձպետութեան․ ՚ի նոյն ինքն ՚ի վերայ այրին․ կմ ՚ի վերայ նոյն այրին ։

Այս գերանուանք ՚ի լինել միայնակ առանց գոյականի՝ առին յոգնակի, սոյնք, ՚ի նոյնս, զնոյնս․ բայց ընդ գոյականի անմիջաբար ոչ առի, սոյնք խորհուրդք․ ՚ի նոյնս գործս․ զնոյնս չարչարանս ։ Այլ կամ եզակի դնի, սոյն խորհուրդք ևն․ և կմ առի, նոքին խորհուրդք, ՚ի նոսին գործս ևն ։

# ՅՕԴՈՒԱԾ Բ.

## Յորոյական դերանուանց՝ Այս, Այդ, Այն։

347. Նախանձին յօդուածով ընտրեցաք ձայնել յաղագս այսոցիկ դերանուանցս. զի կիրառութիւն սոցա առաւել յաճախեալ գոլով, բազում ունին և զգիտելի ծանօթութիւնս։

Յատկապէս ածական են, ասացեալ մարդոյ, և այլոց անուանց իրաց. միայնակ՝ իբր գոյական նշանակեն, սա, դա, նա. Այսք ամենեքեան էին. յ՟ սոքա ամենեքեան։ (ա. Եզր. Թ. 36.) Եւս. * Այդք ևս ամաչեցեալք դարձցին. ‖ յ՟ դոքա։ (բ. Մակ. ԺԴ. 39։)

Ուր ուրեք նախադաս են գոյականին, առաւել 'ի գործ ածին հոլովքս՝ այսր, այսմ, այսց ևն. իսկ յետադաս եղեալք, այլ հոլովքն յաճախ վարին, այսորիկ, այսմիկ, այսոցիկ ևն։ (53.) զոր և ունիս գիտել 'ի ներքնաշարեալ օրինակն։ Տեսցուք արդ զկանոն համաձայնութե նոցա։

### Կանոն ա.

348. Դերանուանքն այս, այդ, այն, նախադասք գոյականին՝ սովորաբար համաձայնին 'ի հոլովս և 'ի թիւ, և առ նոսա միայն դնի նախդիրն։

Որպէս ասի, այսր աւուր. զայն օր. յայսմ աւուր. այսու օրինակաւ. յայնց ժամանակաց. այդց պարգևաց, և այլն։

Բայց 'ի նախդրիւ յոգնականին ոչ ասի, յայնս գործս, զայնս բանս. այլ կամ եզակի դնի, յայն գործս. կամ, յայնոսիկ գործս, զայնոսիկ բանս. ևն. կամ եթէ այլ բառ ընդ մէջ կայցէ, և կամ գոյականն իցէ զօրութ՟. որ. Զայնս ես ամբոխս։ (Յովհ. կաթող.) * Յաւելցես քեզ այլ ևս երիս քաղաքս յայնս երիսն։ ‖ (բ. Օրէնք. ԺԹ. 9.) յ՟ յայն երիս քաղաքսն։

Նմանապէս 'ի բացառական հոլով ստորաբար ասի , յայսմ կենաց , յայնց պատճառաց , և ոչ , յայսմանէ գործոյ , յայսցանէ կենաց , յայնցանէ պատճառաց ․ բայց եթէ ընդ մէջ անկանիցի այլ բառ , կամ նախդիրն կրկնեսցի ․ դդ ․ * Զեր ինչ յայնցանէ մնացեալ բարեաց ․ ‖ յմ չեր ինչ մնացեալ 'ի բարեաց յայնցանէ ։ ( Գլուխ ․ 347 ․ ) Նաս ․ Յայսմանէ ևս ստորոջէ ։ ( Յոհ ․ կաթող ․ ) Յերկոցունց յայսցանէ յերկասիրութեանց ։ յայսցանէ 'ի գործոցս ․ յայսցանէ 'ի տառանցս ։ ( Լամբր ։ )

349 ․ Հոլովք դերանուանցս բաղում անգամ փոխանակ միմեանց վարին ․ այլև եզական և յոգնական խառնին յիրեարս ․ որով և երևին անհամաձայնք գոյականին ։ դդ ․

Յայնմ ժամանակաց ․ ( փոխանակ՝ յայնց ) զայն ժամու ․ ( փոխանակ՝ զայնր ․ ) զայսոսիկ աւուրբք ․ ( զայսորիւք ․ ) այսմ խորհրդով ․ ( այսու ․ ) այսր յաւիտենիւ ․ ( այսու ․ ) ընդ այսոսիկ կանոնի ․ ( այսմ ․ ) այսր երախտեօք ․ (այսորիւք ․) այնմ սիրովն ․ (այնու ․) զայնց ժամանակի ․ ( զայնր ․ ) յայսմանէ իրակութեանց ․ ( յայսցանէ ։ )

Նոյն օրինակ՝ նաև 'ի յետադաս լինելն ․ բացովքս այսմիկ ․ (յմ այսորիւք ․) 'ի քաղաքացն այնոցիկ ․ ( յայնցանէ ․ ) յիշատակօքս այսոսիկ ․ ( այսորիւք ․ ) զարդ զայդ ․ զբանսն զայն ․ ( զայդոսիկ , զայնոսիկ ։ )

Յորժամ յառաջոյ այսց դերանուանց գոյ ածական անուն ինչ 'ի նախդրիւ հոլով , ստորական է կրկնել զնախդիրն առ դերանուամբն ևս ․ դդ ․ զմեծ զայս մարմինս ։ զդերաշխարհիկն զայն տօնախմբութի ․ եւ ։ Սակաւ ուրեք զանց լինի ․ որպէս , 'Ի նորոգս այս փոխադրութի ։ զորբանուէր այս օծելութ ։ զստորականն նորա այս խորհուրդ ։

350․ Դիտելի ․ 'Ի վերայ շարադրութեան նախադաս ցուցականն հեռի դնի 'ի գոյականէն միջադրութեամբ այլոց բառից , և նախդիրն կամ ցուցականին միայն դնի , և կամ առ գոյականն ևս ։ դդ ․

* Օտն որ յառաջ քան զսակաւիկ մի պատուեալ էր մարդն ։ ‖ ( Իմաստ ․ ժէ ․ 20 ․ ) յմ զայն մարդն ։

* Զայն որ փոքր մի յառաջ խռովութեամբ լցեալ էր զտաճարն, ուրախութեամբ լնուլ ։ ‖ (Գ. Մակ. Գ. 30.) ենթ զայն տաճարն ։

* Որոց զայս ընդ միմեանս երդմամբ արարեալ էր ։ ‖ (Գործ. ԻԳ. 13.) ենթ զայս երդմունս ։

* Զայն զնոսա բերէր 'ի մարտս ։ ‖ (Յոհ. կաթող.) ենթ յայն մարտս ։

## Կանոն Է.

351. Յետադաս ցուցականք՝ ըստ կանոնի այլոց ածականաց (303) համաձայնին ընդ նախադաս գոյականին 'ի հոլովս և 'ի թիւ, բաց 'ի խոտորմանցն զոր ծանուցաք ։ (349)

Նախդիրքն եթէ իցեն 'ի, յ, ց, զ, սովորաբար կրկնին առ ցուցականն ևս. եթէ իցէ առ, ոչ կրկնի. իսկ զնախադրութիւնն ըստ, ընդ, ազատաբար լինի կրկնել կամ ոչ ։

Նախադաս գոյականն ունի սովորաբար զդիմորոշ յօդ՝ համեմատ ցուցականին ։ Զայս ամենայն տեսանես յօրինակսդ ։

* Յերդմանէդ յայդմանէ ։ ‖ ահա երկոքին եզակի բացառական, նախդիրն յ կրկնեալ, և դիմորոշն դ յօդեալ 'ի գոյականն համեմատ այդին ։

Նոյնպէս են հետևեալքդ ։ 'Ի տարւոջն յայնմիկ ։ զոսկերսդ զայդոսիկ ։ 'ի պատուիրանացս յայսցանէ ։ զառնէն զայնմանէ ։ Թղթովդ այդուիկ ։ ընդ այլդ ընդ այդ ։ ըստ բանիս մեծի այսորիկ ։ ընդ առնս ընդ այսմիկ ։ ըստ արձանս ըստ այս ։

Սակաւ ուրեք ոչ կայ դիմորոշ յօդ 'ի գոյականն, կամ փոխան այնր դնի ստացական դերանունն, և կամ սորին, այդր ։ որպէս. 'ի ժամանակի յայսմիկ. յորոգայթէ յայսմանէ. նշանք այսորիկ են ։ Կամ, 'ի տեղւոջէ սորին յայսմանէ. ժողովրդեան քում այսմ. ծառայից քոց այսոցիկ. 'ի ժամանակի սորա յայսմիկ ։

352. Գիտելի է. Երբեմն դերանունն ցուցական կրկնի առանց հարկի 'ի միում բանի, կամ նոյն մի ցուցականն, և կամ նմանն ։ որպէս. * Զայն ամենայն որ ինչ միանգամ 'ի ձեռն Յասոնեայ ցուցեալ է, զայս ամենայն ջանասցուք, ‖ են. (Բ. Մակ. Բ. 24.)

Նոյն դարձեալ. * Զայն Մովսէս զոր ուրացանն, զնա Աստուած առաքեաց ։ || (Գործ. է. 35 ։)

Կայ և այլուր, զի ցուցականն և իւր ցուցեալն միանգամայն դնին 'ի նմին բանի. որպէս. * Զճշդեն և զճշմարտեն՝ նոյն առաջնոյն թողաք ։ || (Բ. Մակ. Ը. 29.) ուր նոյն՝ աւելորդ էր, այլ եդեալ է 'ի զարդ ։

353. Գիտելի է. 'Ի վսեմ շարադրութեան ցուցականն հեռի եդեալ 'ի գոյականէ իւրմէ իբրև խնդիր նոյն բայի, ազդուութիւն իմն ցուցանէ զայն, ըստ հոլովոյն համաձայնելով նմին, և կամ յարաբերականի նորա ։ որպէս.

* 'Ի հպարտութիւն ամբարտաւանութեան յեցեալ՝ յայն որ 'ի հնոց ժամանակաց հետէ ունէին ։ || (Բ. Մակ. Դ. 11.) ուր տրականն յայն՝ իբր կրկնելով ցուցանէ զգոյականն 'ի հպարտութեան. որպէս թէ, յայն հպարտութիւնն ասեմ զոր յառաջին ժամանակաց ունէին ։

* Ո՞րք ուսանիցիք զբազմաթիւ անուանս աստուածոց նոցա, այն՝ որ չիք ուրեք 'ի միջի և ոչ մի ։ || (Եղիշ. 153.) ուր այն ցուցանէ զսեռականն աստուածոց. բայց ուղղական դնի համաձայն յարաբերականին որ. և ըստ սովորական կանոնի ասելի էր, այնց կամ այնոցիկ աստուածոց՝ որոց և ոչ մին գոյ ։

* Զխորամանկութիւն առաջին օձին զգեցեալ էն, այն որ մատնեաց պատրել զմարդն ։ || (Նարգ. 577.) փխ. այնր օձին, բայց դնի այն համաձայն որ յարաբերականին ։

# ՅՕԴՈՒԱԾ Դ.

## Ստացական Դերանուանք ։

Զայլ և այլ տեսակս Ստացական դերանուանց ծանուցեալ եմք 'ի կարգին. (54) և զի ամենեքին նոքա են ածականք, տեսանելի է աստանօր՝ զկերպ վարելոյն միայնակ, և կամ ընդ գոյականին ։

## ԿԱՆՈՆ Ա.

354. Ստացական դերանունն ՚ի կալն միայնակ առանց գոյականի՝ ունի սովորաբար զյօդ դիմորոշ, կամ զնման նորա՝ ԱՍՏԷ, ԱՆԴԷ. (տ՛ս 351.) օր. * ՆՐԱ է ամենայն ինչ, և ՚ի ՔՈՅՈՑ տուաք քեզ։ ‖ (Ա. Մնաց. ԻԹ. 14.) ուր դիմորոշն դ՝ յայտ առնէ զգոյականն, յն ՚ի քոյոց արարածոց։

Նոյնպէս են հետևեալքն. * Հանգեաւ ա՛ծ յԻՒՐԱՅՈՑՆ. (Եբրայ. Դ. 10։) յն յիւրոց գործոց։ ՄԵՐԱՅՆՈՎՔ ՊԷՏՔԻՒՔ ծանուցանող հրաշալիս. ‖ (Նար. խդ. 1.) իսկ այլուր ասի. ՚ի ՆՈՐԱՅՈՑ ԱՆԴԷ, ՚ի ՔՈՅՈՑ ԱՅԴԷ։ (Նար. խը. 3. հէ. 1։)

Սակաւ ուրեք ոչ գնի յօդ, կամ նման բառ. օր. * Օխա՛րդ որ զայլց ունիս՝ իւր ՚ի ՔՈՅՈՎ մեծարիս։ ‖ (Առք հարց. 213։)

## ԿԱՆՈՆ Բ.

355. Ածանցեալ ստացականքն ԻՄԱՅԻՆ, ԻՄՈՅԻՆ, ՍՈՐԱՅ, (55) ընդ գոյականի միշտ նախադաս են, և ունին դիմորոշ յօդ՝ կամ ինքեանք, և կամ գոյական նոցա։

Ըստ համաձայնութեան, վերջացեալն ՚ի ՈՅԻՆ՝ համաձայնի միայն յուղղականն և ՚ի նախդրիւ հոլովս. օր. * Եւ որ զԻՄՈՅԻՆՍ գալոց են ԱՅԴՔ. ‖ (Խոր. յառաջբան.) յն. և որք զինի գալոց են քոյին ազգքն Նոյնպէս ասի. ԻՄՈՅԻՆՔ համազուգաւ. ԻՄՈՅԻՆ նախնեայն. ՔՈՅԻՆ մարմնով. ՁԵՐԱՅԻՆ բնութիւն։

Իսկ ստացականք վերջացեալք ՚ի ԱՅՆ կամ ԱՅԻՆ, սովորաբար համաձայնին ՚ի հոլով և ՚ի թիւ, սակաւ ուրեք անհամաձայն երևեալ. օր. ԻՄԱՅՆՈՅ փառացն։ ըստ ՍՈՐԱՅՈՒՄՆ բանի. ՅԻՄԱՅՈՑՆ հանգերձից. ԴՈՐԱՅՈՎՔ տեսութե. ԻՄԱՅՈՔ համազգօք. ՅԻՄԱՅԻՆ ծացոյն։ ՆՈՑԱՅՈՑՆ կրից։

## Կանոն Է.

356. Բուն ստացականքն իմ, քո, մեր, ձեր, իւր, վարին ընդ գոյականին նախադաս և յետադաս, ունելով յաճախ զդիմորոշ յօդ յինքեանս, կամ ՚ի գոյականն, համաձայնեալք ՚ի հոլով և ՚ի թիւ. և նախդիր եթէ կայցէ՝ նախադասին դնի։ Զայս ամենայն տես ՚ի մի յայս բան. * Որ ՚ի մերում մտի, և ՚ի խորհրդեան մերում էք։ ‖ (Նաթեր. ժդ. 1.) Աստ ստացականն մեր՝ ընդ երկու գոյականի կայ, միոյն յառաջ, միւսոյն զկնի, ՚ի ներգոյական հոլով եղեալ համաձայն, և նախդիրն ՚ի վերայ նախադասին միայն։

Նոյնպէս են. * Իմա աղջի իմում։ յամենայն իմոց։ յառնելն իմում։ աւուր քոյ։ եղբարցս իմոց։ ՚ի քում մե բարերարութենդ։ պարգևիդ քում։ ՚ի քում ականդ-յականէ քումմէ։ ձերով մարմնովդ։ առ ՚ի յիւրոցն ցանկութենց։ առ չարեօքս իմովք՝ նորոյ բարութի։ ‖

Սակայն որպէս յառաջն ծանուցեալ եմք (302. 323. 328.) ՚ի յոքնակի ուղղականն և ՚ի նախդրիւս ոչ ասի, բանք իմք, ՚ի բանս իմս, զգործս քոյս, ՚ի վարս իւրս ևն. այլ դնելի է, բանք իմ, ՚ի բանս իմ ևն. և այս բազում ուրեք ոչ է ստացականն, այլ սեռականն էական դերանուանն, որով լինի յատկացուցիչ. ուստի յայլ բանս ևս ասի, հօր իւր. իմ կորուսեալ. գարշին իմ. թշնամիքն ձեր. բանիւ քո. յորս ոչ եթէ անհամաձայն համարելի է, այլ զի սեռականն է էականին և յատկացուցիչ։

՚Ի յոքնակի նախդրիւն կարեն լինել՝ յորժամ նախադաս են գոյականին, մանաւանդ եթէ այլ բառ ևս կայցէ ՚ի միջի. որ. * Ընդ իւրոց խրատելով որդւոց։ ‖ (Պիտոյ. 9.) * Զիւրոց առ մեզ հրաշագործեաց զօրութիւն։ Զքոյին խնդրես. չիմոյ խածանողին։ ‖ (Նար. Ժ. 2. խն. 2. ձգ. 2։)

357. Ասացաք թէ ունին զդիմորոշ յօդ ինքեանք, և կամ գոյական նոցա։ Յորժամ ստացականն է նախադաս, ինքն առնու վայելչաբար զյօդն. բայց ՚ի յետադաս լինելն՝ ոչ առնու ինքն. որ ասի, բա-

Նիցս իմոց, կամ իմոց բանիցս, կամ իմոցս բանից· բայց ոչ՝ բանից իմոցս ։ Նոյնպէս գեղեցիկ ասի՝ քումդ կուսութեան, այլ ոչ՝ կուսութեան քումդ ։

Նոյնպէս եւ, թէ նախդիրն դնի առ նախադասն միայն. սակայն եթէ այլ բառ մտանիցէ ՚ի մէջ, յոլովակի առ երկոսին եւս դնի, (տե՛ս 308) և երբեմն նաև ՚ի մօտ լինելն. որ. յիւր ՚ի փառս և ՚ի վայելչութիւն ։ (Բ. Պետ. ա. 3.) ձերս զպարտիս ։ (Նարեկ. 1 ։)

358. Գիտելի. Որպէս յաղագս ցուցական դերանուանց ասացաք, (349) նոյնպէս և ստացականք բազում ուրեք անհամաձայն երևին ՚ի հոլովս կամ ՚ի թիւ. որ. եղբարք իմոյ, փոխանակ՝ իմովք ։ առ քումդ երախտիս, փոխանակ առ քոյդ. իմոյս ձեռօք, փոխանակ իմովք ։ ՚ի քումդ լռութեան, փոխանակ ՚ի քումմէ ։ քումդ նշանաւ, փոխանակ՝ քով ։ իւրում աշակերտացն, փոխանակ իւրոց ։ մերոյս բանից, փոխանակ՝ մերոց ։

## ՅՕԴՈՒԱԾ Դ.

### Յարաբերական դերանուան՝ Որ.

Բառդ Որ, իբրև անուն հարցական և վերբերական՝ է ածական. և ըստ այսմ զհամաձայնութեան նորա խօսեցաք վերագոյն ։ (328)

Իսկ իբրև յարաբերական դերանուն՝ միշտ իբր գոյական վարի, և լինի տէր բայի, խնդիր բայի և անուան և նախադրութեան, և յատկացուցիչ ։

### Կանոն Ա.

359. Յարաբերականն՝ որ ներգործութեամբ ունի զյարաբերեալ անունն, ըստ բնական կարգի յետադաս լինի նմա սովորաբար. որ. * Աչս՝ որովք ոչ տեսանիցեն, և ականջս՝ որովք ոչ լսիցեն. ‖ (Հռովմ. ժա. 8.) ուր աչս, ականջս, են յարաբերեալք, և որովք յարաբերական նոցա յետադաս ։

Բայց լինի խոտորումն 'ի զարդարումն շարադրութեան, զի յարաբերականն յառաջէ քան զյարաբերեալն, և ընդ մէջ նոցա մտանեն այլ բառք. որ. * Դու որ գործէին զամբարշտութիւն սոդոմայեցւոցն՝ խայտառակեցեր ։ ‖ (Գ. Մակ. Բ. 3.) ուր ըստ բնական կարգի ասելի էր. Դու զսոդոմայեցիսն՝ որ գործէին զամբարշտութիւն, խայտառակեցեր ։

Նոյնպէս և այս. * Զի եթէ որ 'ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ բանն՝ հաստատուն եղև ։ ‖ (Եբրայ. Բ. 2.) ուր դնելի էր ըստ բնական կարգի. Զի եթէ բանն՝ որ 'ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ, հաստատուն եղև ։ Նոյնպիսի խոտորումն տեսցի և 'ի հետակայ օրինակս ։

Կանոն Ե.

360. Բազում ուրեք ոչ կալով յայտնի յարաբերեալ, այլ փոխան նորա ցուցական դերանուն մի զօրութբ, յարաբերականն դնի յայն հոլով և 'ի թիւ, յոր դնելի էր յարաբերեալն ։ որ. * Էառ յորոց ածէրն ձեռամբ իւրով պատարագս ։ ‖ (Ծննդ. ԼԲ. 13.) ուր յարաբերեալն լինելոց էր 'ի պատարագացն՝ բացառական հոլով խնդիր առ բայիս. և ոչ կալով յայտնապէս, իմանի զօրութբ՝ յորոցանէ. և աստ փոխան նորա դնի յարաբերականն 'ի բացառական հոլով յոքնակի. և ըստ պարզ շարադրութեանն դնելի էր. և էառ յորոցանէ զորս ածէրն՝ պատարագս ։

Նոյնպէս իմացեալ լինի և այս. * Երևի որոց ոչ թերահաւատեն 'ի նմանէ ։ ‖ (Իմաստ. Ա. 2.) որ երևի այնոցիկ՝ որք ոչ թերահաւատեն ։

* Արժանի ըստ որոց մեղարն՝ անց ընդ քեզ ։ ‖ (Յոբ. ԺԱ. 6.) որ ըստ այնց գործոց որովք մեղարն ։

361. Բայց այլուր յարաբերականն դնի յայն հոլով զոր բայ իւր պահանջէ, առաւել յորժամ է տեր բայի. և երկոքեն այս երևին 'ի յաջորդ օրինակդ. * Որում խնդրէ 'ի քէն՝ տուր. և որ կամի փոխ առնուլ 'ի քէն՝ մի դարձուցանէր զերեսս ։ ‖

(Սաղմ. Ճ. 42.) ուր յառաջնում մասին դնի տրական դէմս, որպէս դնելի էր յարաբերականն, փոխանակ առելոյ, այնմ որ խնդրէ 'ի քէն՝ տուր։ Իսկ յերկրորդ մասին ուղղական դնի որ, տէր բային կամ, և զօրութիւն խնդրի յարաբերականն, այսինքն յայն-մանէ որ կամի՝ մի դարձուցաներ զերեսս. ուր ըստ առաջին մասին դնելի էր, յորմէ կամի՝ մի դարձուցաներ։

Նոյնպէս է. * Ոյք որ 'ի ներքս անդ էին, խնդ-նէին յուղա նետ և զէն մատուցանէր։ ‖ (Բ. Մակ. ԺԴ. 20.) ուր դնի ուղղական որ, տէր բային, և զօրութեամբ խնդրեալ լինի. այնոցիկ որք էին 'ի ներքս՝ զէն մատուցանէր յուղա։

362. ԳՈՐԾԵԼԻ. Գոյ և սովորութիւն հակառակ, որով յարաբերեալն դնի յայտնի, իսկ յարաբերականն լռելեայն. որպիսի և վերագոյն յիշեցաք. (291) թ. * Յուցանելով զոր 'ի խոնարհաւն օգուտ, և զոր 'ի հպարտութենէն վնաս։ ‖ (Շնորհ. ընդհանր. 37.) ուր յառաջին մասին զոր դնի հայցական՝ յարաբերական օգուտ բառին, և ըստ նորա հոլովոյն, փոխանակ առելոյ, ցուցանելով զօգուտն՝ որ լինի 'ի խոնարհութենէ։ Իսկ յերկրորդ մասին նոյն յարաբերական զօրութիւն կայ. այսինքն ցուցանելով զվնաս որ 'ի հպարտութենէ լինին։

Նոյնպէս է և այս. * Ընչաւորք են, և Թագաւորքն, և 'ի նոցանէ սպառնալիքն։ ‖ (Սարգ. 240.) այսինքն սպառնալիքն որ 'ի նոցանէ։

## Կանոն Գ.

363. Ուր յարաբերականն ներգործութիւն ունի զյարաբերեալն, յայն հոլով դնի ինքն՝ զոր պահանջէ իւր բայն. այսինքն որոյ է տէր կամ խնդիր, և կամ ուր այլոյ անուան յատկացուցիչ է։

Նշանի կանոնս յայսմ բանի. * Ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովն՝ զոր եդ ժառանգ ամենայնի, որով և զյաւիտեանս արար, որ է լոյս փառաց։ ‖ (Եբրայ. Ա. 2. 3.) ուր որդւոյն է յարաբերեալն. և յարաբերականն

դնի այլ և այլ հոլովով . որ զոր՝ հայցական խնդիր եդ բային . որով գործիական խնդիր արար բային . և որ ուղղական տէր բային՝ է :

364 . Սակայն գոյ կրկին խոտորումն : Մի , զի յարաբերականն դնի յայն հոլով որով եղեալ կայ յարաբերեալն . օր . * Պատմեաց Մովսէս Ահարոնի զամենայն պատգամսն՝ զոր առաքեաց զնա տէր : ( Ելք . դ . 28 : ) ուր զոր՝ յարաբերէ պատգամն . ուստի ինքն ևս դնի հայցական , փոխանակ ասելոյ 'ի տրականն , առ որ առաքեաց նա :

Սոյնպէս . * 'Ի վերայ սեղանոյ ողջակիզացն՝ որոյ նոր արարին : ‖ ( Ա . Մակ . դ . 53 . ) ուր յարաբերեալն՝ սեղանոյ լինելով սեռական , նոյն հոլովով դնի և յարաբերական նորա , փոխանակ ասելոյ , զոր նոր արարին :

365 . Միւս խոտորումն ընդ հակառակն լինի , յորժամ յարաբերեալն դնի ըստ հոլովոյ յարաբերականին . օր . * Բնակիչք և արծաթագինք՝ որ էին յազգաց օտարաց , թլփատեաց զնոսա : ‖ ( Ծննդ . ժէ . 27 . ) ուր երկու անուանքն յարաբերեալք՝ ուղղական դնին ըստ հոլովոյ յարաբերականին , փոխանակ զի ասելի էր , զբնակիչս և զարծաթագինս , հայցական խնդիր թլփատեաց բային , որպէս դնի դերանունն՝ զնոսա :

Նոյնպէս է . * Ամենայն որոց ոչ իցեն թևք և թեփ , պիղծ իցէ ձեզ այն : ‖ ( Ղևտաց . ժա . 12 . ) փոխանակ ասելոյ՝ ամենայն պիղծ իցէ . բայց դնի սեռական վասն յարաբերականին՝ որոց :

Կրկին այս խոտորումն երևի 'ի միում իսկ բանի , որ յարաբերական և յարաբերեալ փոխանակեն զհոլովսն . օր . * Ապստամբութիւն ուսուցանես 'ի Մովսիսէ որոց 'ի հեթանոսս ամենայն հրէայք են : ‖ ( Գործ . իա . 21 . ) ուր ասելի էր , ապստամբութիւն ուսուցանես ամենայն հրէից որք 'ի հեթանոսս են : Յաճախ են այսոքիկ խոտորմունք յանձաշունչ գիրս և յայլ հեղինակս . զոր ուսանողն պարտի քննել զգուշութեամբ :

## Կանոն Դ.

366. Ըստ համաձայնութեան թուոյն՝ ընական իմն է զի յարաբերականն դնիցի ըստ թուոյ յարաբերելոյն, այ̄ եզական կամ յոգնական՝ որպէս և յարաբերեալն ։

Այս օրէն պահի բազում անգամ, և տեսանի արդէն ՚ի նախայիշեալ օրինակդ. տես դարձեալ և յայսոսիկ. * Պաշտօնեայք՝ որով հաւատացէք ։ ‖ (Ա. Կորն. Գ. 5.) * Յաւուրս նոյի՝ յորս տապանն կազմէր ։ ‖ (Ա. Պետ. Գ. 20.) Ահա յոգնակի եղաւ՝ որով, յորս. վասն զի յոգնակի են յարաբերեալքն՝ պաշտօնեայք, յաւուրս ։

Բայց քանզի բառդ որ՝ անորոշ ձայն ինչ է, և կարէ առնուլ միում կամ բազմաց, վասն այսորիկ եղև ազատութիւն ինչ՝ եզակի դնել զայն առ յոգնական յարաբերեալ, մանաւանդ ՚ի հոլովմն ուղղական, տրական, հայցական, և գործիական. Նմանապէս եզակի դնել՝ ուր յարաբերեալն է անեզական անուն, կամ հանրական, հաւաքական ։ Ի նախադրեալ օրինակդ տեսանի այս. յորս յաւելումք գհետակայս ։

* Այր իմ և եղբարք իմ սոքա են, որ զբանն այ̄ լսեն և առնեն ։ ‖ (Ղուկ. Ը. 21.) ուր եզականդ որ՝ յարաբերէ զերկոս բառս։ Նոյնպէս ասի. * Ամենայն մարդիկ՝ որ ըմպեն ։ Ամենայն ուրուք որոյ իցէ. ‖ և այլն ։

Սակայն ոչ այսպէս լինի՝ յորժամ յոգնական յարաբերեալն զօրութեամբ կայ. զի յայնպիսի բանի եթէ ըստ հոլովոյ համաձայն է՝ հարկ է յոգնակի դնել զյարաբերականն. որպէս ՚ի կան. Ը. (360.) սոյնպէս և յայսմ. * Եղիցես վկայ նորա առ ամենայն մարդիկ՝ որոց տեսեր և լուար ։ ‖ (Գործ. ԻԲ. 15.) ուր զօրութեամբ կայ, եղիցես վկայ այնց, կամ իրացն՝ զորս տեսեր ։

Կանոն Է.

367. Ուր յարաբերականն է յատկացուցիչ, կամ խնդիր, կամ տէր բայի, միշտ յառաջոյ դնի անուանն կամ բային, և ոչ երբեք զկնի։

Ուստի ոչ ասի, իմաստութիւն որոյ. նման որում. հեռի յորմէ. տեսեալ որոյ. տեսեալ զոր. զարմացեալ ընդ որ։ Այլ ասելի է, որոյ իմաստութիւն, յորմէ հեռի. որոյ կին զոր տեսեալ ևն։

Յետադաս լինի միայն նախադրութեանց ումանց. որպ. վասն որոյ. առանց որոյ. առ որով. ընդ որում. զհետ որոյ։

Յորժամ նախադաս է անուան կամ այլում հոլովեալ բառի, եթէ կայցէ նախդիր կամ նախադրութիւն ինչ, դնի այն կամ ՚ի յարաբերականն, կամ ՚ի յետադաս բառն, և կամ յերկոսին ևս, մանաւանդ ուր այլ բառք կան ընդ մէջ։ զորօրինակ. * Յորոյ դուռն ՚ի խնդիր երթեալ էիր. (տ. Թագ. Ժ. 2.) ուր որոյ՝ է յատկացուցիչ բառին խնդրէր. և նախդիրն եդեալ է առ երկուսին ևս. և մարթ էր ասել, յորոց խնդիր, կամ որոց ՚ի խնդիր։

Այսպէս են. * Որոյ կեցոյց զորդին։ յորոյ ձեռս տայցեն։ յորոյ շիջանելն։ որոյ ՚ի խուոլէն։ որոյ զա-րիւնն։ որոյ ընդ հարսն։ ընդ որոյ ընդ գեղն։ Ո-րոյ իբրև անցանիցէ՝ ոչ գոյ զհետոյն գտանել։ զոր զհետ. ևն։

Կանոն Ը.

368. Բազում ուրեք ընդ յարաբերականին գտանի անուն ինչ կամ՝ դերանուն՝ իբր բացայայտիչ նորա, ուստի հոլովիլ ևս համաձայն, և նաև թուով։ որպ. * Առ որ մատուցեալ ՚ի վէմն կենդանի։ (տ. Պետ. Բ. 4.) ուր նախդրիւ տրականդ ՚ի վէմն՝ իբրև յաւելմամբ բացայայտէ. որպէս թէ ասել, առ որ, այսինքն առ վէմն կենդանի մատուցեալ։

Այսպէս են. * Որ տալոց ես զմանանցական փրկեն. (զոր, այսինքն զփրկեն։) Յորոց մի ՚ի գիտնական խրատուց. (յորոց, այսինքն ՚ի խրատուցն.) Առ որս ա-

ծեալ առ այն. (առ որ, այսինքն առ այն։) Տեղիդ յորում դուդ կաս 'ի դմա։ Օրոց դուք չարախօսէքդ ընդդմանէ։ ||

369. ԳՈՐԾԵԼԻՔ. Յարաբերականն ունի զայլ պէս պէս եղանակ կիրառութեան ոչ ըստ սովորական կանոնաց։ Նախդրուտ ուրեք դնի առ 'ի զարդ միայն, կամ առ 'ի յարմարելոյ զոճ բանիցն. և այս յաճախ է 'ի Նարեկին, և 'ի շարականսն։

Ուղղական նորա դնի փոխան հայցականի, բացառականի, գործիականի։ որպէս * Տեսեալ զայն՝ որ յառաջն ուրանայրն. || (Իմաստ. ժբ. 27.) փոխանակ՝ զոր։ * Որք 'ի սմանէն լեալս որք ասելով. || (Պիտոյ. 29.) փոխանակ՝ զորս։ * Յաղագս յայնմանէ՝ որ իրաւունք այդ տարամերժեալ արտահեալ է 'ի նոցանէ. || (Յոհ. կաթող.) փոխանակ՝ յորմէ։ * Ոյժու որ պակաս գտայր։ || (Սարգ. 107.) փոխանակ՝ որով։

Գործիական հոլով սորա երբեմն իբրև շաղկապ նշանակէ՝ որովհետև, փոխանակ զի։ որպէս. * Որով 'ի սակաւուց հաւատարիմ եղէք, 'ի վերայ բազմաց կացուցից։ || (Յաճախ. 64.) որ է Մատթ. իե. 21. 23. դնի որոշելոյ։

370. Ի բանի կրկնելով յարաբերականն, նշանակէ՝ ոմն, ոմանք, մասն ինչ, և այլն. որպէս. * Ժողովեցին որ շատ, և որ սակաւ. || (Ելք. ժզ. 17.) այսինքն ոմն շատ, ոմն սակաւ։ Նոյնպէս ասի. * Որք 'ի մահ, 'ի մահ. և որք 'ի սուր, 'ի սուր. || (Երեմ. ժե. 2.) այսինքն այնք որ 'ի մահ և այլն։ * Օրոց 'ի տախտակս, և ոմանք յայլ ինչ կահ. || (Գործ. իէ. 44.) այսինքն զոմանս տախտակօք, և զոմանս այլ կահուք։

# ՅՕԴՈՒԱԾ Ե.

## Դերանուն յօդք, ս, դ, ն ։

371. Զհամառօտ ծանօթութիւն այսոցիկ տուաք կանխաւ. (50) և ըստ բերելոյ տեղւոյն յիշեցաք նաև յընթացս քերականութեանս. մնայ զայլ ևս զետեղիսն աւանդել աստանօր 'ի կողմանէ կիրառութեան նոցա ։

Սեպհական է մերում հայկեան լեզուի՝ գրովքս այսոքիւք յայտ առնել զդէմս մարդոց, կամ զկարգ այլոց իրաց՝ զմօտաւորն, զմիջինն, և զհեռաւորն ։ Ուստի բնական զօրութիւն նոցա և պաշտօնն է՝ յորժամ 'ի բանին պակասի այլ դերանուն, ընդ միոյ 'ի տառիցս զտեղի դերանուանն. որպէս փոխանակ ասելոյ՝ դու թագաւոր, ասեմք՝ Արքայդ, կամ թագաւորդ ։ Փոխանակ ասելոյ՝ այս տեղի, այդ որդի, այն տուն, ասեմք, տեղիս, որդիդ, տունն ։ Այսպէս փոխանակ ասելոյ, ես տեսանեմ, դու եկիր, նա սիրէ, ասեմք, տեսանեմս, եկիրդ, սիրէն ։

Զայսմ պաշտամանէ պատահէ ևս, զի յորժամ նաև անուն ինչ պակասի 'ի բանին, այսինքն յատկացեալն, կամ գոյականն, կամ այլ անուն, դերանուն յօդն դնի 'ի յատկացուցիչն, կամ յածականն. օր. Կերպարանիմ զդաւթին, և իմանի՝ զնմանութիւն դաւթի ։ Կամ. իմաստութիւն ասեմ ոչ զաշխարհին, այսինքն ոչ զիմաստութիւն այսր աշխարհի. Կամ. ծերութիւն պատուական՝ ոչ բազմաժամանակեայն է. այսինքն ոչ ծերութիւն բազմաժամանակեայ ։ Ըստ այսոցիկ և յայլ անբաւ տեղիս երևի զօրութիւն յօդիցս՝ ըստ պահանջելոյ յարմարութեան բանին ։

Սակայն առանց այսպիսի պատճառաց ևս՝ հանրական սովորութիւն է լեզուի մերում 'ի կիր առնուլ զայսոսիկ տառքս ոչ միայն առ 'ի զարդ, այլ զի ազդումն առնուցու բանն, եթէ գիտասցի ևեթ՝ յոր բառ, և յորում տեղւոջ դնել արժան է ։

Զատուկ նախադրութիւն, շաղկապն, միջարկու-

թին, յարաբերականն որ, և միջականքն ով, ո, ինչ, որ, ոմն, իմն, ոչ առնուն զայս յօդս, յորժամ վա-րին ըստ յատուկ նշանակութեան իւրեանց։ Իսկ մնացեալ մասունք բանին՝ անուն, դերանուն, բայ, մակբայ առնուն. այլ թէ զիարդ, ծանուցցուք աստանօր։

## Ծանօթութիւն Ա.

372. Գոյական անուն՝ թէ նախադաս, թէ յե-տադաս՝ կարէ առնուլ զյօդ. թէպէտ վայելուչ ևս է դնել 'ի նախադասն՝ թէ գոյականն իցէ, թէ ածականն, թէ յատկացուցիչ կամ խնդիր։

Այսպէս ասի, Զորդիդ քո սիրելի, յօդն դ եղեալ 'ի նախադաս գոյականն. մարթ է ևս ասել, զսի-րելի որդիդ։ Հնազանդեալն երկրպագուք, ուր 'ի նախա-դաս ածականն դնի ն. բայց լինի ևս՝ Հնազանդեալ եր-կրպագուքն։ Զօրութեանն օրէնս, 'ի յատկացու-ցիչն եղեալ ն. լինի ևս՝ զօրութեան օրէնսն։ Զի՞նչ իցէ 'ի մեռելոցն յառնել, 'ի խնդիրն եղեալ ն. և լի-նի ևս՝ 'ի մեռելոց յառնելն։

Յորժամ գոյականն ունիցի զկնի իւր զդերա-նուն ցուցական կամ ստացական, ինքն առնու զյօդն սովորաբար։ որպ. յերդմանէդ յայդմանէ. եղբարցն իմոց ևն։ (տես 351. 354.)

373. Յետադաս ածականի միայնակ դնել յօդ՝ սակաւ ուրեք երևի. որպ. Արանց խաւարայդ այդու-ցիկ։ Տէր ամենակալն։ Բարեկամն Քծն։

Ասացի, միայնակ ածականին. վասն զի եթէ նոյն յօդ կայցէ 'ի գոյականն, կարէ կրկնիլ և առ ածա-կանն, առ յատկացեալն և առ յատկացուցիչն, մա-նաւանդ ուր այլ բառք ընդ մէջ անկանին. որպ. Զան զարդդ մնացեալդ առ քեզ։ Յարանցն յայս-ցանէ եկելոցն ընդ մեզ։ Յանվարժիցն ձիոցն։ Զանձինդ զպարտականդ մահու զանբուժելիդ բե-կութի։ Յանդամոցն անարգացն ևն։

'Ի յոքնակի նախդրիւն՝ որք ունին ս, բազում ուրեք դնի և ս զկնորոշ, որպէս զի կրկին սխալ ծա-նիցի լինել յոքնական, և ոչ եզական. որպ. զնոյնս զայսոսիկ. զերիս Նախադասս. չորս յայս. 'ի հարսա-

նէսս . զՆորհաց որդէսս . զայսպէսեսս . ևն ։ Ձեռնպէտ առ-ոչ կրկնելոյ զսէն, յայսպիսի բառս պահի յոքնակա-նացուցիչ ս ։ (տես 113 .)

## Ծանօթութիւն Ե .

374 . Լական դերանունք յոր և լցէ զէմն և 'ի հոլովս՝ առնուն զերկս ևս յօդս . որ . եսս, եսդ, եսն . մեքս, մեքն, զմեւքդ . ինձն, ինեւս, զիսս ։ Կամ, դուդ, դուն . դուքդ, քեզն, ձեզն, ձեզս ևն ։ Նմա-նապէս առի, ինքնս, ինքնդ . բայց ոչ, դուս, դուքս ։
Լականն իւր, առնու միայն ն յօդ, որ իւրն, իւրեան, զիւրեաւն . բայց երբե ստացական՝ առնու զերկսն ևս ։ (տես 356 .)
Այս եական, որպէս և ցուցականքն՝ յորժամ ունիցին զբացայայտիչ կամ զածական, յօդն ոչ յինքեանս դնի, այլ 'ի նոսա . որ . Առ քեզ իշխանդ, մեզ վկայիցս . ձեզ հաւատացելոցդ . ես հովիւս . դու քս ողջախտութեանս . ստարս ես . զիս զմեղաւորս . ևն ։
Լական ցուցականքս՝ սա, դա, նա, առնուն միայն զարմատ իւրեանց յօդն, ընդ մէջ եդեալ զձիր ; . այսպէս, սոյս, դոյդ, նոյն . որ . Զոր դոյդ մարգա-րէանայ ։ Զոր նոյն առնէ ։ Զոր դոքոյդ անօրինէն ։ Այսպէս առի, նմայն, 'ի նմանէն, ընդ նմին, նոքայն, ընդ նոսայն . ևն ։
Ցուցականքն այս, այդ, այն, միայնակ կամ ընդ դոյականի՝ ոչ կամին զյօդ, և սակաւ ուրեք դտանի եդեալ . որ . Որ զայն կամին . (Բ . Պետ . Գ . 5 .) և այլուր առի, այսս աղօթից ։ Ըսթէ պիտոյ լիցի, 'ի դոյական նոցա դնի յօդն ։ (տես 351 ։ )
'Ի վերայ ցուցականացն սոյն, դոյն, խօսեցեալ եմք 'ի վերադոյն . (314 .) որք 'ի միայն լինելն կարեն առ-նուլ յօդ . բայց ընդ դոյականի, կամ ընդ դերա-նուանն ինքն, 'ի նոսա դնի յօդն ։ Նմանապէս յաղագս ստացականացն՝ իմ, իմոյին ևն, խօսեցեալ եմք ։ (355)

## Ծանօթութիւն Զ .

375 . Ըստ կիրառութեան յօդից 'ի բայս, միայն

հրամայական եղանակն անընդունակ է յօդի. իսկ այլն ամենայն եղանակ և ժամանակ, դէմ և թիւ կարեն վայելչաբար առնուլ զերեսին յօդսն:

Ուրանօր յառաջ քան զբայն կայ որ յարաբերական, յօդն 'ի վերայ բային դնի միշտ. օր. զոր ընտրեացդ. զոր խորհեցայս. որ գթայն. զոր ուտէն. որ կամս. որ կամդ. որ կամն. որ ասիդ. որ ասէդ. որ խօսիմս. որ խօսիդ. որ խօսինս. զոր գրեցիդ. որ հարկանելոցն էին. որ հզօրացեալն է. որ արբեալդ էք. զոր ընթեռնուցուքդ. զոր տեսանիցէքն եւն:

376. Ուր ուրեք նախ քան զբայն կայ անուն մի կամ դերանուն՝ իբրև խնդիր կամ տէր բային, նմանապէս և ընդունելութի մի նախ քան զդիմաւոր բայն, գրեթէ միշտ յօդն դնի 'ի վերայ նոցա, և ոչ 'ի յետադաս բայն: օր. Մինչ յարդն տային, (յդ զյարդ:) Որ յաւիտենից եմ: Որ ընդ աջմէն իցեն: Որ անունն կոչեցեալ էր: Որ 'ի բանդն տային: Որ 'ի վերայ նոցայն մեռաւ: Որ զհետն երթային: Որ զկնիդ գայ: Ընդ որում և համարձակեալդ խօսիմ:

Եթէ յայսպիսի բանս փոխեսցին շարքն, ըստ նմին և յօդն փոխի 'ի նախադաս բառն. ուստի և ասի, որ կոչեցեալն էր ամուլ. որ իցենն ընդ աջմէ. եւն: Նոյնպէս ասի, որ յիմն մեղանչէն. որ տեսանէն զիս. մինչ էաքն մարմնով. որ օրէնքն էին. մեռեալն էիք. ուր էաքն ժողովեալ:

Ընդունելութիւնն անցեալ կամ ապառնի՝ յորժամ իբրև անուն վարի, առնու զյօդ ըստ կանոնի այլոց ածականաց. օր. կոչեցեալն, զհեռացեալքս, աշխատեալդ, գալոցդ, զխափանելեացս. եւն: Նմանապէս իբրև բայ՝ ընդ էական բայի լծորդեալ և նախադաս, առնու զյօդ, որպէս տեսանի 'ի վերայ գրեալդ, և յայս ևս, զոր խօսեալն էր. որ գալոցն իցէ. եւն:

Սակայն միայնակ առանց դիմաւորի՝ ոչ առնու. զի ոչ ևս մնայր բայ, այլ անուն լինէր, որպէս նախ ասացաւ:

### Ծանօթութիւն գ.

377. Մակբայն յառաջոյ դիմաւոր բայի կամ աներեւութի, առնու զյօդ, եւ վայելչաբար իսկ. որպ. Օ՛ որ յանդիմանն տեսի: Որ մտադիւրն ծառայեաց: Այժմդ տեսանէ. այժմս կեամ: Կանխաւն ասէի: Այնպէսն գնայցեն: Յաճախն ընձեռել, 'ի շատն մատուցանել, յառաւելն ողորմել. եւն:

Այսպէս եւ 'ի բացառականն ոչ կամ չ, յարի ն, դ. որպ. Որ ոչն ունիցի. որ ոչդ երկնէիր. որ չէդ էք սրբեալ:

Սակայն ուր յետադաս են բային, կամ ընդ-անցեալ ընդունելութեան, ոչ պատշաճի յօդ. ուստի օտար է ասել, ծառայեաց մտադիւրն, կեամ այժմս. կանխաւն ասացեալ, այնպէսն գնացեալ:

Ասացելովքս ըստ բաւականին տեղեկանայ աշակերտն այլ եւ այլ կիրառութեան յօդիցս:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.

### Ի վերայ շարադրութեան Բայի:

Երկին հայեցմամբ բաղդատի Բայն առ անուն եւ առ այլ հոլովելի մասունս. մի՛ իբրեւ առ տէր. եւ միւս՛ իբրեւ առ խնդիր. (263) եւ արժան է ուրոյն խօսել զիւրաքանչիւրմէ:

---

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

### Տէր բայի.

Ասացաք յիւրում տեղւոջ (268) թէ տէր կամ անուն բայի իմացեալ լինի արարողն կամ կրողն ներգործութեան. եւ համաձայնութիւն նորա ընդ բային մտածի, նախ՝ ըստ հոլովոյ, թէ յի՞նչ հոլով դնելի

է ։ Երկրորդ՝ ըստ Թուոյ, եզական կամ յոգնական։ Երրորդ՝ յոր դէմ դնելի իցէ։

### Կանոն Ա.

378. Տէր դիմաւոր բայի՝ ուղիղն է յուղղական հոլով։ Այս կանոն՝ բնական է և յայտնի, հասարակ յամենայն լեզուս. և վասն կարգի ևեթ տացուք մի կամ երկու օրինակս. որպէս. * Խորհուրդք Թիւրք անջատեն յինէ ։ ‖ (Իմաստ. ա. 3.) ուր յոգնակի ուղղականն՝ խորհուրդք՝ է տէր ներգործական յոգնակի բային անջատեն. բառն Թիւրք՝ ածական՝ համաձայնեալ ընդ խորհուրդք գոյականին. բացառականն յինէ՝ խնդիր բային ։

Դարձեալ. * Անուն մեր մոռասցի ժամանակաւ ։ ‖ (Իմաստ. բ. 4.) ուր եզակի ուղղականն անունն՝ գիտորոշ յօդիւ է տէր կրաւորական բային մոռասցի, որ մոռացեալ լիցի. ժամանակաւ՝ խնդիր բային ։ Այսպէս գիտելի է յամենայն օրինակս՝ զոր 'ի վեր և 'ի վայր յառաջ բերեմք ։

Դիտելի. 'Ի սակաւ տեղիս գտանի՝ սեռական հոլովով եդեալ տէր դիմաւոր սահմանական բայի. որպ. * Այլ ձեր 'ի մերոց սատի խօսիմք ընդ նմա ։ ‖ (Եղիշ. ժամ. 69. ձեռ.) փոխանակ ասելոյ, մեք խօսիմք ։

* Լուսաւորացն որ յերկինս՝ յորժամ տեսին զտէրն Լուսաւորաց 'ի խաչին ձայնեալ բարբառով, զարհուրեցան յոյժ ։ ‖ (Շնորհ. մեկն. Դարձր.) փոխանակ ասելոյ, լուսաւորքն զարհուրեցան ։ Այսպիսի նման մարթ է համդիպել և յայլ գիրս. բայց ծանուցաք առ ուղիղ իմանալոյ միայն զայնպիսիս, և ոչ զի հետեւողութեան տացի պատճառ ։

### Կանոն Բ.

379. Անդէմ բայն, որպէս աներևոյթն, և անդէմ ընդունելութիւն, յորժամ ունին սեռական տէր բայի առանց փոխան ուղղականի ։

Մեկնութի. Արտաքնեաւ անդէմ բայն՝ խնդրէն զ

յատուկ ձայնին ոչ զդէմ ցուցանէ, և ոչ զթիւ, վասն այսորիկ պարտ է առնուլ զտէր բային՝ յոր հոլով և իցէ, յոր դէմ և թիւ իցէ անունն։ (տես և զկնի 383.)

'Ի հոլով ուղղական առնու տէր բայն՝ իբրև զայլ դիմաւոր բայս. որպէս. * Մի՛ եւ լինել 'ի նմա բնակել 'ի մարդոյ մինչև ցանասուն։ ‖ (Եփրեմ. ծն. 62.) ուր բնակել՝ է տէր աներևութին լինել։

* Ծառայք հանդերձ տերամբք պատժեալ, և ռամիկ թագաւորաւն զնոյն կրէին։ ‖ (Իմաստ. ժը. 11.) ուր ուղղականքն ծառայք, ռամիկ, են տէր ընդունելութեան՝ պատժեալ, կրել։

380. Սակայն առնու յաճախ և վայելչաբար 'ի սեռական հոլով գնի, մանաւանդ աներևոյթ եղանակին. որպէս. * Մինչև բազմաց խօսել թէ մեռաւ։ ‖ (Մարկ. թ. 25.) ուր սեռականդ բազմաց՝ է տէր աներևութին ասել. որ եթէ դիմաւոր էր՝ գրելի էր, բազումք ասէին։

* Բանալ երկնից, և իջանել հոգւոյն սրբոյ, և գալ ձայն յերկնից։ ‖ (Ղուկ. գ. 21. 22.) ուր երից աներևութից՝ յետնոյն ուղղական գնի տէրն, ձայն. իսկ երկուցն սեռական՝ երկնից, հոգւոյն։

* Տեսեալ արդարոց՝ ծիծաղեցան. անօրէնին՝ և արհամարհեաց։ ‖ (Յոբ. իբ. 19.) ուր սեռականքն՝ արդարոց, անօրէնին, են տէր ընդունելութեան տեսեալ, որ 'ի յետնումն զօրութիւն կրկնի։

Նոյնպէս է և բայն. * Զոր առեալ Ագոնադեղոյ և թագաւորին արկին վաղարշակ։ ‖ (Խոր. ա. 8.) ուր ընդունելութիւնն առեալ՝ ունի տէր յերկու եւս հոլովս. զի ... անձնաւոր ածականաւն գնի ուղղական, իսկ հեռաւոր ածականքն գնին սեռական։ (տես 273.)

Պատահէ եւ՝ զի անցեալ ընդունելութիւն ունելով առ իւր զայլ դիմաւոր բայ, տակաւին տէր նորա գնի սեռական հոլովով. որպէս. * Զչարն՝ չար ասէ՝ որոյ զնոյն ստացեալ ունիցի։ ‖ (Ռաւակ. ի. 14.) ուր սեռականդ որոյ՝ է տէր երկուց բայից եւս. և ըստ սովորականին ասելի էր, որ զնոյն ստացեալ ունիցի։

Այսպէս է. * Յորմէ բոլոր Բարեկամքն խուսա-փեալ փախչին ։ ‖ ( Պլատոյ. 209. ) փոխանակ ասե-լոյ, բոլոր բարեկամքն ։

381. Գերունդ. Ըստ պատշաճ կիրառութեան հե-ղինակաց՝ այսպէս որոշելի է ։ Ընդհանուր ընդունելու-թիւն յաճախ և անխտիր առնու զտեղի յուղղական և 'ի սեռական հոլով ։ Իսկ աներևոյթ եղանակն ունի խտիր ինչ. զի գործիական հոլովեալ, որ-պէս գործելով, խօսելով, լինելով ևն, առնու համար-ձակ ուղղական տէր ։ Բայց ուր ինքն ուղղական է, կամ նախդրիւ հոլովեալ, սակաւ ուրեք առնու ուղղական տէր. ուստի ոչ ախորժ է ասել, լսել Ած, գործել Պետրոս. գնալ Զօրն, լինել Դաւ. նմանա-պէս ոչ դիպաւոր է, 'ի լսել Ած, 'ի գործել Պե-տրոս. այլ դնելի է, լսել կամ 'ի լսել Այ, գործել կամ 'ի գործել Պետրոսի ։ Այսպէս սովորաբար ասեմք, 'ի ծնանելն Յսի, 'ի ծագել արեւու, 'ի կա-տարել աւուրցն, 'ի լինել ընթրեաց. ևն ։

382. Գիտելի է դարձեալ, զի յորժամ տէր աներևոյթ բային է անուն ինչ, 'ի սեռական հոլով դնի. Նոյնպէս 'ի հոլովիլ իւր սեռական կամ գոր-ծիական, տէր նորա թէ անուն իցէ, թէ դերանուն, սեռական դնի. որպ. իջանելով քո. տեսանելոյ կամ տեսանելով նորա, երթալով իմ, ընդ անցանել Պե-տրոսի, ևն ։

Բայց եթէ աներևոյթն ուղղական է, և տէր նո-րա դերանուն, յայնժամ 'ի տրական հոլով դնի միշտ. Նոյնպէս առաւել՝ 'ի տրական դնի դերա-նունն, եթէ միայն նախդրիւ հոլովեալ իցէ աներ-ևոյթն. որպ. անցանել ձեզ կամ նմա. 'ի գալն ձեզ. բնակել ինձ, ևն. Թէպէտ գոյ և 'ի սեռականն, որ-պէս. յերթալդ քո ։

## Դասն Գ.

383. Ինչպէս ընդունելութիւն ըստ երկուց բայի կոչեցեալ յարակատար և գերակատար ժամանակի, չեզոքէ երրորդ դէմ առնու ուղիղ բայի սեռական՝ յամենայն դէմս և 'ի թիւս ։

Անկանոնութիւն. Նշանեալ եմք այլուր (205) թէ ան-

ցեալ ընդունելութիւն ձևանայ 'ի մերում լեզուի յարակատար և գերակատար ժամանակ, յորժամ ընդ էական բայի լծակցեալ ասեմք, գործեալ եմ, գործեալ ես ևն. Կամ, գործեալ էի, գործեալ էիր, էր, գործեալ էաք ևն : Արդ՝ այսպիսի ժամանակի երրորդ դէմն եզականին առնու տէր 'ի սեռական հոլով, թէ և տէրն իցէ առաջին և երկրորդ դիմի, կամ իցէ նաև յոգնական :

Այսպէս ասի. տեսեալ է իմ, տեսեալ է քո, տեսեալ է նորա. տեսեալ է մեր, ձեր, նոցա : Տեսեալ էր իմ, քո, նորա, մեր, ձեր, նոցա : Տեսեալ իցէ իմ, ձեր. կամ, ո՞յր տեսեալ իցէ ևն :

Պատճառ այսր կանոնի՝ է նախասացեալ երկրորդ կանոնն. իբրև զի անցեալ ընդունելութիւն ազատ գոլով ունել զսեռական տէր բայի յամենայն դէմս և յամենայն թիւ, զնոյն ազատութիւն պահէ նաև 'ի յարիլն ընդ դիմաւոր էականի երրորդ դէմին : Տես զօրինակն :

* Ոչ գիտէր յակոբ թէ Ռաքէլայ կնոջ իւրոյ գողացեալ էր զնոսա : ‖ ( Ծննդ. լա. 32. ) ուր եզակի սեռականն Ռաքէլայ՝ է տէր գողացեալ էր բային. և ասելի էր, ռաքէլ կին իւր գողացեալ էր զկուռսն :

Այսպէս. * Որոց զմանկունսն իւրեանց թլփատեալ էր : ‖ ( ա. Մակ. ա. 63. ) աստ յոգնակի սեռական դնի տէր, թէպէտ բայն եզական, և ասելի էր, որք թլփատեալ էին զմանկունսն :

* Մինչև կարդացեալ իցէ նոցա : ‖ ( Եսայ. կե. 24.) Մինչև ձեր խնդրեալ լինիցի 'ի նմանէ : ‖ ( Մատ. զ. 8. ) Յայս երկու բանս՝ բայն է եզական, և տէրն յոգնակի՝ մին յերրորդ դէմ, և միւսն յերկրորդ :

384. Ասացաք թէ այս կանոն պահի՝ յորժամ բայն է եզակի յերրորդ դէմն. բայց տեսանի 'ի սակաւ տեղիս՝ զի յոգնականին ևս, այլ և յերկրորդ դէմն եդեալ է սեռական տէր. Գր. * Որոց որդւոց իւրեանց բարւոք վերակացու եղեալ իցեն : ‖ ( ա. Տիմ. գ. 12. ) Եւս. * Որոց զմեծապաշտութիւն յանձինս ընկալեալ իցեն : ( Ագաթ. 227. ) ուր ըստ կանոնին ասելի էր, որոց լեալ իցէ, ընկալեալ իցէ. կամ

ըստ սովորականին, որք լեալ իցեն, ընկալեալ իցեն։

Նոյնպէս դարձեալ. * Մինչև քո խօսեցեալ իցէ.‖ (Մանդակ. ճառ. Դ.) փոխանակ ասելոյ, քո խօսեցեալ իցէ, կամ, դու խօսեցեալ իցես։

## Կանոն Ը.

385. Հայցական հոլով ոչ լինի տէր բայի։

Հասարակ կանոն է այս յամենայն լեզուս. և եթէ ուրեք երևեսցի թէ յայտնապէս տէր բային եդեալ իցէ հայցական, արտաքոյ է կանոնի։

Ասեմ, յայտնապէս. քանզի թուի ուրեք տէր լինել բայի, այլ ոչ է։ Ներքեին է խնդիր հեռաւոր բայի ուրուք. օր. * Զոր իբրև լցաւ՝ հանեալ ՚ի ցամաք։‖ (Մատթ. ժԳ. 47.) ուր հայցականդ զնա՝ կարէ երևիլ տէր բային լցաւ, սակայն ոչ է, այլ է խնդիր հանեալ բային։ (տես և 423.)

Նաև ուրեք տէր բային զօրութը գոլով, հայցականն կարծի տէր. օր. * Եդ ՚ի գերեզմանի՝ զոր էր փորեալ ՚ի վիմէ։‖ (Մարկ. ժԵ. 46.) ուր տէր բային զօրութը է. զի զոր յովսէփ արեմաթացին փորեալ էր։

386. Երբեմն դարձեալ յայլում բանի, թէ հայցական անուանն իցէ տէր կրաւորական բայի, և սակայն անդ իբրև ներգործական եդեալ է բայն. օր. * ՚Ի տասանորդէ պտղոյ ձեզ թողեալ լիցի... զպտուղն պտղոմայեցւոց տուեալ լիցի նոցա պարգև։‖ (Ա. Մակ. Ժ. 31. 39.) ուր բայքն ներգործաբար առեալ են յոճ արքունի հրովարտակի, փոխանակ ասելոյ, զմաքս թողումք, զպտուղքն տամք։ (տես և 195.)

Գոյ և այլ եղանակ ՚ի յունական ոճոյ մտեալ, որով կրաւորական ընդունելութեան, և աներևութին՝ մանաւանդ էական բային՝ փոխան սեռականի դնի հայցական տէր բայի, և այն ՚ի պատճառս ներգործական բայի իրիք՝ որ կայ յայտնապէս կամ լռելեայն. օր. * Գուցէ կարծիս ինչ տացէ թագաւորին՝ իբրև դաւով ինչ ՚ի նմանէ՝ կամ ՚ի հրէից

անտի զայրն ճանաչեալ ։ ‖ ( Բ . Մակ . Դ . 32 . ) Աստ ընդունելութիւն ճանաչեալ կրաւորական է, և առնլի էր, առնն սպանանեալ . բայց զի առեալ՝ կործեալ գոյէ, իմանի ներգործաբար, կարծեցաւ Թագաւորն, յայս վերաբերի հայցականն, իբրև թէ՝ կարծեցաւ զայրն սպանանեալ 'ի հրեից ։

Այսպէս է . * Յանձն առաք և զայս ազգ առանց խռովութեան լինել ։ ‖ ( Բ . Մակ . ԺԱ . 25 . ) փոխանակ առնելոյ, այսր ազգի լինել . բայց հայցական դնէ վասն ներգործական բային, որ յանձն առաք զայս ազգ՝ զի լինիցի առանց խռովութեան ։ Այլ ըստ ներքին մտացն պարզելով զայսպիսի ոճ, առնլի է թէ բուն հայցականն լինելոյ էր ընդունելութիւն կամ աներևոյթն, և փոխան այնր զտեղ նոցա առնէն հայցական . ուստի պարզելի է . զուցէ կարծեցաւ Թագաւորն զսպանանեալ լինել առնն 'ի հրեից . կամ, յանձն առաք զլինելն այսր ազգի առանց խռովութեան ։ ( տես և 419 ։ )

Օ այսոսիկ այլ և այլ եղանակս ծանուցաք, զի գիտասցէ ընտրել ուսանողն՝ թէ յինչ միտս դնի հայցական հոլովն ։

Կանոն Է .

387 . Տէր դիմաւոր բային՝ ուղղաբար համաձայնի թուով ընդ բային ։

Ասեմ, դիմաւոր բային . զի անդէմն աներևոյթն և ընդունելութիւն ոչ ունելով թիւ, անխտիր առնու զտեղ եզական և յոգնական . տես 'ի կան . Բ . և Գ ։ Այլ դիմաւոր բայն՝ որ ունի թիւ, պահանջէ զտեղ եզական՝ եթէ ինքն իցէ եզական, կամ յոգնական՝ եթէ ինքն է յոգնական ։

Յայտնի է կանոնս, այլ վասն կարգի հայեաց յօրինակդ . * Ընդարձակ է դուռն, և համարձակ ճանապարհն՝ որ տանի 'ի կորուստ, և բազումք են որ մտանեն ընդ նա ։ ‖ ( Մատթ . Է . 13 . ) ուր եզական դնի տէր բայի՝ դուռն, ճանապարհն, որ, եզական գոլով բայիցն՝ է, տանի . և յոգնական դնի բազումք, որպէս և բայքն՝ են, մտանեն ։ Այլ 'ի վերայ կանոնիս կան դիտելոյ արժանիք ։

388. Դիտելիք Զ. Ուր պատահին բազում եզական անուանք շաղկապեալք, և լինին տէր միոյ բայի, սովորաբար յոգնական դնի և բայն. սակայն լինի նաև եզական, թէ և 'ի մէջ շաղկապեալ անուանց գտանիցի նաև յոգնական։ Որպ. * Ատելի են այ ամպարիշտն և ամպարշտութիւն իւր. զի գործն և գործելին առհասարակ տանջեսցին։ (Իմաստ. ԺԴ. 9. 10.) ուր յերկոսին բանսդ յոգնական են բայքն։

Դարձեալ. * Եղև նորա ոչխար և արջառ յոյժ, ծառայք և աղախնայք։ (Ծննդ. Լ. 43.) ուր յետին անուանքն յոգնական են, և բայն՝ եզական. իսկ յետոյ (ԼԲ. 4.) դնի յոգնական, եղեն իմ արջառ և ոչխար։

389. Դիտելիք Է. Յորժամ տէր բային իցէ անուն ինչ եզական ըստ ձայնին, և ըստ նշանակութեան բազմաւորական, բայ նորա կարէ լինել եզական և յոգնական։ Որպէս բացարձակ թուականքն, հանրականք, հաւաքականք, այլև մասնականք՝ երբեմն ընդ եզական բայի լինին, երբեմն ընդ յոգնականի, և այն 'ի մի և 'ի նոյն տեղւոջ։ Որպ. * Հինգն 'ի նոցանէ յիմարք էին։ (Մատթ. ԻԵ. 2.) աստ յոգնական բայ դնի առ հինգն։ Իսկ այլուր՝ եզական. * Հինգ ձագ երկուց դանգաց վաճառի։ (Ղուկ. ԺԲ. 6։)

* Եւ ժողովեցան առ նոսա այր ամենայն՝ որ ապստամբեալ էր յօրինաց անուանի։ (Ա. Մակ. Ա. 55.) ուր առ հանրականն ամենայն՝ նախ յոգնակի բայ դնի, և ապա եզակի։ Սոյնպէս ասի. * Գումարեցաւ ամենայն այր եփրեմի, և կալան իւրեանց զանցս ջրոյն։ Եւս. * Յարեաւ այլ ազգ՝ որ ոչ ճանաչէին զՏր։ (Դատաւ. Է. 24. Բ. 10։)

* Եւ ժողովուրդն ակն ունէր զաքարիայ. և զարմանային ընդ յամելն նորա։ (Ղուկ. Ա. 21։)

* Զի մի լուիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ . . . Ասէ իւրաքանչիւր ցեղբայր իւր։ (Ծննդ. ԺԱ. 7. ԽԲ. 21։)

* Եկին միաբան բազմութիւնն և խռնեցաւ. զի լսէին յիւրաքանչիւր լեզուս խօսել նոցա։ (Գործ. Բ. 6։)

390. Դիտողութիւն Է. Անեզական անուանք, կամ որք առաւել յոգնակի վարին, (112) յաճախակի ընդ յոգնական բայի դնին, և այս մանաւանդ յԱծաշունչ գիրս. Թէպէտ լինին և ընդ եզականի, երբեմն 'ի միում եւս բանի. որպէս. * Խնդրեալ էր 'ի մէնջ ձեզ ձեռն ակամայ։ ‖ (Ա. Մակ. ԺԳ. 39.) Նաև. * Զանխիղճ հաւատն որ են 'ի քեզ. որ յառաջագոյն բնակեցաւ 'ի համւոյ քում... Թէ և 'ի քեզ էջէ։ ‖ (Բ. Տիմ. Ա. 5. 9.)

391. Դիտողութիւն Ը. Վերոյնշանակեալ երրեակ գիտելիքդ՝ ոչ են հակառակ կամ օտար ուղղական կանոնին. բայց զոյգ յայտնի խոտորումն ինչ, որով նաև 'ի հաւաքական անուանս՝ դնի եզական բայ առ յոգնակի անուն, որ և յԱծաշունչ գիրս տեսանի. և անդրադարձեալ, եզական անուն առ բայ յոգնակի 'ի կիր արկեալ յայլ մատենագիրս։ որպէս. * Ազդ եղև Ռեբեկայ բանքն Եսաւայ։ ‖ (Ծննդ. ԻԷ. 42.) ուր բայն եզական, տէրն՝ յոգնական։

Սոյնպէս. * Ամենայն զօրքն նորա զերծան 'ի նմանէ.... Անկան 'ի կողմանցն Նիկանովրայ իբրև արք հինգհազարք։ ‖ (Ա. Մակ. Բ. 11. Է. 32.)

Իսկ ընդ հակառակն. * Այլ յաղթական են համայնից քոյդ ճարտարութեանն։ ‖ (Նար. ՀԴ. 3.) ուր յոգնական բայ առ եզական անուն։ Նաև. * Յորժամ պատուիրանապահութեանն 'ի ներքս մտէն։ ‖ (Սարգ. 210.)

Կանոն Ը.

392. Դերանուն բայ յայն դէմս դնի՝ զոր ցուցանէ տէրն անուն, կամ դերանուն։

Յայտնի է կանոնս, և բովանդակ երևի յայսմ բանի. * Ես ընտրեցի զձեզ, և եդի զձեզ. զի դուք երթայցէք և պտղաբերք լինիցիք. և պտուղն ձեր կայցէ։ ‖ (Յովհան. ԺԵ. 16.)

Յորժամ 'ի միում բանի կայ մի բայ, և այլ և այլ տէր տարբեր դիմաւ, բայն համաձայնի ընդ դիմացն՝ կամ մերձաւոր անուանն, և կամ գլխաւոր դիմին. որպէս. * Աշխատեսջիք զքեզ դու բերան՝ և ոչ

ես ։ ‖ ( Յոբ. ԺԶ. 6. ) ուր բայն է յերրորդ դէմն, զի նորին չխմի է մերձաւոր անունն ԲԵՐԱՆ ։

Նոյնպէս է. * Այլ թէ ՄԵՔ, կամ ՀՐԵՇՏԱԿ յերկ-նից ԱՒԵՏԱՐԱՆԵՍՑԷ ձեզ ։ ‖ ( Գաղատ. ա. 8. ) ուր բայն յերրորդ դէմն համաձայնի ոչ մեքին, այլ մօտա-ւորին՝ հրեշտակ ։ Նյս. * Աղխ ԴՈՒ և ՈՐԴԻՔ քո ընդ քեզ ԱՌՆԻՑԷՔ ։ ‖ ( ա. Թւոց. ԺԸ. 19. ) բայն յերրորդ դէմն համաձայնեալ մերձաւորին որդւոց ։

Իսկ ըստ միւս եղանակին, * ԴՈՒ և որդիք դա-ՏԱՒՈՐԵՍՋԻՔ ։ ‖ ( ա. Մարկ. Բ. 18. ) բայն յերկրորդ դէմն համաձայնեալ ոչ մերձաւորին որդւոց, այլ դուին, որ նախադասեալ է քան զերրորդն ։ Նոյնպէս է. * Յորժամ ԴՈՒ և նա միայն ԻՑԷՔ ։ ‖ ( Մատթ. ԺԸ. 15. ) բայն իցէք՝ հետևեալ դուին, և ոչ նմին ։

## Ծանօթութիւն.

393. Ի շարադրութեան ունին զայլ և այլ եղանակ՝ բայն և տէր իւր. զորս համառօտ ծանուցցուք ։

Նախ. Ուրեք տէր բային զօրութեամբ կամ լռելեայն կայ, բայց իմանի 'ի դիմաց բային, և կամ 'ի կար-գէ բանիցն. որպէս * Տուք, և տացի ձեզ. ‖ աստ տէր ոչ գոյ, այլ 'ի դիմաց բային իմանի, ԴՈՒՔ տուք, և այն կամ ՓՈԽԱՐԷՆՆ տացի ձեզ ։

Բայց եթէ կայցէ բայ՝ յանցեալ ժամանակի եր-րորդ դէմն եզակի, ( տե 383 ) կարէ կրաւորական երևիլ բայն, որով և տէրն անորոշ մնայ. և յայս-պիսի տեղւոջ որոշելի է 'ի մերձաւոր խնդրոյն, և յիմաստից բանին. որպէս * Ոչ յերկիր ուրուք մնեալ եմք, և ոչ 'ի բաժին յուրուք տարապարտուց ՁԵՌՆ բռնութեամբ ՄՆԵԱԼ է ։ ‖ ( ա. Մարկ. ԺԶ. 33. ) ուր ան-տէր գոլով բային մնեալ է, կարէ երևիլ կրաւորա-կան, և կամ յերրորդ դէմն՝ մնեալ է ՆԱ, որ չյարմարի. այլ իմանի լինել ներգործական յան-նախդիր հայցականէն ՁԵՌՆ, և թէ յառաջին դէմն առնելի է ըստ նախ եդելոյն՝ ՄՆԵԱԼ ԵՄՔ. որով և տէրն որոշի, թէ ոչ զձեռն մնեալ է մեր ։

Այս եղանակ յաճախ գտանի և յայլ տեղիս. որպէս. * Իբր ոչ եթէ արդէն ԱՌԵԱԼ ԻՑԷ, կամ

ուրդէն կատարեալ իցեմ . . . զառ 'ի յետոյսն մոռացեալ է , և 'ի յառաջագէմսն նկրտեալ եմ : ‖ ( Փիլիպեց . Գ . 12 . 13 . ) ուր յերկուց առաջնոյ դիմի բայիցն իմանի թէ յերրորդ դէմ եղեալքն եւս իմանին , առեալ իցէ եմ , մոռացեալ է եմ :

394. Երկրորդ . Այլ ուրեք բայն թողեալ է զօրութեամբ , բայց իմանի կամ անցեալ բայն , և կամ յիմաստից բանին . որպ . * Մեք կաւ , և դու ստեղծիչ մեր : ‖ ( Եսայ . ԿԴ . 8 . ) ուր էական բայ իմանի . մեք կաւ եմք , և դու ստեղծիչ մեր ես :

395. Երրորդ . Կամ և յայլ տեղի՝ զօրութեամբ թողուլ զբայն և զանէրն միանգամայն . որպ . * Այսօր մաքուր հոգեկիր , և վաղիւ մոլի խելագար : ‖ ( Նար . ՀԱ . 2 . ) ուր իմանի . այսօր ես եմ մաքուր . վաղիւ լինիմ ես մոլի :

396. Չորրորդ . Երեւի ընդ հրամայականն՝ յաւելորդս կրկնել զտէր բայիս՝ զդերանունն . զորոյ զնմանն յիշեցաք 'ի վերոյ . ( 352 . ) որպ . * Դուք անպակաս յամենայն ժամանակի . . յիշեսջիք դուք զմեզ : ‖ ( Ա . Մակ . ԺԲ . 11 : ) Նմանապէս . * Դուք որ եկիք զկնի իմ . . . . նստջիք և դուք յերկոտասան աթոռ : ‖ ( Մատթ . ԺԹ . 28 : )

---

# ՅՕԴՈՒԱԾ Ը.

## Խնդիր Բայի :

397. Այն բայ յարարողէն կամ 'ի կրողէն՝ որ ասի տէր բայի , ունի առ ինք զայլ եւս հոլովելի բառ , որ է ենթակայ ներգործութեան , կամ գործի նորա . և սա ասի Խնդիր բայի : ( 267 )

Երկակի է խնդիրն . [illegible] և [illegible] : Առաջինն իմանի այն հոլովեալ բառն , զոր բայն պահանջէ ըստ հանրական նշանակութեան , կամ որ պատշաճի առ հասարակ սեռի բային : Երկրորդն է՝ հոլովեալ բառն , զոր իւրաքանչիւր բայ պահանջէ ըստ մասնաւոր և բնական նշանակութեան իւրոյ , որ և այլ և այլ բայի՝ այլ և այլ հոլովով լինի :

Չեզոք բայք ունին միայն զխնդիր բնութեան, և ոչ սեռի. որովհետև իւրաքանչիւր չեզոք ինքնին առանձին է, և ոչ ունին սեռական միութի:

Վասն որոյ ներգործական և կրաւորական բայքն պահանջեն զերկաքանչիւր խնդիր. և նախ դիցուք զկանոնս սեռի խնդրոյն:

## Կանոն Ա.

398. Բայն ներգործական պահանջէ խնդիր սեռի ՚ի հայցական հոլով:

## Կանոն Բ.

Բայն կրաւորական պահանջէ խնդիր սեռի ՚ի հոլով բացառական:

Զերկուսին կանոնս կից առ միմեանս եդաք, զի դիւրին լիցի բացատրել զայնս նոքիմբք օրինակօք: Վասն առաջնոյն. * Զի նա ետ ինձ զանսուտ գիտութիւն զեղելոցս: ‖ (Իմաստ. Է. 17.) Ներգործական բայ ետ. (175) տէր նորա՝ նա. հայցականն զգիտութիւն խնդիր սեռի. որոյ զնախադիր եդեալ է ՚ի նախադաս ածականն անսուտ. (308) տրականն ինձ՝ խնդիր բնութեան ետոյն. իսկ զեղելոցս՝ եթէ առցի իբր պատմական հոլով, լինի խնդիր գիտութեան անուանն, (տե՛ս 284. 414) իսկ իբրև սեռական առեալ, լինի յատկացուցիչ գիտութեան, և զնախադիր նորա ունի:

Իսկ վասն երկրորդին, տե՛ս կրաւորականին օրինակ. * Զի ՚ի տեսանէ տեսանի ձեզ հարկաւորութիւնք: ‖ (Իմաստ. ԺԳ. 4.) ուր տեսանի կրաւորական է, նորա տէր՝ հարկաւորութիւնք. բացառականն ՚ի տեսանէ՝ խնդիր սեռի. տրականն ձեզ՝ բնութեան խնդիր:

Ահա ցուցաւ օրինակօքս, զի ներգործական և կրաւորական բայից սեռի խնդիրն միայն լինի տարբեր հոլովով, առաջնոյն՝ հայցական, երկրորդին՝ բացառական. իսկ խնդիր բնութեան նոյն է երկուցունց:

Սեռի խնդրոյ օրինակք լիցին և այսք. * Ճանաչեմ զիմսն, և ճանաչիմ յիմոցն: ‖ (Յովհ. Ժ. 14.) * Սիրեսցես նախ զարարչութիւն. (տե՛ս զա̅ծ) և սիրես-

ցին 'ի նմանէ ։ ‖ ( Ագաթ . 271 . ) * Պատուեմք զհայրն մեր , և պատուիմք 'ի նմանէ ։ ‖ ( Մարգ . 681 ։ ) * Հայհոյեն զմեզ , յաղագս այսորիկ և 'ի մէնջ հայհոյեսցին ։ ‖ ( Լամբ . Ատեն . 37 ։ )

Տացուք այսուհետև ծանօթութիւն ինչ 'ի վերայ երկուց կանոնացդ ։

Ծանօթութիւնք ի կանոնսն .

399 . Առաջին . Հայցական խնդիր ներգործականին բազում անգամ զօրութեամբ թողեալ է . որ . Եթէ տկարանամք , զօրացուցանէ ։ ‖ ( Նար . ծա . 2. ) լուելեայն իմացեալ է՝ զմեզ ։

Երկրորդ . Հայցականն յոլով անգամ դնի առանց զ նախդրի . և յոքնակին պահէ զ՚ յոքնականացուցիչն . զորմէ ասացեալ եմք ։ ( 113 . )

400 . Երրորդ . Կան բայք ներգործականք , որք բաց 'ի հասարակ հայցական խնդրոյ՝ ունին և զայլ հայցական , և նշանակութիւնն է իբր ուղղականի , կամ տրականի , կամ գործիականի ։ Այսպիսի են առնեմ , առեմ , հարցանեմ , համարիմ , ուսուցանեմ ։ որ .

* Հարցից զձեզ բան մի ։ ‖ և խնդրի՝ հարցից ձեզ զբան մի ։ Կամ . * Դու զ՞ առնես զքեզ . ‖ իբրև թէ ո՞ առնես ։ Կամ . * Զայս միայն աղաչեսցուք զքեզ . ‖ որ յայս կամ այսու ։ Կամ . * Զնախանձն իմացին զպատճառն . ‖ փոխանակ ասելոյ՝ զնախանձն իմացին պատճառ ։ Կամ . * Ուսուցանեն զվերինսն զայն ինչ . ‖ փոխանակ ասելոյ , ուսուցանեն վերնոցն , կամ զվերինսն ուսուցանեն յայն ինչ ևն ։

401 . Չորրորդ . Ներգործական բայն բազում ուրեք զիւր արմատն , կամ զբայականն , կամ զհամանշանակ բառ առնու 'ի հայցական հոլով , բայց նշանակութի նորա է իբրև գործիականի . որ ասի , հարկանել հարուած . մեղուցանել մեղս . սէր սիրել ևն , փոխանակ ասելոյ՝ հարուածով , մեղօք , միով սիրով ։

Այսպիսի լինի նաև չէզոքական և կրաւորական բայից . որ հիւանդանալ հիւանդութի . ամաչել զամօթ . առողջանալ զանախտաւորութիւն . կորնչել սատակումն .

ծնջել զքաղս. պսակել զգլուխ. և նմանի՝ հիւանդու-թբ, ամօթով, սաստկմամբ, քնով, պսակաւ:

402. Հինգերորդ. Բազում ներգործական բայք իբր զնշանակութիւն չէզոքականի առեալ, զկրելոյն հայցական փոխարկեն յայլ հոլով: Որպէս ասի, լսել զձայն կամ ձայնի. կալնել զհաստատութիւն կամ ընդ հաստատութեամբ. խորհել զխորհուրդ կամ խորհրդեան. հարցանել զողջոյն և զողջունէ. վկայել զայս և այսմ. անիծանել զայլս և այլոց. հովուել զհօտ և հօտին. աղաչել զնա, առ նա, և նմա. արբուցանել զխաշինս և խաշանց:

Ընդ հակառակն այսմ, չէզոք բայք զներգործականի միտս ունելով, առնուն զհոլով հայցական: Որպէս ասի, խնդալ զհանդէսն. կանխել զանհնարինս. մաղթել կամ պաղատել զԱծ. նայել զԹագաւորութիւն. զգուշանալ զփորձութիւն. սքանչանալ զզօրութիւնս և այլն:

Գոյ և այլ եղանակ՝ որով չէզոք բայն կամ նաև էականն՝ առնու 'ի հայցական հոլով զայն անուն, որ նշանակէ չափ, ժամանակ, թիւ, ճանապարհ ևն. որպ գնալ զճանապարհ. երթալ զառաւօտն. լինել աւուրս ինչ. բարձրանալ հնգետասան կանգուն. ևն:

403. Վեցերորդ. Ներգործական բայն միանալով ընդ աննախնդիր հայցականին՝ լինի իբր պարզ բայ, և առնու զնոր հայցական, որ լինելոց էր յատկացուցիչ կամ խնդիր բնութե: որպ. Աւար հարկանել, ուր աւարն է աննախնդիր հայցական. բայց ըստ միոյ պարզ բայի նշանակէ՝ աւարել. և ասի, աւար հարկանել զերկիր: Թողութիւն առնել, իբրև թողուլ իմացեալ, ասի, թողութի առնել զօրէնսն, որպ թոյլ տալ օրինացն: Որպէս ասի, քարոզ կարդալ զԱծ. որպ քարոզել: Հարցփորձ առնել զնոսա, փոխանակ նոցա: Բուռն հարկանել զքաղաքն, որպ ըմբռնել, կամ բուռն հարկանել զոտոցն:

404. Եօթներորդ. Երբեմն հայցական խնդիր ներգործականին դնի 'ի սեռական հոլով, յորժամ բայն է անդէմ, որպ աներևոյթ կամ ընդունելութի: Որպէս ասի, բաղխելով ծագելոյն, փոխանակ զմա-կելն: Նմանապէս. * Բազմութիւն մատաղ մանկուց

ածել յարուեստ դպրութեան . ‖ ( Բազմ. 274. ) փոխանակ՝ զապազմութիւն ածել ։ Այնպէս ( Նար. Դ. 1. ) * Ոչ թիկանց դարձուցանելի . ոչ դիմաց ընդ երկիր մածուցանելի . ‖ այ՟ ոչ զթիկունս դարձուցանել, ոչ զդէմս մածուցանել ։

## Ծանօթութիւնք Է կանոնին ։

405. Առաջին . Որ ասացաք՝ թէ բացառական հոլովն է խնդիր սեռի կրաւորական բայի, ոչ այնպէս պարտ է իմանալ՝ թէ ամենայն բացառական իցէ սեռի խնդիր . այլ որպէս նախ ազդեցաք, (398.) եթէ նորին ներգործականն եւս առնու զնոյն բացառական, յայնժամ ճանաչի լինել խնդիր բնութեան . Օր . * Ես ընտրեցի զնոսա յաշխարհէ . ‖ աստ ներգործականին եղեալ կայ բացառական . ուստի եթէ կրաւորականին եւս ասիցի , ընտրեցան նոքա յաշխարհէ, այս բացառական՝ է խնդիր բնութեան . իսկ եթէ ասիցի , ընտրեցան յԱյ, այս է սեռի խնդիր . քանզի ընտրողն զնոսա՝ Ած է ։ Բայց եթէ ասիցի . առաքեալքն անարգեցան յաշխարհէ , յայնժամ լինի խնդիր սեռի . զի անարգողն է աշխարհ ։ Նոյնպէս կրելի է եւ յայլ բանս ։

406 . Երկրորդ . Կրաւորականի բացառական խնդիրն երբեմն դնի սեռական հոլովով, յորժամ յանցեալ ժամանակ է բայն . զոր եւ 'ի վերոյ յիշեցաք . ( 294 . ) Օր . * Նորին խոցեան որ իմ մերոյ զարկուցեալ հրէայքն ։ ‖ ( Նար . Դ . 2 . ձեռ . ) այ՟ 'ի նոյն 'ի քէն զարկուցեալ ։

Նոյնպէս . * Խնդէ նոյն իսկ որքն ճաշողէ էին ասացեալ ամենայն ։ ‖ ( Շնորհ . Թղթ . 263 . ) փոխանակ , 'ի մէջն ճաշողէ էին ասացեալ ։ Այնպէս ( Նար . Հ . 3 . ) * Կոչեցեալք դաշնադրողէդ . քաւեցեալք հրաշագործէդ . բժշկեալք անախտականէդ ‖ Նա . այ՟ 'ի պաշտպանողէդ Նա ։ Եւս ( անդ . ղէ . 3 ) * Հօր քում օրհնեցեալ ։ ‖ այ՟ 'ի հօրէ քումմէ ։

407 . Կան կրաւորական բայք՝ որք իբրեւ հասարակ բայ առնուն զհայցական խնդիր . բայց պահելով եւ զկրաւորական նշանակութիւնն , առնուն

նաև զբացառական. այսպիսի են, հրամայեմ, հարցա-նեմ, պահանջեմ։ Ուստի ասի. * 'Ի ստորնայնոցն հրա-մայէն ջրանցն 'ի վեր ամբարձման։ (Շնորհ. ներբող. հրեշտ.) Նմանապէս. * Զո՞ր եմն յինէ հարցանէ։ (Խոր. տ. 3.) * Զպտուղ աղօթիցն պահանջեմք յինէ։ (Խոսր. ժամ. 6։)

---

### ԽՆԴԻՐ ԲՆՈՒԹԵԱՆ.

408. Բայք ըստ իւրաքանչիւր յատուկ նշանա-կութեան պահանջելով զանուն յայլ և այլ հոլովս, այն ասի նոցա՝ խնդիր բնութեան. զորմէ գիտելի է ընդհանրապէս։

ԱՌԱՋԻՆ. Սեռական հոլովն լինի խնդիր էական բային միայն, և այլոց սակաւուց։ Իսկ եթէ ուրեք կայցէ սեռական հոլով առ դիմաւոր կամ անդէմ բայ, այն կամ տէր բայի է, (380. 383.) կամ յատկացուցիչ է այլոյ անուան, և կամ փոխանակ բացառականի։ (406)

ԵՐԿՐՈՐԴ. Հոլովն գործիական, ներգոյականն, և կամ նախադրութեամբ իբր հասարակ են ամենայն բայից։

ԵՐՐՈՐԴ. Ներգործականի բնութեան խնդիրն՝ նոյն է և կրաւորականի նորա. որպէս և ասացաք. (405) Ուստի միօրինակ ասի. Տամ քեզ, և տացի քեզ։ Ասաց, և ասացաւ առ նոսա։ Խնդրեաց, և խնդրեցաւ 'ի նմանէ։ Փորձեաց, և փորձեցաւ 'ի հօրէ. ևն։

409. ՉՈՐՐՈՐԴ. Գոն բայք՝ որք միայնակ ոչ առ-նուն զայս կամ զայն հոլով, բայց ընդ այլում անուան գոլով առնուն. որպէս, առնեմ բայն միայնակ ոչ ասի, առնեմ զնմանէ. բայց ասի, խօսս առնել զնմանէ։ Ընփոյթ առնել այսմ, պայմանէ, պայտօս։ Նոյն-պէս ոչ ասի, ունել այնմ. բայց ասի, ոխ ունել յա-սին. ոխ ունել երասանոյ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ. Բազում բայք առնուն զայլ և այլ հոլովս այնու զի կամ ունին զանազան նշանակու-թիւն, և վասն այն յարմարի նոցա այլ և այլ

խնդիր, և կամ ըստ պէսպէս հայեցուածոյ առեալ լինին. որպէս ասի, գնեմ Թագաւոր, ՚ի Թըլոյ, ՚ի տան, պճնեով։ Նստանեմ ՚ի տեղւոջն, ընդ տեղի, յերկիր, ցորինոք եւ այլն ։

Ցեւցուք այսուհետեւ զմասնաւոր կանոնս խնդրառութեան ։

---

Խնդիր բնութեան ներգործական բայից.

Կանոն Ա.

410. Ներգործական բայն՝ զուղիղ ծայր կամ զեզր ներգործութեան առնու ՚ի հոլով ուղղական. այսպիսի են, առնեմ, ասեմ, անուանեմ, դաւանեմ, մատուցանեմ եւ այլն ։ Որպէս ասի. Արար զնա հայր ։ Առիցեն զչարն՝ բարի ։ Որդի ոչ զանձն իւր անուանէ ։ Զանձն իւր մատոյց պատարագ ։

Կանոն Բ.

411. Կան ներգործականք՝ որք զանուանս նշանակիչս գնոյ, աժէից, կամ դաշանց՝ առնուն ՚ի սեռական հոլով ։ Որպէս ասի, տալ արծաթոյ. գնի և գործիական, կամ նախադրութեամբ, իբր տալ կամ ստանալ արծաթով, ընդ արծաթոյ ։

Կանոն Գ.

412. Ներգործականք՝ որք զներգործելն առ այլ նշանակեն, կամ որում առնեն ինչ, ՚ի տրական վերջահոլով կամ նախդրիւ առնուն զայն ։

Որպէս վարին. ասել Նոյա, ցնոսա, առ նոսա. հարցանել Հերովդեայ, ցՀերովդէս. քարոզել ժողովրդեան, առ ժողովուրդն. նուիրել Եկեղեցւոյ, յեկեղեցին. աղօթել ա̃յ, առ ա̃ծ ։

## Կանոն Դ .

413 . Այն ներգործականք՝ որք նշանակեն եղանել յայլմէ, կամ հեռանալ, կամ պակասիլ ևն, առնուն զայն 'ի բացառական հոլով ։ Այսպէս ասի, ազատել 'ի բանտէ . հանել 'ի տանէ . առնուլ յորդւոյ . զրկել յընչից . բժշկել 'ի հիւանդութենէ ևն ։

'Ի սակաւուց աստի գիտելին է 'ի միտ առնուլ, թէ առ 'ի գիտելոյ զպատշաճ խնդիր բնութեան իւրաքանչիւր բայի՝ պիտոյ է նկատել զնշանակութիւն նոցա . ուստի յորժամ բայն նշանակէ զներգործութիւն 'ի վերայ այլոյ, յայտ է պահանջել զպատմական հոլով . եթէ նշանակէ շուրջ զայլով, կամ 'ի ներքս այլոյ, պահանջէ զհոլով պարառական կամ ներգոյական, կամ նախադրութիւն ։

Այսու ծանօթութիւն իմացեալ լինի և խնդրառութիւն չէզոք բայից . և պարզ կանոնն է ։ Չեզոք բայն՝ որոյ ներգործականի նշանակութեանն մօտ մատչի, զնորա ունի և զխնդիր բնութեան ։

---

# ՅՕԴՈՒԱԾ Գ .

## 'Ի վերայ Աներեւոյթ բայի .

414 . Յառաջին գիրս ծանուցաք յաղագս Աներեւոյթ եղանակին՝ թէ որպէս կազմի, և թէ զիարդ վարի երբեմն բայ, և երբեմն անուն . (198) իսկ աստանօր ունիմք խօսել յաղագս կիրառութեան նորա ։

Երբեմն անուն գոյական, 'ի բանի լինի յատկացուցիչ, բացայայտիչ, տէր և խնդիր բայի, այլև մասանց և նախադրութեան ։

Իսկ երբեմն բայ, ունի տէր բայի, և խնդիր սեռի և բնութեան ։ Որ ինչ գիտելի կայցէ ըստ երկուց պաշտամանցս, դիցուք յառաջիկայդ ։

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Ա.

415. Աներևոյթն 'ի նախդրիւ տրական եղեալ, բազում անգամ փակէ զնշանակութիւն ժամանակական մակբային, յորժամ, կամ մինչ. և յայս միտս ունի զդիմորոշ յօդ՝ իւքն, կամ մերձաւոր անունն ։ որ. * 'Ի ՏԵՍԱՆԵԼՆ ԶՔԵԶ՝ ԲԵՐԿՐԵՑԻ . . . ԵՐԹԱԼԴ ՔՈ և Ի ԴԱՌՆԱԼԴ ՅԵԳԻՊՏՈՍ ։ || (Ելք. դ. 14. 21.) և իմանի, յորժամ տեսանիցէ զքեզ, մինչ երթայցես և դառնայցես ։

Տես, զի յերիս աներևոյթս գոյ դիմորոշն կամ դ ։ Առաջինն՝ 'Ի ՏԵՍԱՆԵԼՆ է խնդիր չեզոք բային՝ ԲԵՐ-ԿՐԵՑԻ. երկրորդն՝ սեռի խնդիր ներգործականին ՏԵՍԱՆԵԼ ։ Երրորդն՝ սեռականն քո է տէր բայի. նախդրին ՅԵԳԻՊՏՈՍ՝ խնդիր նոյա ։ Եւ այսու օրինակաւ տեսանի թէ աներևոյթն որպէս վարի իբրև անուն, և իբրև բայ ։

Նոյնպէս ասի ։ * 'Ի ԿՈՐՆՉԵԼ սկայից ամբարտաւանից ։ || (Իմաստ. ժդ. 6.) աստ դիմորոշն ն եղեալ է 'ի սեռականն սկայից, որ է տէր բայի, և իմանի, յորժամ կորեան կամ կորնչէին հին սկայքն ամբարտաւանք ։

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Բ.

416. Յայլ տեղիս նախդրիւ եղեալ, կամ առ նախադրութիւն, նշանակէ՝ վասն. որ. 'Ի ԼՍԵԼ, վասն լսելոյ. առ 'Ի ՉՄՏԱՆԵԼ, վասն չմտանելոյ. առ ՏԱԼ կամ ՏԱԼՈՅ, վասն տալոյ ։ Երբեմն այսպէս նշանակէ նաև առանց նախդրի. որպէս յասելն՝ եկիր ԿՈՐՈՒՍԱՆԵԼ, կոչեաց ՀԱՐՑԱՆԵԼ, իմանի՝ վասն կորուսանելոյ, վասն հարցանելոյ ։

## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ Գ.

417. Բազում ուրեք 'ի վայելուչ շարադրութեան՝ ուր դնելի էր սեռական կամ տրական խնդիր նախադրութեան, դնի առանց հոլովելոյ. որ. ասի ըստ

կարգաւորել, փոխանակ ասելոյ՝ ըստ կարգաւորելոյ, ցր զօրելոյ, կարելոյ։ Նման անմարթի կացուցանել, փոխանակ՝ կացուցանելոյ։ Յետ զերկիւղն իմ հայցել, փոխանակ՝ հայցելոյ։ Նուանց զփոխան խօսել, փոխանակ՝ խօսելոյ։ Փոխանակ համառօտի ասել, ցր ասելոյ։

Եւ այլ սովորութի, զի յայսպիսի բանս փոխանակ՝ սեռականի դնի գործիական հոլովով. ցր. Յաղագս ՚ի թշնամեացն պահելն, փոխանակ՝ պահելոյ։ Նա ՚ի գաղանաւոր լինելն, փոխանակ լինելոյ։ Փոխանակ զանձինս աներկիւղս առնելն, այսինքն առնելոյ։

Ծանօթութիւն Դ.

418. Աներևոյթ բայն կրկնեալ ընդ իւրում դիմաւորին, սաստկացուցանէ զնշանակութիւնն։ Եւ լինի այս՝ կամ գործիական հոլովով, ցր օրհնելով օրհնեցից. տալով տացես. գնալով գնացին. հարկանելով հարեր ևն։ և կամ առանց հոլովելոյ, որ առաւել յաճախ է ՚ի հայ գրութիս. ցր. տալ ետու. ընթանալ ընթանային. ցուցանել ցուցանէ. գիտել գիտէր։ Կամ հայցականաւ, զսիրելն սիրեն. զգործելն գործեն ևն։

Երբեմն նաև զանցեալ ընդունելութիւնն դնեն փոխանակ աներևութի. ցր. երթեալ երթիցէ. լինեալ լինէին. պահեալ պահէին. տուեալ տալ ևն։

Ծանօթութիւն Ե.

419. Յիշեցաք վերագոյն (386) թէ առ կրաւորական ընդունելութի կամ աներևոյթ՝ դնի հայցական անուն ինչ, որ կարծի տէր բային, և սակայն ոչ է։ Զայս առաւել ևս բացատրել կամելով, գիտելի է՝ զի լինի այսպէս առ չէզոք բային, և մանաւանդ յաներևոյթն էական բային. իբր զի ուր սա լինելոյ էր հայցական խնդիր ներգործական բայի իրիք, ինքն միայն անփոփոխ՝ իւր տէրն դնի ՚ի հայցական։ ցր. * Քանզի հաստատեաց ՚ի լինել զամենայն։ ‖ (Իմաստ. ա. 14.) որ ըստ պարզ շարին դնելի է. հաստատեաց զլինելն ամենայնի. որով

լինելն է հայցական խնդիր ներգործականին՝ հաստա-տեալ. և ամենայն տեղ լինելին :

Որպէս. * Ասա զիմաստութիւն քոյր քեզ լինել : ‖ (Առակ. Է. 4.) փոխանակ ասելոյ, ասա զլինել իմաստութեան քոյր քեզ :

* Կարծեցեալ դիցն համարել նոսա յօգնականութիւն : ‖ (Եղիշ. 48.) որ կարծեցեալ զհամարել դիցն յօգնականութիւն :

* Վասն զի դեռ ուսար մնալ ՚ի մեզ ՚ի ձեռն աղօթից : ‖ (Նար. ԼԶ. 5.) որ ուսար զմնալ քեզ կամ քո ՚ի մեզ :

* Եւ զմիւսն վասն խոնարհութեան արդարանալ վկայէ : ‖ (Խոսնտ. 310.) որ վկայէ զարդարանալ միւսոյն վասն խոնարհութեան :

## ՅՕԴՈՒԱԾ Դ.

### Ի վերայ Անուան Բայի :

420. Բայն էական՝ գոլով արմատ ամենայն բայից, և նշանակութեամբ նորա հանրական և ընդարձակ, կարող է իբր զամենայն հոլով առնուլ իւր խնդիր :

Հայցական հոլովն միայն ոչ յարմարի նշանակութեան նորա. բայց և զայն առնու՝ յորժամ անուանն նշանակէ՝ ժամանակ. իբր զի յայնժամ նշանակութիւն ևս տարբերի փոքր ինչ. որ. * Եւ էր Մովսէս ՚ի լերին անդ զքառասուն տիւ : ‖ (Ելք. ԻԴ. 18.) իբրև թէ՝ կայր ՚ի լերինն : Որպէս ասի, ընդ ձեզ եմ զամենայն աւուրս : ընդ ձեզ զամենայն ժամանակս եղէ :

421. Սեռական հոլով առաւել յատուկ է էական բային, մանաւանդ եմին, և գոլին. վասն զի ընդ այլ հոլովս եղեալ՝ այլայլի փոքր մի նշանակութիւն նորա : Ուր ինքն բայն յոքնական է, նաև խնդիր նորա սեռական կամ նախդրիւ տրական՝ գնի սովորաբար յոքնական. որ. Եղիցին տեառն

մերում ծառայք ։ Նշխեցէք դուք մեզ 'ի ծառայս ։ Երանի որք ։ Եթէ դու խնձ յորդէ ։

Գոյ խառնութիւն ինչ 'ի կիրառութիւն ուղղական խնդրոյն. զի յորժամ ընդունելութիւն եղականին հալածեալ է, 'ի նոյն հոլով դնի և ուղղական խնդիր նորա. և նոյնպէս լինի նաև ընդունելութիւն չէզոք և կրաւորական բայի. որպ. * Ո՛ւմն որդւոյ իւրոյ... առաջնորդեալ որդւոյն այս. (Հռովմ. ա. 3. 4.) ուր ասելի էր, սահմանելոյ որդւոյ այս ։ Նմանապէս դարձեալ. * 'Ի զաւակէ ամբարշտակայ՝ մարաց եղելոյ թագաւորի. (Եսթ. Ը. 8.) փոխանակ ասելոյ, ամբարշտակայ եղելոյ թագաւոր մարաց ։

Իսկ եթէ զայլ հոլովս ևս առնու ըստ տեղւոյ եղական բայն, ոչ է հարկ տալ օրինակս. զի ինքնին յայտնի է, և տեսանի ևս 'ի բոլոր ընթացս քերականութեան ։

422. Ըստ այլ կիրառութեան, եղական բայն ինքն միայնակ առնի բազում ուրեք զօրութիւն դիմաւորական բայի. որպ. փոխանակ ասելոյ, որչափ արժան էր ցուցանել, դնի, որչափ ցուցանել էր ։ Նոյնպէս ասի, ոչ գոյր նմա մերձենալ, այսինքն ոչ էր օրէն մերձենալ ։ Զի՞նչ ինչ առնել էր, այսինքն առնել պարտ էր, և այլն ։

Դարձեալ, եղական եմ, կրկնի նոյն դիմաւ և թուով, և ազդոյ առնէ զբանն. որպ. եմ եմ և ես մարդ ։ Այն էն արդարև ստանդք այրեաց ։ Նա՛ է առաջնորդ մեղաց ։ Նա՛ էր յետոյ քան զմարգարէսն ։

Նոյն եղական լծորդեալ ընդ յարաբերականին որ, առնու զնշանակութիւն մասնականի՝ ոմն, ոք. որպ. Են որ մեծացուցանեն, են որ խոնարհեցուցանեն. այսինքն ոմանք մեծացուցանեն ։ Տայր պտուղ՝ էր որ հարիւրաւոր, էր որ վաթսնաւոր. և այլն. այսինքն ոմն հարիւրաւոր, ոմն վաթսնաւոր ։

---

## Այլևս ընդհանուր գիտելիք 'ի վերայ խնդրառութեան.

423. Առաջին. Յորժամ 'ի միում բանի զուգընթաց լինին այլեւայլ բայք, այսինքն ներգործական, չէզոք

և կամ կրաւորական, և պիտոյ է տալ նոցա խնդիր, սովորաբար դնի յայն հոլով զոր կամի մերձաւոր բայն ։ զր. * Կացէք մնացէք դանդաղեցէք զուք առ մեզ նոյն հաւատ ։ (Ե. Սահ. Ժ. 27.) ուր հայցական դնի ըստ պահանջելոյ մերձաւորին՝ դանդաղեցէք. զոր եթէ յարմարել կամէր հեռի չէզոքայն՝ կացէք մնացէք, դնելի էր՝ 'ի նոյն հաւատ ։

Նակայն լինի յոլով անգամ՝ հեռաւորին յարմարել զխնդիրն, թէ բայից, և թէ անուանց ։ զր. * Որ հաստատեալ աղօթս անկեալ մատուցանէին առ ոտս ամենածն ։ (Բ. Սահ. Բ. 29.) ուր հայցականն աղօթս՝ է խնդիր հեռաւորին, և ոչ մօտակայ չէզոքին՝ անկեալ. և ըստ բնական շարին դնելի էր, առ հաստատեալ անկեալ՝ աղօթս մատուցանէին ։

Նոյնպէս է. * Ոչ առնու եղանէ զլրութիւն նորա 'ի հանդերձէն ։ (Մատթ. Թ. 16.) ուր հայցականն խնդիր է հեռաւորին, և ոչ մօտակայ չէզոքին՝ եղանէ. զի եղանէ առնու զլրութիւնն ։ (տես և 385.)

* Ո՞ւր եղջերն զպատուհասաւորս բարկութիւն, ո՞ւր փախչիմ, յո՞ ապաւինիմ, զերծս չարեացն ։ (Պլատ. 440.) ուր հայցականդ զերծս՝ է խնդիր հեռաւորին եղջերն ։

* Ես զօսանալ ձեռաց կոփողացն հրամայեցեր օրհնեալ գագաթանդ ։ (Նար. ԼԶ. 2.) ուր սեռականն գագաթանդ է խնդիր հեռաւորին՝ կոփողացն. զի ոչ հրամայեցեր զօսանալ ձեռաց կոփողացն զօրհնեալ գագաթն քո ։

* Իւր ապա աղաղակութեանն 'ի նմանէ կատարեալ լինի 'ի գերչաց անտի ։ (Իգնատ. 99.) ուր բացառականն 'ի գերչաց՝ է խնդիր հեռաւոր անուանն՝ աղաղակութեանն. և կարգելի է, և ապա կատարեալ լինի 'ի նմանէ՝ աղաղակութիւն 'ի գերչաց անտի ։

* Կամելով յամօթ առնել զմարդն, զհնազանդութի արարածոցս պատմէ արարչին ։ (Սարգ. 593.) ուր տրականդ արարչին՝ ոչ է մօտաւորին պատմէ, այլ հեռաւոր անուանն հնազանդութեան. զի. վասն յամօթ առնելոյ զմարդն՝ պատմէ զհնազանդութիւն արարածոցս առ արարիչն ։

424. ՆԵՐԳՈՐԾ. Բայք՝ որք յայլ և այլ հոլով առ-նուն զխնդիր, երբեմն 'ի միում իսկ բանի ունելով բազում անուանս կամ դերանուանս, զմին առնուն յայս հոլով, և զմիւսն յայն: զր. * Հայեաց 'ի վերայ արքայական զաւակիս, յորդւոյ յակոբայ: ‖ (Գ. Մակ. Զ. 3.) ուր յառաջ նախադրութեամբ դնի խնդիր, և ապա 'ի նախդրիւ տրական, զի երկու-քին եւս յարմարին բային հայեաց:

Նոյնպէս է. * Որդի և մեռեալ տէրն չու ընդ-շամիրամայ: ‖ (Խոր. Ա. 19.) ուր դնի պատմա-կան և հայցական՝ յարմար բային տէրն:

* Ընդէ՞ր 'ի քաջ ծառայիցն և 'ի կառավարացն զնոյն պահանջես: ‖ (Պլատ. 16.) ուր առ պահանջել բային տուեալ է միանգամայն բացառական և ներգոյա-կան:

* Ծառայութիւն և շնորհաբերութիւն հեզզութ կենացս զեկուցանէ: ‖ (Շնորհ. մեկն. Առակ.) պատմա-կան և հայցական միանգամայն: (տես 403.)

Օրինակի կիրառութի և յայլ տեղիս գոյ տե-սանել, ոչ միայն 'ի վերայ բայից, այլև անուանց և նախադրութեանց. որք ընդունակ գոլով խնդրոյ յայլ և այլ հոլովս, 'ի միում իսկ բանի առնուն այն-պէս. որպէս ծանուցաք 'ի խօսելն յաղագս բայա-կան անուան: (273.) Նոյնպէս և ածական անուանս անդադար 'ի միում բանի առնու բացառական և գոր-ծիական. զր. * Թէ և յայսոցիկ անհամեմատաբար շնորհաբանութեանց անպարտ ես, սակայն և ոչ արդէն: ‖ (Շնորհ. Թղթ. 183.)

Սոյնպէս նախադրութիւն առ, գոլով ընդունօղ սեռականի և գործիականի, (216.) 'ի միում բանի երկոքին տեսանին. զր. * Փոքր ինչ գտանի չարչա-րանքն ձեր առ մեծի չարչարանօքն քոյ: ‖ (Մարգ. 496.) ուր ածականն է 'ի հոլով սեռական, և գոյականն 'ի գործիական: (տես և 427.)

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ.

## 'Ի վերայ Ուղղութեան Նախադրութեան.

Նախադրութիւն թէ զինչ իցէ, և քանիպատիկ բաժանիցի, 'ի տեղւոջ իւրում ծանուցաք. (210.) Այժմ աստանօր տալ և զայլ ևս դիտելիս կիրառութեան նորա.

### Կանոնութիւն Ա.

425. Յատուկ նախադրութիւնքն առ, ընդ, ըստ, ցան, իբր, զերդ, նմանապէս, առանց, բաց, մինչ, որպէս, միշտ յառաջոյ դնին քան զխնդիր իւրեանց. Իսկ մնացեալքն յատուկ և անյատուկ՝ ըստ պատշաճի տեղւոյն դնին յառաջ և զկնի.

### Կանոնութիւն Բ.

426. Պատահէ 'ի միում բանի կրկնել զնոյն կամ զնման նախդիր, և զնախադրութիւն. որպ. * 'Ի չար ընդ այն հայելով մարդկան. ‖ (Պիտոյ. 124.) ուր 'ի, և ընդ նախդիրք կրկնին առ նոյն հոլով, և իմանի, հայելով մարդկան յայն չարն.

Նոյնպէս է. * Երկուցեալ՝ 'ի կրկնապատիկն վասն հատուցանելոյ չարիս. ‖ (Պիտոյ. 134.) որ երկուցեալ վասն կրկնապատիկ չարիս հատուցանելոյն. (տես 125)

* Այս որ ամենայն փառաւորութիւնք խարդախութեանց... եթէ ընդ վիմաղէն լերին պնդութեան բաղխեցեալ ցնդին. ‖ (Նար. ԼԷ. 2.) ուր առ, և ընդ, նոյն նշանակութիւն եդեալ են վերջահոլով և նախդրիւ տրականաւ.

Նման այսոցիկ ասի. * Ընդ իւրաքանչիւր ընդ վրանս. ընդ արս ընդ ազգին. շուրջ զսահմանօքն հանդերձ. մերձ առ ծննդեանն. մերձ առ գերեզմանաւն. առ զօսին հաստատուն պահելոյն պատճառաւ. վասն աշակերտաց դառնալոյ աղագաւ. ‖

## Ծանօթութիւն Գ.

427. Երբեմն նախադրութիւն ինչ ընդունակ զա-նազան հոլովից, 'ի միում իսկ բանի առնու զերկա-քանչիւրն. զոր և յիշեցաք (424.) որ, ընդ ըստ որում նշանակէ՝ 'ի ներքոյ, առնու սեռական և գոր-ծիական. (217.) ուստի ասի. * Ընդ գողութեան անուան և բանսարկութեան արկանէ զմարդ: || (Շնորհ. ընդհան. 28.) փոխանակ, ընդ անուամբ և բամ-բասանօք գողութեան:

Նոյնպէս. * Օգտէ այն ասէ՝ որ ընդ [illegible] 'ի ներքոյ անկանի, կամ ընդ ամենեքումբք, կամ ընդ ոմամբք, կամ ընդ միով: || (Եզն. 272.)

## Ծանօթութիւն Դ.

428. Նոյնպէս վերադոյն, թէ աներևոյթ բայն լինելով խնդիր նախադրութեան, երբեմն դնի անհո-լով, կամ փոխանակ սեռականին՝ գործիական: (417.) Սոյնպէս լինի և ընդունելութեան. որ. * Մեծապէս նման 'ի տեսողացն պակուցեալք, կամ թէ յաղագս գոռոզահարեալք յումեքէ: || (Պլատոն. 138.) որ վասն պակուցեալ լինելոյն 'ի տեսողաց. յաղագս հարստահարեալ լինելոյն յումեքէ:

## Ծանօթութիւն Ե.

429. Ի շարադրութեան զայլ և այլ դիրս առնուն նախադրութիւնք, որ յառաջ կամ զկնի կալով խնդրոյ իւրեանց, կամ այլոց բառից ընդ մէջ մտանելով, կամ զնախադիրն փոխելով և կրկնե-լով: որ.

* Բարիս 'ի բարեաց ձիրս: Սամն զորդիս իւ-րեանց [illegible]: զիմոց բարուց զհետ: զհետ երթայցեն զպօղոսի և զբառնաբայ: զբարեաց զհետ երթայք: Ի պէսպէս փորձութեանց 'ի մէջ: իւրեանց նման խնդ-րի. (որ վասն խնդրի իւրեանց:) Դժնդակն հան-դերձ մահու. (որ հանդերձ դժնդակ մահու.) փոխա-

նաեւ որ մինչեւ ցայժմ հայհոյեցին . (փխ փոխանակ հայհոյութեցն ։) յերկուց մէջս բորբոքելիցն . (փխ 'ի մէջս երկուց բորբոքելից ։)

Տեսանի յօրինակդ, զի նախադրութիւնք խնդրօղք սեռական հոլովոյ՝ գոլով անուն ըստ բազում մասին, սեռականն այն է յատկացուցիչ նոցա, և վարի ըստ կանոնաց յատկացուցչի ։

## Ծանօթութիւն Է .

430 . Երբեմն Նախադրութիւնն առնի բազում խնդիր, կրկնի առ իւրաքանչիւրն սովորաբար . որ . * Բազմեսցին ընդ աբրահամու, ընդ սահակայ և ընդ յակոբայ ։ ‖

Այլ բազում անգամ զանց առնի 'ի յետինն, մանաւանդ ուր և շաղկապաւ կցեալ իցեն . և եթէ նախդիր կայցէ, այն միայն կրկնի ։ որ .

* Այս 'ի վայր ձեռաց, և գոյժ 'ի գուժի ։ Որ եղեն յաստուծոյ զխս և զբեզ ։ (փխ և բան զբեզ .) Յերկինս 'ի ձեռաց բերոբելիցն, և յերկրի՝ անսասան կենդանեաց ։ (փխ 'ի վերայ անսասան կենդանեաց .) Երկինք ձեռաց մարդոյն, և մարդն՝ պատուիրանին . (փխ վասն պատուիրանին ։) 'Ի վերայ խաչանց իմոց մեռանիմ . յորոց խաչանց, 'ի հարթուցելոցն, 'ի փախուցելոցն, 'ի գազանակուր եղելոցն . (փխ 'ի վերայ որոց խաչանց, 'ի վերայ հարթուցելոցն եւն ։) Այն էէր և զհամբարձումն ձեռաց ամբարշտեալն յակոբու, և զանէրասանութեան բարելոնի . (իբրև զանիրաւութիւն ։) Եղական բնութիւք ընդ ախտիւ չարչարանաց անկանին, իմանալիքն՝ հոգեկան կրիւք . ‖ փխ ընդ հոգեկան կրիւք ։

Այսպիսի զեղչումն, փխ զանց առնել Նախադրութեան, զոր յաճախ 'ի կիր առնուն հեղինակք, նպաստէ 'ի համառօտութիւն, միանգամայն վայելուչ առնէ զբանն . որպէս երևի յօրինակդ . տես և յայսոսիկ . * Փառաց ձեռաց, ընչից աղքատաց, կամաց կատարելոյ, երկայնակեաց լինելոյ . ‖ ուր 'ի յետինն լսելեայն իմանի, վասն կատարելոյ կամաց եւն ։ Նախադրանաց . * Գնթայր 'ի ձեռաց նորա իբրև

հայր յորդւոյ. ‖ որ ՚ի վերայ որդւոյ: (Սարգ. մեկն. 162. 500:)

### Ծանօթութիւն Է.

431. Այլսի զեղչումն կամ լռութիւն լինի եր-
բեմն ընդ հակառակն անցելոյն, որ բուն խնդիր
նախադրութեան թողեալ լինի, և իմանի զօրութբ.
օր. * Հայեաց ՚ի վերայ աբրահամեան զաւակիս, ՚ի
սրբոյ տաճարոյ. ‖ փոխանակ ասելոյ, ՚ի վերայ զա-
ւակէ սրբոյ տաճարոյ:

Այլպէս ասէ. * Հանդերձ որք բոլորովին են ան-
շունչք: ‖ փոխանակ, հանդերձ այնոքիւք: Այլ,
ծովանաւ զմերս հաստատեաց. (որ փոխանակ նորա:)
* Ծանեաւ զատ պիղծս դատելոյ, և զայլ` զատ
բարիս. ‖ փոխանակ, վասն դատելոյն բարիս:

### Ծանօթութիւն Ը.

432. Նախադրութիւնքն` իբրև, որպէս, կամին
զհայցական հոլով. (212. 215.) բայց վարին նաև
ընդ սեռականի և կամ տրականի, և նշանակեն`
նման: օր. Իբրև ծովահրդեան, իբրև էրանոյ մեծի,
որպէս էծէ. ևն:

Բայց սոքա, որպէս և նախադրութիւն զատ, յայլ-
բանս վարին այլովք հոլովովք ըստ պահանջելոյ
մերձակայ անուանն կամ բային. օր. ՚ի սրահն
իբրև յանտառ: ՚Ի Հնաապարհաց մերոց` իբրև ՚ի
պղծութենէ: Նոցին որպէս ծախուածէից: Երկիրն սոդո-
մացւոց` զատ գաղատին այնմիկ: փափաքէ ՚ի մահ քան
՚ի կեանս:

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ.

### ՚Ի վերայ եղանակութե Մակբայի:

Յաղագս մակբայի աւանդեցաք յառաջին գիրս
(219) զնախկին գիտելիսն, թէ զի՞նչ, և քանիցա-

տիկ իցէ ։ Գործ նորա կամ պաշտօնն գոլով յայտ առնել զպարագայս բային, կամ ներգործութեն, որոյ վասն ոչ միայն 'ի վերայ բայից առի, այլև ընդունելութեց, բայանունաց, և այլոց ածական անուանց, ընդ որս վարի նախադաս և յետադաս ։ Ասասցուք աստանօր զայլևս գիտելիս յաղագս կիրառութեան նորա ։

Ծանօթութիւն Ը.

433. Յաճախակի պարզ և կամ բարդ ածական անուն ինչ՝ ասացեալ 'ի վերայ բայի, նշանակէ և վարի իբրև մակբայ. և լինի այս՝ կամ առանց իրիք փոփոխութե անուանն, և կամ փոփոխմամբ ինչ՝ ունելով զդերանուն մի, զմասնիկ, կամ զտառ ինչ ղ, ք, ս ։ որպէս ։ Ուղիղ խօսել, նշանակէ՝ արդարապէս, արդարութը. որով տայ զզօրութիւն գործիականի ։

Այսպէս առի. Մեծաչափ կարդալ. (այսինքն մեծաձայնիւ.) Քաջաբար տարածանել. (այսինքն քաջասրտութեամբ.) Համառօտ խորտակել. Բոլոր դառնալ. Երագ ընթանալ. Նոյն օրինակ տանջիլ. (այսինքն նոյնպէս.) Օրինակ այս գրել. (այսինքն այսպէս.) Նոյն զուարճանալ. (այսինքն սոյնպէս.) Սակաւագոյն հարկանել կամ հարկանիլ. (այսինքն սակաւ.) Արտասովորելի ես յեղանակել. (այսինքն օտարական կերպիւ.) Բազումս մեռանել. (այսինքն բազում անգամ.) Մեծ ես մխիթարիլ. (այսինքն մեծապէս.) Փոքունս տանել. (այսինքն թեթևապէս ։)

Ծանօթութիւն Թ.

434. Ընդ հակառակն վերոյգրեալ սովորութեան, երբեմն բուն իսկ մակբայն վարի իբրև անուն ածական. որպէս. Արջառ յոյժ, (այսինքն բազում.) Ամենայն և հնարիւք. (որպիսի և իցէ հնարիւք.) Միշտ փառաբանութիւն. (այսինքն մշտնջենաւոր, անդադար.) Առ յոյժ յիմարութեն. (այսինքն վասն սաստիկ յիմարութեն.) Երբեմն ժամանակի. ('ի միում ժամանակի.) 'ի տեղւոջ ուրեք. ('ի տեղի ինչ) ևն ։

Ասացի, բառն մակբայն. վասն զի յայտ է՝ թէ մակբայքն ձևացեալք յանուանէ (223) վարին և իբրև անուն. որ. ճարտարօրէն իմաստք. ծածկապէս խոր-հուրդ. զօրաբար ներգործութիւ. բնաբար արարածոց. բարբառով միտք. կամս բարբառով. եւն:

Նմանօրինակութիւն Գ.

435. Նազում ուրեք նոյն մակբայ, և կամ հոմանշականն կրկնի աւելադրութեամբ 'ի միում բանի, վայելչութեան և կամ ազդուին տալով. որ. * Յան-կարծակի յանկարծահաս ժամու զամենայն քաղաքն 'ի բուռն առնոյր: || (Ա. Մակ. Ե. 28.) ուր երկու ժամանակական մակբայ նոյնանշանակ եղեալ կայ:
* Յուսալ վերստին անդրէն միւսանգամ նախապար-գևեցն փառաւորութեանց դարձեալ հասանել: || (Նար. ժա. 1.) ուր կան չորք թուական մակ-բայք:
Նմանք են, ստէպ ստէպ, արագ արագ, յոյժ յոյժ, ծայր ընդ ծայր, այժմ այժմ, մի առ մի եւն:
Բացասականն ոչ, կրկին եղեալ 'ի միում բանի, պահէ տակաւին զբացասական միտսն. որ. * Ոչ ագահք, ոչ կռապաշտք զարքայութիւն այ ոչ ժառանգեն: ||

Նմանօրինակութիւն Դ.

436. Երբեմն մակբայ ինչ կամ զօրութեամբ թո-ղեալ է 'ի բանին, և կամ մի մասն նորա կրճատի: Ըստ առաջնոյն լինի, եթէ փոխանակ ասելոյ՝ որ-պէս ես, նոյնպէս և դու, 'ի բաց թողեալ նոյն-պէսն, ասի. * Որպէս զօրք իմ, զօրք քո. և որ-պէս երիվարք իմ, երիվարք քո. || ուր դնելի էր, նոյնպէս զօրք քո, նոյնպէս երիվարք քո:
Իսկ ըստ երկրորդին, լինի կրճատել՝ եթէ փո-խանակ ասելոյ, այնպէս, նոյնպէս, որքան, յորժամ, այլազգ, դնիցի միայն՝ այն, նոյն, որ, յորում, այլ: որ. * Բայց այնքան միայն՝ որ լոկ կենդանական շնչոյս: || (Պիտոյ. 328.) փոխանակ՝ որքան: * Յորում հե-տէ՝ յորմէ ծանուցայ ձեզ: (փոխանակ, յորմէ հե-

տէ .) Մեծին այլուստ ծառայանալ, և փոքուն՝ այլ . (փոխանակ, այլազգ .) Բայց եթէ այսպէս, և եթէ այն . (փոխանակ, այնպէս .) Այն այնպէս կարծեաք, և ոմն՝ այն . (փոխանակ, այնպէս .) Հայեաց յայս կոյս՝ և յայն . (փոխանակ, յայն կոյս .) Նմին օրինակաւ խօսել ընդ միմեանս, և այլ ընդ յանցաւորն, և այլ ընդ բարեգործն : Որպէս այժմ, նոյն և յայնժամ . ‖ այսինքն նոյնպէս :

## Ծանօթութիւն Է .

437 . Մակբայք երբեմն ՚ի վայելուչ շարադրութեան՝ այլազգ դասաւորին քան զսովորական դիրս իւրեանց : որպէս . * Նոյն փրկեր իսկ ընդէ՞ր զայլս արարածս : ‖ (Նշնրհ . 242 . ձեռ.) ուր ըստ սովորական դրիցն ասելի էր, ընդէ՞ր փրկեր իսկ :

Նոյնպէս բացասականքն ոչ, մի, յետադաս վարին . Որոճայ ոչ . գրեցաւ իսկ ոչ . տկարանայ ինչ ոչ . գիտէի ոչ . եւն . որ ըստ սովորականին նախադաս վարի, ոչ որոճայ եւն : Կերիցէ մի, փոխանակ՝ մի կերիցէ :

Նոյնպէս մակբայքս՝ առաւել, քան . * Քան յանձն իւր՝ առաւել ՚ի նա էր յուսացեալ : ‖ (Նշնչ . 95.) ասելի ըստ սովորական շարին, առաւել ՚ի նա քան յանձն իւր յուսացեալ էր :

Նմանապէս . * Նախ քան բանիւք՝ գործովք փառաւորեսցուք : ‖ (Խոսր . ժամ . 52 .) այսինքն նախ գործովք՝ քան բանիւք : Նաեւ : * Բուռն հարեալ քան զխմոց գործոց՝ զքոյդ շնորհաց : ‖ (Նար . լա . 2 .) այսինքն բուռն հարեալ զքոյդ շնորհաց՝ քան զխմոց գործոց :

Պատահէ այսպիսի փոփոխումն դրից ՚ի բարդմակբայս, յորժամ մի մասն նոցա զատանի, և դնի յառաջ կամ զկնի. որպէս . * Յաւուրց ժամանակաց հետէ յորմէ անջատաք : ‖ (Ա . Մակ . Ա . 12 .) փոխանակ դնելոյ, յաւուրց ժամանակաց յորմէ հետէ :

Նոյնպէս . * Մինչ նա դեռ կամէր քաջութի ինչ առնել : ‖ (Ընդ . Է . 67 .) փոխանակ, մինչ դեռ կամէր : Նաեւ . * Մի համարիր այլ ինչ այդ արա-

բեալ առ քեզ յայտնութիւն։ ‖ (Յոբ. Խ. 3.) փոխանակ, այլազգ արարեալ։

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ.

### Ի վերայ Եղանակութե Շաղկապի։

Որչափ ինչ կարեւոր գիտելիք կան յաղագս Շաղկապին՝ յառաջին գիրս աւանդեալ մեր 'ի կարգին, (238) ծանուցումք աստանօր զհանգամանս ինչ կիրառութեան նորա։

### Ծանօթութիւն ա.

438. Շաղկապքն Եւ, Ոչ, Թէպէտ, Թէեւ, Եթէ, 'ի բանի պահանջեն զկնի իւրեանց զշաղկապսն՝ Վասն այնորիկ, սակայն, ապա. կամ անդրադարձեալ, սոքա պահանջեն զառաջինսն։

Բայց բազում ուրեք տեսանի զանց առնել միոյն կամ միւսոյն։ որ. * Իսկ եթէ սկիզբն սբ, և զանգուածն. և արմատն, ապա և ոստքն։ ‖ (Հռովմ. ԺԱ. 16.) ուր յառաջին մասին պակասի՝ ապա, և յերկրորդին՝ եթէ. ուստի ասելի էր. եթէ սկիզբն սբ է, ապա և զանգուածն. և եթէ արմատն սբ է, ապա և ոստքն։

Նոյնպէս են հետեւեալքն. * Եւ զի էք դուք որդիք, (վասն այնորիկ) առաքեաց ած զհոգի որդւոյ իւրոյ . . . եթէ որդի, (ապա) և ժառանգ։ ‖ (Գաղատ. Դ. 6. 7.) * Թէպէտև որդի է, (սակայն) ուսաւ 'ի չարչարանաց անտի զհնազանդութիւն։ ‖ (Եբրայ. Ե. 8.)

Յայսպիսի բանի երբեմն բայն նախ դնի. որպէս. * Բայց թէպէտ և տեսանէին զեղբարս իւրեանց 'ի մեծ վիշտս, ոչինչ տրտմէին և տխուր զերեսս ցուցանէին։ ‖ (Եղիշ. 41.) ուր ըստ սովորականին դնելի էր, թէպէտ և տեսանէին 'ի վիշտս, բայց ոչինչ տրտմէին ևն։

## Ծանօթութիւն Է.

439. Շաղկապն և, որպէս և թէպէտ, յորժամ նշանակեն՝ Թէ և Թէ, աշխարհօրէն՝ հէմ, կերեք, յայնպիսի տեղւոջ կրկնութիւն վարեն. օր. * Զօրեաց արուեստագէտք՝ արժանի այնպիսի յուսոյ՝ և որք գործենն, և որք փափաքեն, և որք պաշտենն: (Իմաստ. ԺԵ. 6.) այ Թէ գործօղքն, Թէ փափաքօղքն ևն: Նոյնպէս ասի. * Անհամեմատ գոցէ թէպէտ մեծութեամբն, թէպէտ բազմութեամբն: (Սարգ. 56.) Ըստ այսմ կրճատմամբ ևս դնի, որպէս յաղագս մակբային ասացաք. (436.) * Թէպէտ յառաջ քան զայլ կերակուրս, և թէ յետոյ, անխտիր են երկոքին: այ և թէպէտ յետոյ: (Շնորհ. Թղթ. 251.)

Շաղկապն և, առանց հարկի դնի 'ի բանս, և տայ ազդումն ինչ. օր. * Մինչդեռ աղօթեմ՝ և վերկիմ. յընթանալս իմում՝ և կասիմ . . . որ պատրաստեալ և մնայ ինձ: (Նար. հտ. 2. հթ. 2:)

Նաև. * Եւ երկիւղի անկանելոյն զարհուրեալ և Թմրեցի: (Սարգ. 50:) * Որպէս ընդ ճանաչելն և անծանօթացաք: (Լամբ. Ճառ. Համբարձ:)

## Ծանօթութիւն Ը.

440. Շաղկապքն թէ, չէ, որպէս չէ, որք են Թարմատար կամ պատճառական, սովորաբար պահանջեն զկնի իւրեանց զբայ դիմաւոր. օր. Ասա՛ չէ օգնեսցէ: Ասեն եթէ հաճոյ է: Որպէս չէ տացէ նոցա. ևն:

Սակայն երբեմն դնել երբեմն զբայ անդէմ կամ աներևոյթ. օր. * Արձակեաց բազում պատուիրանաւ՝ չէ զյուդայ զբուամբ արկանել, և զգունդն ամենայն ցրել: (Բ. Մակ. ԺԴ. 13.) փոխանակ, արկանիցէ, ցրեսցէ:

* Աղաչէր՝ թէ զմեկնեալն 'ի նոցանէ մի առնուլ. փոխանակ, մի առնուցուն: (Գործ. ԺԵ. 38:)

* Արդէօք չէ 'ի լռութեան նստեալ՝ ըստ 'ի տուէ և 'ի գիշերի. || փոխանակ, լռեցէ: (Նարգ. 728.)

## Շարադասութիւն Է.

441. Շաղկապք ունին զիւրեանց բնական դիրս ըստ յատկութեան լեզուի մերում, զոր փոփոխել զգուշալի է. որպէս թէ, եթէ, թէև, թէպէտ, վասն զի. եւն, պահանջեն կալ 'ի սկիզբն հատուածոյ բանին. ուստի ոչ ասի. բարի թէև էր. տեսանէր թէպէտ. լռեաց՝ երկնչէր վասն զի: Այլ ասելի է, թէև բարի էր. թէպէտ տեսանէր. լռեաց, վասն զի երկնչէր:

Կան սակաւք՝ որոց դիրք փոխին ուրեք. որպէս բացառականն առնոյն՝ յետադաս դնի. * Զի առնոյն և այս յօժարութի է ոգւոյ: || փոխանակ, սակայն զի և այս: * Տես առնոյն նմին միաբան. || փոխանակ, սակայն տես: (Կողոլ. ԺԱ. 17. Է. 15:)

Անկաբերականքն՝ արդ, ուրեմն, ապաքէն, երբեմն վայելչաբար յետադաս վարին. որպէս. * Ասանէր ուրեմն: Հաստատութի ուրեմն պահէն: Այս ցուցանէ արդ. եւն:

Համեմատականն՝ քան (249) սովորաբար դնի զկնի անուան կամ բային. բայց տեսանի նաև յառաջ եդեալ. որպէս. * Ո՛չ զի քան աղօթիւք և խնդրուածովք: || փոխանակ՝ աղօթիւք անգամ: (Պիտոյ. 49. և ս 77. 171.) * Զոր քան և ոչ յիշեմք. || փոխանակ, և ոչ յիշեմք անգամ: (Փարպ. 189.) * Որ քան և հետք մի երևեցին. || փոխանակ, և հետք անգամ: (Նարգ. 321:)

Պայմանականն՝ թէ, եթէ, յառաջոյ անուան կամ բային դնի, որպէս. թէ գաղան իցէ. եթէ կամիս. եւն: Բայց գոյ և վայելչաբար զկնի եդեալ անուան կամ դերանուան, այլ ոչ բային. որպէս. * Ամ եթէ լինիցի. ժամդ եթէ լինիցի: Մեծութի թէ առուիւ գայցէ: Ընդ իս եթէ ոք մտանիցէ: Իմ եթէ չէր եկեալ: ||

Այսչափ տեղեկութիւնք համառօտ աւանդեալք յաղագս բաղդատութեան ութ մասանց բանին՝ բա-

ւական համարեցին՝ առ՚ուսանելոյ, և ուղիղ իմանալոյ զկիրառութիւն նոցա : Որ ոք ցանկայ զառաւելագոյնս տեղեկանալ, ունի գտանել յընդարձակ քերականութեան :

---

# ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ.

## Յաղագս Չափաբերութեան :

442. Կարգաւորեալ դասաւորութիւն մասանց բանի, որով կազմի բան՝ յայտնիչ խորհրդոց մտացն, կոչի 'ի քերականաց՝ չափաբերութիւն, կամ չափաւորութիւն :

Բաժանի այն յերկու, այսինքն հարազատ կամ ընտանի, և օտար կամ խորթ :

Հարազատ շարադրութիւն է՝ որում ըստ սեպհական կանոնաց և բառից լեզուի ձևանայ բանն : Իսկ օտար է, որ 'ի կիր առնու կանոնս և բառս օտարս 'ի լեզուէն : Ուղիղ և օրինաւոր Քերականութեան գործ և յարգ այն է, զի զլեզուի զոր ուսուցանել յանձն առեալ է, զհարազատ կանոնն քննեցէ և ամփոփեսցէ հաւատարմութբ, և զօտարոտի կանոնս և զկիրառութիւնս 'ի բաց որոշեսցէ . զոր և մեք ջանացաք առնել ըստ իւրաքանչիւր մասանց, համառօտ՝ այլ բաւական առ մտառումն :

443. Խօսել կամեցեալ զհարազատ շարադրութէ, երրեակ աստիճանք զանազանին 'ի նմա . այսինքն պարզ, միջակ, և խրթին : Տարբերութիւն սոցա ոչ այնչափ ըստ բառիցն կշռի, որպէս թէ բառքն իցեն ծանօթ կամ անծանօթ, և ոչ նոյնպէս յիմաստից՝ եթէ դիւրիմացք իցեն կամ խորինք, այլ տիրապէս գտանելի է 'ի շարուածոյ նոցա :

Աստի պարզ լինի շարադրութիւն, յորժամ մասունք բանին դասաւորին ըստ բուն սովորական կանոնին, թէ և կայցէ անդ բառ խրթին, և կամ իմաստքն իցեն գաղտնածածուկ :

Միջակ լինի շարադրութիւնն, յորժամ բառից

դասաւորութի՛ւն խօսքի փոքր ի՛նչ 'ի սովորական կանոնէն ։

Երբեմն լինի շարադրութի՛ւն, ուր մեծապէս տարբերի՛ն շարքն 'ի սովորական կանոնէն ։

Յայսմանէ առաջի՛ն ուսանելի՛ է պարզն. իբր զի պարտ է աշակերտին վարժիլ նախ 'ի շարադրել անսխալ ըստ կանոնացն ։ Յետ ազատելոյ 'ի սխալանացն՝ ապա ուշ ունել միջակին ։ Իսկ խրթին շարադրութի՛ն պահեալ է բաց հմտացելոց՝ ըստ տեղւոյն, և ըստ նիւթոյ բանիցն. զի մի՛ դեռակիրթն թռչել կամելով յառաջ քան զժամանակն, անկանիցի 'ի խոտորման և 'ի լի՛ն սխալանօք ։

444. Իսկ թէ զիարդ ՊԱՐԶ շարադրութի՛ն լինի ՄԻՋԱԿ և ԽՐԹԻՆ, այսպէս գիտելի է. զի պարզն լինի ԲՆԱԿԱՆ շարուածով. այսինքն յորժամ պահին բնական շարքն, և սովորական կանոն լեզուին. այնպէս զի յառաջնում տեղւոջ դնի տէր բային, և առ նմա ածական իւր՝ թէ ունիցի, կամ բացայայտիչ նորա, կամ յատկացուցիչն. ապա բայն, և առ նմա մակբայն կամ խնդիր, և որ ինչ այլ բառ պատշաճեալ նոցին, և յայտնի պահելով զսովորական կանոնս համաձայնութեան իւրաքանչիւրոցն ։

Իսկ յորժամ ոչ պահի այս կարգաւորութի՛, և ասացեալ մասունքն դասին այլով կարգաւ, կամ ոչ ըստ հասարակ կանոնի համաձայնին, այս լինի և կոչի ՇՐՋՈՒՆ շարադրութի՛, և 'ի պարզէն անցանէ 'ի ՄԻՋԱԿ կամ 'ի ԽՐԹԻՆ ։

Ցուցելոյս դիցուք զօրինակ մի. * Դուք էք լոյս աշխարհի. || Ահա այս ամենեքին պարզ է. յառաջնոյ գոլով տէր բային՝ ԴՈՒՔ. յետոյ բայն՝ ԷՔ. զկնի ուղղական խնդիր բային ԼՈՅՍ. յետ նորա՝ ԱՇԽԱՐՀԻ, որ առ գոլով սեռական, յատկացուցիչ է ԼՈՅՍՈՅ. իսկ եթէ տրական առցի, լինի երկրորդ խնդիր ԷՔԻՆ ։

Արդ՝ փոփոխեալ զկարգ, ասասցուք. Աշխարհի լոյս էք դուք ։ Կամ, դուք աշխարհի՝ լոյս էք ։ Կամ, աշխարհի լոյս դուք էք ։ Այսոքիկ եղեն միջակ ։ Իսկ փոքր մի աւելի խրթին լինի ասել, Դուք աշխարհի էք լոյս ։

445. Շեղումն լինի շարադրութեան, յորում 'ի կիր առեալ լինի յն ինչ քերականական. որ և 'ի հինգ տեսակս վերածի. այսինքն են՝ Զեղչումն, Աւելադրութիւն, Ըմբռնողութիւն, Արտադրութիւն, Փոխադրութիւն ։

Զեղչումն խմանի ծածկելն, կրճատումն ինչ, կամ լռութիւն. և լինի՝ յորժամ 'ի շարադրութեան անդ թողեալ լինի բառ ինչ կամ գիր մի, բայց զօրութիւն կամ յաւելեայն իմացեալ լինի. որպէս յորժամ ոչ դնի նախդիր կամ նախադրութիւն մի. ( 430. 431 ) կամ թողեալ է բայն, տէր բային. ( 394. 395. 396. ) կամ յատկացեալն. ( 282 ) կամ գոյականն. ( 62 ) կամ շաղկապն. ( 438. ) կամ մի միայն բառն ։ ( 436 )

546. Աւելադրութիւն, հակառակ անցելոյն, է յորժամ առ 'ի զարդ կամ յառաւել բացայայտութեան դնի աւելի նախդիր կամ նախադրութիւն. ( 281. 426. ) կամ աւելի տէր բայի. ( 397. ) կամ մակբայ, շաղկապ ։ ( 435. 439. )

447. Ըմբռնողութիւն, առնի՝ յորժամ անուն ինչ կամ բայ երևի եղեալ անհամաձայն ըստ հոլովից կամ ըստ թուոց, և սակայն գոյ անդ գաղտնի համաձայնութիւն. զորօրինակ, եթէ տէր բային եզական է, և բայն յոգնական. ( 390 ) կամ բացայայտիչ և բացայայտեալ յայլևայլ հոլով եղեալ. ( 273. ) կամ ածականն յայլ հոլով, և գոյականն յայլ՝ ( 331. 424. 427. )

448. Արտադրութիւն, նշանակէ՝ արտաքոյ ուղղոյ կամ ձայնապարհի ելանելն. և իմանի՝ յորժամ փոփոխի բնական շարք կամ դիրք բառիցն. որպէս՝ ածականն եղեալ հեռի 'ի գոյականէն, կամ գոյականն ընդ մէջ երկուց ածականաց, յատկացուցիչն յառաջոյ եղեալ կամ տարակաց 'ի յատկացելոյն, նախադրութիւն զկնի խնդրոյն, բարդմակբայն զատուցեալ, կամ նախդիրն եդեալ 'ի վերայ այլոյ բառի ։

449. Փոխադրութիւն, իմանի՝ յորժամ մի հոլով դնի փոխանակ միւսոյն, կամ եզական թիւ փոխանակ յոգնականի. դր, եթէ յատկացուցիչ փոխա-

Նաեւ սեռականի՝ դնիցի 'ի բացառական կամ 'ի գործիական. կամ ածականն դնի իբր մակբայ, կամ ընդ հակառակն՝ մակբայն իբր ածական :

Արդ՝ այսոքիկ ձեւք են՝ զոր վերագոյնդ ԽՈՏՈՐՈՒՄՆ ասէաք 'ի քաղդասութե իւրաքանչիւր մասանց բանի, եւ աստ յիշեցաք զամենս թուահամարօքն. որպէս զի ուսանողն վերստին հետաքննեսցէ յիւրաքանչիւր տեղիս. եւ ընտրողապէս իմանայցէ զոյժ եւ զկիրառութիւն ասացեալ ձեւոյն :

450. Աստանօր դիցուք օրինակս ինչ զանազան շարադրութե, որովք յայտնի երեւեսցին նախասացեալ ձեւք, միանգամայն ցուցանի եղանակն պարզելոյ կամ լուծանելոյ զշարադրութիւնն :

ՊԱՐԶ. (1) * Այն է իրաւացի՝ յորժամ ոք առնուցու ինչ արժանի ըստ այնց գործոց՝ զորս գործեաց : ||

ՄԻՋԱԿ. (2) * Իրաւացի այն է՝ յորժամ առնուցու ինչ ոք արժանի ըստ այնց՝ զոր գործեացն : ||

ԽՐԹԻՆ. (3) * Բայց իրաւամբք այն է՝ յորժամ

(1) Այս շարադրութե ունի զիւր բնական շարք եւ զտոմարական կանոն : Այն ցուցական՝ տէր բայի, առ նմա բայն՝ է. յետոյ ուղղական խնդիրն՝ ԻՐԱՒԱՑԻ : ՅՈՐԺԱՄ, ժամանակական մակբայ. ՈՔ եղական տէր բային ԱՌՆՈՒՑՈՒ. ԻՆՉ, աննախնդիր հայցական սեռի խնդիր ԱՌՆՈՒՑՈՒ ներգործականին. ԱՐԺԱՆԻ, ածական համաձայն ԻՆՉին. ԸՍՏ, նախադրութե, իւր տրական խնդիր ԳՈՐԾՈՑ, համաձայն ցուցականաւն ԱՅՆՑ : ԶՈՐՍ, յարաբերական ԳՈՐԾՈՑին՝ համաձայն թուով, իւր հոլովն հայցական՝ սեռի խնդիր ներգործականին ԳՈՐԾԵԱՑ :

(2) Աստ եմուտ ԱՐՏՈՒՂՈՒԹԵ. զի ուղղական խնդիրն ԻՐԱՒԱՑԻ՝ կանց յառաջ, յետոյ տէրն եւ բայն. նմանապէս ՈՔն տէր բային ԱՌՆՈՒՑՈՒ, եդաւ զկնի խնդրոյն՝ ԻՆՉ, եւ ընդ մէջ անկաւ ածականին ԱՐԺԱՆԻ : Կայ եւ ԶԵՂՉՈՒՄՆ, լռելով զցուցական ԱՅՆՑ գերանուանն. փոխանակ ասելոյ՝ ըստ այնց գործոց : ՓՈԽԱԴՐՈՒԹԵ թուոյ կայ, եզական դնելով զյարաբերականն ԶՈՐ, փոխանակ՝ զորս, եւ բայն ԳՈՐԾԵԱՑՆ՝ ունելով զգիմորոշ յօդ, որ ԱՒԵԼԱԴՐՈՒԹԵ է, առ 'ի զարդ միայն, եւ ոչ 'ի հարկէ :

(3) Տես քանի փոփոխումն կայ բնական շարիցն եւ հասարակ կանոնաց, ունելով արտուղութե, զեղչումն, փոխադրութե, աւելադրութե եւ բակառութե : Փոխանակ ածական ուղղականին ԻՐԱՒԱՑԻ, եդաւ գոյական գործիականն՝ ԻՐԱՒԱՄԲՔ : Փոխանակ ասելոյ՝ ըստ այնց գործոց, եդաւ ԸՍՏ ՈՐՈՑ. ուր զեղչումն է լռելով զյարաբերեալն, այլ եւ փոխադրութիւն եւ բակառութիւն, զի փոխանակ հայցական խնդրոյ բային՝ դնի տրական ըստ հոլովից յարաբերելոյն : ( տես 361. )

արժանի ըստ որոց գործեացն ոք ինչ առնուցու ։ || (Եզնիկ. 30. ձեռ. ։)

## Նոյն օրինակ ։

Պարզ. (1) * Նոյն է ճշմարիտ փառք՝ զի ոք լինիցի պատճառ փառաւորութեան անուանն այ 'ի ձեռն գործոց բարեաց ։ ||

Խրթին. (2) * Ճշմարիտ փառք այն են՝ որ 'ի ձեռն բարեաց գործոց՝ անուանն այ լինիցի ոք փառաւորութեան պատճառ ։ || (Շնորհ. ընդհան. 44 ։)

---

## Խրատ ։

451. Ըստ օրինակացս այսոցիկ պիտոյ է կրթել զաշակերտն, ընծանելով զբանս գրոց, և զիւրաքանչիւր մասն որոշելով թէ որն առ ո՛ վերաբերի, և զկարգ համաձայնելին առ իրեարս ։ Պարտ է վարժիլ նախ 'ի պարզումն ընտել գրոց, որպիսի է սբ Աւետարանն, և բազում Աղօթագիրք ։ Ապա ձեռնարկել 'ի միջակային շարագրածս, որպէս Գործք Առաքելոցն, բազում թուղթք սրբոյն Պօղոսի, և որ նոցին նման ։ Յայսոցիկ ընտրութի նախակրթեալն, կարէ այնուհետև համարձակիլ 'ի պարզումն խրթին գրուածոց. որպիսի են Մակաբայեցիք, Ագաթանգեղոս, Նարեկն, և այլք ։

Պարզեալ, այժմ է ժամանակ յորում աշա-

(1) Շարքն ըստ սովորական կանոնաց եդեալ է. զի այն՝ տէր բային է, որոյ ուղղական խնդիր՝ ածականաւն ճշմարիտ փառք ։ Զի, թարմատար շաղկապ, յետոյ ոք, տէր լինելոյ՝ ստորոգական եղանակին. պատճառ, ուղղական խնդիր. նորա յատկացուցիչ՝ փառաւորութեան. նորա յատկացուցիչ՝ անուանն. նորա յատկացուցիչ այ ։ Ի ձեռն, իբրև նախադրութի, նորա յատկացուցիչ կամ խնդիր յոգնակի սեռականն՝ գործոց. նորա ածական համաձայն հոլովով և թուով բարեաց ։

(2) Տես որչափ արտաքսութիւն կայ. զի խնդիր բային եդաւ 'ի վերջէ. և բային եմուտ ընդ մէջ երկու յատկացուցչի. կայ և փոխադրութիւն հոլովոյ. զի այն առեալ իբր յարաբերական՝ դնի փոխանակ գործականի, և առաւել եւս. Այն են ճշմարիտ փառք՝ որով ոք 'ի ձեռն բարի գործոց լինիցի պատճառ և այլն ։

կերան սկսանիցի առնել զշարադրութիւն 'ի բարբառ գրոց ։ Վարժապետն տացէ նմա զհամառօտ խօսս աշխարհօրէն լեզուաւ, որպէս զի աշակերտն փոխեսցէ զայնս 'ի գրոց լեզու․ զոր յետոյ քննելոց է վարժապետն՝ առ 'ի ուղղելոյ զսխալանսն ընդդէմ կանոնաց ։ Իսկ չափու զարգանալոյն յանսխալ շարադրութիւն պիտոյ է տալ զբանս երկայնս կամ զպատմութիւն ինչ՝ գրով, և կամ 'ի բերանոյ․ որով թէ 'ի շարադրել քաջ վարժի աշակերտն, և թէ յաջողակ լինի յօրինել բանս․ և մտանէ 'ի ճանապարհ՝ որ տանի յուսումն ճարտասանութեան ։

Դիւր է խոհեմութեան վարժապետին, այնպէս բաժանել զժամանակ դպրատանն, զի աշակերտն յետ կատարելոյ ևս զդասատուութիւն՝ կէս մի պարապեսցի 'ի քաղել զուսեալն, կէս մի 'ի սերտել զդասս, կէս մի 'ի լուծանել զբանս գրոց, և կէս 'ի շարադրել ըստ գրոց ։ Այլափոխ բաշխումն ժամուց յայլ և այլ պարապումն՝ բառնայ զձանձրոյթ, և 'ի սակաւ ժամանակի պտուղ բազում շահի աշակերտն և վարժապետն ։

---

# ԳԼՈՒԽ ՈՒԹՆԵՐՈՐԴ.

## Յաղագս Վերծանութեան ։

Բանն կարգաւորեալ ըստ քերականական արհեստի՝ պահանջէ և զպատշաճական ընթերցումն և զգրչութիւն․ և այս է ուսումն առանձին՝ կոչեցեալ վերծանութիւն․ այսինքն է՝ 'ի վեր ածել և ծանուցանել զմիտս բանին՝ ուղիղ արտաբերութ․, յստակ և որոշ ընթերցմամբ, և օրինաւոր գրչութ․ ։

452․ Արդ՝ երկու ինչ առաւելապէս փակէ վերծանութիւն, զԱռոգանութիւն, և զՏրոհութիւն․ զորոց տացուք համառօտ տեղեկութիւն ։

Առոգանութիւն, նշանակէ՝ բարւոք ողել, կամ ասել․ և իմանի՝ պատշաճ հնչումն ձայնին, ժամանակին, և թանձրութեան կամ նրբութեան հնչմանցն․ որոյ

գլխաւոր նշանքն են, շեշտ, բութ, պարոյկ, երկար, սուղ, թաւ, սոսկ, ենթամնայ:

453. Շեշտ կամ շեշտանշան է այս գիծ (՛), և դնի 'ի վերայ ձայնաւոր տառի՝ որոյ ձայնն սուր է, և 'ի վեր սաստելի. ուստի դնի յայն ձայնաւորն բառին՝ ուր սրանայ ձայնն. որպ. տէ՛ր, հայե՛ց, մի՛ հայիր. ե՛կ. անտ անկատ. մ՛րգայ, արգա՛յք խարայելի. յանգոբ յանգոբ, կամ յանգո՛բ յանգո՛բ. այսպէս է իմանալ և յայլ բառս:

454. Բութ կամ բթանշան է այս (՝) ներհակեալ շեշտին. և դնի առ ձայնաւորն՝ որոյ ձայն խոնարհի, 'ի վայր իջանէ. և յայտնի երևի 'ի խազս երգոց շարականաց: Իսկ 'ի հասարակ շարադրութիւնս սովոր եմք դնել 'ի բառն՝ ուր շունչն ցածնու, կամ ուր պիտոյ լինի զատանել զմի բառ 'ի հետևեալ բառէն. որպ. Տէր՝, նախ՝, կամ. մի ե՝ այլ ոչ: Մ՝արդոյ հանգիստ եւն:

455. Պարոյկ կամ ոլորակ է նշանս (՞, ՞) որ յերգս 'ի գործ ածի 'ի վերայ ձայնաւորի՝ որոյ եղանակն նախ բարձրանայ, և ապա ցածանայ: Իսկ 'ի շարադրութեան դնեմք 'ի զարմացական բառն, կամ 'ի հարցական, կամ 'ի կոչական. որպ. Ո՞վ անմտութեան. Օ՞ հարկանես. Սաւո՞ւղ սաւուղ, եւն: Բայց երբեմն յայսպիսի բանս նաև շեշտն ունի տեղի:

456. Երկար, է այս (՟). սուղ (˚). երկոքին այս տեղի ունին յեղանակս երգոց, կամ 'ի չափաբերութեան, ուր ձայնաւոր մի կամ վանկ մի երկարելի է, և կամ սղելի: 'Ի կիր առնումք զսուղն յոտանաւոր բանս՝ ուր վանկ ինչ անցանելի է շտապաւ. որպ. Տէրն յետ ˚ստեղծմա˚ն արարածոց: Նոյն երկար նշանն դնի 'ի վերայ միջարկութեան, կամ ուր պատահէ ցուցանել զսրտի կիրս. որպ. բա՟բէ. եղուաղէ՟ն եղուաղէ՟ն:

457. Թաւ կամ թաւանշան, որ է (˄) և սոսկ, որ է (˔). այս երկու հնարեալ են 'ի նշան բաղաձայն տառից. որոց ձայնն է թաւ կամ հաստ, 'ի վերայ դնէին այսպէս, թ˄, ւ˄, խ˄, ց˄. իսկ առ նրբաձայնն դնէին սոսկ. որպ, տ˔, ր˔, կ˔, ծ˔: Պատճառ այսպիսի նշանաց էր, զի մի՛ օտարք գիր ընդ գրոյ շփոթեսցեն 'ի հնչելն կամ 'ի գրելն, և փոխանակ

առնելոյ՝ Նուէր, Քոյր, Չէր, առիցեն կամ գրեսցեն՝ Դուռ, Խոյր, Ծէր ։

Իսկ 'ի դադարել այսր սովորութեն, ոմանք 'ի յետին դարու հնարեցին զայլ կերպառութի, դնելով զԹաւ նշանն 'ի վերայ երկբարբառ ձայնաւորացն՝ աւ, եւ, իւ, ու, որպէս զի հնչեսցեն իբր վեվ. այսպէս, հարաւ, երեւակ, Թիւ, Թուականս ։

458. Ենթամնայ, որ է (‿) եւ 'ի հնումն գծէին 'ի ներքոյ բարդ կամ ածանցեալ բառից, զի ընթերցցի իբր մի բառ ։ զր. Նորընծայ, օրէնսուսոյց. հրեշտակայէն. հայրէն ։ Նմանապէս ուր 'ի վերջ տողին կիսատ մնայր գիր մի, կամ վանկ մի, դնէին անդ 'ի ներքոյ՝ առ 'ի միացուցանել զայն ընդ յաջորդ վանկին ։

459. Յետ ժամանակաց խափանեցաւ սովորութիւնն դնելոյ 'ի ներքոյ բարդ կամ ածանցեալ բառից. բայց միւսն պիտանի գոլով պահի եւ այժմ, իբր զի 'ի վերջ տողին, որ եւ ասի տողադարձ կամ Տըրոհարձ, ուր ամբողջ բառ ինչ ոչ կարէ զետեղիլ, մի կամ երկու վանկ անցանէ 'ի յաջորդ տողն ։

Կանոն բաժանելոյ զբառն՝ այս է ։ Յորում բառի ձայնաւոր մի կացուցանէ զվանկ, կարէ միայնակ դնիլ 'ի տողադարձին. զր. Ե-րաղ, Ե-ղոյզ, Ա-հա ։ Ընդհակառակն՝ միայնակ բաղաձայն մի ոչ ընաւ դնի վերջ տողի, այլ կից ընդ ձայնաւորի. զր. ոչ լինի Չ-ամա, Է-աոք, այլ՝ Չա-մա, Էա-ոք ։

Յաջորդ տողն միշտ սկսանելի է բաղաձայնիւ, եւ ոչ ձայնաւորաւ. զր. Ա-ջամայ. բայց եթէ բաղաձայնն իցէ ընական առաջին բառին կամ վանկին. զր. ոչ լինի Ար-արէր, բայց լինի՝ Ան-արար ։

Յորում վանկի կայցէ երկու բաղաձայն, մին դնի 'ի տողադարձն, եւ միւսն 'ի յաջորդ տողին. զր. Էար-խոռ-Ռիա ։ Իսկ բազում գոլով բաղաձայնից, բաւական է զմին եւեթ տալ 'ի յաջորդ տողն. զր. Ընկ-նաւ-լորք, Խորտ-կա-ծող ։ Այլքան տեղեկութի շատ լիցի նորոգ ուսանողաց ։

## Յաղագս Տրոհութեան :

460. Երկրորդ գործ կամ պաշտօն վերծանութեան ասացաք՝ տրոհութիւն, որ նշանակէ՝ զատումն, որոշումն. և իմանի՝ յորժամ հատուածք միոյ ասացուածոյ զատանին ըստ պատշաճի իմաստիցն՝ թէ յընթեռնուլն, և թէ 'ի գրելն, ուր պիտոյ իցէ տարտամ թողուլ զձայնն, կամ դադարեցուցանել վայրիկ մի, կամ լռել իսպառ : Նշան այսպիսի տրոհութեան ասի՝ կէտ. և երրեակ է, ստորակէտ, միջակէտ, վերջակէտ :

461. Ստորակէտ է սրածայր նշանս (,) որ դնի զկնի անկատար բանի, յորժամ իմաստ բանին սկսեալ է՝ բայց կայ տարտամ, և պահանջէ յարել 'ի հետևեալ մասն. օր. * Եւ իբրև այգ եղև, ‖ սկսանի զիմաստն թէ յորժամ առաւօտ եղև, բայց առ 'ի լրումն պահանջէ զայլ ևս բան. ահա յայսպիսի տեղւոջ դնի ստորակէտ :

462. Միջակէտ է այս քառակուսի նշան (.) որ և դնի ուր իմաստ բանին աւարտեալ է, և չէ տարտամ. որպէս եթէ 'ի նախադրեալ բանն յաւելցի. * Եւ իբրև այգ եղև, կոչեաց Յս զաշակերտսն իւր : ‖

463. Իսկ վերջակէտ է այս զոյգ կէտ (:) և դնի յաւարտ ամբողջ պարբերութեան իրիք, ուր բանն և շունչն հանգչի, և սկսանի այլ բան գլխագրով. օր. * Եւ իբրև այգ եղև, կոչեաց Յս զաշակերտսն իւր. և ընտրեաց 'ի նոցանէ երկոտասան՝ զորս և առաքեալս անուանեաց : Զսիմոն զոր և Պետրոս անուանեաց. ‖ Ղկ :

Յայս ամենայն ասացեալքս ակներև տեսանին յընթացս քերականութես, և յամենայն ուղղատիպ մատեանս. բաւական է՝ զի ուսանողք և ընթերցողք առաջի աչօք նկատեսցեն :

464. Յատուկ կիրառութիւն ստորակէտին՝ յայն բանս է, ուր յառաջընթաց մակբայ իմն, կամ շաղկապ, կամ յարաբերական որ 'ի սկիզբն բանին եդեալ, և կամ անցեալ ընդունելութիւն իմն՝ 'ի կախ թո-

ղուն զիմաստն. որպ. * Յորժամ տկարանամ, || Թէ-րի մնայ իմաստն, և կատարի յաւելեալ * յայնժամ զօրանամ։ ||

Այսպէս և յառաջիկայդ. * ԵԹԷ 'ի մարդկանէ իցէ խորհուրդդ այդ կամ գործ, քակտեսցի։ Որ ատէ զեղբայր իւր, մարդասպան է։ Եւ ՏԵՍԵԱԼ յին զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն. || Լա ։

465. Ուր 'ի բանի ինչ դոն զանազան բայք իւրեանց խնդրովն, կամ բաղում անուանք ածականաւ իւրեանց, յատկացուցչաւ և կամ խնդրով, լաւ է դնել ստորակէտ. նոյնպէս եթէ բաղում անուանք ունին զիւրաքանչիւր բայ. որպ. * Հարին զնոսա 'ի հարուածս մեծամեծս, և ընկեցին զնոսա, և զմնացորդսն 'ի հարկի կացուցին՝ տալ նոցա հարկ ամ յամէ։ || (ա. Մակ. Ը. 4։) Նոյն, * Ո՞վ մեկնեսցէ զմեզ 'ի սիրոյն քի, նեղութիւն, թէ հալածա՞նք։ || (Հռովմ. Ը. 35։)

Բայց ուր միանգամ դոն բաղում անուանք և բայք առանց շաղկապի հետ զհետէ շարեալք, ոչ է հարկաւոր ստորակէտ։

## ԱՅԼ ՆՇԱՆԱԳԻՐՔ։

Են այլ ևս նշանագիրք ինչ կամ գծանիշք՝ ձարտարեալք 'ի գրագրաց սակս դիւրութեան, և կամ յայլ ինչ պէտս։ Այսպիսի են՝ ԱՊԱԹԱՐՑ, ՊԱՏԻՒ, ՍԻՒՆ, ԵՐԿՈՐԵԱԿ, ՓԱԿԱԳԻԾ, ՊԱՏՈՒԱԳԻՐ։

466. ԱՊԱԹԱՐՑ ասի կէտն նման ստորակէտի, և է (') որ եդեալ լինի առ ինի նախդիրն, 'Ի, ԱՌ 'Ի, առ 'ի ցուցանել թէ անդ գիրն ի ոչ է բնական գիր բառին, այլ նախդիր է. վասն այսորիկ ոմանք դնեն առ այլ նախդիրսն ևս. որպ. 'յ, 'զ, 'ց։

467. ՊԱՏԻՒ ասացաւ գիծս (˜) որ ասի և՝ ՏՈՒՐ, ԹԱՂ։ 'Ի հին ժամանակս առ 'ի մեծարանս սրբազան անուանց՝ ոչ ամբողջ գրէին, այլ միայն զառաջին և զվերջին գիրն, 'ի վերայ եդեալ զգիծդ այսպէս, ած, այ, քս, յս, տր, տն։

Յետոյ եղև սովորութիւն այնպէս գրել և զայլ բառս յաճախեալս և ծանօթս, վասն արագ և հա-

մասունս գրչութե՟, որոց ստորականք եղեն, ա՟մ, ամենայն․ ն՟ր, նորա․ ն՟ք, նոքա․ զն՟ս, զնոսա․ ն՟ց, նոցա․ վ՟ն, վասն․ ո՟պ, որպէս․ ի՟էլ, իսրայէլ․ եղ՟էմ, երու-սաղէմ։

468. Սեան կոչի մի ձիւղն կամ կէտն այլեւն, որ է (,) եւ դնի 'ի մէջ բառին նշանակ այլի․ որպէս, արրծ, արարած․ մրդսէր, մարդասէր։

469. Երկորեակ է զոյգ գիծս (") որ դնի 'ի վե-րայ բառին ուր 'ի բաց թողեալ իցէ ձայնաւոր գիր մի, այսպէս, բ"ր"կամ, բարեկամ, ք"ղ"ք, քաղաք։ Դնի նաեւ 'ի վերջ կրճատ բառի․ դր․ կան"․ կանոն․ գալստ"․ գալստեան․ Յոհ"․ յոհաննէս։

470. Փակագիծ է կիսաբոլոր երկու լուսնաձեւ գիծս ( )․ զոր եւ 'ի գործ ածաք բազում ուրեք, եւ ասի եւս Եղնգնային։ Է նշան միջանկեալ բառի ինչ կմ բանի, առ 'ի զատանելոյ 'ի միւս բանից․ որպէս եւ մեք եդաք առ որոշելոյ զանուանս գրոցն՝ կամ հեղինակաց, յորոց առնումք զօրինակս կանոնացն։

471. Պատուագիր ասեմք զայն նշանագիրս՝ որք ցուցանեն զամբողջ բառ մի․ եւ ձեւանան կամ յամանց գրոց նոյն բառին, եւ կամ այլով աննշան գծագրութ՟։ Այսպիսի են՝ յ՟ն, որ է՝ այս կմ այսինքն․ ե՟ւ, եւ այլն․ դր, զօրօրինակ․ ը՟ն, ընդ․ ը՟տ, ըստ․ ը՟մ, ըստ այնմ․ կ՟, կամ․ ք՟, քան։ Իսկ աննշան գծիւ, ֆ, աշխարհ․ պ՟, որպէս․ ա՟մ՟ն, ամենայն։

Յայսց նշանագրաց՝ սեան, երկորեակ, եւ աննշան պա-տուագիր խափանեալ են 'ի հասարակ գրուածս․ իսկ այլքն ոչ են յաճախելի առանց հարկի։

# ՑԱՆԿ

Գլխաւոր գիտելեաց նշանակեալ թղթահամարովն ։

Ա. կէտ ա. , բացատական մասնիկ. 51 ։
Ածական անուն. 44 ։ Բաժանումն նորա. 46 ։
Ածականք առանց գոյականի. 45 ։
Ածանցական անուն. 56 ։
Ածանցական գերանուն. 39. 71 ։
Ածանցական բայ. 118 ։
Ածանցականակերտ մասնիկք. 57 ։
Աներևոյթ բայ. 75. 114. 218 ։
Անկանոն բայ. 75 ։
Անուն զինչ է և քանի. 4 ։ բաժանումն նորա. 44 ։
Անուն բայի. տես ա՛ր բայի ։
Անցեալ ժամանակ. 74 ։
Անցողական բայ. 82 ։
Ապառնի ժամանակ. 74 ։
Առ բաղադրական մասնիկ. 52 ։ նախդիր. 119 ։ նախադրութե հոլովառու. 124 ։
Առոգանութիւն. 240 ։
Առքական բայ. 73 ։
Արտուղի բայ. 75. 94 ։
Արտուղութի, ձև քերականական. 237 ։
Աւելադրութի, ձև քերականական. 237 ։
Բ. իբր բացատական մասնիկ ։ 51 ։
Բախառուն, ձև քերակ. 237 ։
Բաղադրեալ անուն. 51 ։
Բաղադրեալ բայ. 118 ։
Բաղդատութի. 3. 141 ։
Բաղդատութի անուան ՟Է այլ մասանց. 143 ։
Բաղդատութի բայի. 201 ։
Բաղդատութի գերանուան. 180 ։ էականք. 181 ։ ցուցականք. 134 ։ ստացականք. 187 ։ յարաբերական. 190 ։
Բաղդատութի մակբայի. 228 ։
Բաղդատութի նախադրութե. 225 ։
Բաղդատութի շաղկապի. 232 ։
Բաղդատական ածականք. 46 ։
Բայ. 72 ։ Բաժանումն նորա. 72 ։
Բան. 2 ։
Բառ. 2 ։
Բարդ անուն. 31 ։
Բարդ բայ. 118 ։
Բացայայտիչ և բացայայտեալ. 142. 144 ։ որպէս համաձայնի. 144 ։
Բացառական հոլով. 66 ։
Բութ. 241 ։
Գերադրական ածականք. 46 ։
Գերակատար ժամանակ. 84 ։
Գիր. 2. բաժանմունքն. 3 ։
Գլխաւոր մասունք քերականութե. 2 ։
Գոյական անուն. 44 ։ բաժանումն նր. 47 ։
Գործիական հոլով. 67 ։
Գրադարձ. 242 ։
Դերանուն. 34 ։
Դերբայ. 114 ։
Դէմք բայից. 74 ։
Դէմք դերանուանց. 34 ։
Դիմաղուրկ բայ. 75. 109 ։
Դիմորոշ յօդք. 34 ։ 'ի վերայ անուան. 198 ։ 'ի վր դերանուանց. 199 ։ 'ի վր բայից. 199 ։ 'ի վր մակբայի. 201 ։
Դրական ածականք. 46 ։
Եղանակ բայից. 75 ։
Ենթամնայ. 242 ։
Երկար 241 ։
Երկօրեակ. 245 ։
Զ. նախդիր. 6. 64 ։ բաղա

գրական մասնիկ . 51 ։
Զեղչումն , ձև քերակ . 237 ։
Է՛ . միջարկութի . 139 ։
Էական բայ . 78 ։ կերպաւու_ թիւն նր̄ . 221 ։
Էական դերանունք . 35 ։
Ը՛ կամ ըն , մասնիկ , նախդիր . 51 . 119 ։
Ընդ , նախդիր . 119 ։ նախա_ դրութիւն հոլովառու . 120 ։
Ընդունելութիւն . 115 ։
Ընդունելութիւն . էալ . 116 ։
Ընդունելութիւն ելի . 116 ։
Ընդունելութիւն լոց . 116 ։
Ընդունելութիւն ող . 116 ։
Ըստ , նախադրութիւն . 120 ։
Թուա գիր . թուա կամ թուանշան . 241 ։
Թիւք անուանց . 5 ։ զինչ է և քանի . 61 ։
Թիւք բայից . 74 ։
Թուական անուանք . 25 ։
Ժամանակ կամ ամանակ բայից . 74 ։
Ի , նախդիր . 119 ։
Լծորդութիւնք բայից . 75 .
Լուծմունք շարադրութեց . 238 ։
Խնդիր և խնդրառու . 142 ։
Խնդիր ածական անուանց . 157 ։
Խնդիր ածականաց յանգելոյ 'ի ել . 157 ։
Խնդիր գրական և բաղդատա_ կան անուանց . 160 ։
Խնդիր բայի . 21[illegible]
Խնդիր բնութե [illegible]գործական բայից . 217 ։
Խնդիր գոյական անուանց . 153 ։
Խնդիր էական բայից . 221 ։
Խնդիր թուական անուանց . 160 ։
Խնդիր հարցական անուանց . 160 ։
Խնդիր մասնական անուանց . 160 .
Խնդիր չէզոքական բայից . 218 ։
Խնդիր սեռի կրաւորական բայից . 212 ։
Խնդիր սեռի ներգործական և ասարակ բայից . 212 ։
Խոնարհմունք բայից . 74 ։
Կանոնաւոր բայ . 74 ։
Կէտ , կէտք . 243 ։
Կոչական հոլով . 7 ։
Կրաւորական բայ . 73 ։
Կրաւորակերպ բայ . 73 . 112 ։
Կրկնածանց անուն . 61 ։
Համաձայնութի . 3 ։
Համաձայնութի ածական ան_ ուանց ը̄ գոյականաց . 161 ։
Համաձայնութիւն թուական անուանց . 170 ։ հանրական անուանց . 173 ։ մերբերա_ կան անուանց . 175 ։ հար_ ցական անուանց . 176 ։ մաս_ նական անուանց . 177 ։
Հայցական հոլով . 65 ։
Համրական անուանք . 31 ։
Հասարակ անուն . 47 ։
Հասարակ բայ . 73 ։
Հարցական անուանք . 32 ։
Հաւաքական անուն . 48 .
Հոլովմունք անուանց . 5 . 68 .
Հոլովք անուանց . 5 . 64 ։
Հոլովք և հոլովմունք դերա_ նուանց . 35 . 71 ։
Հրամայական եղանակ . 75 . 113 ։
Ձևք անուանց . 51 ։
Ձևք բայից . 118 ։
Ձևք դերանուանց . 70 ։
Մակակէտ . 244 ։
Մակբայ . 126 ։ բաժանմունք մակբայից . 126 ։
Մասնական անուանք . 29 ։
Մասն բանի . 1 . 141 ։
Միջակ շարադրութի . 235 ։
Մի[illegible]ան անուանք ։ 24 ։
Միջ[illegible]ա . 243 ։
Միջարկութիւն . 138 ։
Յ , նախդիր առաջի ձայնաւո_ րի . 6 . 65 . 67 ։
Յատկացուցիչ և յատկացու_ ցեալ . 142 . 148 ։ իւ զանա_ զանի 'ի բացայայտչէն . 152 ։
Յատուկ անուն . 47 ։
Յարաբարդ անուն . 51 ։
Յարաբերական դերանուն . 40 . գործածութի նր̄ . 190 ։
Յարակատար ժամանակ . 84 ։
Նախադրութիւն . 119 ։ հոլո_ վակերտ . 119 ։ հոլովառու . 120 ։ յատուկ պարզ . 120 ։ բաղադրեալ . 123 ։

Նախատիպ անուն . 56։
Նախատիպ բայ . 118 ։
Նախատիպ դերանուն . 71 ։
Նախդրիւ տրական . 6 . 64 ։
Ներգոյական հոլով . 7 . 65 ։
Ներգործական բայ . 73 ։
Ներկայ ժամանակ . 74 ։
Նշանագիր . 244 ։
Շաղկապ . 134 ։
Շարագրութիւն . 235 ։
Շեշտ . 241 ։
Ոլորակ . 241 ։
Ուղղական հոլով . 5 . 64 ։
Չ , բացառական մասնիկ . 51 ։
Չեզոք կամ չէզոքական բայ . 73 ։
Պակասաւոր բայք . 75 . 95 . 104 ։
Պատիւ . 244 ։
Պատմական հոլով . 7 . 67 ։
Պատուագիր . 245 ։
Պարագայք անուանց . 4 . 48 ։
Պարագայք բայից . 73 . 118 ։
Պարագայք դերանուանց . 70 ։
Պարագայք ընդունելութեց . 115 ։
Պարառական հոլով . 7 . 67 ։
Պարզ անուն . 51 ։
Պարզ բայ . 118 ։
Պարզ շարագրութիւն . 235 ։
Պարոյկ ։ 241 ։
Սահմանական եղանակ . 75 ։
Սեռական հոլով . 64 ։
Սեռք անուանց . 49 ։
Սեռք բայից . 73 ։
Սիւն , նշան . 245 ։
Սուղ նշան . 241 ։
Ստացական դերանուն . 38 . 71 ։
Ստորադասական եղանակ . 75 ։
Ստորակէտ . 243 ։
Վանկ . 2 ։
Վերբերական անուանք . 33 ։
Վերծանութիւն . 240 ։
Վերջակէտ . 243 ։
Տ , բացառական մասնիկ . 51 ։
Տառ . 2 ։
Տեսակք անուանց . 56 ։
Տեսակք բայից . 118 ։
Տեսակք դերանուանց . 71 ։
Տէր կամ անուն բայի . 141 ։
Տրական հոլով . 5 . 64 ։
Տրոհութիւն . 243 ։
Ց , նախդիր տրականի . 7 . 65 ։
Ցուցական դերանուն . 37 ։
Փակագիծ . 245 ։
Փոխադրութիւն , ձև. քերակ . 237 ։
Քերականութեան անուն , պատճառն , մասունքն . 1 ։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴ.
ИМ. А. МЯСНИКЯН